

Հ. Գ. ՍԻՆԻՑԿԻ

91(025.3)

ԱՇԽԱՐՅԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՃԽԵՏՈՆ-ՔԻ ԳԻՐՔ


ՈՒՍՈՒՑՄԱՆ ՑՈՅԵՐՐՈԴ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

Թարգմանեցին Հ. Գրիգորյան յեղ Հ. Սառիկյան թ

16967

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1929




ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

A $\frac{\pi}{150}$
ԱՃԽԱՏԱՆՔԻ ԴԻԲՔ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՅՈՅԵՐՈՒԹ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

Քարգմանեցին Հ. Գրիգորյան յել Հ. Սառիկյան

Պետական Դիտական Խորհրդի գի-
տական մանկավարժական Սեկցիայի
կողմից բույլատրված II աստիճանի
դպրոցների համար:



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1929

ՊԵՏՏՐԱՆԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՄԱՐԱՆ
ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Պատվիր № 992 Հր. № 1059

Տիրամ 4000

Դրասեպվար № 2763 ր.



ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆ

ԱՌԱՋԻՆ ԹԵՄԱ

ԲՆԱԿԱՆ ՄՐՏԱԴՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՀԱՄԱՅՆԱՐՀԱՅԻՆ ԴԱՍԱՎՈՐՈՒՄԸ

ՎՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԲՆԱԿԱՆ ՄՐՏԱԴՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ:—Մարդը այն ամենը, ինչ անհրաժեշտ և իրեն, ստեղծում և նրանից, ինչ նրան արածագրում և ընությունը: Նախնական մարդն ոգտվում և ընության պատրաստի պարզեներով (վորսորզություն, ձկնորսություն, սերմերի, պտուղների, վայրի աճող բուսեղնների արմատների, ծառերի և թըփուաների հավաքումն և այլն): Հետադայում նա սկսում է ձեափոխել ընության տրամադրածը:

Բնական արագրական ուժեր են կոչվում ընության ընձեռած այն հնարավորությունները, վորոնք պետք են մարդու անտեսական ոգտագործման համար:

Այս անվան տակ ընդգծվում են հիշված ուժերի յերկու կողմերը. մեկը (բնականը)՝ մշտատե և, մլուսը (արտադրականը)՝ փոփոխական ժամանակի ընթացքում:

Այն բնական ուժերը, վորոնցից ոգտվում և ժամանակակից մարդը, միևնույն ուժերն են, վորոնք գոյություն են ուսնեցել հարյուր հազարավոր տարիներ մեզնից առաջ: Բայց ուժն արտադրական և դառնում միայն այն ժամանակ, իերը մարդն սկսում է ոգտագործել այն արտադրության համար: Խսկ գրա համար նա պետք է ճանաչի և ուսումնասիրի ընության ուժերն ու սովորի գործադրել արտադրության մեջ: Առաջինը գիտության գործն ե, յերկրորդը՝ տեխնիկալի:

Բնական արտադրական ուժերի մասին խոսելիս կմոտենանք ժամանակակից մոմենտի տեսակետից, այսինքն նկատի կառնենք միայն բնության այն ուժերը, վորոնցից ոգտվում և քաղաքակրթված յերկրներում ապրող ժամանակակից մարդը:

Այդ ուժերի հիման վրա յե կառուցվում ամբողջ ժողովրդական անտեսությունը:

ԲՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՈՒԽԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՄԱՆ ՈՐԻՆԱԶԱ-
ՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:—Այժմ քննության առնենք ձեզ հետ միասին, թե
բնական արտադրական ուժերի գասավորման մեջ չկա արդյոք վարել
որինաշափություն:

ԳՈՏԻԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆՆԵՐԸ:—Ցերկրի վրա կլանք ստեղծող գլխա-
վոր ուժերը արեի լուսն ու տաքությունն են: Առանց նրանց բու-
սական կյանք չկա, իսկ առանց բույսերի անհնարին և նրանցով սըն-
վող կենդանիների և մարդու գույությունը: Դորքան հասարակ ծից
գնանք գեղի բնեոները, անքան արեից ստացվող լուսն ու տաք-
թյունը կպակասի. ըստ այդ ել տաքությունը դասավորվում և ըստ
գոտիների:

Բուսական կյանքն արթնացնող լերկրորդ ուժը խոնավությունն
ե, առանց վորի նույնպես հնարավոր չե բույսերի, կենդանիների և
մարդու կյանքը: Խոնավությունն իրեկ մթնոլորտային տեղում լեր-
կրագնդի վրա բաշխվում և ըստ զոտիների: Հողն ու բուսականու-
թյունը կախված են կլիմայից և այդ պատճառով նույնպես դասավոր-
վում են գոտիներով:

Այդպիսով՝ զբուզանուեսության համար անհրաժեշտ բոլոր գլխա-
վոր բնական պայմանները դասավորված են լերկրագնդի վրա՝ զոտի-
ներով: Սրանք ժողովրդական տնտեսության այսպիս կոչված գոտիա-
կան (կամ զոնային) պայմաններն են (սովորաբար ասում են՝ գոր-
ծոնները):

ՎԱԶ-ԳՈՏԻԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆՆԵՐԸ:—Բնական արտադրական ուժե-
րից վորոնք են անհրաժեշտ արդյունաբերության համար:

Մի կողմից՝ եներգիայի աղբյուրները կամ, ինչպես ասում են,
եներգետիկ ռեսուրսները:

Մյուս կողմից՝ բուսական, կենդանական և հանքային ծագումը
ունեցող հումքերը:

Բուսական և կենդանական ծագումն ունեցող հումքերն ստաց-
վում են գյուղատնտեսությունից, հետեարար նրա տեղադրությունը
գոտիական դասավորություն ունի:

Մնում ե քննության առնել հանքային ծագումն ունեցող հում-
քերի և եներգիայի աղբյուրների բաշխումը: Նրանք գոտիներով չեն
դասավորված, զրա համար ել նրանք կոչվում են վոչ-գոտիական
(աղոնայ) գործոններ: Բայց նրանց դասավորության մեջ ել որինա-
չափություն կա:

Հանքային ծագումն ունեցող հումքի գլխավոր տեսակներն են
հանքերը, առանձնապես լերկաթի և պղնձի, և քիմիական արդյունա-
բերության համար անհրաժեշտ աղերը:

Եներգիալի զլխավոր աղբյուրներն են հանդիսանում մի կողմից՝
այրվող նյութերը, առանձնապես քարածուխն ու նավթը, մյուս կողմից՝
գահավիժվող ջրի (սպիտակ ածխի) ուժը, վորը փոխանցվում
և ելեկարականության:

ԱՊԻՏԱԿ ԱԾԲԻՒԾԻ:—Սպիտակ ածխի զլխավոր պաշարները
գտնվում են այստեղ, վորտեղ 1) մակերեւույթն աստիճանածկ կառուց-
վածք ունի (Աքրիկա, Հարավային Ամերիկա, Միացյալ Նահանգների
արևելյան մասի անկման գիծը, Բալտիկ ծովի եջքը), 2) զետերն
անցնում են լեռնային շրջանով կամ հենց նոր գուրս են գալիք այն-
տեղից, 3) գնատերը հոսում են գմբարությամբ վորողվող տեսակների
միջով (հին զանգվածների գրանիտներ, հրաբղիսային ծածկություններ):

ՀԱՆԱԾԲԻՒԾԻ:—Գլխավոր հանքատնղերը գտնվում են յերկրի
այսպիս կոչված մետաղային գոտու շուրջը: Այդ գոտին անցնում և
ցամաքի այն մասերի մոտով, վորոնք ամենից ավելի առաջ են յերե-
ման լեկել լերկրի մակերեւույթի վրա, այսինքն՝ հին զանգվածների
սոսերքը (Յելլուրալուում—Սկանդինավիայի գրանիտի զանգվածները
Ֆինլանդիական և Կորելիայի հետ միասին, Ֆրանսիայի և Միջին Յնվ-
րոպակի կենտրոնը, Ռուսայինայի հարավը):

ՄԵՏԱՆԱՑԻՆ ԳՈՏԻՆ:—Յերբ սկսեցին կազմվել առաջին լեռները,
նրանք գալարվեցին հին զանգվածների շուրջը: Յերկար շղթաներով
նրանք անցնում են Յելլուրալուով—Սկանդինավիայով, Մեծ-Բրիտա-
նիայի արևմայան մասով, Ֆրանսիայի, Գերմանիայի, Զեխո-Սլովակիա-
յի, Լեհաստանի, Ռուսայինայի միջով, Ռւրալով: Ասիայում նրանք ընթա-
նում են Միջերեւարավային ծայրամասով, Չինաստանով: Ամերիկայում՝
Միաց. Նահանգների արևելյան ծալրով: Մրանից միլիոննավոր տարիներ
առաջ դրանք շատ բարձր լեռներ ենին: Բայց քամու և ջրի ներգոր-
ծության հետեւանքով նրանք ցածրացան, առանձին մասերի բաժան-
վեցին, նրանցից միքանիսը գետնին հավասարվեցին: Յերբ վոր կազմը-
վում ելին լեռնային ծալքերը, նրանք իրենց մեջ ելին առնում են հրա-
հեղուկ զանգվածը, և նրա մեջ գտնված հալած մետաղը: Ռդի հետ
շվեյցիական մետաղները հանգեր դարձան, ալտինքն՝ քարի այնպիսի տե-
սակներ, վորոնք իրենց մեջ մետաղ են բովանդակում: Հին լեռների
շատ վայրերում մերկացած հանքային գոտին ե, վոր մետաղային գո-
տի անունն ե կըրում: Յելլուրալում այդ գոտին անցնում ե հին լեռ-
ների գծով—Շվեյցիայով, Անգլիայի արևմուտքով, Ֆրանսիայի հյուսի-
սով, Միջին Գերմանիայով, Զեխո-սլովակիայով, Խոտալիայի հյուսիսով,
Կրիվոյ Ռոգով՝ Ռուսայինայում, Ռւրալով: Խորհրդային Միության
տարական մասում—Արևմտյան Միջերեւարավով, Յենիսեյ գետի,

ապա Անսայի վատակների լերկայնությամբ, Մերձ-Ամռության յնըկըով՝ Ամերիկայում մետաղային գոտին անցնում և կանադայի արեելքով, Միացյալ Նահանգների հյուսիսարևելյան և արևելյան մասերով:

Սակայն հին բռներում կարեռը միայն մետաղային գոտին չեւ

Ածին ՑԵՎ. ԱՂԵՐԻ ՇԵՐՏԵՐԻ. — Ցերը վոր կազմվեցին լեռնալին ծալքերը, նրանց կողքին անգուսդներ առաջացան, Դրանցից ծովիրի հետ կապվողները լցվեցին ջրով: Ծովախորշերի ճահճում ափերին անտառներ եղին աճում: Հաճախ արդ ափերը նստում եյին: Ծառերը վերեից ծածկվում ելին ծովային լիցքով, գանդաղորեն քարքայվում և դառնում քարածուխ:

Բացի դրանից: Ցերը ծովախորշերը չորացան, նրանցից շատերի տեղերում հալանաբերվեցին թե կերակը և թե ալ ազերի հարուստ հանքեր:

Այդպիսով մետաղալին գոտին և քարածիսի շերտն ու այդախամվերը ընթացակցում են իրար: Դա պատահականություն չեւ այլ որինաչափությունն:

Նորակազմ լեռներում մետաղային գոտին ավելի քիչ և յերեան զալիս: Աւրիշ մետաղներից ավելի հաճախ այստեղ լինում են վոսկի, արծաթ, պղինձ: Քարածիսային շերտ այստեղ դուրս չունի: Դրա փոխարին նորակազմ լեռներին կից հարթություններում ավելի հաճախ են պատահում նավթային շերտեր, քան հին լեռների մոտ:

ՀԱՆԱԾՈՒՆԵՐԻ ՑԵՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ: — Այս կամ այն ոգտակար հանքի տեղագրությունը կարող և շատ հարուստ լինել, բայց միենալու ժամանակ քիչ ոգտագործված: Այդ կախված է նրանից, թե ինչպես և վորտեղ և գտնվում այն, կան արդյոք հարմար ճանապարհներ նրան հասնելու համար, և ինտստ ունի հանքը սպառման վայրն արտահանելը: Այս բանը վերաբերում է առանձնապես այն պիսի մեծածավալ բռներին, ինչպիսիներն են լերկաթահանքն ու քարածուխը: Այդպիսի բռները յերկաթուղիներով կամ առավել եւ այլ սովորական ճանապարհներով հեռավոր վայրեր տեղափոխելը շահավետ չեւ: Նրանց կարելի յեւ փոխադրել կամ մոտիկ վայրեր կամ ջրային հժան ճանապարհներով: Բայց դրա համար անհրաժեշտ է, վոր կամ յերկաթահանքն ու քարածուխն իրար մոտիկ վայրերում գտնվեն, վորպեսզի հենց տեղում առաջացող գործարաններն ոգտագործեն յերկաթահանքն ու քարածուխը, կամ յերկաթահանքի և քարածիսի պաշարները ծովերի կամ նավարկելի գետերի և լճերի ափերին գտնվեն: Ճետագայում Անդլիան, Գերմանիան, Միացյալ Նահանգներն ուսումնասիրելիս մենք կտեսնենք, վոր իրականության մեջ այդպիսի դեպքեր կան:

ՅԵԶՐԱՓԱԿԻՉ ԶՐՈՒՅՑ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻջնաշատին ԲԱԺԱՆՈՒՄԸ, — Թափառական ժողովության իրենք են ձեռք բերում այն ամենը, ինչ անհրաժեշտ և իրենց գոյության համար: Նրանք վոչինչ, կամ զրեթե վոչինչ չունեն վաճառելու, վոչվորեց և վոչչովի ել զնում կատարել չեն կարող: Համարյամինուն զրության մեջ են գտնվում քոչվոր-անասնապահները, ըսրչային հողագործությամբ պարապող յերկրագործները: Այդ բոլոր ժողուրդների մեջ տնտեսությունը պարփակվում և վնչ միայն իրենց ամրող լերկոցի, այլ մինչեւ իսկ նրանց բնակավայրի սահմաններում:

Այստեղ յուրաքանչյուր առանձին տնտեսություն արտադրում և համարյա այն ամենը, ինչ անհրաժեշտ է գոյության համար: Նատ քիչ բան և վաճառվում ուրիշներին և քիչ ել գնվում:

Սրա հակառակ պատկերն են ներկայացնում արդյունարերական յերկրները, Հաճախ նրանց տնտեսության շրջանը գառնում և ամբողջ աշխարհը: Նրանք արտադրում են զանազան գործվածքներ և իրեր, վորոնք առավելապես վաճառքի համար հն և վնչ թե սեփական գործածության: Վորքան ավելի շատ մասսայական գործածության իրեր են արտադրում նրանք, այնքան ավելի պետք և ընդլայնվի սպառման շուկան: Մյուս կողմից՝ նրանք իրենց անհրաժեշտ կենսամթերքների և ֆարբիկալին հումքի մեծ մասը պետք եզնեն նրանք աշխատում են այդ բոլորը գնել այնտեղ, ուր այդ հնարավոր և ձեռք բերել ըստ կարելույն եժան գնով, ամենալավ վորակի և բավականաշափ քանակությամբ: Վորպեսզի եժան ապրանքը չթանգանար փոխադրության խոշոր ծախքերի պատճառով և վորպեսզի այն ճիշտ ժամանակին հասներ նշանակված տեղը, անհրաժեշտ եր կարգի բնրել ճանապարհներն ու փոխադրության միջոցները:

Մինչև 19-րդ դարը հեռավոր վայրեր փոխադրվում եին միայն ամենաթանգապին ապրանքները, ինչպես վոսկի, թանգապին քարեր, փղոսկր, մորթիներ, ձկներ, համեմունքներ, թել, սուրճ, կակաո, փոքր քանակությամբ (գլխավորապես ջրային ճանապարհով) — հացահատիկ և փայտեղենու թաշի տեսակետից համաշխարհալին շուկա զուրս լեկող ապրանքների քանակությունը շատ համեստ եր: Ամեն ինչ փոխվեց, յերբ տրանսպորտի մեջ սկսեց գործադրվել շոգին: Շոգին ավելի շատ առաջատար էր 1819 թվից, յերկաթուղայինը — 1825 թվից: Նրանք արագությամբ անում և բոլորովին հեղաշրջում են համաշխարհալին տունարքը: Բազմահազար կիլոմետրերով հեռավորությունների վրա սկսում են տեղափոխել այնպիսի մեծածավալ տաղանքներ, ինչպի

սինկրն են՝ հանքերն ու քարածուխը, փայտեղենը, հացահատիկը, միսը, բամբակը, բուրզը և արդյունաբերության համար անհրաժեշտ այլ տեսակի թելեղենները։ Շոգեշարժը և մոռորային հազորդակցությունն ապահովում են փոխազդությունների թե եժանությունը և թե արագությունը։ Նա հնարավոր եր գարձնում գործն այնպես կազմակերպելու վորպեսքի մարդու իր տանը ձեռք բերի միայն այն, փորն ստանալու համար իր յերկրում տմենաբարենպաստ պայմանները կան։ Խոկ մնացած բոլորը, ինչ վոր այլ յերկրներում կարելի է ավելի եժան զայտ ձեռք բերելու քան թե իր յերկրում, ստացվում և այդ յերկրներից, պայմանով, սակայն, վոր տեղափոխությունն եժան լինի։

Այն յերկրները, վորոնք մթերքներ են ձեռք բերում միայն սեփական գործածության համար, մեկուսացած մնացին այդ շարժումից։ Խոկ այն յերկրները, վորոնք ներդրավված են համաշխարհալին ապրանքաշրջանառության մեջ, սկսեցին ավելի և ավելի մասնակիտանալ արդյունքների արտազրության մեջ, վորոնց մշակումն ամենից ավելի նպատակահարժմար եր տեղական պայմանների տեսակեալից։ Վորտեղ հանքերի մեծ պաշարներ կան և վորտեղ նրանք հարժար են դասավորված, այնտեղ զարգանում ե լեռնալին արդյունաբերությունը և նրա արտադրանքների արտահանումը։ Բարեխսառն դուռը հացառատ վայրերն արտահանման համար հաց են սատակարարում, տաք կլիմայի շրջանները—բամբակ և այլն։ Մի խոսքով ընական արտադրական ուժերի աշխարհագրական բաշխումը, տրանսպորտի հարժարության պայմաններում, առաջ և բերում աշխատանքի միջազգային բաժանումն, ինչպես նաև կենսամթերքների և հումքի արդյունահանումն ու տեղափոխությունը։

Միևնույնը վերաբերում ենաև արտադրանքների վերամշակմանը։ Այդ բանը կատարվում է այնտեղ, վորտեղ կա վառելիք, ելեկտրական եներգիա և վերամշակման համար անհրաժեշտ հումք, կամ այնտեղ, ուր նրանք տեղի բարենպաստ դիրքի շնորհիվ կարող են եժան բերվել այնտեղ ուր բավականաչափ զարգացած և տրանսպորտը փոխազդությունների և հումքի սպասարկման համար. այնտեղ, ուր խիտ ազգաբնակություն կա։

ՑԵՐԿՎՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԻՊԵՐԸ.—Համաշխարհալին առևտուի մեջ մասնակցություն ունեցող յերկրները կարելի յե յերեք խմբի բաժանել՝ գյուղատնտեսական, արգյունաբերական և խառն տիպի։

Գյուղատնտեսական կոչվում են այն յերկրները, վորոնք ձեռք են բերում և համաշխարհալին շուկային մատակարարում գյուղավորապես կենսամթերքներ և հումք, իսկ դրա փոխարեն ստանում են գործվածք-

Ներ և իրեր Արդյունարկերական լերկրներն ավելցուկով արտադրում և համաշխարհային շուկայում վաճառում են իրեր, իսկ խառն տիպի յերկը ընթացական հումքի արդյունահանումը և գործվածքների և իրերի արտադրությունը բավական հավասարաշատի և բաշխվում է Բայց զյուղատնտեսական լերկրներն ել ներմուծում են վոչ միայն իրեր, այլ և մեքենաներ և հումք. այդ ցույց և տալիս, վոր նրանք ել արդյունարերություն ունեն: Համաշխարհային տակարին մասնակցող լերկրներից չկա մեկը, վորտեղ բոլորովին արդյունարերություն չլինի: Կան յերկը ընթացական գյուղատնտեսությունը խիստ գերակշռում և արդյունարերությանը: Միայն զյուղատնտեսության այդ մեծ գերակշռության պատճառով ել այդ լերկրները զյուղատնտեսական են կոչվում: Դրանք են՝ ԽՍՀՄ, Սպանիան, Հունգարիան, Ականդինավյան լերկրները, Կանադան, Արգենտինան, Բրազիլիան, Ավստրալիան, Հնդկաստանը, Չինաստանը:

Խառն տիպի լերկրների շարքին են պատկանում Միացյալ Նահանգները, Ֆրանսիան, Իտալիան, Յապոնիան:

Երգյունաբերական լերկրներն են՝ Անգլիան, Գերմանիան, Բելգիան, Հոլլանդիան, Շվեյցարիան:

ՅԵՐԿՐՈՐԴ ԹԵՄԱ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԴԱՍՎՈՐՈՒՄԸ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՃՅՈՒՂԵՐՈՒՄ ՅԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՊՐԱՆՔԱՓՈԽԱՎԱՀԱԿՈՒԹՅՈՒՆԸ


Արտադրության և ապրանքափոխանակության զլխավոր արտադրանքներն են կենսամթերքները, հումքը և գործարանալին ապրանքները:

ՄՆԵԴԻ ՅԵՎ, ՀԱՄԻ ՄԹԵՐՔՆԵՐԸ

Մննդամթերքներից ամենակարևորներն են հացը, միսը, կաթնային և սննդահամալին մթերքները:

ՀԱՅՔ:—Հացահատիկների զանազան տեսակներն իրենց աճեցողության համար միենուին քանակությամբ աաքություն և խոնավություն չին պահանջում:


Յեվ այս և այն ամենից ավելի պահանջում և բրինձը: Դա արեգադարձալին և մերձարկարգալին կլիմայի ըուլս և նըա աճման



Հասարակած պահանջման գույքը Հասարակած պահանջման աշխարհագիր

համար ամենից ավելի նպաստավոր և մուսոնական շրջանի կլիմանց Առավելապես այստեղ ել աճում և ըրինձը:

Կլիմայի վերաբերությամբ պահանջկոտ լինելու տեսակետից հետեւալ տեղը բռնում է մայիսօց կամ սիմբնդրը: Դա առավելապես ամերիկան բռնս և (Նորա հայրենիքն ել Ամերիկան և): Նա տարածված է Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հարավային մասից մինչև Արգենտինայի միջին մարզերը: Յեվրոպայում սիմբնդր մշակում են Միջերկրական ծովի շուրջը գտնված լերկրները, Հունադարիան, Ռումինիան, ԽՍՀՄ—Ռւկրայինան և Հյուսիսային Կովկասը:



Հայահատիկների գլխավոր շրջանները և տեղափոխության ճանապարհները:

Մի փոքր ավելի սակավ տաքություն ու խոնավություն և պահանջում ցորենք: Միմինդրի համեմատությամբ նա բավարարվում և ավելի կարճատես ամառով, բայց պահանջում և ավելի տաքություն և խոնավություն, ինչպես նաև ավելի լավ հող, քան թե հաճարը (ամենից լավ աճում և սեահողում): ԽՍՀՄ ցորենի շերտը հարավային սեահողային շրջանն և, մինչդեռ հյուսիսում գերազանցում են հաճարն ու վարսակը:

Ցորենի գլխավոր արտադրողներն են ԽՍՀՄ, Արևմտյան և Հայավային Յելլուոպան և Ամերիկան: Հյուսիսային Ամերիկայում ցորեն և մշակվում առանձնապես Միացյալ Նահանգների հյուսիսային շեր-

տում և Կանադայի ներքին մարզկրում, Հարավային Ամերիկայում—Արգենտինայում: Բացի դրանց՝ բավական շատ ցորեն են մատակարարում Աֆրիկայի հյուսիսը, Ավստրալիայի հարավ-արևելքը, Հրնդկաստանի հյուսիս-արևմուտքը, Կոքեան, Մանջուրիան և Հյուսիսային Չինաստանը:


Համարի համար լիովին հարմար և ձին Աշխարհի և Հյուսիսային Ամերիկայի ամբողջ հյուսիսային շերտը ցամաքալին կլիմայով և ճիշմամսաբաշին հողով, բայց Արևմտյան Յելլոպոպան և Հյուսիսային Ամերիկան անցել են առավելապես սպիտակ հացի զործածության և հաճարքիչ են արտադրում: Նրա գլխավոր արտադրողներն են ԽՍՀ Միությունը (համաշխարհային արտադրության կեսից ավելին), Գերմանիան և Էկսաստանը:

Պարբես բալոր հացաբուլիսերի մեջ ամենից ավելի կարճ ժամանակամիջոցում և հասնում: Նա կարողանում է հասնել Յելլոպոպալի հեռագործում (Ֆինլանդիայում և ԽՍՀՄ) սառնամանիքներն սկսվելուց առաջ, իսկ Ռևկրայինական տափաստանային շրջանում կամ Սահարայի սահմաններին՝ մինչև յերաշտն սկսվելը: Այդ հանգամանքի շնորհիվ գարեն բարեխառն գոտու հյուսիսային և հարավային ծալքամասերի գլխավոր ըուլոն եւ:

Վարսակն ամառային մեծ շողի կարեք չի զգում և կարող ե հասունանալ յերկար ժամանակամիջոցում: Այդ տեսակետից վարսակը հակադիր և գարուն: Գարին ցամաքալին կլիմայի բուկս և, տաք, թեև կարճ ամառով: Վարսակն ամենից ավելի հարմարված և ծովալին կլիմացին: Վարսակը մարզու սիրած կերակուրն և Սկանդինավիայում, Շոալանդիայում, Արևելյան Կանադայի ծովափնյա շրջանում և Միացյալ Նահանգների հյուսիս-արևելքում: Բայց վարսակը, ինչպես նաև դարին, գլխավորապես իրրե կեր և ծառայում: Խոշոր լեզվուրավոր անասունների (տավարի) և ծիրերի համար. գարին սիմինդրի հետ միասին ծառայում ե իրրե կեր նաև խոզերի համար:

Հարյուրավոր միլիոն մարդկանց համար հացի տեղ ե բռնում նաև սուրբոն կամ աֆրիկան կորեկը, բայց նա սպավում ե տեղում և միջադպային առեստի առարկա չի դառնում:

Համաշխարհային առևտորի գլխավոր հացանատիկներն են ցորենը, սիմինդրը և բըինձը, բայց նրանք ել համաշխարհային առևտորի առարկա յեն դառնում միայն իրենց փոքր մասով. այդպես, ցորենի բերքի մոտ $\frac{1}{5}$ -ը, սիմինդրի և բընձի $\frac{1}{20}$ -ից միքիչ ավելին և համաշխարհային շուկա գուրս գալիս:



ՀԱՐԵՒՆԻՔ առլուստիլուս Բլյուն դիլիմուգը՝ 75° Հ. բ. հ. ր. և առկարգի թվուն ձանձարագործ հները:

Դիագրամ կազմեցեք. 1926թ. տվյալները պարունակող հետեւյալ աղյուսակի համաձայն:

ՀԱՑԱՀԱՏԻԿՆԵՐ	ՍԻԼԻՆ ՄԱՆԿՆԵՐ		Հացահատիկի դլխավոր մատակարար ները համացարհային շուկայում (մատակարարածի քանուկի կարգով)
	Համաշ- խարհ. բերք.	Համաշխ. շուկա դուրս կել	
Ճարին	110	20	Կանագա, Արգենտինա, Միացյալ Նահանգներ, ԽՍՀՄ, Ավստրալիա:
Բրինձ	120	7	Հնդկաստան:
Մայիս	110	7	Արգենտինա, Միացյալ Նահանգներ, Ռումինիա:
Վարսավ	60	2	Արգենտինա, Կանագա:
Համայը	40	2	ԽՍՀՄ, Միացյալ Նահանգներ:
Գարի	30	3	ԽՍՀՄ, Հնդկաստան, Կանագա, Միացյալ Նահանգներ:

Հացահատիկի դլխավոր գնորդներն են լեվրոսպական չորս արդյունաբերական լերկրները՝ Անգլիան, Ֆրանսիան, Բելգիան և Հոլլանդիան, և ասիսական լերկու խիտ աղջաբնակություն ունեցող լերկրները՝ Զինաստանը և Յապոնիան:

ՄիԱԾ. ՅԵՎ. ԿԱԹՆԱԾԱԹԵՐՔՆԵՐԸ. — Միս և կաթնամթերքներ են արտադրում դլխավորապես այն լերկրները, վորտեղ կան չվարած տափաստանների ու լեռնալին մարզագետինների մեծ տարածություններ, կամ վորտեղ կլիմայական պայմանների (ծովալին) համաձայն ավելի շահավետ և կաթնատու կենդանիների համար խոտեր ցանելով զբաղվել քան հացահատիկալին տնտեսությամբ: Այդպիսի պայմաններ կան ԽՍՀՄ-ի շոտ վալրերում (Միության լեվրոսպական մասի հյուսիսը, Կազակուստանի և Սիբիրի տափաստանները, Կովկասյան և Ալտայան լեռներն իրենց նախալեռներով): Յեվրոպաց կաթ և միս մատակարարող անասնապահնության համար առանձնապիս բարենպատ պայմաններ կան այն լերկրներում, վորոնք ընկած են Ալտայանտան ովկիանոսի, Հյուսիսային և Բալտիկ ծովերի տափերին և Ալպիական լերկրներում: Ամերիկայում — Միացյալ Նահանգ-

ներում, Կանադայում, Բրազիլիայում, Արգենտինայում և Ուրուգվայում, վերջապես—Ավստրալիայում և Նոր-Զելանդիայում:

Այժմ միսը համաշխարհային շուկա յե զալիս սացցրած կամ ապբատած, այլ և իրեւ մսի պահածոներ (փակված թիթեղլա արկղներով) և մսի եքստրակտ: Աշխարհիս ամենախոշոր մսի Փարբեկաները դանդում են Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում (Չիկագո և Կանզաս քաղաքներում), Անգենտինայում և Ուրուգվայում:

Կաթը ևս առավելապես արտահանվում և իրեւ խտացրած կաթ թիթեղյա փակ տուփերով: Առանձնապես շատ կաթ են արտահանում Հոլլանդիան և Միացյալ Նահանգները: Ցուղի արտահանությամբ առանձնապես աչքի յեն ընկնում Դանիան, Ավստրալիան, Նոր-Զելանդիան, ԽՍՀՄ-ն. պանրի արտահանությամբ՝ Նոր-Զելանդիան, Հոլլանդիան, Խտալիան, Շվեյցարիան և Կանադան:

Համաշխարհային պատերազմից հետո հացահատիկի առեւտրը կրծատվեց, իսկ մսի և կաթնամթերքների առեւտրն աճեց, բայց և այնպես այժմ ել այն շատ յետ և մնում հացահատիկի առեւտրից: Մըսամթերքներ արտահանվում են մինչեւ 3 միլիոն տոնն, խտացրած կաթ՝ $1\frac{1}{2}$ միլիոն տոնն, յուղ՝ $1\frac{1}{2}$ միլիոն տոնն և պանրի՝ մոտ 300 հազար տոնն:

Բոլոր մսի և կաթնամթերքների կեսից ավելին գնում և Անգլիան և մոտ $\frac{1}{10}$ -ը՝ Գերմանիան. մնացած յերկրները՝ շատ ավելի պակաս:

ՀԱՄԻ ՄԹԵՐՔՆԵՐԸ.—Համի մթերքներից 1) շաքար են արտադրում ինչպես բարեկառն գոտու տաք մասի յերկրները (ճակնդեղի շաքար), այնպիս ել արեադարձալին կլիմայի յերկրները (յեղեգնաշաքար). 2) թեյը և սուրճը մերձարեադարձալին կլիմայի յերկրների արտադրանք են և 3) կակաոն—արեադարձալին շրջանի:


Առանձապես շատ ճակնդեղի շաքար են արտադրում և վաճառում Գերմանիան, Զելյովակիան, Ֆրանսիան, Բելգիան և Ռումանիան. յեղեգնաշաքար—Կուբան, Յավան և Հնդկաստանը: Շաքարի գլխավոր գնորդներն են Անգլիան և Միացյալ Նահանգները, Թիվի արտադրության և արտահանման մեջ առաջին տեղն են ըստում Հնդկաստանը և Ցեյլոն կղզին, յերկրորդ տեղը՝ Չինաստանը և Յավոնիան: Թիվի գլխավոր գնորդներն են՝ Անգլիան, ԽՍՀՄ, Միացյալ Նահանգները և Ավստրալիան: Սուրճի արտադրության մեջ առաջին տեղը ըստում ե Բրազիլիան, իսկ գնման մեջ—Միացյալ Նահանգներն ու Ֆրանսիան: Կակաոյի արտադրության մեջ առաջին տեղն ե ըստում անգլիական գաղութ Վուկի ծովափը (Աֆրիկայում), ապա հետեւում են Բրազիլիան և Եգիպտորը

(Հարավային Ամերիկա), Գլխավոր գնորդներն են Միացյալ Նահանգներն ու Գերմանիան:

Հ Ա Խ Ա Բ Ը

Համաշխարհալին շուկա հանգող հումքի զանազան տեսակներից ամենակարևորներն են վառելանյութերը (քարածուխ և նավթ), յերկաթահանքերը, թերանյութերը, փայտեղնը և կառոչուկը:

ՔԱՐԱԾՈՒԹԻՒՅԻ:—Քարածուխն իրբե մեծածավալ ապրանք արտասահման և արտահանվում վոչ այն բոլոր յերկրներից, վորտեղ ձեռք ե բերվում, այլ միայն այնտեղից, զարտեղից նրա արտահանությունն եժան կնասի: Գլխավորագետ արտահանվում ե՝ Անգլիայից, ծովի ափին գտնված վայրերից (Եյուկեսոլ և Կարգիֆ): Ապա զալիս են Գերմանիայի հանքատեղերը Հռենոսի և նրա վտակների ափերին: Պատերազմից հետո քարածուխ արտահանել սկսեցին Միացյալ Նահանգները Աստվածայան ովկիանոսի ափերից վոչ հեռու ընկած հանքատեղերից, և Լինասաանը (Վերին Արևելյանից):



Քարածխի համաշխարհային ոլաշտրի աշխարհագրական տարածումը:

ՆԱՎԹԻ:—Նավթն արտահանման համար ավելի դյուրին արտադրանք ե, քան թե քարածուխը: Նա արտահանվում է իր արդյունահանման բոլոր վայրերից, առանձնապես Միացյալ Նահանգներից և

Մեքսիկայից, ԽՍՀՄ-ից, ունեցուելովից (Հարավային Ամերիկա), Պարսկաստանից:



16967 Նազմաշխարհային պաշարի աշխարհագրական տարածություն

ՅԵՐԿԱԾՎԱՆՔԼԻ.—Ցերկաթահանքի արդյունահանման մեջ առաջին տեղն են բռնության Միացյալ Նահանգները, բայց նրանք իրենք են վերամշակում այն և արտասահման են արտահանում մետաղը—չուգուն և պղղպատ:

Ցերկաթահանքի արտահանման մեջ առաջին տեղն են բռնությունափառական, Շվեդիան և Սպանիան: ԽՍՀՄ-ն կրիվոյ նորդից չերկաթահանք և արտահանում Գերմանիա և Լիհաստան:

ՊՂԻՆՁԼ, ԱՆԱԳԼԻ.—Առանձնապես զատ պղնձահանք ունի և վերամշակում է Ամերիկան, մասնավորապես Միացյալ Նահանգները. նըրանք արտահանում են այն վերամշակված ձևով: Մնացած մետաղներից համաշխարհային տռեստի համար տռանձնապես կարենը և անտազը, վոր արտահանվում է համարյա ամերովությամբ Մալակա թերակղղուց և նրան մոտիկ գտնված կղղիներից:

ԹԵՂԱՆՑՈՒԹԵՐԼԻ.—Թեղանցութերը համաշխարհային շուկա արտահանվելու տեսակետից այս կարգով են ընթանում. բամբակ—3 միլիոն տոնն, բուրդ—800 հազար տոնն, ջութ—750 հազար տոնն, կաշխարհագրություն—2

Նեփ—300 հազար տոնն, վուշ—250 հազար տոնն, մետաքս—40 հազար տոնն:

Բամբակն իր հասունացման համար պահանջում և վոչ պակաս քան 200 անսառնամանիք որ, շատ խոնավություն աճման շրջանում և անձրեխ լիակատար բացակայություն չանագի ժամանակի նրա համար հարմարավոր պայմաններ կան Միացյալ Նահանգների հարավում, Քեկանի սարտհարթում՝ Հնդկաստանում, Յնդիպատում, Միու-




Յերկաթի համաշխարհային ոլոշարի աշխարհագրության տորսօնումը

թյան՝ միջին-ասիական և անդրկովկասյան հանրապետություններում, Պարսկաստանի, Չինադաշտանի գանաղան վայրերում, Բրազիլիայի և Հարավային Աֆրիկայի մերձարևադաշտին մարզերում։ Արածանման համար բամբակի ամենաշատ ավելցուկներ ունեն Միացյալ Նահանգները, Հնդկաստանն ու Յնդիպատուր Ներմուծող զլլսավոր լերկրներն են՝ Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, Գերմանիան, Չինաստանում և Ավստրալիան, և ԱՀՄ-ն:

Զութը արևադարձալին և մերձարևադարձային կլիմայի բույս և, արտահանվում եմ միայն մի յերկրից՝ Հնդկաստանից։ Զութի կողմիա և ամուռ թելլը գործ և ածվում նույն գործվածքների համար, ինչպես կանեփինը (պարուսին, տոպրակացուկտոր, պարաններ): Սպառման տեսակետից առաջին տեղն ե

Բանվագիկ արդյունաբերական դիմումները 25 տար ներկայության հանդապահության մասնակիություն:



բոնում Անգլիան, ապա՝ Գերմանիան, Ֆրանսիան և Միացյալ Նահանգները:

Փուշն ու կանեփը բարեխառն գոտու բույսեր են Թիւացու վուշի և կանեփի զլխավոր արտադրողը ԽՍՀՄ-ն է:


Բացի ԽՍՀՄ-ից փոքր քանակությամբ վուշ և տրտահանվում Հոլլանդիայից, Ֆրանսիայից, Լիտվայից և Լիետուանից վուշի զլխավոր գնորդներն են Բելգիան, Անգլիան և Յապոնիան: Բացի ԽՍՀՄ-ից կանեփ արտահանում են նաև Խտալիան և Լիետուանը. կանեփին փոխարինող արևադարձալին թիւարույսեր տալիս են նաև Բրիտանական Հնդկաստանն ու Ֆիլիպինյան կղզիները: Կանեփի զլխավոր գնորդներն են Անգլիան (Յավատորմի կարիքների համար) և Արգենտինան (հացահատիկի և ալյուրի տոպրակների համար):

Երգի ամենամեծ քանակությունը տալիս են ընդարձակ չոր տափաստաններ ունեցող լերկրները, բայց այդ լերկրներից ԽՍՀՄ-ն առաջմ ըրդի ավելցուկներ չունի: Բրդի արտահանության մեջ առաջին տեղը բանում ե Ավստրալիան, վորը Նոր-Զելանդիայի հետ միասին ծածկում ե ըրդի համաշխարհային պահանջի կեսից ավելին: Ապագալիս են՝ Արգենտինան Ռւբրազվայի հետ միասին, Հարավ-աֆրիկան միությունը, Մոնղոլիան և Բրիտանական Հնդկաստանը:

Բրդի գնման մեջ առաջին տեղը բոնում են Ֆրանսիան և Անգլիան, ապա՝ Գերմանիան և Միացյալ Նահանգները:

Մետաքսն ստացվում ե շերամի վորդի բոժոժները յետ տալուց: Ալդ վորդը սնվում ե թթենու տերեններով: Տերենները պետք ե պարագաստ լինեն այն ժամանակ, երբ լերեան են դալիս թրթուրները: Ալդ բանը հնարավոր ե միայն արևադարձալին և մերձարևադարձային կլիմայում: Հենց այդ կլիմայի լերկրներով ել սահմանափակվում ե բնական մետաքսի արտադրությունը: Համաշխարհային պահանջի համարյա $\frac{9}{10}$ մասը մատակարարում են Յապոնիան և Չինաստանը, մնացածը տալիս են Ֆրանսիան, Խտալիան և Մերձավոր Արևելքը: Մետաքսի զլխավոր գնորդներն են Ֆրանսիան և Միացյալ Նահանգները:

Վերջին ժամանակներս մետաքսե իրերն սկսում են պատրաստել մեծ չափով վոչ թե բնական, այլ արևեստական մետաքսից, վորն ստացվում ե բնափայտի զանգվածից: Արևեստական մետաքս $2\frac{1}{2}$ անգամ ավելի յե գործածվում բնականից: Արևե-



տական մետաքս արտադրում են զլիսավորապես Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները, ապա՝ Իտալիան, Գերմանիան, Անգլիան և Ֆրանսիան:

ՓԱՅՏԵՂԵՆԻ: — Գլխավոր անտառալին շրջաններն են Հյուսիսային անտառապինն ու հասարակածայինը: Հասարակածալին չերտից արտահանվում ե միայն գունավոր փայտ և ատաղձափայտի ուրիշ արժեքավոր տեսակներ: Շինարարական փայտ և իրեր պատրաստելու համար բնափայտի զանդված մատակարարում են հյուսիսային անտառապին շրջանի լերկրները: Անտառների հարստությամբ առաջին տեղը բռնում է ԽՍՀՄ-ն, բայց համաշխարհային շուկային փարտեղեն մատակարարելու տեսակետից լերկրներն ընթանում են այս կարգով՝ Կանադա, Միացյալ Նահանգներ, ԽՍՀՄ և Ծիկիիա. աղա զայիս են Ֆինլանդիա, Լեհաստան, Լատվիա, Լիտվա: Անտառանդութերի և բնափայտի զանդվածի գլխավոր գնորդներն են Անգլիան, Գերմանիան, Միացյալ Նահանգները (նրանք շատ վաճառում են, բայց նև պիտի շատ գնում են), Յապոնիան:

ԿԱՐԻՎՈՒԿԵՐԻ: — Կառուչուկը զանազան արեադարձային բույսերի թանձրացող հյութն ե. նա վերջին ժամանակներս միջազգային կարեվորություն ունեցող ապրանք և դարձել փորովնետե արագ կերպով սկսել ե զարգանալ նրա գործածությունը ավտոմոբիլային արդյունաբերության, ինչ պես նաև արդյունաբերության այլ տեսակների մեջ վաճառքի համար համաշխարհային շուկա արտահանվող կառուչուկի ^{9/10}-ից ավելին ձեռք և բերվում հարավինասիական պլանտացիաներում (Մալակա, Ցելյոն, Զօնդլան կղզիներ). հետին պլանն են մզլած այն վայրերը, վորտեղ վայրի գրության մեջ աճում են կառուչուկի ծառերն ու թփուտները (Բրազիլիա, Բոլիվիա, Արեադարձային Աֆրիկան):

Գ Ո Բ Ծ Վ Ա Ն Ք Ն Ե Բ Յ Ե Վ Ի Բ Ե Բ

Արդյունաբերությունը զարգացել ե այն յերկրներում կամ առանձին յերկրների այն մասերում, վորտեղ գոյություն ունեցին՝ 1) հազորդակցությունների համար հարմար դիրք, 2) եներդիքալի աղբյուրների բազականաշափ պաշարներ (քարածուխ, սպիտակ ածուխ) և հանքեր, 3) խթ աղդաբնակություն և 4) փարբիկաներ սարքավորելու համար անհրաժեշտ կապիտալ թեթե տեղումը վառելանյութ կամ հանք չկա, պետք ե վոր յերկրի դիրքն ապահովի պակասող վառելանյութի, հանքի և այլ հումքի ներմուծումը:

Այդ պարմաններին բավարարում են—Արեմտյան Անգլիան (ծովափնյա զիրք, քարածխի և յերկաթի հանքեր միատեղ), Ֆրանսիայի հրուսիսն ու Բելգիան (նման պայմաններ), Իտալիայի հրուսիսը (սպիտակ ածուխ, զանցինելով Անգլիայից Հնդկաստան տանող շոգենավայրին ճանապարհի վրա՝ եժան զնուզ քարածուխ և սոտանում այն շոգենավիերից, վորոնք Հնդկաստան են զնում հացի), Միջին Գերմանիա, առանձնապես Ռուրի մարզը (միատեղ կա քարածուխ և յերկաթահանք, կարեոր միջազգալին ճանապարհներ, և' գետալին—Հոկենսու—և' յերակթուզային), Միացյալ Նահանգների մերձատլանույան մասը (ծովափնյա զիրք, քարածուխ, սպիտակ ածուխ, նաև միջ, հարմար ջրային ճանապարհներ՝ Մեծ լճերից յերկաթ սաանալու համար), Մեծ լճերի մարզը (հարմար ջրալին ճանապարհներ, յերկաթ): ԽՍՀՄ-ում արդյունաբերության կողմից առանձնապես աշխի ընկան—կենտրոնական արդյունաբերական և Լենինգրադի մարզը (հարմար զիրք), հարավալին—լեռնալին-արդյունաբերականը (յերկաթ և ածուխ), Ռուբալը (յերկաթ):

Անգլիան առաջինը դարձավ աշխարհի գլխավոր և յերկար ժամանակ նույնիսկ միակ ֆաքրիկան շնորհիվ այն հանգամանքի, վոր նա հումքեր ձեռք ըերելու և արդյունաբերական ապրանքները տարածելու համար առանձնապես նպաստավոր դիրք ուներ, այնտեղ միատեղ գլունցում եր և' քարածուխը, և' յերկաթահանքը, այլ և առևարի միջոցով կուտակված ահազին կապիտալ: Այդ պարագան Անգլիային ողնեց յերկար ժամանակով ապահովել իրեն համար թե՛ հումքի զնման և թե՛ արդյունաբերական ապրանքների վաճառահանման շուկաները: Շնորհիվ իր արդյունաբերության բարեկարգ վիճակի և առևտրական հաստատուն հարաբերությունների՝ Անգլիան յերկար ժամանակ թույլ չեր տալիս իր հետ մրցելու հնարավորության միտքն անզամ: Սակայն հետզհեան սկսում են ապակամել Անգլիայի հանքերը, նա ոկտոք և այն դրսից ներմուծի, իսկ դա թանգացնում և արտադրությունը: Իսկ այդ միենույն ժամանակ մյուս յերկրները, վորոնք առատ-առատ վառելանութ ունեն, ինչպես և հանքալին ու բուսական հումքեր (Անգլիան վերջնից չունի), և' աշխատել են սովորում, և' կապիտալ են կարողանում կուտակել: Անգլիան արդյունաբերության զանազան տեսակներում սկսում ե առաջին շարքից հետզհեան լուս մղվել նախ Միացյալ Նահանգների, ապա Գերմանիայի կողմից, նրանցից հետո նաև արդյունաբերական և իսպան տիպի այլ պիտությունների կողմից:

Յերկաթի և պողպատի մշակման տեսակետից ալժմ առաջին տեղը պատկանում է Միացյալ Նահանգներին, յերկրորդը՝ Գերմանիային, յերրորդը՝ Ֆրանսիային և միայն չորրորդը՝ Անգլիային:

Մեքենայակառացման կողմից պետությունները դասավորվում են հետեւյալ կարգով. Միացյալ Նահանգները, Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա, Բրիտանիա, Չիխոն-Սլովակիա, Շվեյցարիա:

Տեքստի արդյունաբերության կարեռագույն ճյուղերում՝ բամբակագործականի մեջ՝ թե արտադրությամբ և թե մանածի և գործվածքների վաճառքով Անգլիան պահպանում է իր առաջին տեղը: Իլիկների թվով (հազարներով) յերկրները 1926 թվին հետեւյալ գասավորությունն ունեցին՝ Անգլիա, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Գերմանիա, Ֆրանսիա, Բրիտանական Հնդկաստան, ԽՍՀՄ, Յապոնիա: Բրդի գործվածքների արտադրության և արտահանման մեջ առաջին տեղը պատկանում է Ֆրանսիային և Անգլիային. մետաքսեղենի մեջ՝ Յապոնիային, Չինաստանին, Ֆրանսիային և Իտալիային. զգեստների պատրաստման և արտահանման, այլ և շուալյութքան առարկաների մեջ՝ Ֆրանսիային. ելեկտրոսենիկական և քիմիական արդյունաբերության մեջ՝ Գերմանիային. սննդամթերքների մեջ (առանձնապես ալյուր աղալու, մսի և բանջարա-պահածոների)՝ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներին:

ՅԵՐՐՈՐԴ ԹԵՄԱ

ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԸ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՑԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՑԵՎ ԻՄՊԵՐԻԱԼԻ ԶՄԻՒ ԱՇԽԱՐՀԸ:— Շարժիչների համար շոգի և ելեկտրականություն գործադրելու շրջորդիվ արդյունաբերությունն ու առևտուրը XIX և XX դարերում դեռևս չտեսնված արագությամբ զարգացան:

Առևտուրի, բանկերի, արդյունաբերության, յերկաթուղիների և այլ ձեռնարկությունների մեջ աշխատող կապիտալն աճեց ձնահյուսի նման: Ուռմացող կապիտալի ախորժակը անկշտում եր դառնում: Իր զարգացման համար կապիտալը պահանջում էր շարունակ նորունոր ձեռնարկություններ, վորագեսդի նրանց միջոցով կարողանա ավելի մեծանալ: Կապիտալը քաղաքական սահմաններ չի ճանաչում. նա դորձում է նաև իր յերկրի սահմաններից շատ հեռու: Բայց կապիտալն

ամենամեծ ոգուաները կազող ե իր յերկրում ձեռք բերել, վորտեղ նաև
իր ձեռքերումն ե պահում ե' կառավարությունը, ե' որենսդրական հիմ-
նարկությունները: Կաօքիտալիստներն իրենց ոգուաների համար իրենց
յերկրների կառավարություններին մզում են շարունակ դեպի նորա-
նոր յերկրների զրավումն և մրցակիցների դուրս վանումն: Ամենից ա-
վելի հարուստ առևտրական և արգյունաբերական պիտու-
թյուններն ընթացան իմպերիալիզմի ուղիով, այսինքն՝ սկսեցին աշ-
խարհի ըստ կարելուն ավելի մեծ մասերը տնահսապես և քաղաքա-
կանապես սարկացնել իրենց, այն հաշվով, վոր վերջիվերջո ամբողջ
աշխարհը պետք ե մասսամբ տմենից ավելի ուժեղ պետության գաղու-
թի, մասսամբ ել կիսազարութի *): Վերածվի: Իրենց կողուակիչ ձգտում-
ներն ամենամեծ չափնորով իրավործել հաջողեցին աշխարհի ամենահո-
րուստ կապիտալիստական պետությունները: Նրանք արդեն իրենց
ձեռքն են հսկաքել արգյունաբերության հիմունքները—քարածուին
ու յերկաթը, իսկ հումքից՝ բամբակը: Ն. Ն. Բարանսկու հաշիվներով,
մինչև համաշխարհային պատերազմը յերեք պետություններին—Հյուսի-
սաբին Ամերիկայի Միացյալ Նահանգներին, Անգլիային և Գերմանիա-
յին—բաժին եր ընկնում քարածխի համաշխարհային արգյունահան-
ման մինչև 70 % -ը և յերկաթի 80% -ը: Բամբակի արտադրության $\frac{2}{3}$ -ը
Միացյալ Նահանգների բաժինն եր և $\frac{1}{4}$ -ը՝ անգլիական գաղութների՝
Հնդկաստանի և Յնդիականութի բաժինը: Միացյալ Նահանգները, Ան-
գլիան և Գերմանիան իրենց կապիտալները ներդնում եյին զանազան
ձեռնարկությունների մեջ, թե իրենց և թե ոտարների: Նրանք մեծ
վտանգի յելին յենթարկվում, բայց և ստատիկ հարստանում եյին: Այդ
յերեք պետությունների կողքին իր հարստությամբ կանգնած ե նաև
մի չորրորդը, բայց նրա կապիտալը կանխիկ ե, գտնվում և մասնը կա-
պիտալիստների ձեռքին(վոչ թե վաճառականների, այլ պարզապես խա-
նութանանների): Նրանք կամենում են իրենց խնայողությունների
տոկոսները շահել առանց վորեն վտանգի, զրամը շահով տալ և վոչ թե
ձեռնարկության համար գործադրել: Այդ յերկիրը մրանսիան ե, առա-
վելապես վաշխառուական կապիտալի յերկիրը: Նույն Ն. Ն. Բարան-
սկու հաշիվներով՝ համաշխարհային կապիտալի ընդհանուր նախապա-
տերազմական գումարն ալսպես եր դասավորվում: Անգլիային բաժին
եր ընկնում նրա 220% -ը, Միացյալ Նահանգներին -220% , մրանսիա-

*.) Կիսազարությը գաղութից միայն նրանով և տարբերվում, վոր պահպանում
և քաղաքական անկախության յերկությը (ունի սեփական կառավարիչներ), բայց
գտնվում է իմպերիալիստական պետություններից վորեկցե մեկի կողմէց լիտկատար
ֆինանսական ստրկացման վիճակում:

յին— $18^0/0$, Գերմանիային— $16^0/0$, Ռուսաստանին— $5^0/0$, Յապոնիային— $2^0/0$, Խոշոր պետությունների կողքին իրենց հարստությամբ աչքի ելին ընկուռմ ցերկու փոքրիկ պետություններ—Բելգիան և Հոլլանդիան, Բելգիան իր կապիտալները ձևոք և բերել առևարով և արդյունաբերությամբ, Հոլլանդիան—առավելապես առևտրի շնորհիվ:

ԱՃԽԱԲՀԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԲՐԱՐԹԵՂ զննելով՝ դուք կհամոզվիք, վոր իրենց գիրքով ու ընական արտադրական ուժերով ամենից ավելի բարենպաստ պայմաններում են զտնվում այն պետությունները, վորոնք բարեխառն գոտում արենլան և արեմայան կողմից կցվում են Առլանտյան ովկիանոսին, ինչպես նաև Միջին Յելքոպայի պետությունները: Հենց նրանք ել ուրիշներից առաջ գարձան առևարտական և արդյունաբերական պետություններ: Ամենից առաջ ալդ ճանապարհի վրա աչքի ընկան Հոլլանդիան, Ֆրանսիան, Անգլիան, Բելգիան, ավելի ուշ—Գերմանիան և Հյուսիսային Ամերիկայի Միացլալ նահանգները: Ել ավելի ուշ զարգանալ սկսեց, բայց իր զարգացման մեջ արագությամբ առաջ գնաց խաղաղ-ովկիանոսյան պետություն—Յապոնիան:

Արիշների հողերը գրավելու ուղին բանեցին առաջին անգամ վաշ թի վերև հիշված պետությունները, այլ այն պետությունները, վորոնք հարմար դիրք ունեին գեղի Ամերիկա, Աֆրիկա և Հնդկաստան (այն ժամանակ Աֆրիկայի շուրջը պատվիրով) տանող ճանապարհների վրա, այսինքն՝ Սպանիան և Պորտուգալիան:

Սպանիան XVI դարում ահազին տարածությամբ հողեր գրավեց Ամերիկայում (Մեքսիկա, Կենտրոնական Ամերիկա Անտիլան կղզիներով և ամբողջ Հարավային Ամերիկան, ըստի Բրազիլիայից, վոր գրավել ելին պոլտուզալացիները): Բացի գրանից Սպանիայի ձեռքումնելին գտնվում Հյուսիսային Աֆրիկայի առլանտյան ափերը և Ֆիլիպայինլան կղզիներն՝ Ասիայում: Պորտուգալացիները XVI դարում, բացի Բրազիլիայից, նվաճել ելին Միջին Աֆրիկայի արևմտյան և արենլան կողմն ընկած մեծ տարածություններ, ինչպես նաև զանազան իերկոնքներ Հնդկաստանում և Արենլան հնդկական արխիպելագի մի շարք կղզիները:

Միենուն ժամանակ տեղի յէ ունենում Ռուսաստանի արագ առաջխաղացումը ցածրագային ճանապարհով զեպի արևելք-Ռուսաստանը միակ յելքոպական պետությունն եր, վորի առաջ նման հնարավորություններ կային բացված: XVI և XVII դարե-

րում Ռուսաստանը գրավեց Հյուսիսային Ասիան մինչև ընդհռուր Մինձ ովկիանոսը, XVIII և XIX դարերում տեղի ունեցավ Ռուսաստանի ընդարձակվելը Յեվրոպայում դեպի Բալտիկ և Սև ծովերի ափերը, Կովկասի և ալյժմյան Թուրքմենստանի և Ռւզբեկստանի տերրիտորիաների նվաճումը: Ռուսաստանում բոլոր նոր նվաճված լերկրները միաձուլվում եյին մայր լերկրի հետ, այնպիս վոր Ռուսաստանի նոր նվաճած հողերը բառի ճշգրիտ իմաստով զաղութ կոչվել չեն կարող: Բայց վերաբերմունքը գեղի ալգ նոր լերկրները հին Ռուսաստանում հատկապիս այնպիսի վերաբերմունք եր, վորպիսին լինում ե գաղութների նկատմամբ: Նրանց ազատություն չեր տրվում ինքնուրուցն կերպով զարդանալու: Ազգային փոքրամասնությունները (ալլազգեներն, ինչպիս առում եյին հին Ռուսաստանում) վոչ միայն հալածանքի ելին լինթարկվում, այլ հաճախ նաև բոլորովին բնաջնջվում ելին, Յերբ արդյունաբերությունն սկսեց զարգանալ Յեվրոպական Ռուսաստանում, թույլ չելին տալիս, վոր նույնը զարգանա վոչ Կովկասում վոչ ել Միջին Ասիայում: Գետության ասիական մասերը, վորոնք բնակչության վոչ-ուստական մեծամասնություն ունեն, հարկադրված եյին հումք մատակարարել և արդյունաբերական կենտրոններից յեկած (այսպիս կոչված մայր լերկրից) արդյունաբերական ապրանքները գնել:

Սպանիան և Պորտուգալիան գրավված եյին միայն իրենց դաղութները կողոպտելով: Կողոպտար չոփնեց, վոր ալդ յերկը ներում արդյունաբերությունը զարգանա, վորոնք մինչև այժմ ել գյուղական և գյուղատնտեսական լերկրներ են մնում: Սպանիային հաջողվեց կողոպտած դրամներով բավական հզոր զինվորական նավատորմ կառուցիլ, բայց այդ նավատորմը վոչնչացվեց Անգլիայի դեմ սկսած պայքարի ժամանակի: Սպանիայի և Պորտուգալիայի ծաղկումը շատ կարճատե յեղավու Սպանիական յեկան ծովային պետություններ - սկզբում Հոլանդիան, ապա Անգլիան: Հոլլանդիան ժամանակավորապիս գրավեց Հյուսիսային Ամերիկայի հուսիսային ափերը, այստեղ նոր Ամստերդամ առնունով քաղաք հիմնեց, վոր հետագայ ևմ անգլիացիները վերանվանեցին Նյու-Յորկ: Նույնպիս ժամանակավորապիս հոլլանդացիները գրավեցին Ավստրալիան, վոր մի ժամանակ նոր Հոլլանդիա կոչվեց: Հոլլանդիայի համար ամենից ավելի արժեքավոր գրավումները հանդիսացան նրանց հարավային Ասիայում կատարած նվաճումները. այստեղ Հոլլանդիան կարողացավ Պոր-

տուղալիսայից խլել և պահանջել Արենելյան Հնդկաստանի խոշոր կղզիները (բացի Բորնեոյի մի փոքրիկ մասից, վոր անցալի Անգլիայի ձեռքը) և Մոլովկյան մանր, բայց իրենց համեմունքներով արժեկրատիր կղզիները, Բացի գրանից Հոլլանդիայի ձեռքը մնացին Անտիլյան մանր կղզիներից միքանիսը (Կենտրոնական Ամերիկա) և մի փոքրիկ գաղութ Հարավային Ամերիկայի հյուսիսում:


Հոլլանդիայից ավելի ուշ, բայց ծովերին աիրավիտելու համար աշելի խոշոր նախատորմի վրա հենված՝ ասպարեզ և գալիս Անգլիան։ Նրա հանդիս գալու ժամանակ գոչ-նելլրոպական մայր ցամաքներից և կղզիներից շատերն արգեն գրավել ելին վճչ միայն Հոլլանդիան, այլ և Ֆրանսիան (Հյուսիսային Ամերիկայում, Հնդկաստանում), Անգլիան պայքար սկսեց թե Հոլլանդիայի և թե Ֆրանսիայի դեմ և սրանից եւ նրանից ել խլեց նրանց գաղութների խոշոր ժամանակ Բացի գրանից յերկրներ նվաճելով զանազան տեղերում, ուր դեռ յելլրոպական այլ պետությունները չելին հաստատվել Անգլիան իր գաղութներով ծավալից ամրոջ աշխարհում։ XVIII դարի վերջին քառորդում Անգլիայից անջատվեց նրա հլուսիս-ամերիկյան գաղութների կեսը, վորը ըստ անկախություն ձեռք բերեց Ամերիկայի Միացյալ Նահանգների անունով, բայց XIX դարում Անգլիան իրեն ամելորդով պարզեատրեց այդ կորստի փոխարեն, ահազին հողեր նվաճելով Աֆրիկայում և Հընդկաստանում։

Աֆրիկայի բաժանման աղդանշանը XIX դարի ութունական թը-վականներին ավեց բելգիական Լեռողոլդ թագավորը, բելգիական առևտուա-արդյունաբերական ամենախոշոր գործարկուներից մեկը։ Նա գրավեց Ստենլիի հետազոտած Կոնցո գետի ավաղանը։ Բելգիային հետեւցին այլ պետություններ, նրանց թվում նաև Գերմանիան։ Նա ուշ հանդես յեկավ տշխարհի բաժանման խնդրում և ստիպված եր բավարարվել Աֆրիկայի վոչ առանձնապես համեղ պատառներով, վորոնց մուս պետությունները զեռես ձեռք չելին մեկնել։ Բացի գրանից նա գրավեց Նոր Գվինեայի մի մասը և մի շաբք փոքրիկ կըդ-պիներ։

Աշխարհը բաժանելու ժամանակ ուշ հանդես յեկան նաև Յապոնիան և Միացյալ Նահանգները, Յապոնիան շարժվեց գեպի մերձակա մայր ցամաքի-Ասիայի կողմը, վորտեղ գրավեց Կորեան։ Միացյալ Նահանգներն զրազվեցին Ամերիկան տիրապետելով։


Յեկ այս և այն պետությունները կանգ չեն առնում նաև կըդ-պիների տիրապետության առաջ (Յապոնիան-Ֆորմոզա կղզին, Սա-

Հայաստանի պատմութեան անմասնութեան համար




իսակին կղզու հարավային մասը և մի շարք մասն կղզիներ. Միացյալ Նահանգները —Պորտո-Ռիկո կղզին և Անտիլլան կղզիներից մի շարք մասն կղզիներ, Սանդվիչլան կղզիները կամ Հավայի կղզիները, Ֆիլիպինները և այլն), Գաղութներ ունեցող պետությունների շարքում հանդես ե գալիս Խալիֆան, վորոն Աֆրիկակալում Տաճկաստանի ձեռքից խլում և Տրիպոլիտանիան կամ Լիբիան և յուրացնում Հարեշտանին կից գոնված յերկրները. ասպարեզ և գալիս նաև Թունիան (Փրենլանդիա և Անտիլլան կղզիներից միքանի մասն կղզիներ, վոր վերջերս վաճառեց Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներին):

ՅԵՐՐԻՏՈՒՄ



ԱԶԴԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ



Աշխարհի բաժտնումը մեծ պետությունների միջև 1914 թ.:

ԱՇԽԱՐՀԻ ՎԵՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ ՊԱՏԵՐԱՋՄԻՑ ՀԵՏՈ — Համաշխարհային պատերազմից հետո տեղի ունեցավ և Յելլուպայի պետությունների նոր սահմանավորումն, և նոր վերաբաժանումն ու դադութների բաշխումն: Գերմանիան կորցրեց իր բոլոր զաղութները: Նրա գաղութների մեծ մասն Աֆրիկակալում, նոր Գիլբրենայի հյուսիսարևելյան տիրապետություններն արևելքից կպած արևիպելագով միասին անցան Անգլիային, միքանի Աֆրիկան յերկրներ — Ֆրանսիային և փոքրիկ հողամասեր — Ենթակային:

Պատերազմի շնորհիվ հարստացած Յակոնիան ու Միացյալ Նա-

հանգներն սկսեցին յեռանդուն մուտք գործել և խորանալ՝ առաջինը — Զինաստանի սահմաններում։ Եթերորդը — ամերիկան լիրկրներում։ Միացյալ Նահանգներն առայժմ ընթանում են վոչ այնքան գաղութներ գրավիլու, զորքան կիսազաղութիներ կազմելու ճանապարհով, վորտեղ իրենց լիակատար տեր ու անորեն են համարում։ Միացյալ Նահանգները կիսազաղութ են դարձել կենտրոնական Ամերիկայի հանրապետությունները, Կուրա կղզին, Համբար կղզին (լիրկու հանրապետություններով) և Հարավային Ամերիկայի պետությունները, բացի Արգենտինայից, Բրազիլիայից և Չիլիից։

Համաշխարհային պատերազմը տերթորիաների վերաբաշխութեան առաջ շրերեց Ամերիկայում և ավարալիայում (Ավստրալիան և Նոր Զելանդիան —ինքնավար գաղութներ են, այսպես կոչված անզիլիական «ղոմինիոններ»), Բայց սասարիկ փոխվեց Յեվրոպայի քաղաքական քարտեզը։ Մեջաեղից անհետանում և Միջին Յեվրոպայի խօսքը պետություններից մեկը։ Նրա մասերից, ինչպես նաև Գերմանիայից և Նախկին Ռուսաստանից կտրված լիրկրամասերից կազմվում են 9 միջակ և մանր պետություններ (դրանց թվում նաև Դանցիք պատրագքը), Միաժամանակ նախկին փոքրիկ Սերբիան մեծանում դառնում և Հարավ-Զելավիա։ Մինչև պատերազմը Յեվրոպայում 26 պետություն կար, պատերազմից հետո — 33։ Վերաբաժնվում և Աֆրիկան, ըստ վորում նախկին անկախ Մարտիկոլի պետությունը Փրանսիական գաղութ և դասնում։ Ասիայում փոխվում և Ասազավոր Ասիայի քաղաքական քարտեզը, վորովհետեւ Տաճկաստանի մի խոշոր մասն իրենց մեջ բաժանում են Անգլիան և Ֆրանսիան (Միջազիաքը՝ Իրաք անունվ, Սիրիան, Պաղեստինը և Անդրհորդանանը)։

ՅԵԶՐԱՓԱԿԻՉ ԶՐՈՒՅՑ

ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՑԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՌՀԱՅԻՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ՄԵԶ. — Համաշխարհային պատերազմն առաջ ըերեց Յեվրոպայի թուլացութեան և Ամերիկայի, մասամբ Յապոնիայի ու ժեկաց ցումնեան Ավերջեցին վոչ միայն Ռուսաստանն ու Գերմանիան, այլ և Ֆրանսիան։ Պատերազմի ժամանակ գերմանացիները գրավել եցին նրա ամենից ավելի արդյունաբերական մասը, Նրա հյուսիսը, Վոչնչացրած ելին և հանքահորերը, և ֆարբիկաները, և դաշտերը։ Ամենից ավելի քիչ տուժեց Անգլիան, բայց նա ել մեծ պարտքերի տակ ընկալ Միացյալ Նահանգների ձեռքը։ Իսկ վերջիններս ուազմական պատվերների շնորհիլ սաստիկ հարստացան։

Մինչեւ պատերազմը Յեվրոպուն փոխառու յեր: Վոլգենվրոսլական պետությունների զուտ պարտքը Յեվրոպային հավասար եր 50 միլիարդ ռուբլու իսկ այժմ, ընդհակառակը, Յեվրոպան պարտապան է դարձել, նրա զուտ պարտքը հավասար է 15 միլիարդ ռուբլու: Արդպիսով Յեվրոպան ընդհանուր առմամբ կորցրել է 65 միլիարդ ռուբլի: Մինչև պատերազմը Միացյալ Նահանգների զուտ պարտքը Յեվրոպաչ էին հավասար եր 8 միլիարդ ռուբլու, այժմ, ընդհակառակն, Յեվրոպան Միացյալ Նահանգներին պարտ է 30 միլիարդ ռուբլի: Պատերազմից առաջ ստար պետությունները պարտ եին Թրանսիային 25 միլիարդ, Գերմանիային — 15 միլիարդ: Այժմ այդ լերկու պետություններն ել պարտատերերից դարձել են պարտապաններ: Անզիւան, շնորհիվ Գերմանիայից ստացած հասուցումների, վերականգնեց իր նախապատերազման դրությունը. ստար յերկրները նրան պարտ են 30 միլիարդ ռուբլի: Բայց նա կորցրեց իր առաջին տեղը գրամական շուկաւում: Նա կարող է արտասահմանան ձեռնարկություններում տարհեկան 1 միլիարդ ռուբլի ներդնել, իսկ Միացյալ Նահանգները — լերկու կամ լերեք անդամ ավելի:

Այն յերկրների անունները, ուր ներդրված է ՀԱՄ Նահանգների կապիտալը	1914 թ. միլիարդ ռ.	1926 թ. միլիարդ ռ.
Յեվրոպա	0,1	30
Անգլիական դադումներ	1,0	6
Կենտրոնական Հարավային Ամերիկա	1,5	9
Արևելյան Ասիա	0,3	2

Անգլիային 100 տարի պետք յեղավ, վորպեսզի կարողանա արտասահմանում 30 միլիարդ ռուբլի կուտակել: Ամերիկան շատ ավելի մեծ դումար կուտակեց 10 տարվա ընթացքում:

Համաշխարհային տնտեսության մեջ կատարված հետապատերազման փոփոխություններից ամենակարևորն այն է, վոր Յեվրոպան աղքատացավ, կորցրեց իր առաջին տեղը, վորը և գրավեց Ամերիկան:

Համաշխարհային տնտեսության մեջ կատարված հետապատերազման փոփոխություններից ամենակարևորն այն է, վոր Յեվրոպան աղքատացավ, կորցրեց իր առաջին տեղը, վորը և գրավեց Ամերիկան:

Մյուս փոփոխությունն այն է, վոր փոխվել է նաև հացահատիկի:

և ֆարբիկային հումքի գլխավոր մատակարարների կազմը։ Ցորենի խոշոր մատակարարների թվից ժամանակավորապես դուրս յեկավ ԽՍՀ Միությունը, կրծապիվեցին Միացյալ Նահանգների մատակարարությունների չափերը։ Առաջին տեղը բռնեց Կանադան, խոշոր չափով ավելացան Արդենաբնակի արտահանությունը։ Առանձնապես ուժեղացավ ալյուրի արտահանումը անդրովիկիանյան յերկրներից (առաջ Յեղիսաբան Ներմուծում եր առավելապես հացահատիկ և արդեն ինքն եր աղում այն)։ Մարգանեցի արտահանման մեջ ԽՍՀՄ-ին մրցակիցներ յերեան յեկան դրանք են Հնդկաստանն ու Բրազիլիան։

Սաստիկ ուժեղացավ կառուչուի արտահանումը, ըստ վորում ըսկավեց առավելապես պլանացիոն կառուչուկ արտահանվել Հարավային Ասիայից։

Եներգիայի աղբյուրներից չի փոխվել քարածիի արդյունահանման քանակությունը, բայց յերեք անգամ ավելացել և նավթի արդյունահանումը։ շատ ավելացել ե ելեկտրիֆիկացիայի նպատակների համար ջրային եներգիայի գործադրությունը։ Ընդհանուր առմամբ նկատվում ե ելեկտրիֆիկացիայի խոշոր աճութիւն, առանձնապես Միացյալ Նահանգներում, Կանադայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Գերմանիայում։ Այդ ճանապարհով արագությամբ առաջ ե գնում նուե ԽՍՀՄ-ն։

Արագ առաջարկիմեց վոչ-լեկիրուպական գյուղատնտեսական յերկրների, առանձնապես Հնդկաստանի, Յապոնիայի և Կանադայի ինդուստրիացումը։

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆ

ԱՆԳԼԻԱ


Ենքուպական սիրառեսությունները—313 հազար կմ², 47 միլիոն ազգաբնակություն, Վորփ Մեծ-Արքանիան 244 հազար կմ² յևլ 44 միլիոն ազգաբնակություն ինչ ռազմա պետությունը—Խորանդիան—69 հազար կմ² յևլ 8 միլիոն ազգաբնակություն: Գաղութերի հետ միտսին—36 միլիոն կմ² (ցամաքի մակերեսվույքի $\frac{1}{4}$ -ը), 470 միլիոն ազգաբնակություն (ամբողջ յերկրագնդի ազգաբնակության $\frac{1}{4}$ -ը):

ԲՆԱԲՌՈՇՈՒՄՆԵՐԸ:—Անգլիան ծովալին պետություն և հղոր և միենուքն ժամանակ միակողմանի զարգացած առևտություն ու արգյունաբերությամբ: Անգլիան աշխատքնի բարոր պետություններից առաջինն եր, վոր արդյունաբերական կապիտալիզմի յերկիրը դարձավ, այդ պատճառով ել յերկար ժամանակ արդյունաբերության մեջ մենաշնորհի գիրք եր դրավում: XIX դարի վերջից մասսայական առարկաների արտադրության ասպարիզում նրան սկսում են առաջին տեղից դուրս մըզել ավելի յերիտասարդ կապիտալիստական յերկրները, և Անգլիան, իր առաջնությունը չկորցնելու համար, ավելի նույը արատաբառությունների յե անցնում (մանածի և զործվածքների բարձրագույն տեսակներին, մեքենայակառուցման և նավաշինուրարության և այլն): Յերկրի ամբողջ կյանքն առաջիշտակես առևտության ընությ և կրում: Արդյունաբերությունն աշխատում և զլխավորապես արտահանության համար: Դաշտաբնությունը հետին տեղն և դրավում: Մննդամթերքների և հումքի մեծ մասը ներմուծվում և արտասննանից: Յե՛վ արդյունաբերության, և զյուղաանտեսության մեջ զաղարեցին արտադրել այն, ինչ վոր կարելի յեր ներմուծման միջոցով ավելի հետաքաղաքացիների և սկսեցին արտադրել միան ավելի թանգարժեք և այդ պատճառով ել սեփական արտադրության համար ավելի շահավետ առարկաները:

Ի՞նչ կղզիներից և կղզիների խմբերից և կաղմված Անգլիան: Ի՞նչ ծովեր են վողողում այն:

Ի՞նչ նեղուցներ են Անգլիան վողողող ծովերը միացնում ովկիանոսի հետ:

Լայնության և լերկացնության վեր տատիճանների մեջ եղնէած Անգլիան:



Մովկերը հավասար հեռավորություն ունեցող դժեր (Յեփրոպայի համար):

Ի՞նչ քամիներ են գերակշռում և ի՞նչ հոսանք և անցնում Ատլանտյան օվկիանոսի այն մասում, վորտեղ գտնվում եւ Անգլիան:

Թվեցեք քարտեզի վրա Անգլիայի զուգդ-զույգ և մի կենտ ծոցը: Ցուց տվեք այն գետերը, վորոնք թափվում են այդ ծոցերը:

Ի՞նչպես և ազդում մակընթացությունների բարձրության վրա Անգլիայի ծոցերի ձագարաձևությունը:

Ի՞նչ նշանակություն ունեն մակընթացություններն անգլիական գետերի նավագնացության համար:

ԱՌԱՋԻՆ ԹԵՄԱ

ԱՆԳԼԻԱՅԻ ԲՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՈՒԺԵՐՆ ՈՒ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ


Դիմութիւն: — Անգլիայի ծովալին առևտրի ուղղությամբ զարգանալու հիմունքը նրա առանձնահատուկ զիրքն ու ափերի զծագրությունն են:

Անգլիան կղզիների պետություն ե, վոր բոլոր կողմերից շրջապատված և աշխուժ հաղորդակցություններ ունեցող ծովերով:

Անգլիայի զիրքի ամենակարեսոր զիծն այն է, վոր Բրիտանական կղզիները Ցեվրոպայի այն մասն են հանդիսանում, վոր ամենից ավելի գուշ և ցցված Ատլանտյան ովկիանոսի մեջ, ծովային առևտրի զըլխավոր ճանապարհների շերտում: Միենույն ժամանակ Անգլիան իր ամենից ավելի մատչելի կողմով, ջրառատ գետերի բաց հովիտներով դարձած և Հյուսիսային ծովի կողմը: Իսկ այդ ծովը հանդիսանում է ցեվրոպական հարաբերությունների զիխավոր ծովը: Նրա ափերին են գտնվում ամենակարեսոր լեռակետերը ովկիանոսային հարաբերությունների համար:

ԶԱՄԱՔԱՅԻՆ ԿԻՍԱԳՈՒԽԴ

ԶՐԱՅԻՆ ԿԻՍԱԳՈՒԽԴ



Անգլիան գանվում և ցամաքային գնդի կենարունում:

Ա.Փերի ԿԾՐՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ: — Բացի հարմարավոր զիրքից, ծովային հարաբերությունների զարգացմանը նպաստեց նաև ափերի արտասովոր կտրտվածությունը: Մոցերը խորը ներս են ընկնում Մեծ-Բրիտանիա կղզու մեջ արևմուտքից և արևելքից, ըստ վօրում կղզին հետզհետե նեղանում և հյուսիսում:

Բացի խոշոր ծոցերից կան նաև անթիվ քանակությամբ ավելի շատ ժամանք ծովախորդեր Ասկերի կտրտվածության շնորհիվ ծովափնյա գիտը շատ ձգված է և Անդլիայում 1 կլմ ծովափին ընկնում և 81 կլմ² մակերեսույթի: Անդլիայի վոչ մի կետը ծովափից 120 կլմ² կազմության մակընթացության տեսքակա մասը հանդիսանում և ծովի շարունակությունը գեղիք է երկրի խորքը: Լոնդոնը ծովից եւ կլմ² հեռու յեւ գանգում և, այնուամենայնիվ, նա ծովալին նավարարանին է:

Ինչլիքնի:—Մեծ-Բրիտանիա կղզին բաժանվում է յերկու մասի, վորոնք առաջ առանձին պետություններ ենին. 1) Անգլիա, Ուելսի հետ և 2) Շոտլանդիա: Սահմանը նրանց միջև անցնում է Ջեվիստի լուսներու:

Անգլիան իր հերթին բաժանվում է յերկու լանդշաֆտաեւ. ա) ցած հարավ-արևելքը և բ) լեռնոտ արևմուտքը: Սահմանագիծն ալդ յերկու մասերի միջև անցնում է Սիկերն գետի բերանից՝ արևմուտքում մինչև թռչ գետի բերանն՝ արևելքում:

Հարավ-արեվելյան մասը կամ Լոնդոնի ավազանը մի հարթություն և՝ ծածկված փոքրիկ բարձրություններով: Այդ բարձրությունները տարածվում են հովհարածեւ արևմտյան գուրս ցցված մասից (Կորնուոլ թերակղզին) հարավ-արևելյան և արևելյան ուղղությամբ. Միայն Կորնուոլ թերակղզու վրա հանդիպում ենք գրանիուլա մասսիմերի և հին, սաստիկ վողողված և ցածրացած լեռների (բարձրագույն կետը 610 մետր բարձրություն ունի ծովի մակերեսույթից): Կորնուոլ թերակղզին մի սակավ պտղաբեր, հավամրգի թիվերով ծածկված տափակ բարձրություն և: Մի ժամանակ այստեղ կազին գունավոր մետաղների հանքեր (անագ, պղինձ), բայց այժմ ալդ հանքերն սպառված են: Գլխավոր ոգոտակար հանածոներն են գաշտային սպաթի քայլալման պրոցեսուները, վորոնք գրանիության բաղկացուցիչ մասն են կազմում, —ինչպես կառլինը (հումք հախճապակու ճենապակու արտադրության համար):

Լոնդոնի ավազանի մնացած հիմնական մասը ծածկված և նըստվածքային տեսակներով: Նրանք աղքատ են ոգտակար հանքերի տեսակետից, բայց պտղաբեր հող են կազմում: Հարթ մակերեսույթը շատ հեշտացը և և՝ ջրանցքների, և՝ յերկաթուղիների կառուցումը: Միևնույն ժամանակ կղզու այլ ամենից ավելի ընդարձակ մասում են գտնվում նաև կղզու ամենայերկար գետերը—Սիկերնը (355 կլմ) և Թեմզան (332 կլմ):

Անգլիայի ելուստիս-արեվմուտքը լեռնոտ և և յերկրագործության համար սակավ պետքական: Այնտեղ բոլորը հին լեռնաշղթաներ են, վորոնք հարուստ են յերկաթով, իսկ նրանց մեջ ընկած իջվածքները հարուստ են քարածխով:

Միլիոնավոր աարիների ընթացքում լեռները լենթարկվել են հող-մերի և վողողումների ազդեցությանը և այժմ բաժանվել են մի շարք առանձին-առանձին լեռնային ցածրիկ խմբերի, վորոնք միմյանցից անջտափած են խոր և լայն հովիաներով: Ամենից ավելի բարձր են Ռեկալսի լեռները (Մոռուն գագաթը—1085 մետր): Նրանք հարուստ են ածխով ու յերկաթով: Այդ ոգտակար հանքերով, առանձնապես ածխով, ել ավելի հարուստ են Պենիֆենյան լեռները: Քարածուխն Անգլիայի գլխավոր հանքացին հարստությունն ե, շարժիչ ուժի գլխավոր աղբյուրը, ծանր ինդուստրիալի համար անհրաժեշտ նյութը և միակ հումքը, վոր արտահանվում է Անգլիալից: Քարածուխը բարձր վորակ ունի. նրա հանքերը գտնվում են հավեմատարար վոչ մեծ խորության մեջ՝ բաժանված են միքանի ավազանների, վորոնք շատ հարմար տեղադրություն ունեն բնչպես ածուխն արտահանման արտահանելու (ծովի ափին), այնպես նաև սեփական արդյունաբերության համար (յերկաթահանքերին մոտիկ):

Հողերը սակավ արգավանդ են: Գեղաբերը, կղզու՝ հյուսիսում նեղանալու հետևանքով, կարճ են: Մակերեսութի ձեերն ավելի պակաս բարենպաստ են յերկաթուղիներ անցկացնելու և ջրանցքներ կառուցելու համար, քան թե Անգլիայի հարավ-արևելքն եր, բայց այդ տեսակետից վորեն լուրջ արգելք չեն հարուցանում:

Տուլանդիան ըստ իր մակերեսութի բաժանվում է յերեք իրար զուգահեռ ընթացող մասերի—գագան տափակ բարձրություններ, ծածկված հավամրգի թիվերով և ճահիճներով, պետքական առավելապես վոչխարաբուծության համար ևնրանց միջն ընկած Շոտլանդական հարթությունը—մի յերկրամաս, վոր պետքական և միաժամանակ և' յերկրազործության—շնորհիվ իր արգավանդության, և' արդյունաբերության համար—հարուստ յերկաթահանքեր և քարածուխ ունենալու պատճառով:

Շոտլանդական բարձրությունների սահմաններում են գոտնվում Մեծ-Բրիտանիայի ամենաբարձր լեռները (Բեն-Նեսս Գրեմպինյան մեռներում—1343 մետր): Խոր յերկրածիք լեռը յերկրին մեծ գեղեցկություն են տալիս: Շոտլանդական լեռներն ամենահին լեռներից մեկն են Յելլոպալայում: Նրանց ուղղությունը համարյա ուղղահայաց և Պենինյանն լեռներին և գուգաղիպում է Ականդինավյան լեռների ուղղությանը: (Մի ժամանակ դա մի ահագին և շատ բարձր լեռնացդաշտա յեր):

Իրավանդիան իր մեծությամբ յերկրորդ կղզին և Բրիտանական կղզիների խմբի մեջ: Նրա ներքին մասերը հարթություն են ներկա-

լացնում: Բարձրությունները շատ ցածր են և բաժանված են առանձին խմբերի: Նրանք տեղափորձված են ծալքերին, ամենաբարձրները գտնվում են արևմուտքում: Հանքային հարստություններ չկան, բացի տորֆից: Տորֆատեղերից ազատ վայրերը բավական արդարական հող ունեն:

ԿԼԻՄԱՆ:—Անգլիայի և Իրլանդիայի կլիման ավելի մեղմ և հյուսիսային լայնության 50° և 60° միջև ընկած շերտի միջին կլիմայից: Առանձնապնդ մեղմ են ձմեռները: Ամառվա ջերմությունը բարձր չէ: Գերակշռող քամիներն են—արևմտյան և հարավ-արևմտյան քամիները: Անձրև շատ և զալիս: Ցերկինքը մեծ մասամբ ամպամած է, արև ուրերը հաղվաղեալ են:



Անգլիայի ազգաբնակության խտությունը:

Մինչև անգամ արևելքում տարբերությունը ամառվա և ձմեռվա միջին ջերմությունների միջև 15° -ից ցածր է, իրլանդիայի արևմուտքում—ընդամենը 8° (ծովային կլիմա): Հյուսիս-արևմտյան կողմը

(Շոտլանդիայում) ամենատաք ամսի միջին ջերմությունը $+13^{\circ}$ է, ամենացուրտ ամսինը՝ $+5^{\circ}$:

Հարավ-արևելքն այնպիսի կլիմա ունի, վոր մոտենում և ցամաքայինին: Ամառվա ջերմությունը (ամենատաք ամսի միջին ջերմությունը $+17^{\circ}$ է) բավարար և ցորեն հասցնելու համար: Ցերբեմն լինում են նաև սաստիկ շողեր և սառնամանիքներ: Զյունը լերկար չի մնում, բայց լերբեմն գալիս և մեծ քանակությամբ: 1928 թ. հունվարին բացառիկ մեծ քանակությամբ ձյուն յեկավ և առաջ բերեց թեժայի և նրա վտակների հորդացումն:

Ա.ԶԴԱԲՆԱԼԿՈՒԹՅՈՒՆԸ:—Նկարեցեք Անգլիայի և Ուելսի ազգաբնակության աճման կոր գիծը մինչև XX դարի սկիզբը հետեւյալ տվյալների համաձայն:

1480 թ.—3.700 հազար, 1580 թ.—4.600 հազար, 1700 թ.—5.475 հազար, 1750 թ.—6.470 հազար, 1800 թ.—8.840 հազար:

Նկարեցեք Մեծ-Բրիտանիայի բազկացուցիչ մասերի աղբարնակության աճման յերեք կոր գիծ (միլիոններով):

Տարեթիվ	Անգլիա և Ուելս	Շոտլանդիա	Իրլանդիա
1801	8,9	1,6	5,4
1821	12,0	2,1	4
1841	15,9	2,6	8,2
1861	20,0	3,1	—
1881	26,0	3,7	—
1901	32,5	4,5	—
1911	36,0	4,8	4,4
1921	37,9	4,9	—
1926	39,0	4,9	4,3

Քանի անգամ և ավելացել XIX դարի ընթացքում Անգլիայի և Շոտլանդիայի ազգաբնակությունը:

Հասարակագիտությունից ձեր ուսեցած տեղիկությունների համաձայն բացատրեցեք 1) Անգլիայի ազգաբնակության արագ աճման պատճառը XIX դարում և 2) Իրլանդիայի ազգաբնակության պակասելը:

Առեջողակիթ ՅՈՒՆԻԼ, — Անգլիայի ազգաբնակությունն ավելանում եր միայն բնական աճեցողության միջոցով: Այդ աճեցողությունը XIX դարում ավելի մեծ եր, քան թե ներկայումս և: XIX դարի սկզբին նա հավասար եր 1000-ին 18 մարդու. XX դարի առաջին տասնամյակում իջակ մինչև 10,9 մարդ, իսկ պատերազմի և հետապատերազմյան շրջանում — մինչև 4,9 Անգլիայում և 2,5՝ Շոտլանդիայում:

ԱՐՑԱԳԱՂԹԸ, — Ազգաբնակության աճումն դրսից (ներգաղթ) Անգլիայում համարյա չի լիզել. ընդհակառակն, արտագաղթը շատ մեծ է լիզել: 1815-ից մինչև 1906 թ. Մեծ-Բրիտանիայից գաղթել են մինչև 17 միլիոն մարդ (10,5 միլիոն անգլիացիներ, 5 միլիոն իրլանդացիներ և 1,5 միլիոն շոտլանդացիներ): Գաղթողները դիմում են զբախավորապես գեղի այն լերկրները, վորտեղ անգլիերեն լեզուն և իշխում — Միացյալ Նահանգները (11 միլիոն), Կանադա (2,5 միլիոն), Ավստրալիա և Նոր-Զելանդիա (2 միլիոն):

Ներկայումս արտագաղթը զնում և առավելապես գեղի հանագա, Ավստրալիա, Հարավային Աֆրիկա և Հնդկաստան, այսինքն՝ գեղի անգլիական գաղութները: Արտագաղթը գեղի Միացյալ Նահանգները կրնաւիլ ե:

ՊՐՈՖԵՍՍԻՈՆԱԼ ԿԱԶՄԸ, — Հին ժամանակներն Անգլիայի ազգաբնակության գլխավոր մասն զբաղված եր գյուղատնտեսությամբ և ձկնորսությամբ: XVI և XVII դարերում ազգաբնակության կազմի մեջ նկատելի յե նավագնացների և վաճառականների աշխի ընկնող տոկոս: XVIII դարի վերջից սրանց վրա ավելանում են ձեռնարկատերերը և փարսիկային բանվորները: XIX դարի լերկրորդ կիսից կաղմը վում և դրամագիլիի տոկոսներով ապրող մարդկանց մի քավական խոռոշումը (ռանդտիեներ):

Իրանդիան մինչև այժմ ել գյուղատնտեսական լերկիր ե, իսկ Մեծ-Բրիտանիան (Անգլիան և Շոտլանդիան) աշխարհի բոլոր լերկրների շարքում արդունաբերությամբ զբաղվածների տոկոսով առաջին տեղն ե ընում և վերջին տեղը՝ գյուղատնտեսությամբ զբաղվողների տոկոսով:

Դիագրամներ գծեցեք հետեւյալ աղյուսակների համաձայն.

ԶԲԱՂՎՈՂՆԵՐԻ ՏԱԿՈՍԸ	ՄԵծ-ԲՐԻ- ԹԱՆԻԱ	ԲԵԼԳԻԱ	ԳԵՐՄԱ- ՆԻԱ	ՖՐԱՆՍԻԱ	ՄԻԱՑՅԱԼ ՆԱԽԱՆԳՆԵՐ
Գյուղատնտեսության մեջ	7,8	16,0	30,5	40,7	26,3
Արդյունաբերության մեջ	51,5	48,5	41,4	35,8	34,4

Մեծ-Բրիտանիայի ինքնադուրծունկա ազգաբնակության 160 հոգուց

ԶԲԱԴՄՈՒՆՔ ՈՒՆԵՆ	%-Ը ԳՈՎՃԱՐԻ ՆԱԿԱՌՄԱՆԾ
Արդյունակ երտթյուն	51.5
Գյուղատնական թյուն	7.8
Առեսուր և հարաբերություններ . .	22.2
Հասարակական ծառայություն և առ- գատ պրոֆեսուն	5.9
Անձնական ծառայություններ . .	7.8
Բանակ և նազատորմ	1.3
Այլք	3.8

Մինչև XIX դարի կեսը Անգլիան դեռևս այնպիսի մի լերկիր եր, վորտեղ ազգաբնակությունը հավասարաշափ եր բաշխվում քաղաքի և գյուղի միջև։ Այժմ Անգլիայում և Ռւելսում ազգաբնակության ^{3/4}-ից ավելին ապրում ե քաղաքներում։

Մեծ-Բրիտանիայում ալժմ 40-ից ավելի խոշոր քաղաքներ կան (100 հազարից ավելի բնակչություն ունեցող). Նրանցից 200 հազարից ավելի բնակչություն ունի Անգլիայում 18 քաղաք, Շոտլանդիայում՝ 2 և իրանդիայում՝ 2։

Մինչև արքյունաբերական հեղաշրջումն Անգլիայում միայն մի մեծ քաղաք կար—Լոնդոնը, բոլոր մնացածներն առաջ են յեկել XIX դարում իրրեարգյունաբերական կենտրոններ։ Նոր քաղաքներն առաջացան գլխավորապես քարածխային ավաղաններում։ 40 խոշոր քաղաքներից 27-ը գտնվում են քարածխի շրջանում, ապա զալիս են բամբակի, բրդի, յերկաթի, հախճապակուճենապակու արդյունաբերության քաղաքախմբերը։

Անգլիայի ազգաբնակության խոռոչունը շատ-շատ ավելի լիքան թե հնարավոր եր, յեթե ոգտագործվելին միայն նրա բնական հարստությունները։ Սակայն առեսուրի, արդյունաբերության և նավագնացության զարգացման, ինչպես նաև ահազին կապիտալներ կուտակելու շնորհիվ Անգլիան ամբողջ աշխարհն իրեն մատակարարը դարձեց և կարողացավ իր ազգաբնակությունն այսորվա խոռոչությանը հասցնել։

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ. — Քաղաքական տեսակետից Անգլիան սահմանադրական միապետություն է: Թագավորը չի կարող խառնվել կառավարչության գործերում: Մինչև վերջին ժամանակներս իշխանությունը պատկանում էր պարլամենտին, ավելի ճիշտ՝ նրա Ստորին պալատին (Համայնքների պալատ): Յերկորդը՝ Վերին կամ Լորդերի պալատն այժմ վոչ մի նշանակություն չունի: Համայնքների պալատում իշխանության համար մաքառում են լիրեք կուսակցություններ—պահպանողականները, ազատամիտները և բանվորական կուսակցությունը: Ընտրությունների ժամանակ մեծամասնություն շահող կուսակցության զլուխը գառնում է մինիստրության զլուխ (պրեմիեր-մինիստր): Ներկայումս լերկրի իսկական կառավարությունն և հանդիսանում վոչ թե պարլամենտը, այլ պրեմիեր-մինիստրը իր մինիստրների կարինետի:

Պատերազմից հետո ինքնուրուցնություն ձեռք բերեց և «ազատ շտաբ» կամ «ազատ պետություն» կազմեց Իրլանդիան: Նա ունի իր սեփական պարլամենտն ու մինիստրությունը, կառավարության զլուխ և կանգնած փոխարքան: Իրլանդիայի հյուսիսարևելյան մասը (Ուլստերը), վորտեղ առավելապես անգլիացիներ են ապրում, մնաց Անգլիային:

Բրիտանական կայսրության այն ինքնավար լերկրները, վորոնք իրենց պարլամենտներն ու մինիստրություններն ունեն, կոչվում են դոմինիոններ: Նրանց թվին են պատկանում Կանադան, Ավստրալիան, Նոր-Զելանդիան և Հարավ-Աֆրիկյան միությունը: Ինքնավարության նշանը նման մի բան ունի Հնդկաստանի մի մասը: Մնացած զաղությունները կառավարում են անգլիական պաշտոնյաները: Դոմինիոնների միմյանց մեջ և Անգլիայի հետ ունեցած կապերն ամրապնդելու համար հրավիրվում են համագումարներ (այսպիս կոչված կոնֆերենցիաներ):

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ. — Իր գերի և բնական արտադրական ուժերի շնորհիվ Անգլիայի համար ամենից ավելի հարմար է լայն կերպով զարգացնել ծովային առևտուրն ու արդյունաբերությունը՝ նրա արտասովոր խիտ ազգաբնակությունը կարող է միայն դեպքում կերակրվել: Իթե Անգլիայի տնտեսությունն այդպիսի ուղղությամբ տարվի:

ՅԵՐԿՐՈՐԴ ԹԵՍԱ

ԱՆԳԼԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱԲՀԱԳԻՐԱԿԱՆ ՌԱՅՈՆՆԵՐԸ:—Իր բնական առանձնահատկություններով և տնտեսության բնույթով Անգլիան Ռւելսի հետ միասին բաժանվում է յիրկու գլխավոր տնտեսական ռայոնների:

1. Հարավ-արևելյան, կամ Լոնդոնի ավազան (մայրաքաղաքային Անգլիան) և

2. Հյուսիս-արևմտյան, կամ արդյունաբերական Անգլիան:



Անգլիայի տնտեսական շրջանները:

1. Լոնդոնի ավազանը նրա զիրքի և բնության գլխավոր առանձնահատկությունները հետեւյալներն են. Լոնդոնի ավազանի

մոտիկությունը մայր ցամաքին և ափի հարսարությունը հարարերությունների համար (խորը գետալին ծոցեր)։ յերկրագործության համար նպաստավոր հողային և կլիմատական պայմաններ, քարածխի և յերկաթահանքի բացակալություն։ բռոր զլխավոր ջրալին և յերկաթուղալին ճանապարհների գեղի Լոնդոն կենտրոնանալը։

Այստեղից ել բղխում ե՝ ահազին առեարական և համեմատարար ավելի պակաս արդյունաբերական զարգացումը, ավազանի շատ մտսերում բարձր զարգացման հասած զյուղատնտեսության պահպանումը, աճբողջ բանակի և նավատորմի կենտրոնացումը հարավում (յերեք խոցոր զինվորական նավահանգիստներ) և Լոնդոնի լիակատար տիրապետությունը ամբողջ ավազանի վրա։

Լոնդոնն աչքի ընկնող քաղաք գարձավ գեռ վաղ միջնադարում, յերբ Անգլիան դեռև հովական յերկիր եր, և յերկրի այժմէան բոլոր խոցոր կենտրոնները պարզապես աննշան գյուղեր եյին։ Վորքան ավելի յեր աճում առեսուրը, իսկ հետազայում նաև Անդլիափի արդյունաբերությունը, այնքան ավելի աճում և հարստանում եր Լոնդոնը։ Իր արվարձանների հետ միասին (այսպես կոչված Մեծ Լոնդոնը) նա աչմմ 7³/₄ միլիոն ազգաբնակություն ունի։ Նա դեռ ելի շարունակում է մնալ աշխարհի առևտրական և ֆինանսական մայբաքաղաքը։ Նրա գործառնական կենտրոնը — Սիտին դատարկվում է գիշերը։ Նրա ցերեկվարնակությունը յերեկոյան դեմ ցրվում է արվարձաններն ու ամտառանցները *), Սիտիի հետ մեկտեղ Լոնդոնի ամենից ավելի աշխուժ

*) Հեռավորությունները Լոնդոնում անգին են։ Մառայողների ընակարանները գանգում են 15, 20 մինչև անգամ 30 կմ։ հեռավորության վրա իրենց ծառայության տեղից։

«Ի՞նչպես հաղթահարել այդպիսի հեռավորությունները, — զբում և կուշները։ Կարելի յե զգուիլ յերկաթուղներից, ստորերկրյա ճանապարհներից, ավտոբուսներից և տակսիներից։ Լոնդոնի սահմաններում կան միքանի տասնյակ յերկաթուղագծեր, ութ ստորերկրյա յերկաթուղներ՝ առանց ճյուղավորությունները հաշվելու, անթիվ տրամվայի զծեր, բազմաթիվ հագարներով տվտորուսներ։ իսկ ավտոմոբիլների թիվը մի քառորդ միլիոնից ավելի յե։

Վեթախարի Լոնդոնում ամենավիթխարի կառուցվածքը, թերես, նրա ստորերկրյա յերկաթուղին ե՝ անգերգառառնը։ Անցերգառառնի սուննելը պողպատե մի խորովակ եւ ծերեր կան գեանի տակ, վրատեղ խաչաձևում են միքանի ստորերկրյա ճանապարհներ, վորոնիք բազմասածեն խորության մեջ բարդ հարկին են կազմում։ Կայարաններն այնքան խորն են ընկած, վոր այնտեղ իջնելու համար կտոռոցված են հատուկ մեծ մեքենաներ, վորոնցից ամեն մեկը վաթսուն կամ հարյուր մարդ և բարձրացնում ու իջնում։ Հեռավայում հնարեցին ինքնաշարժ սանդուխրները — երսկալեյառներ, և այժմ բոլոր կայարաններում հնացած լիֆտակրը փոխարինում են դրանցով։ Հատակին շինված և վաղող ճանապարհ։ Կանգնում են նրա վրա, և

ժամաց հանգիստանում և նրա նավահանգիստը: Լոնդոնը քաղաքական մալլաքաղաք և: Այսուղ են տեղավորված պարզամենուր, մինչիստրությունները, թաղավորը: Մինուէն ժամանակի լոնդոնը նաև խոշոր արդյունաբերական էներգոն և (պատրաստվում են տռավելապահ շայյութիւն առարկաներ):

Անգլիայի հարավի յերկրորդ, բնակչության կողմից մեծ, քաղաքը, վոր ընկած և Սեփերնի գետաբերանի մոտ,—Բրիստոլը—իր հանքատին հարստություններով և առեւտրական կապերով ավելի արդյունաբերական Անգլիայի մասն և կազմում: Պլիմուտ և Սուուհեմպտոն քաղաքները Պորտամուտ արտաքին նավահանգստով տռաջացան ովկիանոսային հարաշերությունների, մասամբ նաև մայք ցամաքի հետ ունեցած հարաբերությունների շնորհիւ: Այդ քաղաքները ուղղմական նավահանգիստաներ են և աչքի լին ընկնում իրենց նավաշինարարությամբ:

Լոնդոնի ավագանում գաշտաբուծությունը զուգորդվում և զայլության մշակության և պաղաքուծության հետ (հարավ-արևիելքում—Կենտրոն) կամ կաթնատնտեսության և ձկնորսության հետ (հեռավոր-հարավ-արևմտառքում): Հեռավոր հարավ-արևմտութքը լինուտ և հանքաստա լինելով՝ ավելի մոտ կապված և արդյունաբերական Անգլիայի, քան թե Լոնդոնի հետ:

Կորնուոլում ձեռք բերված կառլինը վերամշակման համար ուղարկվում և դեպի արդյունաբերական Անգլիա:

2. Ֆրիզունաքեռական Ֆրիզիան քաժանվում և 5 յննթաշը ջանների, ա) Սև լերկիր, ը) Ստորին Սեփերնի և Հարավային Ուելսի շրջան, դ) Ստորին Մերսի և Հյուսիսային Ուելսի շրջան, դ) Հյուսիսարևելյան շրջան, ե) Հյուսիսի շրջան:

ա) Սեվ լերկիր կենտրոնն և հանգիստանում Ռետմինեն քաղաքը նրա շուրջն են ընկած արդյունաբերական քաղաքները, վորոնք մասամբ դարձել են նրա արվարձանները (Բերմինհեմը արվարձանների հետ միասին ունի 1,200 հազար բնակիչ): Այդ բնակավայրերի ամ-

նա առնում և քեզ դեպի եջը: Այսանդ ճանապարհն ինքն իրեն վոտքերիդ տակ քացվում և և աստիճաններ և դառնում և քեզ տանում և ցած, դեպի խորքը...:

Լոնդոնի ստորելըյա յերկաթուղին տեղափոխում և որական մոտ վեց միլիոն մարդ..: Փողոցային ուժեղ շարժման ժամերին Լոնդոնի փողոցներով մեջենայով կամ ավարտում կդնա մեր այն մասքը, վոր շաապելու բան չունի: Ում համար ժամանակը թանձ և, նա կիշնի գետնի տակը Զափանաց աշխուժ հրապարակների տակ և փողոցների անկյուններում ստորելըյա անցքեր են կտուցված մի մայթից զեղի մյուլը վոտք զնացուների համար, վարպետի նրանք յերկար ժամանակ շրսպահն հակագիր կողմն անցնելու հնարավորությանը (Ե. Կաշներ, 103 դի և զապա):

բողջությունը ներկայացնում և մի համատարած ահազին մետաղադրժարարան, վոր մրոսում և յերկիրն իր գառարանների ծխովի Բերտիննեմի շրջանի հյուսափա-արևմտաքան կողմն և գտնվում՝ այսպիս կոչված «Կավաղործական շրջանը», վոր վերամշակում և հախճաղակի ու ձենապակի յեւ գարձնում ինչպիս իր կավը, այնպիս ել Կորնուոլից յերգած կառլինը:

բ) Ստորին Սեպերենի չեփեարավա լին օւելսի արդյունարերությունը կենարունացած և յերկու խոշոր քաղաքներում՝ Երիսունամի և Կարդիֆում (վերջինիս կից գտնված քաղաքներով): Բրիստոլն աճեց գաղութային ապրանքների առևտորդ (շաքար, ծխախոտ, կակաո, հարավային պտուղներ), Կարդիֆը՝ ածխի առևտորդ: Քարածխի շնորհիվ զարգացավ մետաղագործական արդյունարերությունը:

գ) Յերրորդ յինթաշրջանում կա յերկու առանձին խոշոր կենարուն Մանչեստ և Լիվերպուլ: Ֆելի Մանչեստր անց ե կայրած ծովային ջրանցք, և այժմ առևտուը տեղի յեւ տվիլ արդյունարերությանը: Մերջինս կենարունացած և առավելապիս Մանչեստը լայնորեն շրջապատող մի շարք քաղաքներում, վորոնք զարդիւմ են բաժրակի գործվածքների և մանածի մշակությունը: Լիվերպուլն իր լրացուցիչ նույակաբաններով Անգլիայի ամենախոշոր առևտուական նովահանգիստն է: Իր արվածանների հետ մեկտեղ Լիվերպուլն ունի 1,230 հազար բնակիչ, իսկ Մանչեստը՝ 1,060 հազար:



Բրեգնորդ. Անգլիայի տեկստիլ արդյունագործության գլխավոր կենարուններից մեկը:

դ) Չորրորդ յինթաշրջանի միջով անցնում և Պեննինյան քարձրավանդակը, վոր արոտավայրերի մի ընդարձակ շրջան և կազմում: Հին ժամանակներից ալդ շրջանը վոչխարարության և բրդի արդյունաշերության յերկիր եր: Քարածխի հանքերն ընկած են յերկարածիդ:

շերտով։ Այդ հանգամանքի շնորհիվ այստեղ վոչ թե մի արդյունարերական կենտրոն ե կազմվեր այլ մի շարք քաղաքներ են կուտակվել։ Այստեղ կան և բրդի քաղաքներ (Ափս արվարձաններով—մոտ 500 հազար բնակիչ), և մեռադի քաղաքներ (Շեքսիլ—մոտ 300 հազար բնակիչ)։

Ե) Հինգերորդ լինթաշըջանն առավելապես ածխալին շրջան ե։ Ամենախոշոր քաղաքն ե—ածխալին նավահանգիստ Նյուկեստլը, արտեղ զարգացել և նախաշինարարությունը (290 հազար բնակիչ)։ Այդ յենթաշըջանի ներքին արեմտյան ռալոնը մի լուսուայ լեռկիր և բազմաթիվ գեղեցիկ լճերով։ Այդ այսպես կոչված «Լճային շրջանը» տուրիստների սիրած վայրն ե գարձել։

Շոտլանդիան տնտեսական տեսակետից ել նույնպիսի լերեք շրջանների յե բաժանվում, ինչպես և բնական տեսակետից, Հյուսիսային բարձրավանդակ, հարավային բարձրությունն և նրանց միջև ընկած հարթությունն էլուսիսային և հարավային բարձրավանդակները հանդիսանում են առավելապես իբրև վոչխարաբուծական ռալոններ (հաչակավոր են շելֆիտաները կամ չելֆիտաները, — Զիլֆիտայն լիոնների անունից)։ Հյուսիսում իբրև լրացուցիչ արենատ և ձկնորսությունը, հարավում՝ լերկրագործությունն ու բրդի մշակությունը (շարժիչ ուժ սկզբում տալիս ելին բազմաթիվ լիոննային գետերը, ապա՝ ածուխը)։

Շոտլանդական հարթավայրը հանդիսանում ե միաժամանակ և բարձր զարգացած գլուզատնտեսության, և ինդուստրիայի, և աշխուժ ծովային հարաբերությունների լերկիր։ Առվույտ և ցանովի խոտեր Շոտլանդիալում սկսել են ցանել դեռ 1720 թ. սկսած։ Դաշտերում շատ տեղ են բռնում կարտոֆիլը, կերի բողկը, կասուրյուտ առվույտը, վարսակը, դարին։ Դրա հետ կապված զարգացավ մսալին և կաթնային անասնապահությունը։ Արդյունարերությունն աշխատում ե տեղական տեղով և առավելապես դրսից ներմուծված հումքով (ջութի, կանեփի, վուշի վերամշակությունը, նավաշինարարություն)։ Համաշխարհային հարաբերությունների և խոշոր արդյունաբերության կինուրոն և հանդիսանում Փլազոս քաղաքը, վորը Մեծ-Բրիտանիայի ամենախոշոր նավահանգիստներից մեկն ե։ Արգարձանների հետ միասին նա ունի 1,100 հազար բնակիչ։ Շոտլանդիայի մայրաքաղաքն է Սգբերուրգը—425 հազար բնակչությամբ։

Իրլանդիան տնտեսական տեսակետից բաժանվում ե յերկու շրջանի, վորոնցից մեկը քաղաքականապես միացած և Անգլիայի, մյուսը՝ ռազմա պետություն։ Իրլանդիայի հետ հյուսիս-արևելան մասը մնացել և Անգլիային, իսկ մնացած իրլանդիան դոմինիոն ե

կազմել: Հյուսիս-արևելքը համովանում և միաժամանակ գյուղատընտեսական և արդյունաբերական շրջան: Աելֆասոս (450 հազար բնակչություն) Մեծ-Բրիտանիայի լավագույն նավահանգիստներից մեկն և, խոշոր արդյունաբերական կենտրոն (նավաշինարարություն, տեքստիլ և այլ արդյունաբերություն):

«Ազատ պետություն» իրանդիան—գյուղատնտեսական, առավելապես անասնապահական լերկիք և: Դաշտավայրն մշակութներից ամենաարենորներն են վարսակը, կարտոֆիլը, XIIX դարի կեսից նկատվում և հացահատիկների ցանքսերի տարածության կրճատումը և մարդագետինների աճումը: Դուբլին մայրաքաղաքն ունի 440 հազար բնակիչ:

ԾՈՎԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:—Երջանների վրա զցած ակնարկից և պրոֆեսսիոնալ կազմի աղյուսակից յերեւում և, վոր գյուղատնտեսությունն Անգլիայում շատ համեստ տեղ է զրավում: առաջին տեղը բանում են ծովային առևտուրն ու արդյունաբերությունը:

Անգլիային ե պատկանում հարաբերությունների տեսակետից ամենաարենոր ովկիանոսների—Ալտանայանի և Հնդկականի տիրապետությունը, ինչպես նաև յեվրոպական ծովերից—Հյուսիսային և Միջերկրական ծովերինը, Սուեզի ջրանցքինն ու Կարմիր ծովինը, վորոնք միացնող ճանապարհն են հանդիսանում Ալտանայան և Հնդկական ովկիանոսների միջև, նրա ձեռքին հն ամենաարենոր ճանապարհների մուտքերն ու յելքերը: Նա հսկալական պատերազմական և առեւրական նավատորմ ունի:

Ծովերին տիրապետելու շնորհիվ Անգլիան իր առևտորով առաջին պետությունը դարձավ, վորովինետև ծովը առևտրական հարաբերությունների գլխավոր ճանապարհն է:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ: Առևտուրն արդյունաբերական ապրանքների շարունակ ավելի և ավելի մեծ պահանջներ եր անում, և արդեն XVII դարից Անգլիան սկսեց արագությամբ զարգացնել իր արդյունաբերությունը—սկզբում արհեստի և մանուֆակտուրաֆի կերպարանքով: Հետագայում արդյունաբերական հեղաշրջումից հետո նաև լայն կերպով ոգտագործեց քարածխի և յերկաթի իր ահազին հարըստությունները, նրանց տեղադրության հարմարությունները և հումքնեման տեղ հասցնելու հնարավորությունը:

Անգլիական արդյունաբերության գլխավոր ճյուղերն են հանդիսանում ծանր ինդուստրիան (քարածխային, յերկաթագործական, նավաշինարարական և մեքենակառուցողական), տեքստիլ արդյունաբերությունը (բամբակագործականը և բրդագործականը), հագուստեղեն-կոշկեղենինը և սննդայինը:

Նոր ձեռնարկություններն Անգլիայում սարքավորվում են տեխնիկայի վերջին խոսքի համաձայն։ Բայց ընդհանուր առամբ Փարբեկաները մեծ մասամբ այստեղ հին են, բազմաթիվ տասնյակ տարիների կյանք ունեն և միջակ մեծություն ունեցող ձեռնարկությունների թվին են պատկանում։ Այստեղ դուք չեք հանդիպի այնպիսի իսկական արդյունաբերական հսկաների, ինչպես Գերմանիայում։

Անպայման Մեծ-Բրիտանիան առաջին տեղն է բանում նավաշինարարության տեսակետից։ Նա մենակ այնքան նավեր և կտուցում, վորքան բոլոր մեացած լերկրները միասին վերցրած։ Թարածի արդյունանանումով նա յետ և մոռւմ միայն Միացյալ Նահանգներից, բայց մյուս բոլոր յերկրներից առաջ և անցել։

Մեքենակառուցման մեջ նա յետ և մոռւմ Միացյալ Նահանգներից և Գերմանիայից, իսկ չուզունի արտադրության և մեջ ֆրանսիան նրան մղում և չորրորդ տեղը։ Վերամշակած բամբակի քանակությամբ Անգլիան յետ և մոռւմ Միացյալ Նահանգներից, բայց նրանից առաջ և արդյունաբերության սարքավորմամբ, իլիկներով (համաշխարհային քանակության 35%)-ը։ 1½՝ անգամ ավելի Միացյալ Նահանգներից)։ Անգլիան պատրաստում և ավելի նուրբ տեսակի մանած և գործվածքներ, վլունք միենույն քանակությամբ իլիկների համար շատ ավելի քիչ հումք են պահանջում, քան ավելի կողիտ տեսակները։

Անգլիաի արդյունաբերությունը ամենամինն և Յեվրոպայում, Ալդ պատճառով ել յերկար ժամանակի ընթացքում հին սարքավորում շատ և կուտակվել, և հինն ու նորն իրար կողքի ոլահում են իրենց դոյցությունը։

Տեխնիկական տեսակետից Անգլիայից առաջ են անցնում ավելի յերիտասարդ յերկրները։

Այդպես, քորածխի արդյունահանումն այնտեղ մեքենայացման և յենթարկված 19 տոկոսով, Դոնբասում—22 տոկոսով, Միացյալ Նահանգներում և Գերմանիայում—60 տոկոսով։ Թուղի միջին հալքը մի մետաղահալ հնոցի համար Անգլիայում 42 հազար տոնն և, Գերմանիայում—97 հազար տոնն, Միացյալ Նահանգներում—120 հազար տոնն։

Անգլիայի տնտեսական հետամնացությունն առանձնապես աչքի է ընկնում մասսայական որպուկտների արտադրության մեջ։ Անգլիան անցնում և ավելի նուրբ և ավելի բարդ գործվածքների և իրերի արտադրությանը և նրանց արտադրության հժանացման համար

ակսում և ուրիշ յերկրներից ավելի եժան կիսաֆարբիկատներ ներմուծել:

Կազմեցեք անգլիական արդյունաբերության զանազան չյուղերի համեմատական կարևորության դիագրամը՝ նրանց մեջ զբաղված բանվորների թվի համաձայն:

Արդյունաբերության տեսակները	Զբաղված բանվորների թիվը 1925 թ. հազարներով
Մետաղագործական (յերկաթագործական, մեքենակառուցող և նավաշինարարական)	2.200
Տեքստիլ (բամբակագործ. և բրդագործ.)	1.350
Քարածիսի	1.250
Հաղոստեղին-կոշկեղենի	600
Մննդային	520
Թղթի և տպագրական	370
Քիմիկական	210

ԳՅՈՒՂԱԾՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ, — Անգլիայի հացահատիկային տնտեսությունն աճում եր մինչև XIX դարի սկիզբը: Ցանքերի տարածությունն ավելանում եր, դաշտաբուծության սիստեմը բարելավվում եր (յեռագաղաց փոխարինվում եր ցանքափոխության սիստեմով): Սակայն ծովալին տրանսպորտի բարեկավումը հնարավորություն և տալիս ավելի եժան հաց ստանալու արտասահմանից, և այս հանգամանքն առաջ ե ընթաց (առանձնապես XIX դ. վերջին քառորդից) ցանքերի տարածության սաստիկ կրճատութիւն: Վարելահողերն ընդամենը յերկրի $\frac{1}{8}$ մասն են կազմում. դաշտերում ավելի և ավելի կրճատվում ե ցորենի ցանքը, ընդարձակվում կերի խոտերի և կերի բողկի ցանքերը: Այս ՊՀիսով՝ յերկրագործության գլխավոր նպատակն և անասուններին կեր մատակարարել: Աչքի ընկնող չափով զարգանում են նաև բանջարաբուծությունն ու պտղաբուծությունը:

Անասնապահության ասպարիզում շարունակ կրճատվում ե վոչ-խարաբուծությունը և անընդհատ աճում խոշոր ինդյուրային անասնապահությունը՝ միս և կաթնամթերքներ արտադրելու համար: Ա-

ճռմ և նաև թռչնաբուծությունը: Գյուղատնտեսությունն ընդհանուր առմամբ զարգանում և ավելի թանգարժեք մթերքներ ձեռք բերելու գծով:

Մարդագետիններն ու արոտավայրերը բռնում են ամբողջ մակերեսութիւնը: Անտառը համարյա բոլորովին վոչնչացված է: Նրանով ծածկված և միայն մակերեսութիւն $\frac{40}{\circ}$ է (Անգլիան Պորտուգալիայի հետ միասին անտառային մակերեսութիւն չնշինութիւնը Յեփրոպայում վերջին տեղն է բռնում):

Անգլիայի և Շոտլանդիայի լեռնում վայրերում գերակշռում են լայնարձակ հավամրգի թիերով ծածկված անմշակ հողերը (լանդեր) և թփուտները: Նրանք պահպանվում են վորսորդության համար և աղնվականները, վաճառականներն ու հարստացած արդյունաբերողներն արգալիսի հողերը խմբվում են իրար ձեռքից:

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:—Գրեթե ամբողջ հողը (մինչև անգամ քաղաքների շենքերի տակ գտնվածները) պատկանում են կալվածատերերին (լենգլորդերին): Իրենց միջոցներով նրանք մշակում են իրենց կալվածքների միայն $\frac{1}{10}$ մասը, մնացածը վարձով են տալիս իրշոր ֆերմերներին, վորոնք հողը մշակում են բատրակների աշխատանքով: Բատրակների զրությունը գործարանային բանվորների զրությունից ել ավելի վատ է:

Ի՞նչ զիտեք հասարակագիտությունից բանվոր դասակարգի գրության մասին Անգլիայում:

Արհեստակցական շարժման մասին:

Բանվորական շարժման մասին:

ՏՐԱՆՍՊՈՐՏԸ:—Շնորհիվ այն հանգամանքի, վոր Անգլիան կըդդիմ վրա յե գտնվում, և նրա ափերը կտրտված են, նույնիսկ նրաներքին հարաբերությունների մեջ գլխավոր տեղը բռնում են ծովալին հարաբերությունները:

Մեծ նշանակություն ունեն նաև ներքին ջրալին ճանապարհները: Անգլիայի գետերը խորն են, ջրառատ և ամբողջ տարին սառցից աղատ: Բացի նրանցից շինված են նաև բազմաթիվ ջրանցքներ:

Ինչից և առաջացել լերկաթուղարին ցանցի անհրաժեշտությունը, չնայելով վոր ջրալին հարաբերությունները շատ լավ են:

Ինչնիւ են բացատրվում Անգլիայի գետերի հատկությունները:

Վայր գետերն են Անգլիայի կարևորագույն ճանապարհները:

Անգլիայի գետերի յերկարությունն է—2350 կմ, ջրանցքներինը—5140 կմ։ Ջրանցքներից առանձնապես կարևոր ե Մանչեստերի ծովալիքն ջրանցքը (յերկարությունը՝ 57 կմ, խորությունը՝ 9 մետր)։

Անգլիան շոգեշարժ յերկաթուղիների հայրենիքն է։ Մեծ Բրիտանիայի յերկաթուղային ցանցի ընդհանուր յերկարությունն է 35,5 հազ. կմ (12 կմ՝ 100 կմ² մակերեսութիվը), բուն Անգլիայում՝ 32,8 հազար կմ (16 կմ՝ 100 կմ² մակերեսութիվը): Յերկաթուղային ցանցի խտությամբ Անգլիան յետ և մոտև միայն Բելգիայից։

Եթե Անգլիայի թջունների՝ Անգլիան մյուս բոլոր յերկրներից ավելի շուրջ արդյունաբերական պետություն գարձավ, ըստվարում այդ գարգացումը միակողմանի՝ արդյունաբերական ուղղություն առացավ։ Միակողմանիությունը գարգացավ այն պատճառով, վոր շատ ավելի շահավետ եր արդյունաբերությամբ զրադվեր քան թե գյուղատնտեսությամբ, և հնարավորություն կար եժան զնումներով լրացնել այն բոլորը, ինչ վոր չեր արտադրվում Անգլիայում։

Անգլիան կարող եր արդյունաբերության վրա կենտրոնանալ վլորովնետն իր նվաճումներով ընդարձակ շուկա յեր ապահովել, վորտեղ կարելի յեր վաճառքի հանել արդյունաբերական ապրանքները հակայական քանակությամբ (իսկ յերբ ուրիշ յերկրների մրցակցությունը գեռ չկար, ուզած քանակությամբ)։

Արդյունաբերության գարգացմանը նպաստում է և ածխով, և յերկաթով հարուստ լինելը (այն ել ածխահորերը հաճախ գտնվում ենին յերկաթահանգերի մոտ), հումքն եժան տեղ հասցնելու հնարավորությունը, մեքենաների, շոգեշարժիչների և քարածխի միջոցով յերկաթ ստանալու լիդանակների գյուտն՝ Անգլիայում։

Այն հանգամանքը, վոր Անգլիան առաջնուն գլխավոր տեղը ըլլունեց արդյունաբերության ասպարիզում, սկզբում նրա առավելությունն եր, հետո դարձավ նրա պակասությունը։

Անգլիան յերկար ժամանակ կարողանում եր բոլոր շուկաները լցնել իր ապրանքներով, վոր նա արտադրում եր և ավելի լավ, և օսվելի եժան այն յերկրներից, վորտեղ արդյունաբերությունը նոր եր միայն ծնունդ առնում։ Բայց յերբ ուրիշ յերկրներում ել արդյունաբերությունը զորացավ, և յերբ լիրիտասարդ արդյունաբերական յերկրները՝ հին մեքենաների հետ կապված շինելով՝ իրենց արտադրությունը սարքավորեցին ամենակատարելագործված մեքենաներով, Անգլիային արդյունաբերության շատ ճշուղերում յետ մղեցին։

ՅԵՐՐՈՐԴ ԹԵՄԱ

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

Աշխարհի քաղաքական քարտեզի վրա—
Ներկեցնք բրիտանական գաղութները:
Խմբավորեցնք գաղութներն աշխարհամասերով:
Խմբավորեցնք գաղութներն ըստ ա) բարեխառն գոտում և
բ) տաք գոտում գտնված գաղութների:

Քարտեզի վրա նշանակեցնք Անգլիայի այն ամենատպավոր կայանները, վորոնք տպահովում են նրա տիրապետությունը ծովերի վրա.—Զիբրալտար, Մալտա, Սուեդի ջրանցք (մուտքը և յելքը), Ագնեն, Կորսար (Ճելլոնում), Սինդապուր:

Խմբավորեցնք բրիտանական տիրապետություններն ըստ ովկիանոսների (Ատլանտիան, Հնդկական ովկիանոսի և Խաղաղ ովկիանոսի մասերը):

Կազմեցնք Բրիտանական կայսրության Յեվրոպայից դուրս գանված տիրապետությունների դիագրամը հետեւալ ազգութակի համաձայն:


Մայր ցամաքի մասեր	Մակերես և համար			Ազգաբնակությունը միջնականը
	Միլիոն էլլ.	Ցամաքի մասը	Ամբողջ ցամաքը	
Ասիա	5,5	1/8		333
Հյուսիսային Ամերիկա	10,0	1/2		11
Աֆրիկա	10,0	1/3		50
Ավստրալիա և Ավկիանիա	8,5	Ամբողջ ցամաքը և Ավկիանակայի մեծ մասը		8

ԳԱՂԱԼԻԹՅԵՐԻ ԳԵՐԱԿՇՈՒՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱ

ՄԵՋ:— Բրիտանական կայսրությունը բռնում է յերկրագնդի ցամաքի $\frac{1}{4}$ -ը ազգաբնակության $\frac{1}{4}$ -ով: Յեվրոպական տիրապետությունները նրա կազմում բռնում են 10% ից ավելի պակաս տարածություն, իսկ ազգաբնակության քանակությունը հավասար է 10% ի: Այդպիսով գաղութները և՝ տարածությամբ, և՝ ազգաբնակությամբ անհամեմատ ավելի մեծ են, քան թե Անգլիան ինքը (մետրոպոլիտան):

ԿԱԶՄԸՆ. — Բրիտանական տիրապետությունների կեսը գտնվում է բարեխառն գոտում և իր մեջ ունի գյուղատնտեսական գաղութացման համար ահազին տարածությամբ պիտանի հողեր։ Կեսը գտնվում է արեալարձային և մերձարեալարձային գոտում, և այնաև ահազին հնարավորություններ կան սննդային և ֆարբիկային հումքի արտադրության համար։ Թե՛ս որա և թե՛ նրա արտադրությունը կարող եշտապէլլի մեծանալ, քան ներկայումս եւ։

Բացի խոշոր մայր-ցամաքային տարածություններից՝ բրիտանական կայսրությունն ունի նաև մի շարք «կայաններ»։ Նրանցից վո-



Անգլիայի գաղութներն Ասիայում, Աֆրիկայում և Ավստրալիայում։

մանք — ածխալին կայաններ են, հենակետեր կարելների համար կամ ուղղմագիտական կետեր, ովկիանոսի մեջ ցըված (Բերմության, Ա. Հեղիների, Համբարձման կղզիներ և այլն)։ մյուսները նախահանդիսանեն են, վորոնք մուտք են ստեղծում դեռև առևտրական շըրջանները (Հոնկոնգ, Չանգհիբար)։ Ցերորդները բանալիներ են կարենոր ծովային անցքերի համար, ինչպես Զիբրալտար, Մալտա, Սուեզ, Աղեն և Պերիմ, Սինդապուր։

Ամբողջ Բրիտանական կայսրությունը բռնում է 34,7 միլիոն կլմ² տարածություն և ունի 450 միլիոն ազգաբնակություն։ Արագրա պետք է ավելացնել այն յերկրները, վորոնք միայն անունով են անկախ, ինչպես Ասիայում — արարական պետություններն ու հիմա-

լայտան պետությունները՝ Նեպալն ու Բուռանը, Աֆրիկայում—Յեղիպտոսը: Այդ բոլոր յերկրները միասին 1,4 միլիոն կլմ² տարածություն և 20 միլիոն ազգաբնակություն ունեն: Ազգափող՝ բրիտանական կայսրությունն ունի 36 միլիոն կլմ² տարածություն և 470 միլիոն ազգաբնակություն:

Գ.Ա.Դ.Ռ.Ի.Թ.Ն.Ե.Ր.Ի Դ.Ա.Ս.Վ.Ո.Ր.ՈՒ.Մ.Հ.—Այնպես ե թվում, թե Բրիտանական կայսրությունն անկարգ կերպով ցըված և յերկրի լերեսին: Բայց չպետք ե մոռանալ, վոր Բրիտանական կայսրությունը ծովային պետություն ե: Նրա մեջ կապը վոչ թե ցամաքն և հանգիսանում, այլ ծովը: Իսկ Բրիտանական կայսրության գլխավոր տիրապետությունները գասափորված են յերկու ովկիանոսների—Ատլանտիսն և Հնգկական ովկիանոսների—շուրջը, վորտեղ նա լիակատար տեր ու տնօրեն և հանդիսանում: Միջերկրական և Կարմիր ծովերում, վորոնք ովկիանոսները միացնող ողակների տեղն են ծառացում, Բրիտանական կայսրությունն ունի մի շարք կարևոր կայտններ: Բրիտանական կայսրությունը համեմատաբար քիչ և գիտել Մեծ ովկիանոսին:

Բրիտանական կայսրությունը կաղմված է մի շարք առանձին յերկրներից, վորոնք իրենց բնությամբ և տնտեսությամբ տարրեր են միմյանցից: Բարեխառն գոտու յերկրները քաղաքական տեսակետից ել ինքնուրուցն են: Դրանք—դոմինիոններն են: Կանգ առնենք նրանցից ամենախոշորների վրա:

ԲԱՐԵԿԸՆԻՆ ԳՈՒՏՈՒՄ ՅԵՂ.Ը ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆՆԵՐԻ

Կ. Ա. Ն. Ա. Դ. Ա.

Տարածությունը 9.650 հազար կլմ², ազգաբնակությունը—9.800 հազար մարդ

Վեր զուգահեռականն և սահմանագծային հանդիսանում կանագայի և Միացյալ Նահանգների միջև:

Վեր աստիճանի ներքո յե ընկնում կանադայի հյուսիսային կետը: Վեր ծովերն ու ովկիանոսներն են վողողում կանադան:

Ի՞նչ նմանություն կա կանադայի և Միքրուի միջև:

Այդ յերկրներից վերն և հարաբերությունների համար պելլի հարմար ընկած:

Դրի առեք կանագայի ամենախոշոր լճերի և գետերի առանձները:

Ինչպէս Ա. Լավրենտիոսի գետը ձմռան ամիսներին սառչում է: Բուսական վոր գոտիների շրջանումն և ընկած կանագան և ի՞նչպես են գասավորված այդ գոտիները:



Անգլիայի (մետրոպոլիայի) և Կանագայի համեմատական մեծությունը:

Վերտեղ ե գտնվում Կանագայի այն մասը, վորն ամենից ավելի հարմար ե ցորենի մշակության համար:

Գտեք Կանագայի խաղաղ-ովկիանոսյան յերկաթուղիները:


Գտեք ովկիանոսային հաղորդակցությունների գլխավոր գծերը: Ցուց տվեք, թե նրանք վոր նավահանգստային քաղաքներն են միացնում:

ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:— Կանագայի հողերը միջին մասերում շատ արգավանդ են: Այդ մասերում, մինչև ընդհուպ 60°-ը, ամառը բարձրանաչափ տաք ե լինում՝ ցորեն հասցնելու համար: Արևմտյան և արևելյան ծալրամասերն ամառը խոնավ և հով կլիմա ունեն: ցորենը վատ ե աճում, վարսակն ու մարգագետնի բուսականությունը—լավ: Ալտեղ ե գտնվում նաև Կանագայի գլխավոր անտառային շրջանը:

Լճերը տարբեր բարձրությունների վրա յեն գտնվում, գետերը—սահանքավոր են. Կանագայի հլուսիսային մասը գրանիտե մասսիվ ե

Ներկալացնում (դրանով սպիտակ ածխի մեծ պաշար և ստեղծվում): Այդ մասսիվը շրջադառող էին լեռներում, ինչպես ամենուրեք նման դեպքերում, կան յերկաթահանքեր (ամենահարուստ պաշարը Եյու-ֆառնզլենդ կղզում), Կա նաև քարածիային շերտ, ածխի պաշարը Կանագայում ավելի շատ է, քան թե Անգլիայում:

ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ. — Այդ մեծ հարստություններն ուղար-կործելու համար Կանագայի ազգարնակությունն անբավարար է: Նա աճում է գլխավորապես ներկաղթի շնորհիվ: Տեղական ազգարնակու-թյունից (հնդիկներ և հոկիաններ) մնացել է հարյուր հազար հոգուց միքիչ ավելի: Մինչև 1763 թ. Կանագան ֆրանսիական գաղութ եր, և այժմ ել ֆրանսիացիներն ազգարնակության $\frac{1}{4}$ -ից ավելի էին (27^0), բրիտանացիները (անգլիացիները, իրլանդացիները և շոտլանդացինե-րը) կազմում էին 55^0 : Ազգարնակությունը կուտակված է առավե-լապես հարավում և առանձնապես հարավ-արևելքում: Նրա կեսն ապ-րում է քաղաքներում: Կանագայի քաղաքներից մեկը (Մոնրեալ) մոտ մեկ միլիոն ազգարնակություն ունի (900 հազարից ավելի). մյուսը (Տորոնտօ) — կես միլիոնից ավելի:



Անտառահատումը Կանագայում:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ. — Բնական պայմաններով ու ազգարնակու-թյան սակավությումը և բացատրվում է Կանագայի անտեսության ուղղությունը:

Նա մի գյուղատնտեսական լերկիր է: Ներկայումս նա համաշ-խարհային շուկային գլխավոր ցորեն, անտառափայտ, մուշտակեղեն:

մատակարարողն եւ Արտահանում և մեծ քանակությամբ միս (սանցրած դրությամբ և պահածոներով), խոտացրած կաթ, յուղ, պանիր:

Սկսվում եւ ինդուստրիացումը: Սպիտակ ածուխն այստեղ ավելի յե ոգտագործված, քան թե վորեն յելքոպական յերկրում (3,5 միլիոն ձիռ ուժ): Քարածուխն ու յերկաթանանքը գեռ բավականաշատ չեն մշակված, պետք եւ լինում ներմուծել ե' յերկաթ, ե' ածուխ: Արդյունաբերության զանազան ճյուղերից ամենից ավելի զարգացած են փալտամշակման և թղթի, մեքենայակառուցողական, ալրազացի և մսի, տեքստիլ արդյունաբերությունները:

Արտահանումը շատ ավելի յե ներմուծումից (1926 թ. ներմուծումը 1.031 միլիոն դոլարի, արտահանումը 1.270 միլիոն դոլարի): Կանադայի հետ ունեցած առևտությունը մեջ առաջին տեղը բռնում են Միացյալ Նահանգները (Կանադայի արտահանման $\frac{2}{3}$ -ը և ներմուծման $\frac{2}{3}$ -ը), ապա զալիս եւ Անգլիան:

Ա.ԱՏԲԱԼԻ. ՅԵՎ. ՌԴԿԻԱՆԻԱ

Տարածությունը Պ միլիոն կլմ², ազգաբնակությունը —

8.800 հազար մարդ

Վարչական Ավտորարկայի գիրքը:

Վարչական պիրքի անբարհնապաստ կողմը:

Վարչական պիրքի անպատճանում Ավտորարկային: Ի՞նչ ներուցներով են բաժանվում:

Վարչական շրջապատում:

Ավտորարկայում վարչութեալ և ավելի տաք՝ հյուսիսում, թե հարավում:

Ի՞նչ լեռներ կան արևելքում:

Մալր ցամաքը կտրող յերկաթուղարքի ծայրակետերը:

Մայր ցամաքի հեռազբագծի ծայրակետերը:

Ի՞նչ կետերով ե անցնում կարելը Կանադայից Ավտորարկային և Ավտորարկայից Հնդկաստան, ապա և Անգլիա:

Ավտորարկայի ծովալին հարարերությունների գլխավոր գեերն ու նավահանգիստները:

Վարչական Նոր Զելանդիայի, Սանդվիչյան կղզիների գիրքը:

Ավկիանիայի կղզիներից վորժնք են հրաբուխային և վորժնք կորալական:

Մինչև ՀՅԱ դարի վերջը Ավտորարկայն մյուս աշխարհներից կալրված մնաց:

Դրա պատճառը նրա անբարենպաստ դիրքն եր և ափերի քիչ
յլորված լինելը:

ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ:—Ավատրալիայի միջին մասերի կլիման
աչքի չե ընկնում չափաղանց չորությամբ: Միջին տարածություննե-



Ոաշտար 1: 50.000.000.

200 0 200 400 600 800 1000 1200 1400

Հրազդական

Ավատրալիայի քարտեզ:

ըս մասամբ դժվարանցանելի մացառուտներ են ներկայացնում, մա-
սամբ անապատներ: Արևելքն ու հարավ-արևելքը ծովափի յերկարու-
թյամբ իրենց կլիմայով միանգամայն պետքական են յերկրագործու-

թէան համար, իսկ ավելի հեռուն, դեպի ներսը տարածվում են բնական լավ արոտատեղերը:

Հանքային հարստություններից ամենակարևորը վոսկին է: Կա արծաթ, պղինձ, լերկաթ: Կա նաև քարածուխ:

ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ:— Անգլիացիները XVIII դարի վերջին Ավստրալիայում մի ազգաբնակություն գտան (աև ցեղին պատկանող), վոր քարե դարից դեռևս զուրս չեր յեկել, ապրում եր միայն ար-



Անգլիայի (մերուպոլիայի) և Ավստրալիայի համեմատական մեծությունը:

մատներ հավաքելով, վորսորդությամբ և ձկնորսությամբ: Անգլիացիներն արագությամբ բնաջինջ արին սեամորթներին (մասցել են հարլուր հազար հոգուց միքիչ ավելի): Ավստրալիայում բնակություն հաստատեցին Յելլուպայից, առավելապես Մեծ-Բրիտանիայից լեկած գաղթականները: Ազգաբնակության թիվը ընդամենը 7 միլիոն է, վոր չափազանց անբավարար և Ավստրալիայի բնական արտադրական ուժերն ոգտագործելու համար: Գերակշռում ե քաղաքային ազգաբնակությունը: Համարյա կեսն ապրում ե հինգ խոշոր քաղաքներում (Նորանցից Սիդնեյն ունի 1 միլիոն բնակիչ, Մելբուրնը՝ 900 հազար):


ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ:—Գաղթականները հրապուրվեցին Ավստրալիայով, իերբ 1851 թվին այնտեղ հարուստ վոսկու հանքեր գանվեցին: Լեռնալին արդյունաբերությունից անցան անասնապահության, ապա՝ լերկրագործության:

ХІХ դարի լերկրորդ կեսից
Ավստրալիան դարձավ աշխարհի
ամենախոշոր վոչխարարուծական
յերկրը: Ապա այնտեղ զարգա-
նալ սկսեց նաև խոշոր յեղջու-
րափոր անասնապահությունը:
Ավստրալիան և ինքնուրույն դո-
մինիոն Նոր-Զելանդիան համաշ-
խարհային շուկա յեն արտահա-
նում այնտեղ բերվող բրդի մե-
ծագույն մասը և մեծ քանակու-
թյամբ միս, յուղ և պանիր:

Արևելյան և հարավ-արևելյան ծովափին գլխավոր զբաղմունքը
յիրկանական ծովափին և Ամբողջ մշակված հողը բռնում և Ավստրա-
լիայի մակերեսութիւնը 10° -ը: Բոլոր արտերի $\frac{2}{3}$ -ը ցորեն և
ցանված, վոր և արտահանվում և բավական մեծ քանակությամբ:
Ավստրալիայի տաք դուռին պետքական և պահանտացիոն մշակություննե-
րի համար (շաքարեղիզն, անանասներ): Վերջին ժամանակներն սկսել
և զարդանալ մշակող արդյունաբերությունը (բրդի, կաշվեղենի, մի-
տաղի): Ցանքերի տարածությունը կարելի կլիներ հասցնել մայր ցա-
մաքի մակերեսութիւնը 20° -ին, խոշոր չափով կարող եր ընդարձակվել
պլանտացիաների տարածությունը, ուժեղանալ քարածխի արդյու-
նահանումը, ծավալի արգյունաբերությունը: Բայց այդ բոլորին
արգելվ և հանդիսանում ազգարնակության սակավությունը: Ցել
միենաւին ժամանակ ավստրալիացիները մեծ խոչընդոտներ են հա-
րուցանում գաղթականների, առանձնապես վոչխարիստակ դադթական-
ների առաջ, վախենալով մրցակցությունից: Երանք համառորեն հե-
տեւում են՝ Ավստրալիան—ավստրալիացիների համար սկզբունքին:

Ավստրալիան և Նոր-Զելանդիան առևտուր են անում առավելա-
պես Անգլիայի հետ: Առևտուրը յերբեմն փոքրիկ պասսիվ և ունենում,
չերքեմն ել փոքրիկ ակախիլ:

Դիագրամ կտղմեցեք հետևյալ տվյալներով.



Ավստրալիայի գլխավոր պրադուկտները:

Ապրանքապատճեմը	Ա պ ս տ ր ա լ ի ա			Ն ո ր -Զ ե լ ա ն գ ի ա		
	1924 թ.	1925 թ.	1926 թ.	1924 թ.	1925 թ.	1926 թ.
Արտահանումն . . .	142	143	144	48	50	47
Յերմանումն . . .	135	148	141	25	52	48

ՀԵՐԵՎԱՆԻ ՌԵՊԻԲԼԻԿԱՆ ՄԻԱԽԹՑՈՒՆԸ

Յարածությունը 1225 կլմ², ազգաբնակությունը՝ 7 միլ.

Ցույց տվեք Միության դիրքը՝

Խոչ նմանություն ունի Միությունը Ավստրալիայի հետ
դիրքի և բնական պայմանների կողմից:

Վարքան հեռու չե զնում ճանապարհը դեպի հյուսիս Կեպ-
տառունից:

Ցույց տվեք ծովալին հաղորդակցությունների գլխավոր գլ-
ծերը և նավահանգստային քաղաքները:

Բնակչությունը կազմությունը կազմական Միության բնա-
կան պայմանները շատ հարմար են անասնապահության համար այն-
տեղ, վորտեղ ավելի չոր ե, իսկ ավելի խոնավ վայրերում (հարավ և
արևելք)՝ յերկրագործության և պլանտացիական տնտեսության հա-
մար (թեյ): Հակայական քանակությամբ վոսկի և ալմաստ կա: Կա և
քարածություն:

ԱջԳԱԲԲՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ: — Ընդհանուր ազգաբնակությունից 1/2
միլ. սպիտակներ են: Սկզբնական շրջանում Աֆրիկայի հարավը գրա-
վեցին հողանապացի և ֆրանսիացի գաղթողները: Նրանց սերունդներն
սկսեցին կոչել բուրեր՝ յերկրագործներ: Նրանց զվարակու-
թը անասնապահությունն եր: Ավելի ուշ ալստեղ յեկան յերկրի աշ-
ջըմյան տերերը՝ անգլիացիները, վորոնց գրավողը հանքալին հարս-
տությունն եր: Վոչ յեփրոպացի ազգաբնակության մեջ յերակղուում
են նեղքերը՝ կաֆրերը, գուլուսները և այլն: Քաղաքները մեծ արա-
գությամբ են աճում: այսպես, Յոհաննեսբուրգը, վոր հիմնվել ե ընդա-
մենը 1886 թ., վոսկու չնորհիվ ներկայումս 300 հազարանոց աղքա-
բնակություն ունեցող քաղաք և գարձել Կեպտառունը (Կապշտառ)՝
200 հազար, Դուրբանը՝ 150 հազար:

ՏՆՏԵՍՄԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ: — Ամիսակների տնտեսությունը չափազանց
միակողմանի կերպարանք ունի: Գյուղատնտեսության վրա անզիա-
ցիներն արհամարհական աշքով են նայում: Ընդհակառակը, հսկայական
կապիտալ և գրաֆած վոսկի և ալմաստ արդյունահանելու համար: Սր-
բանց արդյունահանությամբ Աֆրիկան աշխարհում ըսնում ե առա-
ջին տեղը, յետ թողնելով մյուս բոլոր յերկրները (մանավանդ ալմաս-
տի կողմից): Արտահանման մեջ վոսկին ու ալմաստը բանում են ա-
ռաջին տեղը: Գյուղատնտեսական սթերքներից արտահանման մեջ ըստ
արժողության գերակշռում են միայն բուրգը, կաշին ու մորթին, սի-

մինդրն ու պառւղները: Ցորեն և կաթնամթերքներ ներմուծվում են Առևտրական բալանսն ակտիվ և ներմուծումն 1924 թ.—61 միլ. ֆ.-ստերլ., 1925 թ.—63 միլ., 1926 թ.—68 միլ., արտահանումն՝ 82 միլ. 1924 թ., 84-ը՝ 1925 թ. և 80-ը՝ 1926 թ.:

Հ Ա Ր Բ Ո Ր Գ Թ Ե Մ Ա

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԿԱՅՍԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ՄՐԵՎԾԳԵՐՉԵՇԽՆԵ ՅԵՎ ՄԵՐՉԵՐԵՎԾԳԵՐՉԵՇԽՆԵ ԴԱՏԵՆԵՐԻ
ԳԵՂՋԱԹՆԵՐԻ

Ա. Ֆ. Բ Ի Կ Ա.

10 միլ. կմ², 60 միլ. բնակչի

Աֆրիկայի միացած բրիտանական կալվածները գտնվում են տաք և մերձարեազարձային զոտիներում: Նրանք ձգվում են անընդհատ շերտով արևելքում՝ Միջերկրական ծովից մինչև Աֆրիկայի հարավը և խոշոր առանձին հողամասերով Գվինեայի ծոցում:

Այս բոլոր յերկրների բնակիչների մեջ անզլիացիները կազմում են աննշան տոկոս: Բնիկ ազգաբնակությունը բաղկացած է սպիտակ ցեղին պատկանող ժողովուրդներից, վորոնք ապրում են հյուսիսում (Փելլանհերը, զպահները), և նեղրիտանական զանազան ժողովուրդներից, վորոնք ապրում են արևելքան և արևմտյան Աֆրիկայում: Յեղիպատուը մի հին կուլտուրական յերկիր և, վորի յերկրագործությունը հիմնված է գոռոզման սիստեմի վրա: Մնացած յերկրներում զրադշում են բրչային յերկագործությամբ և անասնապահությամբ:

Անգլիական կապիտալը յեզիփատական տնտեսությանը տվել և միակողմանի՝ հատկապես բամբակագործական թեքում: Շատ ժամանակ գեռ չի անցել, ինչ Յեզիփատուը ցորեն եր արտահանում, այնինչ հիմա ներմուծում ե: Բամբակագործությունն սկսում ե ծաղկել նաև Աֆրիկայի անզլիական մյուս կալվածներում, ևս Սուվանում, Ռեգանսդասում, Նյասասում: Այստեղ գերակշռում են արեագարձային կուլտուրաները (բանան, կոկոսյան և ձիթարմափենի, գետնընկույզ):

Քարտեզների վրա ցուց տվեք՝

Բուսական վեր զոտիների շրջանումն և գտնվում այս կամ այն զազութը:



Աֆրիկայի տնտեսական քարտեզը:

Ի՞նչ մթերքներ և մատակարարում նրանցից ամեն սեկը:
Ներքին, ջրային և յերկաթուղարին գլխավոր ճանապարհները:

Յեղիպտոսի և Տանգանակալիի ափի մոտի գլխավոր նավահանգստային քաղաքները:

Հնդկաստանի հետ հարաբերություն պահպանելու համար
Յեղիպտոսն ի՞նչ ահազին կարեռություն ունի:

Հ Ա Կ Ա Ս Ա Ն

Ցարածությունը 4900 հազ կլմ², ազգաբնակությունը 325 միլ.
(յերկագնդի ազգաբնակության $\frac{1}{5}$):

Անդիական մերձարեալարձագին և արևադարձային դաշտութներից ամենահարուստը Հնդկաստանն է: Բնությամբ Հնդկաստանը բաժանվում է 3 մասի՝ մայր-ցամաքային Հնդկաստան, թերակղղային Հնդկաստան և այս յերկուսը միացնող հարթությունը:

Լայնության վեր աստիճանների միջև ե գտնվում Հնդկաստանը:

Վեր քամիների շրջանում:

Ի՞նչ ծովերով ե վողողվում: Ծովալին հարաբերությունների ամենագլխավոր գծերն ու նավահանգիստները:

Ի՞նչ լեռներով եւ զրջապատված Հնդկաստանի մալր ցամաքային մասը։ Հիմալայանների ամենաբրձր գագաթները։

Արդյոք լեռները գլուրանցանելի՞ լեն։ Անցնում են նրանց միջից յերկաթուղաղերը։ Ի՞նչ լեռներ են ձգվում արևմտյան սահմանի ուղղությամբ։ Ի՞նչ լեռնանցքով են մտնում Ավղանստան։

Վեր յերկաթուղին եւ մտնում այս լեռնանցքը։

Վեր բարձրավանդակն եւ գտնվում թերակղզու վրա։

Ի՞նչ լեռներով ենա իջնում ծովափը։

Վեր գետերն են հարթություն կազմում։

Բացատրեցէք՝ ինչն բամբակը մշակում են վոչ թե ծովափում, այլ Դեկանի բարձրավանդակի վրա։



Բընձի դաշտերը Հնդկաստանում։

ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ։—Կիման և հողը բարենպաստ են և հացահատիկային, և պլանտացիոն տնտեսության համար։ Արևմտյան ծովափն ու հարթության արևելյան մասն ստանում են առատ խոնավություն և անհրաժեշտ տաքություն (բացի Հիմալայան լեռներից) վոչ միայն ցորենի, այլև և բընձի, և բամբակի ու արեադարձային կուլտուրաների համար։ Ցածր հարթության արևմտյան մասը շատ չոր եւ։

Հանքային հարստությունների մեջ գլխավոր տեղը բռնում եւ քարածուխը։ Կա նաև մարգանեց, կտպար, յերկաթ, վոսկի, թանգադին քարեր (մանավանդ սուստակ և շափլուղա)։

ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ. — Հնդկաստանի ազգաբնակությունը բաղկացած է զլիսավորապես սպիտակ ցեղին պատկանող զանազան բազմաթիվ ազգերից, բայց կան նաև գեղին և սև ցեղին պատկանող ազգեր։ Ազգաբնակության լերկու-յերրորդը խոսում է հնդ-յեվրոպական լեզուներով, մի-հինգերորդը՝ զրավիդական (Հնդկաստանի ավելի հին ազգաբնակությունը)։ Տեղական լեզուների խառնուրդից կազմվել եւ գործածական «Խնդրություն»։ Անզիներեն խոսում եւ միայն ազգաբնակության մի հազարերորդ մասը։

Հնդկաստանի մի մասում մինչև որս մնացել են տեղացի իշխաններ (ռաջա), բայց նրանցից ամեն մեկի մոտ ղեկավարության համար նշանակված եւ անզինացի պաշտոնյաց Մնացած Հնդկաստանն անմիջապես կառավարվում է Անզիիայից նշանակված պաշտոնյաներով։ Կենտրոնական իշխանությունը գտնվում է Հնդկաստանի փոխարքայի ձեռքում (նույն ինքը և գեներալնահանգապետ)։ Պատերազմից հետո փոխարքային կից կազմվել եւ պարլամենտ, բայց ընտրական իրավունքից ոգտվում են ազգաբնակության սիայն 20%-ը։

ՔԱՂԱՔՆԵՐԸ. — Ազգաբնակության 100/0-ն ապրում եւ քաղաքներում, նրանցից 35-ը խոշոր են, ավելի քան 100 հազար բնակչով, վորոնցից 2-ը միլիոնից ավելի բնակիչ ունեն—կալկաթան և Բումբերը, 900 հազարից ավելի բնակիչ ունի այժմյան մայրաքաղաքը՝ Դիլիճն, 500 հազարից ավելի՝ Մադրասը և 400 հազարից ավելի՝ Հայդերաբադը։

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ. — Կլիմայական և հողաբին բարենպաստ պարանաերի շնորհիվ հիմնական զբաղմունքը լերկագործությունն եւ Բնակչությունը տարին բոլոր քրտինք են թափում, բայց ապրում են կիսաքաղց: Հողաբաժնիները չափազանց փոքր են: Վարելահողերը բռնում են 156 միլ. հեկտար—1 ու կես անգամ ավելի, քան ԽՍՀՄ մեջ Ավելի խոնավ մասերում և ջրաբրի հողերում բրինձ են մշակում։ Ուրիշ վայրերում՝ կորեկ, ցորեն։ Արհեստական վորոգումը հազարավոր տարիներից ի վեր գոլություն ունի։ Զրովի հողերը 20 միլ. հեկտար մեն (ամբողջ մշակելի հողի 1/8 մասը): Հացահատիկակին կուլտուրաները բռնում են ամբողջ հողերի միայն կեսը։ մնացածը բռնըված եւ ցանովի խոտերով և տեխնիկական կուլտուրաներով։ Թելավոր ըուլսերով (բամբակ, ջութ), լուղաբեր ըուլյաներով (գոնգեղ, քնջութ, գենագերչակ, վուշ սերմի համար), շաքարեղեգնով, թելով, սուլճով, ծխախոտով և կառչուկով։



Կառւչուկի պլանտացիաներ Ցելլոնում:

Յեղյուրավոր անասունների թվով Հնդկաստանն աշխարհում առաջին տեղն է բռնում, բայց անասունները պահում են գլխավորապես իբրև բանող ուժ, այլ և նրանց աղքով արտերը պարարտացնելու համար։ Կաթն ու միսը չեն բավականացնում, չնայելով վորտեղացիները սնվում են համարյա բացառապես բուսական կերակրով, իսկ միսն ու կաթնամթերքը հարկավորվում են միայն անգլիացիներին։

Տեղական հումքով սնվելով սկսում են զարգանալ ինդուստրիան՝ տեքստիլ արդյունաբերությունը (բամբակի, ջութի և մետաքսի գործվածքներ), սննդամթերքի արդյունաբերությունը (ալրազացի, բրինձ մաքրող, ձիթահանքի, թեյի) և թղթի արդյունաբերությունը։ Դրսի յերկաթի (մասամբ ել տեղական) վրա հենվելով զարգանում են մեքենակառուցումը։ Լևոնային արդյունաբերությունից դիսավորապես քարածուին են ստանում, բայց ստացվում են նաև յերկաթ, կապար, վուկի, սուտակ և շափյուզա։

Հնդկաստանի բաղկացուցիչ մասն են կազմում Հնդկաչինի արեմոլան մասը, վորը մեծ քանակութամբ բրինձ և արտադրում (արտահանվում են նաև կուլտուրաներ)։ Ցելլոն կղզին (թեյ և ուրիշ արեադարձային կուլտուրաներ)։ Առանձին մասն են կազմում Մալակկան, վորտեղից ստացվում են կառւչուկի (պլանտատորակտն) համաշխարհային բերքի կեսը և անագի գերակշռող մասը։

Արտաքին առետուրը փակվում է ակտիվով։ 1924 թ. ներմու-

ծումը 177 միլ. ֆ.-ստերլ., 1925 թ. 163 միլ. ֆ.-ստերլ., 1926 թ.
172 միլ., արտահանությունը՝ 1924 թ.՝ 268 միլ., 1925 թ.՝ 288 միլ.,
1926 թ.՝ 235 միլ.:

Ա Ռ Ա Զ Ա Վ Ո Բ Ա Ս Ի Ա

Պատերազմից հետո անգլիացիները դրավեցին Միջազիտքը, ըստեղծելով այնտեղ իրաքի թագավորությունը՝ Անգլիայի գերիշխանության տակ: Անգլիացիներին առանձնապես հրապութում և Մոսուլի նավթը, Բայց բնիկ ազգաբնակությունը՝ արաբները չեն ցանկանում լինթարկվել անգլիական տիրապետությանը: Իրենց իշխանությունն ապահովելու համար անգլիացիները մեծ քանակությամբ վարձու գործ են պահում, վորի պահպանությունն ավելի թանգ և նըստում, քան այն, ինչ վոր ստացվում և Մոսուլի նավթից:

Ազգային-հրեական պետություն ստեղծելու պատրվակով անգլիացիները գրավեցին Պաղեստինը (հարեան Սիրիան—Ասորիքն անցավ ֆրանսիացիների ձեռքը): Այստեղ ել արաբները դեմ են անգլիական ձեռնարկություններին: Նույն անբավականությունն անգլիացիների դեմ նկատվում և և արաբական այն հողամասերում, վորոնք գտնվում են Արաբիայի հարավային ծովափին և անցել են անգլիացիների ձեռքը: Ներկայումս անգլիացիներն Աֆրիկայում և Ասիայում ունեցած իրենց տիրապետություններով շրջապատել են ամբողջ Հնդկական ովկիանոսը: Այս ողակումն ավելի ևս ամրապնդելու համար Անգլիան ծրագրում և մի յերկաթուղագիծ անցկացնել, վորը հայտնի է «լերեք ն» անունով՝ կեպտառւն—Կաիրե—Կալկաթա:

Հասարակագիտական դասերից հիշում եք, թե Անգլիան համաշխարհալին պատերազմից հետո ինչ դիջումներ և արել հնդկական կապիտալին:

Նվազված ՅԵՐԿՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԵՊԻ ԱՆԳԼԻԱՆ.— Անգլիացիները շարունակ ընդգծում են այն կուլտուրական աշխատանքը, վոր իրենք տանում են առանձնապես Յեզիրապոսում և Հընդկաստանում—իրերկաթուղիներ անցկացնելը, Ջրովի հողերի տարածության մեծացնելը, նոր կուլտուրաներ մատնելը, կրթության մասին հոգալը: Բայց տեղացի ազգաբնակությունը շատ ճիշտ գնահատական և տալիս այս բոլոր աշխատանքներին: Երա կարծիքով այս բոլորը կատարվում են միմիայն նրա համար, վորպեսզի տեղական ազգաբընակության շահագործման ուժեղացման ճանապարհով անգլիական կապիտալի յեկամուտներն ավելի և մեծանան: Վորքան այս յերկըր-

Ները տնտեսապես առաջ են զնում և առանձին մասերը լերկաթուղի-ներով իրար հետ կապվում, այնքան ավելի յե ամրանում ազգային միության զգացումը: Ազգաբնակությունն սկսում և դիտակցին, վոր ինքը և՛ իրավունք, և՛ հնարավորություն ունի անկախության հաս-նելու:

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԿԱՅՍԵՐՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀՆԱ-
ԲԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ.—Իրիտանական կայսրությունն իր զանազան մա-
սերից կարող և ստանալ այն բոլորը, ինչ վոր անհրաժեշտ և կյանքի
համար:

Անգլիան առատությամբ տալիս և արդյունաբերական իրեր և
քարածուխ, ցորենը տալիս են կանագան, Հնդկաստանը, Ավստրալիան,
բրինձը՝ Հնդկաչինի արևմտան մասը (Բիրման), բուսական լուղն ու
նրա համար անհրաժեշտ նյութը՝ Նիգերիան (Գվինեայի ծոցում) և
Հնդկաստանը, միսն ու կաթնամթերքը՝ Կանագան, Ավստրալիան և
Նոր-Զելանդիան, թելը՝ Հնդկաստանն ու Ցեյլոնը, կակաոն՝ Պուկե
ծովափը (Գվինեա), բուրգը՝ Ավստրալիան, Նոր-Զելանդիան, Հարավ-
աֆրիկական Միությունը, բամբակը՝ Հնդկաստանը և Ցեղիպտուսը,
կառչուկն ու անազը՝ Մալական, վուկին և ալմաստը՝ Հարավային
Աֆրիկան: Բամբակը դեռ չի բավականացնում անգլիական արդյունա-
բերության կարիքներին: Անգլիական կապիտալն աշխատում և բամ-
բակի ցանքերն ընդարձակել Աֆրիկայում և Առաջավոր Ասիայում:
Քիչ են սեփական նավթը, յերկաթն ու պղինձը, բայց դրա գոյսա-
բեն անգլիական կապիտալը տեղավորված և արտասահմանայն ձեռ-
նարկությունների մեջ՝ նավթ արդյունահանելու համար Առաջավոր
Ասիայում և Հարավային Ամերիկայում, յերկաթի հանքեր մշակելու
համար Ապանիակալում և պղնձի համար Կատանգալում (Բելգիական
կոնգոյում՝ Աֆրիկայում):

Ավելի վատ և զրությունը Փարբիկատաները Բրիտանական կայս-
րության ներսում սպառելու տեսակետից: Անգլիայից արտահանվա-
ծի միայն $\frac{1}{3}$ տեղավորվում է զաղութներում, $\frac{2}{3}$ պետք և սպառել
գուրսը: Կանագայի, Հնդկաստանի, Ավստրալիայի ինդուստրիալգացի-
ալի ուժեղացումը, ինչպես և յելրոպական, ամերիկական և լատինա-
կան արդյունաբերության հետզհետե զորացող մրցությունն ավելի
և՛ գժվարացնում են անգլիական ապրանքների տեղավորումը:

ՑԵԶՐԱԿԱՅՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.—Բրիտանական կայսրությունը մի
վիթխարի պետություն և բայց նա սի միասնական ամբողջությունը
չի ներկայացնում, այլ առանձին յերկրների մի շարան, վորոնց մեջ
հաստատուն կապ չկա: Յերկար ժամանակ Անգլիան խոչընդուն եր

հանգիսանում, վոր իր գաղութներն ինքնուրույնության կերպով զարգանան: Հետզհետե ինքնուրույնության հասան բարեխառն դոտու յերկըրներում ել սկսել ե ամրանալ տնտեսական ինքնուրույնությունը, վորին անխուսափելի կերպով պետք ե հետեւ և քաղաքական ինքնուրույնությունը: Քիչ բացառություն վերցրած, ապահովված ե կենսամթերքների և կենսական հումքի սեփական պաշարով, բայց իր ապրանքներն սպառելու համար կարիք ունի ոտարերկրություն շուկաների:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԹԵՄԱ

ԱՆԳԼԻԱՅԻ ԿԱՊԵՐԸ ՄՅՈՒՄ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ

ԱՐՏԱՎԻՌԻՆ ԱՌԵՎՏՏՐԻ ՆՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՄԱՐ:—Ռւբիշ վոչ մի խոշոր յերկրի համար մյուս յերկրների հետ ունեցած կապերն այն նշանակությունը չունեն, ինչ վոր Անգլիայի համար: Յերկրի ամրող կամացք կախված է արտաքին առևտություններին վերջինն ընդհատվեր, այն դեպքում, հումքի բացակայության և՝ սպառման շուկա չունենալու պատճառով, կանդ կառնելին ֆարբիկաները, սննդամթերքի բացակայության պատճառով կսկսեր կոտորվել ազգարնակությունը: Անգլիան արտասահմանից ներմուծում ե իրեն անհրաժեշտ հացի, յուղի, պանրի, ձիթ՝ $\frac{3}{4}$ -ը, իրեն տնհրաժեշտ մսի $\frac{1}{2}$ -ը, ամրող բանակը, վերամշակելի հանքի և այլ հումքի մեծ մասը: Բամբակի արդյունաբերության $\frac{3}{4}$ -ը և արդյունաբերության մյուս տեսակների $\frac{1}{4}$ -ից մինչև $\frac{1}{3}$ -ը աշխատում են արտահանության համար:

ԱՌԵՎՏՏՐԻ ԱՌՈՒՄԸ:—XIX դարի ընթացքում Անգլիան համաշխարհային առևտությունն եր: 1870 թվին Անգլիայի շրջանառությունը համաշխարհագլինի $\frac{1}{4}$ -ներ կազմում: Բայց այնուհետեւ ֆերմանիայի և Միացյալ Նահանգների Արտաքին առևտությունը կրճատեց Անգլիայի բաժինը համաշխարհային ապրանքաշանական առժողովությանը մեջ մինչև 150%: XIX դարի յերկրորդ կեսից ներմուծման արժողովությունն սկսում է գերազանցել արտահանման արժեքին:

**Անգլիայի արտաքին առևտուրը
(միլ. ֆ.-ստերլ.)**

<i>Տարիներ</i>	<i>Արտահանում</i>	<i>Ներմուծում</i>
1801	35	32
1820	49	33
1850	197	100
1870	244	103
1900	354	523
1913	634	769
1927	832	1219

1927թվի շրջանառության մեծացումը 1913թ. նկատմամբ միայն յերեսութական և դրա պատճառը գների աճումն և պատերազմից հետո: Յեթե հիմք ծառայեցնենք մինչպատերազմյան գները, այն դեպքում 1913թ. շրջանառությունը ընդունելով՝ իրրե 100, կստանանք 1927թ. համար՝ արտահանմանն՝ 80, ներմուծմանը՝ 114: Այսպիսով 1927թ. արտահանությունը նախապատերազմյանի միայն $\frac{1}{5}$ -ն է կազմում:

Աշխատեցեք այս յերկույթը բացատրել, հիմք ընդունելով ձեր սովորածները հասարակագիտականից՝ թե ինչպես և ազգեր համաշխարհային պատերազմը Յեվրոպալի գնողուկնակության և Միացյալ Նահանգների ու Յապոնիայի հղորության աճման վրա:

ՆԵՐՄՈՒԾՄՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ:—Անգլիայի ներմուծումը կազմված է կենսական և համի մթերքներից (ցորեն, սիմինդր, միս, լուղ, պանիր, ձու, թեյ, շաքար), հումքից (բամբակ, բուրդ, փալտեղեն, կառւչուկ, նավթ, հանքեր) և մասամբ ֆաբրիկատներից (գերմանական հետապրաներ՝ յերկաթ և պողպատ, ներկեր և դեղեր, գործարանալին հաշիաներ, գորգեր և գուլպաներ):

Վա՞ր յերկը ներկաներից ե Անգլիան ստանում ցորենը, յեգիպտացորենը, բրինձը, միսը, կաթնամթերքը, ձուն, թեյը, շաքարը:

Վա՞րտեղից ե ստանում բամբակը, բուրդը, փալտեղենը, հառուչուկը, նավթը, յերկաթի հանքը, պղինձը:

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ:—Անգլիայի արտահանումը կազմված է և ֆարբեկատներից (մեքենաներ և մետաղյա ուրիշ իրեր, գործվածքներ, չափուստեղեն և կոշկեղեն և այլն), կիսաֆարբեկատներից (մանած, լերկաթ, պողպատ), քարածիսից և ձկնից, Անհրաժեշտ կենսական և գործարանային հումքի ներմուծումն Անգլիան աշխատում է կատարել զլիավորապես իր գաղութներից (աղատվելով ամերիկական բամբակից, Անգլիան ավելի և ավելի սկսում է բանեցնել հընդհական և լեգիտիմական բամբակը, կառուչուկը ներմուծում է իր գաղութներից, զբավում և նավթաբեր հողեր, մեծացնում և բամբակի ցանքներն իր գաղութներում), Բայց և այնպես թե ներմուծման և թե արտահանման համար նաև չի կարող բավականանալ միայն իր գաղութներով: Այնտեղ սկսում է զարգանալ սեփական ինգուլստրիան. բացի դրանից, Անգլիան կանադայում տուժում է Միացյալ Նահանգների, իսկ Հնդկաստանում՝ Յավոնիայի մրցակցությունից: Այնուամենայնիվ ներմուծման և արտահանության մեջ բրիտանական տիրապետությունների մասնակցության բաժինն աճում է:

Կազմեցեք դիարքամիներ հետեւյալ տվյալներով.

Բրիտանական տիրապետությունների մասնակցությունն Անգլիայի առեւտրի մեջ ^{0/0} առ:

Անգլիայի առեւտրի մեջ ^{0/0} առ:

	1893 թ.	1903 թ.	1913 թ.	1925 թ.
Ներմուծում	23	21	28	32
Արտահանում	28	33	34,5	39

Արտահանման և ներմուծման զլիավոր հոգվածները 1923—1926 թվերին (միլ. ֆ.-ստերլ.)

Ներմուծման զլիավոր հոգվածները	Արժեքը միլ. ֆ.-ստերլինգ.	Արտահանման զլիավոր հոգվածները	Արժեքը միլ. ֆ.-ստերլ.
1. Անգլա-համբ		1. Ֆրանսիլ ապրանիներ	
Միլ	111,3	Բամբակի գործվածքներ .	147,1
Ցողեն	63,4	» մանած	26,4
Ցուղ	48,8	Բրդե գործվածքներ	38,4
Թեյ	37,5	Ուրիշ	26,4
Շաքար	36,4	Հագուստեղեն	28,4
Մրգեղին	32,6		

2. Հումք յեվ զարդարմաններ ու իշեր		2. Մետաղներ յեվ երանցից պատրաստված իրեր	
Բամբակի	104,5	Մեկենաներ	92,8
Բուրդ	62,8	Ցերկաթ, պողպատ և նրանցից պատրաստված իրեր	74,3
Անտառանյութեր	46,1	Ավտոմոբիլներ	29,1
Նավթ և նովթամթերք . .	40,6		
Դունավոր մետաղներ և նրանցից պատրաստ. իրեր	34,1	3. Հումք	
Ցերկաթ, պողպատ և նրանցից պատրաստված իրեր .	22,4	Քարածուխ	74,1

ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՈՒՄՔԻ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ.—Անգլիայի աընտեսական հզորությունը մեծ չափով պահպանվում է հումքի շուկաներում ունեցած նրա աիրապետությամբ: Վորոշ դեպքերում նա իր ձեռքն և պահում հումքն իրրե նրա աղբյուրների սեփականատեր: ուրիշ դեպքերում նա հանդիսանում է հումքի գլխավոր սպառողը, կան նաև դեպքեր, յերբ նա յե հումքի ամենակարենոր բաժանողն ոտար շուկաների վրա:

Անգլիան սեփական տերրիտորիայի վրա ունի քարածխի պաշար և հանդիսանում է նրա ամենակարենոր մատակարարողը համաշխարհին շուկայում: Նրա ձեռքում և դտնվում նավթի ամբողջ համաշխարհակին պաշարի $\frac{1}{3}$ -ից մինչև $\frac{1}{4}$ -ը, գլխավորապես Պարսկաստանում, Միջագետքում և Հնդկաստանում, մասամբ ել Յելրոպայում և Ամերիկայում: Անգլիայի ձեռքումն են գտնվում անազի համաշխարհային արտադրության մոտ $\frac{7}{10}$ -ը, կառչուկի կեսից ավելին, համարյա ամբողջությամբ ջութի արտադրանքը (Հնդկաստանում): Անգլիայի ձեռքովն են անցնում բրդի մեծ մասը, վորը նա վերավաճառում ե Ֆրանսիային, Գերմանիային, ԽՍՀՄ-ին: Նա յե բամբակի գլխավոր գնորդը: Իրեն անհրաժեշտ բամբակի մոտ $\frac{2}{3}$ -ը նա գնում է Միացյալ Նահանգներից, բայց և $\frac{1}{4}$ -ից ավելին նա հավաքում ե իր գաղութների տերրիտորիաներից, ըստ վորում միջոցներ և ձեռք առնում բամբակի ցանքերն ընդարձակելու, առանձնապես Միջադեմքում և Աֆրիկայում:

Ի՞նչ առավելություններ ե ընձեռում վառելիքի, հումքի և պարենի շուկաներում ունեցած տիրապետությունը:

ԱՊՐԱՆՔԱՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽՍՀՄ ՀԵՏ:—Պատերազմից առաջ մուսաստանի հետ ապրանքափոխանակության կողմից Անգլիան բըռ-

նում եր յերկրորդ տեղը, առաջին տեղը զիջելով Գերմանիային։ Պատերազմից հետո ԽՍՀՄ-ի հետ ունեցած ապրանքափոխանակության մեջ Անգլիան սկզբում առաջին տեղը զրավեց՝ թէ ներմուծման և թէ արտահանման ապրանքների կողմից, բայց հետո առաջնությունը զիջեց Գերմանիային։

Դիագրամներ կազմեցեք հետևյալ տվյալներով.

Անգլիական առևտրական նավատորմի տոննաժը

Տարիներ	Տօննաժ միլիոն տոն-	Համաշխար-
	ներով	հային տոն-
1890	10,2	48,0
1900	13,2	46,0
1910	17,5	42,0
1913	18,7	40,0
1920	18,3	32,0
1925	19,4	30,0
1926	19,3	29,6

Անգլիական նավահանգիստների ընդհանուր նավաշրջանառությունից ամբողջ յերկու յերրորդն ընկնում և անգլիական նավերին, այնինչ Միացյալ Նահանգների նավահանգիստներում սեփական նավերին ընկնում և միայն մի յերրորդը։

Անգլիական նավերը վորակով ամենալավերիցն են։ Անգլիական նավատորմում խոշոր նավերի տոկոսը համարյա յերկու անգամ ավելի յե համաշխարհայինից (10.000 տոննից ավելի տարողությունունեցող նավերն անգլիական նավատորմում կազմում են 15%՝ իսկ համաշխարհայինում՝ 8%):

Բայց անգլիական նավահանգիստներն ավելի պակաս են սարքավորված։ Լոնդոնում 100 մ. ափին ընկնում ե 0,55 բարձրացնող մեքենա, Համբուրգում՝ 4,54։ Բայց այն ել պիտի աչքի տռաջ՝ ունենալ, վոր լոնդոնում նավամատուցի ափն ահագին յերկարությունուի. նա հավասար է 53 կլմ։

1925|26 թ. ԽՍՀՄ ապրանք ներմուծողների շարքում Անգլիան ըրունում եր յերկրորդ տեղը (Գերմանիայից հետո), 1926|27 և 1927|28 թ.՝ յերրորդ տեղը (Գերմանիայից և Միացյալ Նահանգներից հետո)։ Էնդամենը ներմուծված ե՝ առաջին տարում 125 միլ. ռ. ապրանք, յերկ-

բորդ տարբին՝ 97 միլ. ռ. յ ի երրորդ տարբին՝ ընդամենը 45 միլ. ռ. յ Անգլիական ներմուծման մոտ $60^0|_0$ -ն ընկնում է հետեւալ 3 տպրանքի վրա՝ կառաջուկի, բրդի և մեթենաների. հետո գալիս են՝ կաշի և զարաղելու նյութեր, հումչութ, ելեկտրական սարքավորման իրեր և գունավոր մետաղներ. ԽՍՀՄ-ից արտահանման մեջ Անգլիան 1927/28 մվից բռնում է միայն յերկրորդ տեղը, այնինչ 1926—27 թ. առաջին տեղը նրան եր պատկանում: 1926—27 թ. նա արտահանել է ԽՍՀՄ-ից 197,5 միլ. ռ. տպրանք ($\text{ԽՍՀՄ-ից ամբողջ արտահանման } 290|_0\text{-ը}$). 1927—28 թ. ներմուծումը գեպի Անգլիա իջավ 148 միլիոնի: ԽՍՀՄ-ից արտահանմանի համարյա ուղիղ կեսը բռնում է հունգը, մյուս կեսը՝ կենսամթերքները: Համարյա ամբողջ հունգը (1926—27 թ. 99 միլիոնից 91 միլիոնը) ընկնում է յերեք ապրանքի վրա՝ փայտեղենի, մուշտակեղենի և նավթի. մնացածը կազմում են՝ լուղաբեր սերմերը, խողանն ու մարդանեցը: Արտահանված կենսամթերքների արժողության յերկու յերրորդից ավելին ընկնում է ցորենի, լուղի և զարու վրա. ապա գալիս են՝ հածարը, սիմբնարը, քուսպն ու վորսի միսը:

ՆԱԳԱՏՐՄԱՆ: — Քանի զոր Անգլիայի բոլոր կապերն աշխարհի հետ պահպանվում են ծովալին ճանապարհով, Անգլիան պետք է կառուցեր խոշոր նավատորմ: Դեռ XVIII դարի վերջին անգլիական առևտրական նավատորմը տեղի յեր տալիս հունգարկանին. անգլիական նավատորմի տարողությունը հավասար եր 300 հազար ոնդիստր.^{*)} տոննի, հոլլանդականինը՝ 900 հազար:

XVIII դարի վերջին անգլիական նավատորմի տոննաժը հասավ մինչև 1340 հազար ոնդիստր. տոննի: Առանձնապես նավատորմն արտադրությունը է աճում 1819 դարում:

Անգլիական նավատորմի հակառական տարողությունը արտահայտվում է շատ բարձր թվերով: 1926 թ. բեռնաշրջանառությունը արտաքին առևտրի համար կազմում եր՝ լոնդոնինը 20,5 միլ. ոնդ. ռ., ինչերպես մոտ 14, Սոուանհեմպտոնինը՝ 10, Նորվիչստլինը՝ 8:

Անգլիական նավատորմի հակառական տարողությունը հնարավորությունն է տալիս նրան սպասարկել և այն ոտար յերկրներին, վորոնք չունեն բավականաչափ տոննաժ: Իր նավերով ոտար ապրանքներ տեղափոխելուց Անգլիան մեծամեծ գումարներ է շահում:

Ա.Վ.ԽԱՅԱԿԱՆ: Անգլիայի արտասահմանան հարստությունների մեջ ավիացիան սկսում է մեծ դեր խաղալ: Բայց այստեղ անգլիական ավիացիային համարյա հավասար տեղ է գրավում ե՛ ոտար ավիացիան: 1925 թ. Անգլիայի արտաքին հարաբերությունների մեջ անգլիական ինքնաթիւներով վոխաղդվել է 10.600 մարդ, ոտար ինքնաթիւներով՝ 10120:

Ա.Ն.ԳԼԻԱԿԱՆ ԿԱՊԻՏԱՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ: — Անգլիական կապիտալը գործ է տեսնում գոչ միայն իր տանը, այլ և արտասահմանում

^{*)} Ուեդիստր. տոննը հավասար է 100 անգլ. խոր. վոտնաչափի կամ 2,83 մ²:

զանազան ձեռնարկությունների մեջ՝ բանկերում, յերկաթուղարին ձեռնարկություններում, հանքերում, ֆարբերիկաններում և այլն Անզվիայի սահմաններից գործու ընդամենը գործադրության մեջ և մինչև գլխարք Փ. ստերլ. անզվիական կապիտալ, վորից շահարդարդը զետեղված և անզվիական գաղութներում կանագայում, Ավտորավիալում, Հնդկաստանում, Աֆրիկայում:

Արտասահմանում գործում են նաև Անզվիայի վաշխառուական կապիտալը: Նրանց համար վարկ բանալով՝ Անզվիան իրենից կախալ վիճակի մեջ և պահում մի շարք պետություններ, վորոնք գտնվում են Միջիրգական ծովի ճանապարհներին (մանավանդ Պորտուգալիան, Հունաստանը), այլ և Հարավային Ասերիկայի հանրապետություններից միքանիսը:

ՀԱՇՎԵԿԵԿԵԽԻԾՔ: — Անզվիան մեծ ոգուածներ և ստանում իր նավերով ոտար ապրանք փոխադրելուց: Զգալի վաստակ և ստանում բանկային, առահնովազրական և այլ ոպերացիաների համար: Կապիտալի բոլոր ոգուածները վոչ միայն ծածկում են արտաքին առևտությունը (այսպիս կոչված առևտրական բարանների պասսիվը), այլ և զգալի հավելում և ստացվում վճարման բարանների համար (վճարման կամ հաշվերական և կոչվում տվյալ մի յերկրի ամեն առանձին գրամական վճարությունների փոխհարաբերությունը ուրիշ յերկրներին և ուրիշ յերկրներին՝ իրեն Միայն 1926 թ. (յերբ տեղի յեր ունենում հանքագործների գործադրությունների մեջ արտահանվում) հաշվեկշռի մեջ պասսիվ ստացվեց:

Դիագրամ կազմեցեք հետեւալ աղյուսակի տվյալներով.

Անզվիայի վճարման բարանները (միլ. Փ. ստերլինգ.) .

Բարաններ հոգվածները	1913 թ.	1923 թ.	1924 թ.	1925 թ.	1926 թ.	1927 թ.
Ա. Կ ա լ գ						
1. Զուտ յեկամուտ նավազնացությունից	94	115	140	124	120	140
2. Զուտ յեկամուտ կապիտալի աշխատանքից արտասահմանում	210	150	195	239	273	270
3. Յեկամուտ բանկային, առահնովազրական և այլ ոպերացիաներից	35	40	75	75	75	78
Ընդամենը						
Առերական բարաններ պասսիվ	156	203	324	384	475	392
Տարբերություններ հոգուտ Անզվիայի	+181	+102	+ 86	+ 54	- 7	+ 96

ԱԽՈՅԱՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՇԻՎ ՏԵՄՆԵԼԸ: — Անգլիայի համար Մեծ-
Բրիտանիա կղզին հենարան դարձավ մի ալնպիսի կայսրություն ստեղ-
ծելու, վորը սփաված և յերկրագնդի բոլոր գոտիներում: Անգլիական կա-
պիտակն իրեն համար միշտ նորանոր վայրեր եր պահանջում, վորտեղ
ինքը կարողանար շահվել. նա ասպարեզից քշում եր ամեն մի վտան-
գավոր ախոյանի: Անգլիան մասնակցում եր լեվոպական բոլոր պատե-
րազմներին, ամեն տնտեսմ զուրս եր գաճա իբրև հաղթող՝ ավելացնե-
րով իր գողությունին կալվածները և ասպարեզից քշելով ամենավտան-
գավոր ախոյանին: XVII դարում Անգլիան ծովերի տիրապետությու-
նից հեռացրեց Պորտուգալիային և Ապանիային, XVIII դարում՝ Հոլ-
լանդիային և Ֆրանսիային: Ոգտվելով համաշխարհային պատերազմից,
Անգլիան ջախջախեց իր նոր հերթական ախոյան Գերմանիային, վո-
րի մըցակցությունից սկսել եր սաստիկ յերկուղ կրել: Գերմանիայի
հետ նա բաղխվում եր և ծովի, և սկ ցամաքի՝ Աֆրիկայի բաժանման
համար մղվող պայքարում:

Համաշխարհային պատերազմից հետո Անգլիայի կալվածներն ա-
վելացան և միլ. քառ. կլմ, այսինքն միքիչ պակաս Խորհրդային Միու-
թյան լեվորպական մասից:

ՀԱՄԱՅՆԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ: — Բայց միե-
նույն ժամանակ համաշխարհային պատերազմը 9 անգամ շատացրեց
Անգլիայի պետական պարտքը, վերջինս 150 ո. բարձրացավ 1340 ո.
տղարնակության յուրաքանչյուր շնչին: 1/5-ով կրծատվեց նրա ար-
տահանումը, ինը կու անգամ կրծատվեց նրա վճարման բալանսի ակ-
տիվը: Արտաքին առների մեջ Անգլիան ստիպված է հետզհետե նա-
հանջել առաջավոր դիրքերից Միացյալ Նահանգների, արդյունաբերու-
թյան կողմից անող Ֆրանսիայի և վերածնվող Գերմանիայի գրոհի տակ:

Ֆրանսիան և մանտվանդ Հյուսիսալին Ամերիկալի Միացյալ Նա-
հանգները դառնում են Անգլիայի նոր հերթական ախոյաններ: Ֆրան-
սիան իր ալն հողամասերի հետ ունեցած հարաբերություններով վո-
րոնք գտնվում են Միջերկրական ծովի արեմտյան մասի յերկու կողմը:
Կտրում և անգլիական հարաբերությունների զլիավոր գիծը (Ատլան-
տյանից Հնդկական ովկիսնոսը): Ֆրանսիայի և Անգլիայի շահերը
բաղխվում են նաև Առաջավոր Սախայում և Հյուսիսալին Աֆրիկայում:
Միացյալ Նահանգները հաջողությամբ մըցում են Անգլիայի հետ աըն-
տեսական տիրապետություն ձեռք բերելու համար անգլիական գա-
ղութ կանադայում: Անգլիայի և Միացյալ Նահանգների շահերն ընդ-
հարվում են Մեքսիկայում (Նավթ), Հարավային Ամերիկայում, Չի-
նաստանում: Նյու-Յորկն սկսում է յետ մղել լուղունին յերկրորդ
անգը. և աւետը մեջ, և բանկային շրջանառության կողմից:

«Իր տանն» ել բոլոր գործերը հաջողակ չեն: Պատերազմից հետո իր լանդիան անջատվեց և ինքնուրույն պետություն գարձավէ: Դոմինիոններն աշխատում են լիակատար անկախություն ձեռք քերել ուսար պետությունների հետ հարաբերություններ ունենալու ասպարուղում: Գաղութներում, մանավանդ Հնդկաստանում և Յեզիպտոսում, ավելի և ավելի համառ կերպարանք և ստանում անկախության համար մղվող պայքարը:

ՅԵԶԻԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ: — Անգլիան ամենահզոր առևտրական և արդյունարերական պետությունն եւ Քաղաքականագես նա տիրում և աշխարհիս մի քառորդին: Նա իր ձեռքին և պահում Ասլանտյան և Հնդկական ովկիանոսների տիրապետությունը: Նա իշխում և հումքի շուկաների վրա: Նրան և պատկանում առաջնությունը քարածուք, գործվածքներ և իրեր սպառելու շուկաներում: Իր կապիտալի աջակցությամբ նա տեր և տնտեսապես յետ մնացած միշտք պետությունների մեջ: Բայց Անգլիայի համաշխարհային տիրապետությունն այնպես ճնշող չե, ինչպես 50 տարի առաջ՝ Առևտրի, արդյունարերության և արտասահման կապիտալ արտահանելու մեջ նրան յետ են մղում գեղի յերկրորդ և յերրորդ դիրքերն ավելի յերիտասարդ և յեռանդուախույնները: Պատերազմից հետո ստեղծված տնտեսական և քաղաքական գրությունը վկայում է այն մեծ վտանգի մասին, վոր սպառնում և թե Բրիտանական կայսրության ամբողջությանը և թե նրա տնտեսական բարեկեցությանը:

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

ՄԻԵՅԵԼ համաժուարհային պատերազմը՝ Յեփրոպայում 540 հազար կլմ² յեզ 65 միլ. ազգաբնակուրյուն. զազուքները Յ միլ. կլմ. 12 միլ. բնակչությունը՝ Պատերազմից յեզ Վերօնիկ գաւենագրից հետո՝ 472 հազ. կլմ² 60 միլ. բնակչություն (1926 թ.) Յեփրոպայում. բոլոր գաղութեներից գրկված ե:

ԲՆՈՐՈՇՈՒՄ: — Գերմանիան միջին յեվրոպական պետությունների մեջ ամենախոշորն ե, վորը լայն չափով և բազմակողմանի կերպով ոգտագործել ե և իր դիրքը, և բնական արտադրական ուժերն իր տընտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացման համար: Յերկար ժամանակ Գերմանիան մնում եր գյուղատնտեսական յերկիր. XIX դարի 70-ական թվականներից առանց գյուղատնտեսությանը վնասելու նա դառնում է ամենաարդիունարերական և առևտրական յերկրներից մեկը՝ ուժեղ ծովալին նավատորմով:

ՎԵՅԵՐՈՐԴ ԹԵՄԱ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԲՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ ՅԵՎ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀԻՄՈՒԻՆՔՆԵՐ ԶԱՐԴԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ. — Զարդացման ալսպիսի հիմունքները պետք եւ վորոնել յերկրի դիրքի և մակերեսույթի կաղմության առանձնահատկությունների, բնական արտադրական ուժերի և պատմության մեջ:

ՄԻԶԱՆԿՅԱԼ, Դիրքը: — Ամենից առաջ ուշադրություն դարձրեք դիրքի այն առանձնահատկության վրա, վորը նպաստում է հարաբերությունների զարգացմանը, այն եւ միջանկյալ դիրքի վրա:

Պետությանների վեր խմբակցության եւ պատկանում Գերմանիան (աես յերրորդ թեման):

Վորոնք են այս խմբակցության առավելությունները հարաբերությունների համար:

Մեծ, թե փոքր չափով եւ շեշտված Գերմանիալի միջնորդական հարաբերությունների հնարավորությունը՝ համեմատած Միջին Յեվրոպայի ուրիշ պետությունների հետ:

Բանի (և վեր) պետություններով եւ շրջապատված Գերմանիան, Քանիսմազմ՝ Զեխո-Սլովակիան, Ավստրիան, Լեհաստանը:

Վեր կողմերից Գերմանիան ամենից ավելի մատչելի է հարաբերությունների համար:

Վերքան և Գերմանիալի յերկանությունը (արևմուտքից արևելքից):

Այս հարցին պատասխանելու համար գտեք այն յերկայնության աստիճանները, վորոնց միջև գտնվում եւ Գերմանիան, և ինկատի առեք, վոր 51-րդ զուգահեռականի մի աստիճանի յերկայնությունը 70 կլմ և (51. րդ զուգահեռականը Գերմանիալի համար հանդիսանում է միջինը):

Վերքան և Գերմանիան ցամաքի խորքը թափանցում:

(Ցուց տվեք հրուսիսային և հարավային կետերի լայնության աստիճանները, բացի դրանից, հաշվեցեք ողալին գծով հեռավորությունն ամենահարավային կետից՝ Ալպերի ստորոտից մինչև Բալտիկ ծովը):

ՇՓՈՒՄԸ ԾՈՎԸ ՀԵՏ: — Ունի՞ Գերմանիան ուղղակի մուտք դեպի Առլանտյան ովկիանոսը: Վեր ծովերն են մուտք բաց անում ովկիանոսային հարաբերությունների համար:

Վորոնք են յելքերը Բալտիկ ծովից Հրուսիսային ծովը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ:—Միջանկյալ դիրքը շատ նպաստավոր և հարաբերությունների տեսակետից Բայց նա միենուին ժամանակ վտանգավոր և ե դժվար՝ պաշտպանելու տեսակետից: Իր դիրքի վտանգավոր կողմերը Գերմանիան առանձնապես զգաց համաշխարհին պատերազմի ժամանակ: Պատերազմը վատթարացրեց նրա սահմանների անվտանգությունը արևմուտքում: Նա յերկարացրեց նրա ցամաքային սահմանը, իսկ ցամաքային սահմանն ամենից ավելի խոցելին ե: Պատերազմը վատթարացրեց Գերմանիայի զծագրությունը: Ամանից ավելի վտանգավոր են դուրս ցցված մասերը, վորոնք ամեն կողմից շրջապատված են ոտար յերկրներով: Այսպիսի դուրս ցցված մասերը կոչվում են քաղաքական թերակղզիներ: Թիրակղզիների վրա պատերազմից հետո ավելացավ նաև մի քաղաքական կղզի:

Ցույց տվելք Գերմանիայի քաղաքական թերակղզիները և քաղաքական կղզին:

Գերմանիայի «անդամահատման» քարտեղն աչքի առաջ ունենալով՝ բացարկեցաք, թէ ինչու, չնայելով վոր տերթիտորիան փոքրացավ, Գերմանիայի սահմանների յերկարությունը շատացավ (մինչև պատերազմը 8000 կլմ, վորից 3000 ծովային. պատերազմից հետո՝ 8200 կլմ, վորից 2700 ծովային): Վար տեղերում ծովային սահմանը կարճացավ, վար տեղերում ցամաքայինը յերկարեց:

Ի՞նչպես պետք ե գնահատել Գերմանիայի զծագրությունների և սահմանների փոփոխությունը:

Ի՞նչպես եր անցնում սահմանը ֆրանսիայի հետ մինչև վերսալի դաշնագիրը և ի՞նչպես ե անցնում հիմա: Վար ե ավելի լավ պաշտպանողական սահման՝ լինենքը, թէ՞ գետը:

ՈՒԵԼՅԵՖԸ:—Ընդհանրապես Միջին Յեվրոպայի և մասնավորապես Գերմանիայի մակերևույթի կազմության առանձնահատկությունն այն ե, վոր նա բաժանվում ե յերեք մասի՝ ցածր հարթություն, միջին լեռները և Ալպերը: Ալպերն ունեն իրենց նախասարերը: Այդ աստիճաններն անցնում են Գերմանիայով, հետզինետե բարձրանալով դեպի հարավ. հյուսիսում գտնվում ե Հյուսիսային գերմանական ցածր հարթությունը, հետո՝ Միջին գերմանական լիռները ե, վերջապես, Ալպերը: Յեվ հյուսիսային, և միջին աստիճանները կտրատված են իջվածքներով: Լեռների և իջվածքների ուղղությունների մեջ նկատվում ե յերկու գերակշռող ուղղություն, վորոնք իրար հատում են ուղիղ անկյունով՝ մեկը, այսպես կոչված Հռենոսյանը, գերակշռում ե Գերմանիայի արևմուտքում և ձգվում ե հարավ-արևմուտքից դեպի հյուսիսագրություն—6

սիս-տըռելք, իսկ մյուսը՝ վորը գերակշռում և Գերմանիայի մնացած մասերում, ձզվում և հարավ-արեելքից հյուսիս-արևմուտք, այսպիս կոչված Հերցինյանը:

ԳերմԱնԱԿԱՆ ՑԱՐԹՈՒԹՅՈՒՆԸ.—Հյուսիսային գերմանական ցածրությունը մի ալիքանման Հարթություն և Նրա մակերեսուկթը միասնակ եւ Մերթ լերկար. ձզվում են միայն անտառները (արեելքում շամի, արեմուտքում աճարի), մերթ տարածում են անծալքածիր դաշտերը, Հաճախ հանդիպում են ամենացնդարձակ կտնաչ մամուպատ տարածություններ, վորոնք ընդհատվում են հավամբդի թփուտներով և մենապոր շամիներով:

ՑԱՐԹՈՒԹՅԱՆ ՏԱՓԱԿ ԲԼԱՇԱՐԹԵՐԸ:—Ցածրությունն ամրող ջությամբ կատարյալ հարթությունն չեւ կան թեթև կերպով կլորացած բարձրացումներ (այսպես կոչված Բալթիական հարթ բլատարեց):

ՑՈՎԱՓՆՅԱՆ ՇԵՐՑԸ:—Գերմանական ցածրությունն սկսվում է Հյուսիսային և Բալտիական ծովերի ծովափնյա շերտով: Խնչպես ասել եւ մի նշանափոր գերմանացի աշխարհագրագիտ (Բատցել), Բալտիկ ծովի ափերը իդլիֆական (զուրեկան-խաղաղ) կերպարանք ունեն, իսկ Հյուսիսային ծովի ափերը՝ հերոսական բնույթ, վորը վկայում և ծովի անեղ արշավանքի և մարդու հերոսական կալի մասին:

ԲԱԼՑԻԿ ՑՈՎԻ ԱՓԵՐԸ:—Բալտիկ ծովի ափերը մեծ մասամբ վորոված են: Այնուև գոյացել են խոշոր լիմաններ կամ հաֆեր:

Հաֆերը լճեր գարձած ծովային ծոցերն են: Բայց ծովից նրանք բաժանվում են լերկարածիք ավազի կիտվածքներով: Կիտվածքների վրա հաճախ լերկուում են կուրացնելու չափ սպիտակ գլուներ—ըլլուբներ, վորոնց կուտակել եւ քամին չորացած ծովային ավազից: Ողերի և նեմանի միջն զանգած ափի չորս հինգերորդը ներկայացնում է զյուներով ծածկված ծովափի: Քամու ժամանակ դյուները կարծես մառախուզով պատաճ լինեն, վոր առաջ և գալիս քամու փչած ավազից: Իրենց առաջնակաղացման ժամանակ դյուները ծածկել են մի շարք գյուղեր: Ներկայումս դյուների շարժման առաջն առնված և նըանով, վոր տնկված են լերկար արմատներով բույսեր և շամի ծառեր:

ՀՅՈՒՍԻՍԱԹԻՆ ՑՈՎԻ ԱՓԵՐԸ:—Հյուսիսային ծովի ափերն ընդհակառակն, սաստիկ պատուված են: Աւժեղ ալեկոծությունների ժամանակ ծովը մեծ քանակությամբ հողամասեր և կանել կազմելով

շամտցի խորքը մտնող ծոցեր, ըստ վորում նախկին ծովնդրլա զիծը վերածվել և մի շարք կղզիների: Գետաբերանները լայնացել են և դարձել ծովախորշեր (հստուարիաներ):

Կղզիների և ալժմյան ծովնդրլա գծի միջև տարածվում են ծանծաղ ծավի շերտը, վորը տեղատվությունների ժամանակ մերկանում են: Նրա յետերը ճղվում են տղմային պտղավիտ հողեր (մարշեր): Ծովառշավում և այս հողերի վրա, պետք և նրանց պաշտպանելու կառուցված են հսկայական պատճեններ, վորոնք ծովի մակերեսութիւց մինչև 6 մ. բարձրանում են: Այս կառուցումները կատարել և աղղաքանակությունը ինքնարերաբար, առանց կառավարության աջակցության:

Ներկա հջակածքի՝ Ծովափնյա շերտն այսուհետեւ փոխվում է բլրածնի բարձրության: Ապա դեպի հարավ ընկնում և մի ընդարձակ իջվածք, վորը մինչև 3000 կլմ² տարածություն և բռնում: Հին ժամանակները նա ժածկված եր ճահճներով և անանցանելի անտառներով: Հիմա ճահճները չորացրած են, անտառները մաքրված: Այս հողամասը կարտված և զետալին ջրանցքներով և յերկաթուղու խիտ ցանցով: Հողերը ճիմավոր մոխրահող են, քիչ բերրի, բայց գերազանց մշակման և ուստա պարաբռացման շնորհիվ լավ բերք են տալիս: արևելքում՝ համար, արևմուտքում՝ ցորեն:

ՑԱԾՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԸ ԸՆԿՆԵԼԸ Լե՛նՆԱՑԻ ՇՐՋԱՆԸ, Գերմանիայի տնտեսական կյանքի զարգացման վրա բարերար ազդեցություն և ունեցել այն, վոր ցածրությունը թափանցել և Միջին Գերմանիալի լեռնալին շրջանը: Նա ալբուղ մտել և յերեք շերտով՝ Հոհենու, Ելբա և Ռիեր գետերի հովիտներով: Այս թափանցումներն ավելի մեղմ կլիմա յին մացնում դաժան բարձրությունների շրջանը: Հողը զարմանալի արդարագույն ե, ըուսականությունն ավելի բազմազան և շքեղ (Սաքսոնիա նահանգը շաքարի ճակնդեղի լիրկիր ե, Հոհենույան ցածրությունը՝ խաղողի չերկիր): Հարաբերությունների վրա ունեցած իրենց ազդեցությամբ այս թափանցումները կարելի յէ համեմատել ծովի խորշերի հետ: Վորտեսղ ցերկարությամբ և լայնությամբ ճղվող ճանապարհները խաչվում են, այստեղ ծաղկել են խոշոր առևտրական քաղաքներ: Այս յերեք իջվածքներում տպրում ե ամենախիտ ազգաբնակությունը:

Միջին ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԼԵ՛ՆՆԵԼԸ, Միջին գերմանական լեռները կազմված են մի շարք վոչ բարձր անշատ լեռնաշղթաներից, վորոնք հատվում են իրար համարյա ուղիղ անկյունով: Նրանց բարձրությունը արևելքից դեպի արևմուտք հետպհետեւ իջնում և (Ծնեեկոպպեն Սուդեթյան լեռներում 1600 մ և, Ելֆեկն արևմուտքում՝ 700 մ):

Այս շղթաները մտնում են այն հին լեռների կազմի մեջ, վորը

մինք ուսումնասիրեցինք առաջին թեմայում: Նրանց հետ կապված է և՛ հանգային դոտին, և՛ քարածխային շերտը, և՛ աղերի խավերը—թե խոհանոսացին և թե կալիական:

Լեռնային հարստությունների մշակման շնորհիվ Միջին գերմանական լեռների շուրջը կիտվել և խիստ ազգաբնակություն:

Միջին գերմանական լեռներից հարավ տարածվում է Շվարովրանկոնական կաթոսայանման փոսը, վորը բոլոր կողմերից, քայլելու պարսպի նման, շրջապատված է լեռներով: Կլիման մեղմ է, հողն արդարավանդ (յերկրագործություն, պտղաբուծություն, խաղողի մշակություն):

Շվարցվալդի լեռներից արևմուտք յերկար ու նեղ ցածր շերտով ձգվում է Վերին-Հոկենսոյան ցածրությունը, վորն արևելքից, արևմուտքից և հարավից պարփակված է լեռներով: Դա Գերմանիայի ամենատաք մասն է շատ արդարավանդ հողով: Այս ցածրությունը մի փակ շրջան չեւ նրա վրայով լայնությամբ և յերկանությումը անցնում էն միջազգային ճանապարհներ:

Դերմանի ՀԱՐԱՎԾԻ—Գերմանիայի հարավը բռնում է Հարավ-գերմանական բարձրավանդակը: Շրջապատող լեռները յեռան-կյունու կերպարանք են տվել նրան:

Բարձրավանդակի հարավով անցնող Ալպերը Գերմանիա յին մտնում իրենց հրուսալին մասերի եղերով: Միայն հազվագյուտ դեպքում նրանք անցնում են հավերժական ձյան սահմանից վեր, հասնելով մինչև 3 կլմ բարձրության: Գերմանական Ալպերում կան միշտաք լեռնանցքեր, վորոնք ոգտագործվել են դեռևս հոռմեական տիրապետության ժամանակի: Հիմա նրանց միջով անց են կացրել յերկաթուղթներ, վորոնք զնում են դեպի հտալիա:

Հարավ-գերմանական բարձրավանդակը մի բլրաղատ յերկիր է, վորտեղ մեծ քանակությամբ լճեր կան: Նրանցից ամենախոշորը՝ Բողոքնի լճի միջոցով հոսում է Հոկենսոյ գետը: Կլիման խիստ է, հողը քիչ արդարավանդ: Ալպերից հոսող գետերի հովիտները ճահճուտ են: Հանգային հարստություններ (բացի տորֆից) չկան:

Բայց դրա փոխարեն բարձրավանդակը շատ բարենպաստ գիրք ունի: Դանուբը, վոր վողողում և այս բարձրավանդակը, Գերմանիայի միակ գետն է, վոր հոսում է դեպի արեելք: Ալպիական գետերը ջրային եներգիայի մեծ պաշար ունեն:

Կլիման.—Արևմտյան և արեելլան կլիմաների մեջ յեղած զանազանությունն ազդում է գյուղատնտեսության ընույթի վրա: ավելի խոնալ արևմուտքը ճահճների և մարգագետինների յերկիր է, ալսուեղ

գերակշռում ե մանր տնտեսությունը, վորը միացնում ե լերկագործությունը կաթնալին և մսային անասնապահության հետ: Արևելքը խոշոր հատիկային տնտեսության յերկիր ե:

Տեղումների առատությունը նպաստում է, վոր արեմտյան գետերը (մանափանդ Հաենոսը) ջրառատ լինեն, և նրանց ջրի բարձրությունը փոփոխությունների չենթարկվի: Արևելքան գետերը՝ Ելբան և մանավանդ Ողերը, ամառը ծանծաղանում են:

ԱզդաբնակութՅՈՒՆԸ:—Բնակիչներն ավելի և ավելի կենտրոնանում են քաղաքներում, վորտեղ ներկայումս ապրում ե ամբողջ Գերմանիայի բնակչության $\frac{2}{3}$: Գերմանիայում 40-ից ավելի խոշոր քաղաքներ կան, վորոնցից 16-ը 300 հազարից ավելի բնակիչ ունեցող: Յերկու քաղաք կա միլիոնից ավելի բնակիչ ունեցող՝ Բերլինը և միւ, Համբուրգը և միւ:

Բնակչության ճնշող մեծամասնությունը գերմանացիներ են: Սլավոններ շատ քիչ են մնացել (վենցեր): Մինչև պատերազմի սլավոնների թիվը անհամեմատ ավելի լիբ (լեհական հողերն անջատվել են):

Բոլոր գերմանական ցեղերն, ինարկե, կատարյալ միատեսակություն չեն ներկայացնում: Տարբերում են վերին, միջին և ստորին գերմանական ցեղերը, վորոնք միքչէ իրարից զանազանվում են կենցաղակին պարագաներով և մանավանդ լեզվով (վերին գերմանական բարբառը դարձել է գրական լեզու): Այս տարբերություններն ամենից ավելի պահպանվել են գույղական ազգաբնակության մեջ:

ԳԵՐՄԱՆԻԱԿԱՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ:—Գերմանիայի լանդշաֆտն ամենուրեք կրում ե հսկայական, հասառ և խելացի աշխատանքի կնիքը: Սա հավասարապես վերաբերում է և պատշաճական լեռների համար, և, ինդուստրիալ շրջաններին:

Աշխատունակությանը զուգորդում ե բարձր կուլտուրականությունը: Բոլոր բնակիչները գրագետ են: Բոլոր 6—14 տ. հասակ ունեցող յերեխաները պարտադիր կերպով դպրոց են հաճախում:

Տարբական դպրոցներում մոտ 9 միլիոն յերեխա յե սովորում: Այսպես կոչված միջնակարդ դպրոցներում (զիմնազիաներ և ուսական դպրոցներ), վորոնք հատկացված են բուրժուազիայի յերեխաների համար, սովորում են մոտ 600 հազար հոգի: Մեծ քանակությամբ դպրոցներ կան պրոֆեսիոնալ կրթության համար: Համալսարաններում և բարձրագույն տեխնիկական և առևտրական դպրոցներում—մինչև 100 հազար հոգի:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸՐԻ:—Պետական կազմին նայելով՝ Քերմանիան դաշնակցալին պետություն և Առաջ դա դաշնակցալին կարսություն եր, վորը բաղկացած եր առանձին պետություններից՝ թագավորություններից, իշխանություններից և այլն, իսկ հիմա առանձին պետությունները վերանվանվել են «յերկրներ»։ Նրանքից յուրաքանչյուրը (Պրուսիա, Բավարիա, Սաքսոնիա, Վլուգեմբերգ, Բադեն, Թիուրինգիա և այլն) ունի կատարյալ ինքնակառություն, բայց յենթարկվում է համապետական վերահսկողությանը։ Ամբողջ դաշնակցալին պետությունը գլխավորում են՝ նախագահը, վորն ընտրվում է համաժողովրդական քվիարկությամբ, և համապետական պարլամենտը—ռայխստագը։ Առանձին «յերկրներ» ունեն իրենց պարլամենտը—լանդտագներ—և իրենց մինիստրությունները։

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ:—Գերմանիան ավելի շատ կազմած է Յեփրոպայի ցամաքի, քան թե ծովի հետ նաև շատ հարմար դիրք ունի ցամաքի ներսի հարաբերությունների համար, Յեփրոպայի առանձին մասերի միջև միջնորդի գեր կատարելու համար։ Բնական որոտագրական ուժերը շատ բազմազան են, բաշխված են անհավասար, գոտիական գործուներն ավելի պակաս նպաստավոր են, քան թե վոչ գոտիականները։ Ազգաբնակությունը խիտ է, մեծ մասամբ կենտրոնացած քաղաքներում Քաղաքների ամենաշատ կուտակումը նկատվում է հանքերով ամենից ավելի հարուստ շրջանում և հարաբերությունների գլխավոր գծերի վրա, մասնավանդ նրանց հանգույցներում։

ՅՈԹԵՐՈՐԴ ԹԵՄԱ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԱՅՈՒՆՆԵՐԻ:—Բնական և պատմական պալմանների տարրերության շնորհիվ Գերմանիան բաժանվել է մի շարք բավականաշափ մեկուսացած տնտեսական շրջանների։

I. Հյուսիսային Պերմանեիան զյուղատնտեսական լերկիր և նա բռնում է Հյուսիսային գերմանական ցածրությունը։ Միայն անդամական մասնավանդ ծովակնյա շերտում (նավահանգստային քաղաքներ) և ներքին ճանապարհների խաչման տեղերում (Բերլին), առաջ յեկան խոշոր առևտորական քաղաքներ, վորոնք այնուհետև դարձան նաև արդյունաբերական կենտրոններ։

II. Միջին Գերմանիան հանդիսանում և Գերմանիայի հիմնական ինդուստրիալ շերտը՝ Դա Միջին գերմանական լեռների շրջանն է: Այսուղի են գտնվում լեռկրի բոլոր հանքային հարստությունները: Առանձնապես կարեոր են, իրրեւ տրանզիտի լեռկրներ, ձկուսիսային ցածրության այն դուրս ընկած մասերը, վորոնք լեռկարավուն ձգվել են հրուսիսից Հռենոս, Ելբա և Ոդեր գետերի հովիտներով: Ցեսուն տրանզիտի շնորհիվ այսակ են յեկել մի շաբք առևտրական քաղաքներ (Լայպցիգ, Վորտեղ գտնվում են Ցելիքոպալայի ամենախոշոր տոնավաճառները):

Քարածիի և շոգու գարում այս քաղաքները գարձան խոշոր արդյունաբերական կենտրոններ: Սա այն շրջանն ե, վորոտեղ քաղաքակին աղքարնակությունը խիստ կերպով գերակշռում է (ընդհանուրի $\frac{2}{3}$ -ից ավելի): Այսակ աղքարնակության խտությունն ամենամեծն ե ամրող Գերմանիայում (200 մարդուց ավելի, տեղ-տեղ մինչեւ 1000 մարդ մի կմ² վրա):

Ցեսուսական տեսակետից Միջին Գերմանիան կարելի յէ յերեք յենթաշրջանի բաժանել.

ա) Ռուսի օրջան, գտնվում է Հռենոսի և նրա վտակ Ռուսի շուրջը: Այս շրջանը քարածիով Գերմանիայի ամենահարուստ մասն ե, այստեղ են կենտրոնացած լեռնային, մետաղագործական (Եսսեն, Դորտմունդ քաղաքները) և քիմիական (Դյուսսելդորֆ) արդյունաբերությունները: Զգալի չափով զարգացած ե և տեքստիլ արդյունաբերությունը (բամբակի, մետաքսի և վուշի գործվածքների արտադրություն):

բ) Ֆյուրինգիա լեզ Սաքսոնիա (Ելբայի ավագանը)՝ Գերմանիայի գլխավոր տեքստիլ ուսունը: Բավականաչափ զարգացած ե նաև սննդային արդյունաբերությունը (շաքարի արդյունաբերությունը Մագդեբուրգում), մեքենայակառուցում, քիմիական արդյունաբերությունը և ապագրական գործը (Լայպցիգ):

գ) Սվիեզիա (Ռուսի ավագանը)՝ լեռնային և մետաղագործական արդյունաբերության շրջանը. ինչպես ամեն տեղ, այստեղ ել զարգացած և տեքստիլ արդյունաբերությունը:

III. Նարավային Գերմանիա.—ա) Նարավային գերմանական բարձրավանդակի յենթաշրջանը (Հարավային Բավարիա), Սա պյուղատնտեսական յիրկիր ե, Դանուբի և գետի լեռնային ալպիական լեռնանցքերը տանող ճանապարհների շնորհիվ զարգացել ե առևտուրը (Մյունիեն):

Լեռնային գետերի հարստության շնորհիվ Բավարիան դրսից ըն-

բած ածխով գործող շոգեշարժիչները փոխարինեց տեղական սպիտակ ածխով բանող ելեկտրական շարժիչներով, ելեկտրիֆիկացիայի յեն յենթարկվում յերկաթուղիները և արդյունաբերական ձեռնարկությունների մեծ մտար:

Ծ Յ Ե Ր Ա Կ Ո Ւ Բ Ի Ֆ Ա Ն, Շ Վ Ա Բ Ա Կ Ա Ն յ ե վ Վ Ե Ր Ի Բ - Ի Ո Ւ Ե Ն Ո Ս Ա Յ Ա Ն ց ա ծ ր ութիւն կ ա թ ս ա յ ա ծ ե ն փ ո ս ե ր ի յ ե ն թ ա շ ա շ ա ն ն ե ր ը: Ա յ ս տ ե ղ բ ա վ ա կ ա ն հ ա մ ա չ ա փ ի ե ր պ ո վ զ ա ր դ ա ց ա ծ ե ն թ ե գ յ ո ւ ղ ա տ ն տ ե ս ո ւ թ յ ո ւ ն ը և թ ե ա ր զ յ ո ւ ն ա բ ե ր ո ւ թ յ ո ւ ն ը. գ յ ո ւ ղ ա տ ն տ ե ս ո ւ թ յ ո ւ ն ի ց գ լ ի ս ա վ ո ր ա պ ե ս զ ա շ ա ր ո ւ թ յ ո ւ ն ը, պ ա տ ղ ա ր ո ւ թ յ ո ւ ն ը, պ ի ա զ ո ղ ի մ շ ա կ ո ւ թ յ ո ւ ն ը. ա ր դ յ ո ւ ն ա բ ե ր ո ւ թ յ ո ւ ն ի ց՝ գ ո ր ծ վ ա ծ ք ա լ ի ն, ք ի մ ի ս ա կ ա ն և փ ա յ տ ա ծ զ ա կ ո ղ ա կ ա ն ա ր դ յ ո ւ ն ա բ ե ր ո ւ թ յ ո ւ ն ն ե ր ը:

Ի Ն Դ Ո Ւ Ս Տ Ի Ա : — Գ ե ր մ ա ն ի ա լ ի ժ ո ղ ո վ ը զ ա կ ա ն տ ն տ ե ս ո ւ թ յ ա ն գ լ ի ս ա վ ե ր հ ա տ կ ա ն ի շ ը ն ր ա ի ն դ ո ւ ս ա ր ի ա յ ի ա ր ա գ ա ճ ո ւ մ ն և և ա յ ն վ ի թ ի ս ա ր ի ն շ ա ն ա կ ո ւ թ յ ո ւ ն ը, վ ո ր ո ւ ն ի ա յ դ ի ն դ ո ւ ս ա ր ի ա ն :

Հ ի ս ո ւ ն տ ա ր ի ս ր ա ն ի ց տ ո ւ ջ Գ ե ր մ ա ն ի ա ն գ ր ե թ ե բ ա ց ա ռ ա պ ե ս ա ր ա յ ի ն յ ե ր կ ի ր ե ր: Ն ե ր կ ա յ ո ւ մ ն ի ն դ ո ւ ս ա ր ի ա ն ա յ ն տ ե ղ ա վ ե լ ի խ ո չ ո ր տ ե ղ ե ն գ ր ա վ ո ւ մ, ք ա ն թ ե գ յ ո ւ ղ ա տ ն տ ե ս ո ւ թ յ ո ւ ն ը:

Ա յ ս ա զ յ ո ւ ս ա կ ի հ ի մ ա ն վ ր ա հ ա մ ե մ ա տ ե ց ե ք պ ր ո վ ի ս ս ս ն ա լ կ ա զ մ ի մ ե ջ կ ա տ ա ր վ ա ծ փ ո վ ի ս ո ւ թ յ ո ւ ն ն ե ր ը 1882, 1907 և 1925 թ վ ե ր ի հ ա մ ա ր: Վ ա ր պ պ ր ո վ ի ս ս ի ա ն ե ր ը կ ր ճ ա տ վ ե լ ե ն, վ ո ր մ ն ք ա ճ ե լ ե ն, ք ա ն ի բ տ ո կ ո ս ո վ:

Գ ե ր մ ա ն ի ա յ ի պ ր ո վ ե ս ս ի ս ն ա լ կ ա զ մ ը

1882 թ. 1907 թ. 1925 թ.

Գ յ ո ւ ղ ա տ ն տ ե ս ո ւ թ յ ո ւ ն և ա ն տ ա ռ ա ր ու թ յ ո ւ ն .	44,7	34,0	30,5
Տ ն ա յ ի ն ս պ ա ս ա վ ո ր ու թ յ ո ւ ն .	2,3	6,4	5,1

Ա զ մ ի ն ի ս տ ր ա ց ի ա : Ա ռ ո ղ ա պ ա հ ո ւ թ յ ո ւ ն .	5,2	6,6	6,5
---	-----	-----	-----

Ա զ մ ի ն ի ս տ ր ա ց ի ա : Ա ռ ո ղ ա պ ա հ ո ւ թ յ ո ւ ն .	10,5	13,0	16,5
---	------	------	------

Ա ր դ յ ո ւ ն ա բ ե ր ու թ յ ո ւ ն .	37,3	40,0	41,4
--------------------------------------	------	------	------

Տ ե լ ի ն ի կ ա յ ի կ ա տ ա ր ե լ ա գ ո ր ծ ո ւ թ յ ա մ բ գ ե ր մ ա ն ա կ ա ն ա ր դ յ ո ւ ն ի ս ո ւ թ յ ո ւ ն ը գ ե ր ա զ ա ն ց ո ւ մ և յ ե լ ի ր ո պ ա կ ա կ ա ն մ ն ա ց ա ծ բ ո լ ո ր յ ե ր կ ը ն ե ր ի			
---	--	--	--

արդյունաբերությունը և յետ չի մնում ամերիկականից: Բանվարական բանակն ունի 8 միլիոն մարդուց ավելի:

Հսկայական և և այն կապիտալը, վոր ներդրված և ձեռնարկությունների մեջ: Երանք մեծ մասամբ կինտրոնացոծ են խոշոր ակցիոններական ընկերությունների՝ տրեստների կամ կոնցերնների ձեռքին: Կապիտալի կոնցենտրացիայի (համակենտրոնացման) կողմից դրանք Յեվրոպայի ամենախոշոր ձեռնարկություններն են, վորոնք յետ են միայն ամերիկական տրեստներից:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՏԵՍԱԿՆԵՐԸ: — XIX դարի վերջին գերմանական արդյունաբերությունն սկսեց հասնել անզիփականին, իսկ յերկաթագործական և քիմիական արդյունաբերությամբ՝ մինչև իսկ գերազանցել նրան: Բանվորների թվի կողմից առաջին տեղը բռնում և մետաղային արդյունաբերությունը մեքենայակառուցման հետ միասին ($2^{1/2}$ միլիոն բանվոր): Այսուհետեւ գոլիս են՝ լեռնային գործը ($1^{1/4}$ միլ. մարդ), տեքստիլ արդյունաբերությունը (մոտ 1 միլ. մարդ) և սննդային արդյունաբերությունը (700 հազար մարդ):

Պատերազմից առաջ գերմանական գործարանները տալիս ենին յերկու անգամ ավելի թուշ և յերկուս ու կես անգամ ավելի պողպատ, քան անզիփական գործարանները: Տեքստիլ արդյունաբերության կողմից նույն ժամանակաշրջանում Գերմանիան յետ եր մնում միայն Անզիփայից և Միացլալ Նահանգներից: Պատերազմից հետո Ֆրանսիան նրան քշեց չորրորդ տեղը, վորովհետեւ նրան անցավ Ելզասը. վերջինս խոշոր, ծաղկած տեքստիլ արդյունաբերության շրջանն և: Գերմանիան աշխարհում առաջին տեղն է բռնում քիմիական արդյունաբերության կողմից (մանավանդ ներկերի և գեղորակների արտադրությամբ և տպագրական գործով): Ճակատիցի շաքարի արտադրությամբ և Գերմանիան առաջին տեղն է աշխարհում. առաջին տեղերից մեկն է դրավում նաև գարեջըի մշակությամբ:

ՎՈՐՔԱՆ Ե ԱՊԱՀՈՎԱԾ ԵՆԵՐԳԻԱՅԻ ԱՂԲՑՈՒՄՆԵՐՈՎ: — Իր արդյունաբերության համար Գերմանիան ձեռքի տակ ունի հներգիայի աղբյուրների մեծ պաշար՝ քարածխի, գորշ և սպիտակ ածխի: Հըղողը ելեկտրական կայանները, վորոնք եներգիա յեն տեղափոխում շատ հեռուները, աշխատում են քարածխով (մանավանդ գորշ ածխով) և ջրային ներգիայով:

ՎՈՐՔԱՆ Ե ԱՊԱՀՈՎԱԾ ՀՈՒՄՔՈՎ: — Մանր ինդուստրիան միայն մասնակի կերպով բավարարվում և սեփական հումքանյութով: Դեռ պտտերազմից առաջ Գերմանիան հումքանյութ եր ստանում Շվեյցարիայից և Ապանիայից. ներկայումս հումքանյութի ներմուծման կա-

բիքն տվելի յե շատացել վորովհետեւ Ելզաս-Լոտարինգիայի հետ միաւսին Գերմանիան կորցրեց իր յերկաթի հանքերի պաշտրի յերեք քառորդը:

Բերովի Հումքով և գործում տեքստիլ արդյունաբերությունը, մանավանդ բամբակի և մետաքսի արդյունաբերությունը, նույնապես և՛ կաշվի արդյունաբերության յերկու յերրողը, սասամբ թղթինը, վորը վերամշակում և ինչպես սեփական, այնպես ել բերովի բնափայտը (փշտուերի ծառերի) և թուղթ գարձնում: Ելիկարաքիմիական և ոննդային արդյունաբերությունն աշխատում և սեփական հումքով:

ԱՇԽԱՌՀԱԴՐԱԿԱՆ ԴԱՍԱՎՈՐՈՒՄԸ:—Արդյունաբերության մեջ գործածվող հումքի բնույթից և կախված արդյունաբերության աշխարհագրական դասավորումը:

Մանր ինդուստրիան պահանջում է մեծ քանակությամբ քարածուիս և հնարավորություն տեղումն ունենալու յերկաթահանք կամ եժան գնով ուրիշ տեղից բերելու այն: Մետաղի արդյունաբերության դիմավոր կենտրոնը գարձավ Խուրի շրջանը, վորտեղ առանձնապես առաջ անցագ Եսուն քաղաքը, այլ և Դուխսրուրդ, Բոխում, Դորտմունդ, Շուլցորդ և այլն:

Թիմիական արդյունաբերությունը կապված է ջրալին ուժի և ջրի լայն ողտագործման հետ: Աշխարհիս ամենախոշոր քիմիական գործարանը՝ Բադենի սողայի և անկիլինի դործարանն առաջ է յեկել Հանուսի վրա: Թիմիական արտադրության մյուս խոշոր շրջանը Միջին Գերմանիայի այն մասն ե, վորտեղ գտնվում են կալիական աղերի և գորշ քարածխի հանքերը:

Թելանյութը փոխադրվում է հեռավոր տեղեր: Նրա մշակումը կարող և առաջ գալ ամեն տեղ, վորտեղ բավարար քանակությունը բանվորական ձեռքեր կան և ուր հնարավոր ե եժան գնով հայթայթել շարժիչ եներգիա: Այս ճյուղը Գերմանիայի ամենազրված արտադրությունն ե, վորը զարգացած և վոչ միայն Միջին Գերմանիայում, այլ և Հյուսիսային Գերմանիայի խոշոր քաղաքներում:

Սննդային արդյունաբերությունը, մանավանդ ճակնդեղ և կարտոֆիլ վերամշակողը, հարմարեցված և հումքի արտադրության վայրերին (շաքարի ճակնդեղի մշակությունը առանձնապես Սաքսոնիայում) Միջին Ելզագի վրա, իսկ ողի քաշելունը՝ Հյուսիսային-գերմանական քարձրության արենելը ունեմում): Խոշոր այրազացները կենարունացել են այն տեղերում, ուր հեշտությամբ կարելի յե հացահատիկ փոխադրել, այսինքն ծովային նավահանգիստաներում և ներքին ջրային նանապարհներին:

ՏԲԱՆՍՊՈՐՏ:—Արդյունաբերության ծաղկման ամենադլխավոր

պայմաններից մեկը հաղորդակցության ճանապարհների խիտ ցանց ունենալն եւ ինչպես խճուղու և յերկաթուղու, այնպես ել ջրային ճանապարհների՝ թե բնական և թե արհեստական:

ՅԵՐԿԱԹՈՒՂԻՆՆԵՐԸ:—Գերմանիայի յերկաթուղու ցանցն ամենախոշորն եւ ամեռողջ Յեվրոպայում (60 հազար կմ, բացի գրանից 10 հազար կմ եւ ավելի ոժանդակ գծեր): Յերկաթգծի ցանցի խտությամբ Գերմանիան առաջին տեղերից մեկն եւ գրավում (100 կմ² տարածության վրա 12 կմ): Յերկաթգծի ցանցի խտությունը ուղիղ համեմատության մեջ եւ գտնվում այս կամ այն ռալոնի արդյունարերական գարգացման հետ:

Խոշոր քաղաքներն իրար հետ միացած են արագ գնացքների գծերով: Տեղ-տեղ այս գծերը բազմաթիվ են: Բացի Արևելյան և Հարավային Գերմանիալի ծայրամասերից, յերկրի մնացած տեղերը Բերլինից կարելի յե հասնել 10 ժամից ել ավելի պակաս ժամանակամիջոցում:

Գերմանիայի կենտրոնական դիրքի շնորհիվ նրա վրայով մեծ քանակությամբ միջազգային ճանապարհներ են անցնում:

ԳԵՑԵՐՆ ՈՒ ԶՄԱՆՑԲՆԵՐԸ:—Գետալին ճանապարհները Գերմանիայի համար կարևորություն ունեն: Արևելյան բոլոր գետերն իրար հետ միացած են ջրանցքներով:

Արեմոյան Գերմանիայում և գտնվում նրա գետալին ջրանցքներից ամենախոշորը՝ Դորտմունդ—Եմսի ջրանցքը (290 կմ լեռկարությամբ), վորը միացնում է Վեստֆալիայի լեռնագործարանական և արդյունարերական շրջանը Եմս գետի, իսկ վերջինիս միջոցով՝ Հյուսիսային ծովի հետ: Այս ջրանցքը կազմում է Հռենոս գետի արհետական գետաբերանը Գերմանիայում:

Ելբայից մինչև Հռենոս կառուցվող Կենտրոնական ջրանցքից զետք ավարտվել Մագդեբուրգից մինչև Հաննովեր ընկած մասը:

Գետերի բարեկավման և նրանց ջրանցքների վերածելու վրա շատ խոշոր գումարներ են ծախսվում: Նվաճումներն ել շատ մեծ են: Գերմանիայի գետային նավահանգիստները բեռնաշրջանառության կողմից ամենակարևորներիցն են Յեվրոպայում: Առանձնապես աչքի յեն ընկնում Բերլինի, Համբուրգի և Դումբուրգի գետային նավահաստները:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:—Չնայելով վոր արդյունարերությունը և քաղաքացին կյանքը փառավոր ծաղկման հն հասել, այնուամենակիվ գլուղատնտեսությունն անուշադրության չի մտանիել:

Չնայելով վոր գաշտերը գերազանց կերպով մշակվում են, այնուամենայնիվ սեփական հացը չի բավականացնում:

Կաղմեցեք հողերի բաշխման դիագրամ. դաշտերն ու այդիները՝ 49⁰/₀, արոտներն ու մարդագետինները՝ 16⁰/₀. անտառը՝ 26⁰/₀, շեները, ճանապարհն ու անմշակ հողերը՝ 9⁰/₀:

Գերմանիան վճր լայնության գուգահեռականների միջև և գանվոկմ: ԽՍՀՄ վճր գոտուն և համապատասխանում: Խնչպիսի հող ունի: Գերմանիայի վճր մասերն ամենից ավելի հարմար են հաճարի մշակության համար. վորոնք՝ ցորենի, կարտոֆիլի, շաքարի ճակնդեղի մշակության համար: Ցուց տվեք, թե այս կամ այն կուլտուրանի գերակշռությունը վորոշ վայրում ինչի՞ հետ կապ ունի:

Բացի հացահատիկի կուլտուրաներից, կարտոֆիլից և ճակնդեղից, մեծ տեղ և հատկացվում բանջարաբուծությանը, զլիսավորապես արդյունաբերական շրջաններում՝ խոշոր քաղաքների մոտերքը (քաղաքային ազգաբանակության ունեցած բանջարեղենի մեծ պահանջը): Շատ զարգացած են նաև պտղաբուծ ությունը, ըստ վորում հայրավարեմը-այլան Գերմանիայի վորոշ վայրերում մեղմ կլիմայի շնորհիվ պտղաբուծությունն ու խաղողի մշակությունը ազգաբանակության զլիսավոր ըգրադմունքն են հանդիսանում: Նրանց փոքրիկ հողամասերը շատ ավելի արդյունք են տալիս, քան թե յերկրագործությունը միջին չափերի հողամասերի վրա՝ արեւելքում:

ՀԲԴԱԾԻՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ:—Արևմուտքում, մանավանդ հարավ-արևմուտքում, գերակշռում ե մանր-գուլզացիական հողատիրությունը, իսկ արևելքում՝ խոշոր հողատիրությունը: Այստեղ և կենտրոնացած խոշոր կալվածտատիրական տնտեսությունների լիրեք քառորդը: Արևելքում գյուլզացիական հողամասերն ել ավելի խոշոր չափերի յեն հասնում, բայց միաժամանակ ալտեղ հողագուրկի, բատրակ ազգաբանակության թիվը մեծ եւ:

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆՆԵՐ:—Խոնավ ծովափի մարդագետինները, մանավանդ արևմայան կողմում, և Միջին գերմանական ու ալպյան լեռների արոտներն ամենից ավելի հարմար են անասնապահության համար: Բացի դրանից ընդարձակ տարածություններ բռնված են ցանովի խոտերով, մանավանդ առվուլտով, և կիրի արմատապտուղներով: Անասնապահությունը մեծ կատարելություն ե հասել. քանակի կողմից առաջին տեղը բռնում են խողերն ու խոշոր լեղջյուրավոր անասունները, բայց սեփական միսն ու ճարպը չեն բավականացնում, և Գերմանիան պակասը ներմուծելու վրա հարկադրված և խոշոր գումարներ ել ծախսելու:

ԱՆՏԱՌԱԲՈՒԹՅՈՒՆԸ, — Անտառաբուծությունը զբուղատընտեսության հիմական ճյուղերից մեկն եւ Անտառը բաժանվում է անտառամասերի, վորոնք անտառական ճանապարհներով ուղիղ անկյունով բաժանվում են միմյանցից: Բացի Բոհեմյան անտառից, մեացած բոլոր տեղերի անտառը տնկովի լի, ըստ վորում ծառերը տնկվում են ուղիղ գծերով: Գերմանիայի անտառների լերկու լերրորդը փշատերեւ եւ Սաղարթավոր տեսակների մեջ գերակշռում են կաղնին և աճարին:

Բնագուալտի վիթխարի պահանջ ունենալու պատճառով, մանավանդ թղթի արդյունաբերության համար, Գերմանիան ստիթված է դրսից փայտեղին ներմուծել, չնայելով վոր ինքն անտառի մեծ տարածություններ ունի:

ԶԵՆՈՐՍՈՒԹՅՈՒՆԸ, — Կարենոր դեր և խաղում և ձկնորսությունը՝ թե գետային և թե, մանավանդ, ծովային: Զկան առետրի և ձկան պաշար պատրաստելու կողմից ամենախոշոր կենտրոնը Հեեստեմբունդի քաղաքն եւ Ամեն որ այստեղից լերկրի խորքերն են ուկարկվում 3-5 ձկան գնացքներ, վորոնք բաղկացած են սառցարան-վագոններից:

ՑԵԶԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ: — Ցերկեթ ռեօնսական տիպը: Ինչպիսի գետական արդյունաբերական բոլոր տեսակները հասել են բազմակողմանի և բարձր զարգացման: Բայց գյուղատնտեսությունը, ազգաբնակության մեծ խտության պատճառով, չի կարող լրիվ չափով մատակարարել բնակիչների անհրաժեշտ բուսական և մսեղեն սնունդը, այլ և գործարանների հումքը:

Սննդամթերը և հումք ներմուծելու վրա խոշոր գումարներ են ծախսվում: Միևնուն ժամանակ արդյունաբերությունը, ներքին պահանջին բավարարելուց հետո, զգալի ավելցուկներ ե տալիս արտահանման համար: Այս բոլորը թույլ ե տալիս ընդունելու, վոր Գերմանիան խառն տնտեսություն ունեցող լերկիր ե, վորուղ թե՛ գյուղատնտեսությունը և թե՛ ինդուստրիան բարձր զարգացման են հասած ըստ վորում ինդուստրիան զգալի չափով գերակշռում և գյուղատնտեսությանը:

ԹԻԹԵՐՈՐԴ ԹԵՄԱ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԿԱՊԵՐԸ ՄՅՈՒՄ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ

ԿԹԻԼՏՈՒՐԱԿԱՆ ՑԵՎ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.— Բազմագործյան պատմության ամբողջ ընթացքում այս կապերը շատ բազմազան են յեղել Կալին առևտրական կապեր, զինված պայքար, կար Գերմանիայի կուլտուրական ազդեցությունը:

Թուաստանի հետ Գերմանիան անմիջական հարաբերությունների մեջ և մտնում գլխավորապես ԽՄԱ դարուց սկսած: Այդ դարում Գերմանիան, ավելի ճիշտ՝ Պրուսիան, դառնում և ուժեղ դիմուրական միավետություն և հանդիսանում և ոռւսաց ֆեոդալների համար զինվորական վարչության դաժան դպրոց:

Նապոլիոնի պատերազմից հետո ոռւս ինտելլիգենցիան սկսում է հրապուրվել գերմանական փիլիսոփայությամբ, գեղարվեստով և գիտությամբ:

Բանվորական դասակարգի աճման հետ միասին Գերմանիան դառնում է մի կենտրոն, վորտեղից տարածվում են սոցիալիզմի և կոմմունիզմի գաղափարները (Լասսալ, Մարքս, Ենգելս):

Հասարակազմիտության և դրականության դրազմունքներին սովորածների հիման վրա, վերհիշեցնք այն ազդեցությունը, վորունեցել և մի կողմից պրուսական զինվորականությունը, մյուս կողմից գերմանական գեղարվեստն ու փիլիսոփայությունը:

Հասարակազմիտությունից այս հարցին վերաբերյալ ձեր ունեցած ծանոթության հիման վրա մանրամասն բացառեցնք Գերմանիայի նշանակությունը սոցիալիզմի և կոմմունիզմի գաղափարների տարածման գործում:

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՃՐԻ ԱՃՈՒԽԾԸ:— Տարու 80-ական թվականներից սկսած Գերմանիայի համաշխարհային առևտրական կապերն ըսկըսում են շատ արագ զարգանալի 1880-ից մինչև 1910 թ. Գերմանիայի արտաքին առևտրի շրջանառությունը համարյա յերեք անգամ շատացնել է՝ 5,8 միլիարդ մարկից մինչև 17 միլիարդը (1 մարկը=47 կոպ.): Ներմուծումը գերազանցում է արտահանմանը $1\frac{1}{2}$ միլիարդ մարկով (գործարանային հում և սննդամթերքների մեծ չափերի ներմուծում): Խիստ արագ կերպով կուտակվում եր կապիտալը, վորը գործադրություն եր մինտում: Խոշոր բանկերը միանում ելին ամենախոշոր արդյունաբերական ձեռնարկությունների հետ, վորոնք հաճախ աշխատում ելին արտասահմանում: Արտասահմանում աշխատող կապիտալից ստացված յիկամուտներն ավելցուկով ծածկում ելին առևտրա-

կան պասսիվը: Թուսաստանի հետ ունեցած առևտուրը պասսիլ եր (ներմուծված առարկաների արժեքը՝ հացահատիկների—մանավանդ գարու—ձվի, յուղի, թոշոնի, զլամակորապես սաղերի, քուսպի, թեփի և փայտեղենի, —գերազանցում եր Գերմանիայից արտահանած իրերի և դորժվածքների արժեքին՝ մեջենաների, ելեկտրական սարք ու կարդի, զանազան մետաղն իրերի, անքատիլ գործվածքների, ներկերի, դեղերի, քիմիական նյութերի և ուրիշ ֆարբիկատների և կիսաֆարբիկատների): Ավելի ևս պասսիվ եր առևտուրը Միացյալ Նահանգների հետ, վորոնց մեծ գումարներ ելին վճարվում սննդամթերքների (ցորեն, սիմինդր, միս սառցրած և պահածոներով, ճարպիր), բամբակի և պղնձի համար: Անզլիա ավելի շատ եր ներմուծվում, քան թե այնտեղից արտահանվում եր Գերմանիա: Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի հետ ունեցած առևտուրի մեջ ներմուծումն ու արտահանումը համարյա իրար ծածկում ելին: Բայց վերոհիշյալ պետություններից, առևտուրն արագ կերպով զարգանում եր բարկանյան լերկրների հետ: Յեռանդուն ջանքեր ելին թափվում արևելյան ասիտկան և հարավ-ամերիկական շուկաները նվաճելու համար, բայց այսուղ Գերմանիան խիստ մրցակցության եր հանդիպում Միացյալ Նահանգների և Յապոնիայի կողմից (Ասիայում):

Մի խոսքով՝ առևտուրը շատ արագ եր աճում, տվելի արագ, քան Անգլիայում: 1913 թ. Գերմանիան դեռ յետ եր մնում Անգլիայից, բայց զանազանությունը հետպէս սկսվի եր համապարփել: համաշխարհյան առևտուրից Անգլիային բաժին եր ընկնում 180/օ իսկ Գերմանիային՝ 12,80/օ:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՐՏԱՍԱՀԱՆՈՒՄ:—Գերմանիան արտասահման եր ուղարկում վոչ միայն իր ապրանքները, այլ և կապիտալը և մարդկանց: Կապիտալն աշխատում եր զանազան ձեռնարկությունների մեջ՝ արտասահմանում, վորոնց թվում և թուսաստանում, բայց ավելի ևս ձեռնուու պայմաններով՝ Տաճկաստանում: Ասիական Տաճկաստանի ճանապարհները՝ Անատոլիականը և Բաղդադինը, կառուցել և գերմանական ընկերությունը: Պատերազմից առաջ ոտար պետությունները պարտք ելին Գերմանիային մինչև 15 միլիարդ ռուբլի:

ԱՐՏԱԳԱՂԹԸ:—Արտագաղթի սկիզբը դրվեց 1919 դարի 40-ական թվականներից: Կես դարի ընթացքում, 1840 թ. մինչև 1890 թիվը, ամեն տարի Ամերիկա և յակրոպական յերկրներ ելին գաղթում հարյուր հազարավոր մարդիկ: Բայց 90-ական թվականների վերջից ըսկըսած սեփական արդյունաբերության զարգացման շնորհիվ արտագաղթն սկսում ե արագ կերպով թուլանալ: 1881 թվին արտասահման

ե գաղթել 220 հազար հոգի, 1905 թ.՝ ընդամենը 27 հազար, 1912 թ.² 18^{1/2} հազար: Գերմանական բնակավայրերն առանձնապես խոշոր են Միացյալ Նահանգներում և հարավամերիկական պետություններում: Բրազիլիայում, Արգենտինայում և Չիլիում: Խուսաստանում Գերմանիայից յեկած, բացի քաղաքացի գաղթողներից, կային և յերկրագործական գողություններ (կոլոնիաներ) զիսավորապես Վոլգայի վրա և սեծովյան տափաստաններում:

ԳԱՂՈՒԹՆԵՐԸ:—Գերմանիայի սեփական գաղութները քիչ եին և առանձին ոգուտ չելին բերում: Գերմանիային ելին պատկանում Աֆրիկայում Կամերունը, Տոգոն, Արևելյան և Արևմտյան գերմանական Աֆրիկան: բացի գրանից Ավկիանիայում՝ Նոր-Գվինեայի արևելյան մասը, Բիսմարկի արխիպելագը և Սողոմոնյան կղզիները, Մարիանյան, Կարոլինյան, Մալյալան կղզիները և Սամոա կղզին:

ՆԵՎԱԾՈՒՄԸ:—Առևտրի աճումը պահանջում եր ծովագին նավատորմի զարգացում, վորն ընթանում եր հսկայական արագությամբ:

1914 թ. գերմանական նավատորմը բանում եր յերկրորդ աելլը, յետ մնալով միայն անդիմականից: Գերմանական նավերի տոննաժը 5 միլիոն սեգիստ. տոննից ավելի յեր, վորը կաղմում եր համաշխարհային նավատարումի 110|օը: Նավերի մեծ մասը պատկանում եր յերկու ընկերությունների՝ Համբուրգ—Ամերիկա գծին (վարչությունը Համբուրգում) և Հյուսիսին: գերմանական Լոյդին (Բիեմենում):

Վորպեսզի իր առևտրական, և մանավանդ պատերազմական, նավատորմը կարողանա ազատ կերպով յերթեկեկել Հյուսիսային ծովեց գեպի Բալտիկ ծովը կամ ընդհակառակը, Գերմանիան փորել է Քիլի Ջրանցքը մոտ 100 կլմ յերկարությամբ (Պանամայի ջրանցքից յերկար ե, Սուեզից՝ կարճ). խորությունը բավարար ե ամենախոշոր նավերի համար:

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ԱՌԱՋԱՑՄԸ:—Գերմանիան պատերազմից առաջ, արագ կերպով զարգացնելով իր արդյունաբերությունը, յերկաթզծերը, առևտրական նավատորմը, առևտրական և ֆինանսական կառերը, համառ և անհողողող կերպով ընթանում եր աշխարհը տնտեսապես նվաճելու ճանապարհով:

Համաշխարհային պատերազմի յելքը և Վերսալի դաշնադիրը դադարեցրին Գերմանիայի առաջնազարդումը. նա, վոր ուզում եր աշխարհը նվաճել, ինքն ընկավ նվաճված յերկրի զրության մեջ: Նրա քաղաքական հզորությունը, նրա տնտեսությունը ծանր հարված ստացան: Քանդիկեց նրա տերրիտորիայի ամբողջականությունը: Նրա ըգգալի մասը գրավել են հաղթող յերկերը: Մինչև անդամ

չըրավված լերկըում, իր տանը, Գերմանիան դադարեց տեր լինելուց: Նրա մեծ գետերը (բացի Վեզելից) և Քիլի ջրանցքը միջազգայնացվել են: Յերթևեկությունն այս ջրային ճանապարհների վրա կարգավորվում և միջազգային հանձնաժողովներով, վորտեղ գերմանացի ներկայացուցիչների թիվն ավելի քիչ է, քան մնացած լերկրներինը միասին վերցրած:

Հետեւյալ դիագրամով ցույց տվեք, թե ոնտեսության վնար ճյուղերն են ամենից ծանր հարված ստացել, ծույց տվեք, թե վնար յերկրամասերի կորստով և բացատրվում հաճարի, ցորենի, կարտոֆիլի, լերկաթի ու ուրիշ հանքերի և քարածխի արագըրության պակասելը:

Գերմանիայի կորուսները մասավ. ($\frac{1}{10}$ $\frac{1}{10}$ -ով) ըստ Վելտավի դաշնագրի

	Աղբաշնակ.	Ճերմիտորիա	Քարածունել	Արձանահանք	Ջնկի հանք	Ցելիաթանանք	Ճ ու են	Համար	Գառի	Վարսակ	Կարտոֆիլ	Զ ու ը	Խոշ. էնդ. ան.	Խ ո զ
Կորցրել ե	10	13	28	27	67	74	14	18	15	11	16	15	12	12
Մնում ե	90	87	72	73	33	26	86	82	85	89	84	85	88	88

ՏՏԾԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ. — Բայքալման սկզբի տարիներում Գերմանիան բոլորովին ավերված լերկրի տափակորություն եր թողնում: Նույն պատկերն եր ներկայացնում նաև նրա մայրաքաղաք Բերլինը: Ներկայումս բանվոր դասակարգին ճնշելով՝ կապիտալիստական Գերմանիան վոտի յե կանգնել, Բայց բանվորները շատ աշելի վատ են ապրում, քան պատերազմից առաջ: Անգործների թիվը շատ շատ ե. և արասակելի աղքատություն ե տիրում նրանց մեջ:

«Չի կարելի առանց սարսափի մտածել անգործների մասին, — ասում ե Զովուլյա գրողը, — Գերմանիայում նրանց թիվը շատ մեծ ե: Բավկական ե այցելել մի յերկու եժան ճաշարան, վորտեղ հաճախում են անգործները, և իսկույն կենտրոնական Բերլինի ամբողջ շքեղությունն սկսում ե աչքիդ լերմալ ուսուցրած, կեղծավոր և անհամոզեցուցիչ կերպարանքով: Վոչ մի կերպով չելի կարող յերևակալել, թե այսքան աղքատություն, մարդկա-

յին կերպարանքն ու նմանությունը կորցրած ալսքան մարդիկ կարող են լինել մի ալսպիսի լերկրում, վոր արտաքուստ անհման սիրուն, աղաղակելու շափ մաքուր և զարմանալի յերեւում։

Արտաքուստ Բերլինը գարձյալ ապշեցնում և կենդանի լեռուղեռով, կարգապահությամբ, մաքրությամբ, իր մագաղիների շքեղությամբ, Նրա խոշոր ձևոնարկությունները, վորոնք իրենց արտադրանքները մատակարարում են ամբողջ աշխարհին, — Ելեկտրական Ընդհանուր Ընկերությունը, Սիմենսի ելեկտրական քաղաքամասը, Բորզիկի շողեներենաներ կառուցող գործարանը, — առաջիւ նուան աշխատում են լրիվ թափով։

Զարմանալի արագությամբ և վերականգնվում նաև զերմանական նավատորմը, Վերսալի գաշնազը Դերմանիան հաղթողներին հանձնեց 1800 ուղիստ, տոննից ավելի տարողություն ունեցող բոլոր խոշոր նավերը։ Ռ. Ռիշ խոսքով, նա բոլորովին զրկվեց խոկական ծովային նավատորմից։ Ներկալումս նավաշինարարության կողմից նա բռնել և չերկրորդ տեղը (Անգլիայից հետո) և հինգերորդ տեղը նավատորմի աարողության կողմից։ Նավաշինարարության չափերով դատելով՝ նա շուտով կզրավի չերրորդ տեղը։ Յերկրորդ տեղը, ըստ չերեցութին, նա ընդմիշտ զիջել և Միացյալ Նահանգներին։ Գերմանական նավատորմի մեջ այլևս չկան մինչև 55 հազար սեգիստ։ տոնն տարողություն ունեցող գերհսկաներ, բայց արդեն կան 20-ից մինչև 30 հազար ունեն։ տոննանոց հսկաներ։

ԱՐՏԱՔԻՒՆ ԱՐԵՎԱՑՈՒՄԸ. — Արտաքին տուետը վերականգնվում եւ նա տարվում եւ մեծ մասամբ ծովալին ճանապարհով։ Նրա կենտրոնը Համբուրգն եւ

Համբուրգը գտնվում եւ Ելբա գետի վրա, գետաբերանից 100 կլմ հեռու, բայց չնալիով ծովից այսքան հեռու գտնվելուն, մակընթացությունը բավական զգալի իւ։ Ֆետը խորացրել և լայնացրել են, կառուցված են բազմաթիվ արհեստական ավագաններ, նրանցից ամեն մեկը նշանակված է վորոշ ապրանքների համար։

Համբուրգն ազատ նավահանգիստ եւ Ռոտար նավերն անցնում են նրանով և այնտեղ ապրանք են դատարկում առանց վորոն մաքսի։ Սրա շնորհիվ Համբուրգը Յեվրոպայի ուրիշ աշխարհամասերի հետ ունեցած առևտորի կողմից համաշխարհալին նավահանգիստ և դարձել, Բայց չերք նավահանգստի սահմաններից դուրս ապրանք և արտահանվում, մաքս և վճարվում։ Մաքսային գիծը գետի հոսանքի վրա կառուցված ճռիկներից շինված մի ցանկապատ եւ



Համբուրգ, Գերմանիայի առաջին նախանդգիստը:

ՆԵՐՄՈՒԽՄԱՆ ՑԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ:—Գերմանիան մեծ մասամբ ներմուծում և հումք և կիսաֆարբիկատներ՝ բամբակ, բուրդ, մհատաքս, հանգանլութ և մետաղներ, կաշի, ածուխ, փայտեղներ և սննդահամբ՝ մթերքներ (հաց, միս, ճարպեր, սուրճ, կակաո): Արտահանում ե պատրաստի իրեր՝ գործվածքներ, մեքենաներ և մետաղեր իրեր, քիմիական նյութեր, դեղանյութեր, ներկեր և այլն, նաև փոքր քանակությամբ հումք (առանձնապես ածուխ) և սննդամթերքներ (շաքար, գարեհնուր):

ԱՌԵՎՏԻՒ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ:—Գերմանիայի հետ ունեցած առերի զիկավոր մասնակիցները հետեւյալ կարգով են ընթանում. ներմուծման կողմից՝ Անգլիա, Զեխո-Սլովակիա, Միացյալ Նահանգներ, Շվեյցիա, Հոլլանդիա, Ֆրանսիա: Արտահանման կողմից՝ Հոլլանդիա, Զեխո-Սլովակիա, Անգլիա, Միացյալ Նահանգներ, Ավստրիա և Շվեյցիա:

Առևտուրը պասսիվ ե: Մինչև պատերազմը պասսիվը ծածկվում եր արտասահմանում աշխատող կապիտալից ստացված լեկամուտներով, այլ և նավերով ոտար ապրանքներ փոխադրելուց ստացված ուղարկունքով: Հետզհետե այս յեկամուտները վերականգնվում են:

ԱՌԵՎՏՈՒԻՐԸ ԽՍՀՄ ՀԵՏ: — Պատերազմից առաջ Ռուսաստանի հետ ունեցած առևտուրի մեջ Գերմանիան տիրող դիրք եր գրավում: ԽՍՀՄ հետ ունեցած հարաբերությունների մեջ Գերմանիան թեպետ գերիշնող դիրք չի գրավում, բայց 1927/28 տարուց սկսած առաջին տեղն ե ըրունում. ԽՍՀՄ ներմուծած ապրանքների կողմից 1925—26 և 1926—27 թվերին Գերմանիային ընկնում եր 25°/օ-ից միքիչ ավելի.

իսկ արտահանման կողմից նույն թվերին՝ $25^0/0$ -ից միքիչ պակասու 1926—27 թ. Գերմանիայից արտահանվել և ԽՍՀՄ համարյա 158 միլ. ռուբ. ապրանք (1927—28 թ. 242 միլ.): Արտահանման մոտ $3/5$ -ը կազմում են մեքենաներ, ելեկտրական սարքավորում և մետաղյա իրեր. այնուհետև գալիս են՝ քիմիական նյութերն ու ներկերը, սկզ մետաղներն ու մետաղաթելը և Գերմանիայի կողմից վերավաճառված ապրանքները՝ գունավոր մետաղներ և բուրդ: Ներմուծվել և ԽՍՀՄ-ից 1927—28 թ. 167 միլ. ռ. (1927—28 թ. 185 միլ. ռ.), $50^0/0$ -ից միքիչ ավելի ընկնում են հումքի վրա (այդ թվից $21^0/0$ -ից ավելին՝ մուշտակեղենի վրա և $6^0/0$ -ից ավելին՝ նավթի և նավթամթերքների վրա. այսուհետև գալիս են՝ փայտեղեն, յերկաթի և մարգանեցի հանքանյութեր, աղիքներ՝ լեռշիկի համար): Ներմուծման $50^0/0$ -ից միքիչ պակաս կազմում են կենսամթերքները. այդ թվից $12,50/0$ ընկնում և ցորենին, մոտ $120/0$ ձվին, $60/0$ յուղին. այնուհետև գալիս են՝ լորի և բակլա, քուսպ, գարի, շաքարավաղ, հաճար, ձկնկիթ:

Արդյունաբերական և առևտրական գործունելության վերականգնման հետ վերականգնվեց նաև Գերմանիայի կուլտուրական աշխատանքը: Մասնավորապես վերականգնվեց կուլտուրական փոխազդեցությունը ԽՍՀՄ հետ:

Ակադեմիայի հորելուանի ժամանակ, խորհրդավային կառավարության ներկայացուցիչների մասնակցությամբ, մեր և Գերմանիայի գիտնականների միջև նախնական պայմանագիր կնքվեց մի շարք աշխատանքների նկատմամբ: Նրանցից միքանիսը վոչ միայն խորհրդավային գերմանական, այլ և համաշխարհային նշանակություն կունենան: Շատ սպասելիքներ պետք է ունենալ նաև մեր բարձրագույն դպրոցներն ավարտած յերիտասարդ տաղանդավոր մարդկանց Գերմանիա ուղարկելուց՝ կատարադործվելու համար: Իրենք գերմանացիք են մտադրվում են յերիտասարդ գիտնականներ ուղարկել մեզ մոտ, բարձր դասելով մեր գիտական ինստիտուտները, սկսած նրանց մոտ մեծ կշիռ ունեցող ակադեմիկոս «Պավլովի Փիզիոլոգիական ինստիտուտից»: (Լուսաշարսկի, Խա զագած գրքից. 1927 թ.):

Հասարակագիտության հետ ունեցած ձեր ծանոթության հիմն վրա պարզեցեք հետեւյալ հարցերը. գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության դերը բանվոր դասակարգի ճնշման գործում. Գերմանիայի կոմմունիստական կուսակցության աճումը:

ՑԵԶԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ:—Գերմանիան համաշխարհային անտեսական և կուլտուրական նշանակություն և ազգեցություն ունեցող պե-

տություն և Պատերազմը ծանր հարված հասցրեց Գերմանիային, կանոնեցնելով նրա զարգացումը: Բայց քայլքայումից նա ավելի արագ և ազատվում, քան իրեն հաղթողները, և նորից դառնում և տնտեսական և կուլտուրական տեսակետից ամենաուժեղ կապիտալիստական պետություններից մեկը:

Ֆ Ր Ա Ն Ս Ի Ա.

Ենքոպական սերապետությունների տարածությունն է 550 հազար քառ. կիլոմետր՝ 41 միլ. ազգաբնակությամբ: Դաղութները՝ 12 միլ. քառ. կիլոմետր, մոտ 60 միլ. ազգաբնակությամբ (զաղութների միասին՝ ամբողջ յերկրագնդի ցամաքի $\frac{1}{12}$, ազգաբնակության $\frac{1}{15}$ մասը):

ԲՆՈՐՈՇՈՒՄՆ.—Ֆրանսիան դյուղատնտեսությունը և ծովալին հաղորդակցությունները զարգացնելու ամենամեծ հնարավորություններ ունեցող յերկիր ե. մեծ են նաև նրա ինդուստրիալ հնարավորությունները, վորոնք, սակայն, այնքան ել զարգացած չեն: Ածխի և ազգաբնակության պակասի շնորհիվ ինդուստրիայի զարգացումը յետ ե ննացել, իշտ տնտեսությամբ ֆրանսիան խառը տիպի յերկիր ե, ուր վորոշ չափով գերակշռում ե գյուղատնտեսությունը:

ԻՆՆԵՐՈՐԴ ԹԵՄԱ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԲՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ ՅԵՎ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԴԻՐՔԸ, ԱՓԵՐԸ, ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Լայնության վեր աստիճանների տակ են գտնվում ֆրանսիայի հյուսիսային և հարավային կետերը:

Ի՞նչ ծովեր, ծոցեր ու նեղուցներ են վողողում ֆրանսիան:

Քանի և հատկապես վեր պետություններին և սահմանակից ֆրանսիան:

Նրա վեր սահմանն ե բնական (գետեր, լեռներ) և վերը պայմանական:

Իշտ արևմտյան ծայրով ֆրանսիան մտնում է ատլանտյան պետությունների շարքը, իսկ հարավային ծալքով՝ միջերկրական: Ովկիանոսին շփվող ափը 2000 կիլոմետր ե, իսկ Միջերկրականին՝ 600 կիլոմետր:

Ֆրանսիան համարյա թերակղղիական պետություն եւ Աշխուժ հաղորդակցություն պահպանող ծովերի հետ շփվելու տեսակետից Ֆրանսիան քիչ եւ յետ մնում Անգլիայից: Սակայն ծովն այստեղ բոլորովին այլ կերպ ե մտած ցամաքի մեջ, քան Անգլիալումն ե:

Արևմուտքում խիստ կտրտված են միայն Բրետանի գրանիտե ափերը, հարավում կտրտված ե Ռոնալի գետաբերանից դեպի արևելք գտնվող լեռնային ափը: Հարոննալի գետաբերանից դեպի հարավ և Ռոնայի գետաբերանից դեպի արևմուտք գտնվող ափերը հարթ են և ջրավազով ծածկված: Ատլանտյանի ափում գետաբերանները վողողվում են մակընթացությունից, իսկ Միջերկրական ծովը մակընթացություններ չունի, ուստի Ռոնայի գետաբերանը սաստիկ ավազակալած ե: Այս պատճառով Ատլանտյանի նավահանգիստները (գըրանց թվում նաև ամենից գլխավորները—Հավրը, Բորդոն) ընկած են գետավագարենում, իսկ Միջերկրականի ափին Մարսելը Ռոնալի գետաբերանից մի կողմ ե ընկած:

Սակայն Ֆրանսիայի ծովալին հաղորդակցության զարգացումը յետ ե մնացել վոչ այնքան ափի պակաս կտրտված լինելուց, վորքան միջերկրոպական պետությունների հետ արևելքում նրա սերտ կապված լինելուց:

Ֆրանսիայի արևելյան ծալրը ծովից 400 կիլիմետր հեռու յեւ:

Այսքան խոր կերպով մայր ցամաքի մեջ մխված լինելու հետեւ վանքով Ֆրանսիան հարկազրված ե լեղել համարյա բոլոր լեվոպական պատերազմներին մասնակցելու նրա համար առաջնակարգ են լեղել վոչ այնքան ծովային, վորքան ցամաքալին շահերը: Ֆրանսիայի ըստ լայնության ընկած դիրքը շատ ե նպաստավոր զբուղատնտեսության համար: Ամենահուավոր հյուսիսում այնքան տաք ե, վոր միանգամայն բավարար ե ցորենի և շաքարի ճակնդեղի համար, իսկ հարավում—ձիթենու համար:

Ամեն տեղ, բացի հյուսիսից, խաղող ե աճում:

Պաշտպանված լինելու տեսակետից նրա դիրքը բավական նպաստավոր ե: Հեշտ խոցելի ին միայն արևելյան ափի լեռնանցքները:

Պաշտպանվելու համար Ֆրանսիայի ձեզ լավագույններից մեկն ե: Նա բավական կանոնավոր մի վեցանկունանի յեւ: Սահմանների լերկարությունը մակարդակի հետ համեմատած այնքան ել մեծ չենդհամենը 5000 կիլոմետր, վորից 2630 կիլոմետր ծովափ ե:

Համեմատեցեք Ֆրանսիայի և Գերմանիայի դիրքն՝ ըստ լայնության: Համեմատեցեք Ֆրանսիայի, Գերմանիայի և Անգլիայի ամենահեռու կետերը ծովից:

Վարքան քառ. կիլոմետրին և մեկ կիլոմետր սահման ընկ-
նում՝ ֆրանսիակում և վարքան՝ Գերմանիայում:

Ուելթենը.—Ֆրանսիայի ուղղեցի հիմնական գիծը նրա բազմա-
դանությունը և միջակ բարձրությունների շատությունն եւ: Այս հան-
դամանքի շնորհիվ հեշտանում և հաղորդակցությունը:

Բազմազանությունն ալիքան չի մանրանում, ինչպես Գերմա-
նիայումն եւ, սակայն աչքի լի ընկնում մեծ հակադրություններով,
կոնտրաստներով: Մի կողմից ֆրանսիայումն և գոտինվում Յելբոպայի
ամենից բարձր գտագաթը—Մոնրալանը (4808 մետր), մյուս կողմից՝ հու-
սիսում—Ֆլանդրիայում, ալիսպիսի տեղեւ կան, վորոնք մակընթացալին
ալիքի մակարդակից ցածր են:

Ֆրանսիայի կեսից ավելին հարթություն և (ծովի մակերեսույ-
թից 200 մետրից վոչ բարձր). յերեք քառորդից ավելին՝ 500 մետ-
րից: Միայն $\frac{1}{10}$ -ն և 800 մ. բարձր, այսինքն՝ իրոք վոր լեռնային եւ:

Լեռնաշղթաների գիրքը հաղորդակցության համար շատ նպաս-
տավոր ու: Ֆրանսիական լեռնաշղթաներից միայն մեկն և ֆրանսիա-
յի ներսում, դա Կենտրոնական կոչվածն եւ, բայց դա լի հաղորդակ-
ցության համար առանձին դժվարություն չի ներկայացնում: Մաս-
ցած հինգը—Պիրինյանը, Ալպերը, Յուրան, Վոգեզները և Արդեններն
ընկած են ծալը սմասերում:

ԾԱՅԹԱՄԱՍԵՐԻ Լեռների:—Ալպերն առանձնապես բարձր են,
սակայն նրանց մեջ լիդած հովիաները լավ են մշակված, լեռնանցքներն
այնքան ել բարձր չեն: Դեռ 1870 թվին և փորվել Մոն-Սենիսի տոն-
նելը, վորը միացնում է ֆրանսիայի և Խոտալիայի լերկաթուղիները:

Պիրինյան լեռներն ավելի ցածր են (Անեսո գագաթը, Մալա-
դետտա խմբում՝ 3404 մ.): Սակայն լեռներն Ալպերից ավելի զանգ-
վածալին են, լեռնանցքներն անհարմար: Հարմար լեռնանցքներ կան
միայն արելլան և արեմտան ծալը բամասերում: Ալպերի ել լերկա-
թուղիներն են անցնում: Ֆրանսիայից Սպանիա Պիրինյան լեռների
միջին մասով լերկաթուղի միայն այժմ է շինվում:

Յուրալի լեռները միայն 1723 մ բարձրություն ունեն: Վոգեզ-
ներն ավելի ցածր են՝ 1426 մ. Արդենները վոչ թե լեռներ, այլ բլուր-
ներ են (500 մ. բարձր չեն): Ալպերի ու Յուրալի մեջ ընկած և Ռոնայի
հովիտը, Վոգեզների ու Յուրալի մեջ լայն ճեղքվածք կա (Բելֆորյան
դռներ), իսկ Վոգեզների և Արդենների մեջ կոտարինդան հարթու-
թյունն եւ:

Ամենից դժվարանցանելի սահմանամերձ լեռնաշղթաները հարա-
զումն ու հարավ-արևելքումն են (Պիրինյան ու Ալպան լեռները), ի-

տալիքալի և Սպանիալի սահմանում: Այս վերջին լերկու լերկրներն ել նույն գլուղատնտեսական տիպին են պատկանում, վորին Թրանսիան և պատկանում: արտաքին առևտրի համար տալիս են նույն մթերքներն, այնպես վոր ապրանքների փոխանակությունն այդ լերկրների հետ աննշան է: Մյուս լերկրների սահմաններն՝ Անդիխալի, Բելգիխալի, Գերմանիխալի, Շվեյցարիխալի, ընդհակառակն—միանգամայն հարմար են հազորդակցության համար. այդ լերկրներն ել տնտեսության բոլորովին այլ տիպի և այլ կուլտուրալի լերկրներ են, այնպես վոր այստեղ հազորդակցության ավելի շատ առիթներ կան:

Պահանջն ու հնարավորությունն այստեղ զուգադիպել են:

Ծայրամասերի լեռնազանգվածները Թրանսիային բոլորովին ամբողջացած ձև են տվել: Սրանք ստեղծել են ամբողջացած, գեղեցիկ կերպով շրջանավորված մի լերկիր, ընդհանուր որորան մի ժողովրդի, մի ժողովրդական տնտեսության:

Ներքին ՇԲՁԱՆՆԵՐԸ (օբլաստ), — Կենտրոնական կոչված լեռները շրջապատված են հարթությունների մի լախ ողակով: Հյուսիսացին հարթությունը՝ Պարիզյան ավաղանը՝ Թրանսիայի ամբողջ հյուսիսն և բանում և անմիջորեն ձուլվում ե Բելգիխալի և Գերմանիխալի հարթությունների հետ: Հարավում կենտրոնական լեռներով բաժանված լերկու հարթություններ կան՝ Ակվիտանյանն՝ արևմուտքում և Ռոնալիին՝ արևելքում: Այս հարթությունների մեջ անցուղարձի հարմար ճանապարհներ կան, վորոնք «դուներ» կամ «շեմքեր» են կոչվում:

ՈԳՏԱԿԱՐ ՀԱՆՔԵՐԸ: — Հերցինյան լեռնածալքերը Թրանսիայում, ինչպես նաև Անդիխայում ու Գերմանիխայում, պարունակում են իրենց մեջ և մետաղի շերտեր, և քարածուխ, և մեծ քանակությամբ աղ: Թրանսիան առանձնապես հարուստ է յերկաթի հանքերով (հյուսիսում, հյուսիս-արևելքում և կենտրոնական լեռնազանգվածի արևելյան մասերում): Դրա հակառակ՝ Թրանսիան աղքատ է քարածխով: Ածխացերտեր լերկում են միայն Թրանսիայի հյուսիսում և կենտրոնական լեռների արևելյան մասերում: Ելզասը, վոր համաշխարհային պատերազմից հետո վերադարձվեց Թրանսիային, հարուստ է կալխական տղերով: Ալպերն աղքատ են հանքերով, բայց շատ հարուստ են սպիտակ ածխով:

ՀՈՂԻ ՎԵՐՆԱՇԵՐԸ ԶԱՆԱԶԱՆԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ: — Թրանսիայի հողերի մեծագույն մասն արգավանդ է: Միքանի հողամասեր իրենց քնական վիճակում լերկրագործության համար միանգամայն անպիտք են լեղել սակայն նրանց մեծ մասը կուլտուրականացրած են: Վատուրակ հողերի մեծ մասը գտնվում է հարավ-արևմտյան մասերի լանդե-

բում: Ալսպիս են կոչվում այն անբերրի ճահճուտ տեղերը, վորոնք յեռանկյունաձև ընկած են Հարոննայի, Ագուրի և Բիսկայան ծոցի մեջ՝ տեղում: Ծովի ափով գյուների^{*}) ամբողջ շղթա լի ձգվում՝ 20 մետրաշափ բարձրությամբ: Անցյալում այս դյուները շարժվում եյին դեպի յերկրի ներսը և դաշտերն ու արոտները ծածկում եյին ավազով: Ներկայում ծառատնկության միջոցով դրանց շարժումը կանգնեցրել են: Ֆրանսիական շամուտների մեծագույն մասը լանդերումն են: Նրանք մեծ յեկամուռ են տալիս (ռևլսակալ գերաններ, սկիպիդար, և այլն): Լանդերի հյուսիս արևմտյան անկունը ներկայում գինեգործական շրջան և դարձել:

Ինչի պալմանները վժրտեղ են (ֆրանսիայի հարավում թե՞ հյուսիսում) ավելի նպաստել տնտեսական ու քաղաքական միասնականությանը:

Իրենց մակերեսութիւնը բնույթով ֆրանսիայի հյուսիսային ու հարավային մասերն ինչ բնական ուայոնների կարելի լի բաժնել:

Ինական պայմաններին նախած՝ հյուսիսային ֆրանսիայի ընդհանուր կուլտուրական ու տնտեսական կենտրոնը վրօրտեղ տվելի բնական կլիմներ:

Հարավում միասնական կենտրոն ունենալու համար պայմաններ կմն, թե՞ վոչ:

Իրենց մակերեսութիւնը ձևերին, հաղորդակցության հարմարություններին ու հանքային հարստությանը նախած, համեմատեցեք ֆրանսիայի հյուսիսը Գերմանիայի հյուսիսի հետ, ֆրանսիայի հարավը Միջին և Հարավային Գերմանիայի հետ:

Ուր են տանում ֆրանսիայի ճանապարհները Ասլանտյանի նավահանգիստներից և ուր Միջերկրական ծովի նավահանգստից:

ԿիմՍԱՆ ՅԵՎ. ԲՈՒԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:—ֆրանսիայի կիման բարեխառն-տաք ե՝ տարեկան 10—15 աստիճան և միայն արեելքում շուրջ 20 աստիճան ջերմությամբ: Արևմուտքը մտնում և առլանտյան կլիմայական շերտի մեջ, արևելքը՝ մայր-ցամաքային, հարավը՝ միջերկրականի: Իր տեղում մերի քանակով ֆրանսիան Յևրոպայի ամենալավ վոռովզած յերկրների թվին և պատկանում: Նա նույնիսկ Ասլանտյանի ափերում առատ արև ունի և անծանօթ և Անգլիայի մառախուղներին:

* Դյուն—ավազաբլթակ:

ԳԵՏԵՐԸ:—Տեղումների առատության և դրանց համաչափ ու կանոնավոր բաշխման (ըստ տարվա ամիսների) շնորհիվ ֆրանսիայի գետերը ջրի բավական կանոնավոր մակարդակ ունեն։ Այս տեսակետից աչքի լին ընկնում մանավանդ հյուսիսի և Պարիզյան ավազանի (Սենա իր բոլոր վտակներով) գետերը։ Այս գետերը բավական հանդարտ են հոսում, վորովհետև աննշան են այն բարձրությունները, վորտեղից հոսում են։

Ալպյան և Պիրինյան գետերն սկսվում են սառցարաններից ու ձյունարաններից։ Նրանց մակերեսութը փոփոխական է, բարձրանում ևն՝ սարերում ձյունները հալվելիս և ծանծաղանում՝ ձյունաջրերը դադարելիս։ Ալպես են Ռոնան և Հարոննան։

Ալպիսով նավագնացության համար ամենից հարմար պայմաններ ունեն հյուսիսի և Պարիզյան ավազանի գետերը։ Ֆրանսիան իր տարածությամբ համեստ է, ուստի նրա գետերն ել իրենց յերկարությամբ աչքի չեն ընկնում։

Դետերի համեմատական յերկարությունը և մի վայրկյանում գետարերանում հոսած ջրի միջին քանակը հետեւյալ թվերն են ներկայացնում։

ԳԵՏԵՐԸ

ՅԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՄԻ ՎԱՅՐԿ. ՀՈՍԱԾ

ՀՈՐԸ՝ ԽՈՐ. մետր.

Լուար

1010 կմ.

375

Ռոնա

812 »

2200

Սենա

776 »

300

Հարոննա

650 »

700

ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:—Ֆրանսիայի ազգաբնակության հիմնական հառկանիշը նրա անբավարար քանակն եւ իր ժողովրդական անտեսական կարիքների հանդեպ, այլ և նրա ծայրահեղ թուզը տճռումը։

Ֆրանսիական բուրժուական գրողների խօստովանությամբ ֆրանսիացու գեղի սեփականությունն ունեցած սերն ինքնասպանության և հասնում։ Չուզելով ընտանիքի կուտակած հարստությունը բաժան-բաժան անել, ֆրանսիացին սահմանափակում ե իր յերեխաների թիվը։ Այս կանոնից բացառություն կազմողը միայն պրոլետարիատն է, վորը հարստություն գիղելով չի ել տարվում։ Նա յէ միայն, վոր ֆրանսիային մահից փրկում է։ Ֆրանսիալի սակավածնողության հետևանքով ե, վոր իրենց ազգաբնակությամբ հասել են ֆրանսիալին

հարեան պետությունները, վորոնք XIX դարի սկզբում նրանից յետ ելին:

Վերջերս Ֆրանսիայի ազգաբնակությունն սկսել ե աճել՝ շնորհիվ ոտարերկրացիների ներհոսման: Յերկրագործական և արդյունաբերական բանվորների պակասը լրացնելու համար Ֆրանսիան ստիպված ոտարերկրացիներ ե կանչում:

Իր ազգաբնակության խտությամբ (75 մարդ մի քառ. կիլոմետրի վրա) Ֆրանսիան մեկուկես անգամ պակաս ե Գերմանիայից:

Ֆրանսիայի յերկրագործական բոլոր գեղարտամենտներում (Ֆրանսիան ունի 90 գեղարտամենտ) 1 քառ. կիլոմետրի վրա ապրում ե 50 մարդ, միայն 10 արդյունաբերական դեպարտամենտներում ե, վոր ազգաբնակությունը խիտ ե—100 մարդ մեկ քառ. կիլոմետրի վրա:

Ֆրանսիայի ազգաբնակությունն ըստ մեծի մասին գյուղացիական ե: Քաքաքի ազգաբնակության տոկոսն ավելանում ե (1891 թվին՝ 37 տոկոս, 1911 թվին՝ 44 տոկոս, 1921 թ. 46 տոկոս), սակայն գեռայսոր ել 50 տոկոսից պակաս ե: 1926 թ. մարդահամարին նայած՝ խոշոր քաղաքների թիվը 16 ե, վորոնցից միայն 5-ը 200 հազարից ավելի ազգաբնակություն ունեն (յուրաքանչյուրը), Պարիզն ունի 2,871,000, Մարսելը՝ 625000, Լիոնը՝ 570,000, Բորդոն՝ 256,000 և Լիլը՝ 202,000. ազգաբնակության ամենամեծ տոկոսը գյուղատնտեսությամբ ե զրայվում:

ԳԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸՀ:— Ֆրանսիան գեմոկրատական հանրապետություն ե համարվում, վորի գլուխ կազմում են յերկպալատյան պարլամենտը (պատգամավորների պալատ և սենատ) և նախագահը, վորին ընտրում ե յերկու պալատների միացյալ նիստը՝ յոթը տարով: Իրականում դա ծայրահեղորեն կենտրոնացած յոյւրոկրատական պետություն ե: Ամբողջ իշխանությունը վերապահված է վոչ թե համայնքի ընտրովի ներկայացուցչին (մերին), այլ կենտրոնից նշանակված աստիճանավորին:

Յեկրոպալայի ազգաբնակության խտության քարտով ցույց տվեք և բացարեցեք Ֆրանսիայի ամենից խիտ և ամենից նոսր ազգաբնակություն ունեցող մասերի աշխարհագրական դիրքը:

Նկարեցեք Ֆրանսիայի և հարեան յերկրների ազգաբնակության աճման կոր գծերը հետևյալ ցուցակով:

<i>Թ վ ե ր թ</i>	<i>Ֆ բ ա ն ս ի ա</i>	<i>Ա ն դ լ ի ա</i>	<i>Գ ե ր մ ա ն ի ա</i>	<i>Ի ս տ լ ի ա</i>
1800	28,2	16,1	21,0	18,1
1820	31,1	21,1	26,2	19,7
1840	34,9	26,9	32,8	22,0
1860	37,4	29,2	38,1	25,0
1880	39,2	35,4	45,2	28,5
1900	40,7	42,2	56,4	32,5
1920	39,2	47,6	59,2	38,5

Կողք կողքի դրեք Ֆրանսիայի, Անգլիայի և Գերմանիայի
ազգարնակության պրոֆկազմը:

Ֆրանսիայի ինքնազործ ազգարնակության պրոֆկազմը.

Պրոֆեսսիաներ

Միջինն.

Դրադական տնտեսություն (սրանց թվում նաև
փայտագործներն ու ձկնորսները) 9,0

Արդյունաբերություն

Արդյունահանող	0,3
Եշակող	6,2

Ամբողջ արդյունաբերությունը 6,5

Առևտուր և բանկեր	2,3
Գետական և զինվորական ծառայություն	1,3
Տրանսպորտ	1,2
Տնային աշխատավորներ	0,8
Այլ արհեստներ	0,6

Ընդամենը 21,7

ՑԵԶՐԱՓԱԿՈՒՄՆԵՐ. — Ֆրանսիան աչքի յե ընկնում իր նպաստավոր դիրքով՝ մանավանդ արդյունաբերական պետությունների հետ հաղորդակցության տեսակետից իր գծագրանքով և ծայրամասերի

հռնաշղթաների դիրքով շատ նպաստավոր վիճակ ունի՝ ինչպես պաշտպանվելու, այնպես ել ներքին միավորման համար, Բնական պարմաների զարմանալի զանագանակերպությունն աշխատանքի բաժանումն և ներքին աշխուժ հարաբերությունների զարգացումն են առաջ բերել Բնական արտադրական ուժերը գյուղատնտեսությունն ամենից շահավետ զբաղմունք են դարձրել, Բացի սպիտակ ածխից մյուս եներգետիկ ռեսուրսները պակաս են, Ազգաբնակության բնական հիմնական աճման կատարյալ բացակալությունը մեծ սպառնալիք ե անտեսական զարգացման համար, Հարկադրված են ոտարերկրացիներ կանչել:

ՏԱՄՆԵՐՈՐԴ ԹԵՄԱ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԱՅՈՆՆԵՐԸ:—Տնտեսությունը յերկրի դիրքի, ձեռի, սելյափի և բնական արտադրական պայմանների շնորհիվ ֆրանսիայի տարբեր շրջաններում միատեսակ չեն: Այստեղ կարելի յէ հետեւալ 11 տնտեսական ռայոնները մատնանշել:—

1. Հյուսիս:—Ֆրանսիայի ամենաարդյունաբերական և ազգաբնակությամբ խիտ շրջանը (մոտ 300 մարդ 1 քառ. կիլոմետրի վրա): Այստեղ ե կենտրոնացած ամբողջ վուշա-ջութե արտադրությունը, բրդի արտադրութների $\frac{1}{3}$, բամբակե՝ $\frac{1}{3}$ և թուջի 10 տոկոս ու պողպատի 15 տոկոս արտադրանքը: Այստեղ են աշխատում ճակնդեղաշաքարի և գարեջրի գործարանները՝ բացառապես սեփական հումքով: Շատ ինտենսիվ ե դաշտամշակությունը: Դաշտերում մեծ տեղ են բռնում ճակնդեղը, վուշը և գալլուկը (խմել): Սա միջազգային տրանզիտի և ներքին հարաբերությունների աշխուժացած շրջան ե (Փրանսիական յերկաթուղիների ու ջրանցքների ամենից խիտ ցանցն այստեղ ե): Այստեղ են դեպի Անգլիա ազգանք ուղարկելու գլխավոր քաղաքները՝ Կալեն և Բուլոնը, այստեղ ե ամենամեծ արդյունաբերական կենտրոնը՝ Լիլը:

2. Արեվիլի:—Յերկաթի յերկիրը՝ Լոտարինգյան մասում և տեքստիլ արդյունաբերության տեղը՝ Ելզասում: Այստեղ ե արդյունաբերվում պղնձահանքի 95 տոկոսը, և մշակվում ֆրանսիայի ամբողջ թուջի $\frac{4}{5}$ և պողպատի $\frac{2}{3}$ մասը: Միաժամանակ սա ֆրանսիական բամբակա-

գործական ամենագլխավոր շրջանն եւ Խոշորագույն քաղաքներն են Ստրասբուրգ 175 հազար և նաևսի 115 հազար ազգաբնակությամբ:

Յ. Պարիզյան ավագան: — Ֆրանսիայի ամենաընդարձակ շրջանը (նրա մոտ 1/4): Մա ամբողջապես հարթություն և արևելքից շրջափակված բլուրների կոնցենտրիկ աղեղով: Կենտրոնը պաշտպանելու համար դրանց ամրացնելը շատ հեշտ և յեղել: Դեպի կենտրոն են հոսում բոլոր գլխավոր գետերը: այստեղ միանում են բոլոր կարեռը յերկաթուղիները: Այս հանդամանքի շնորհիվ ել ավագանի կենտրոնում ընկած Պարիզ քաղաքը գարձել ե վոչ միայն վարչական ու կուլտուրական, այլև արդյունաբերական կենտրոն: Նրա արդյունաբերությունն աճել ե վոչ թե աեղական արտադրական ուժերով, այլ նրա բախտավոր դիրքի շնորհիվ: Արդյունաբերական բնագավառում առանձնապես աշքի յեն ընկնում մնուաղագործ ական ապրանքներն, ավտոմոբիլները, կաշվելենը, հագուստն ու սպիտակեղինը, զաւլության ու մողայի իրերը, թանգարժեք մորթիները, գեղարվեստական գործերը: Պարիզն ըստ ամենայնի Ֆրանսիայի առաջնա քաղաքն ե, ինչպես նաև ամենից խոշորը: Նա Յ. միլիոն ազգաբնակություն ունի:

Կենտրոնը (այսպես կոչված Իլ-դե-Ֆրանս) շրջապատող ներքին հողերը բացառապես յերկրագործական են (ցորեն, շաքարի ճակնդեղ, ամեն տեսակի արմտիք): Արևելյան բլուրների կրային հողերում խաղողի արգիներն են: Իր քրիզուն գինիներով առանձնապես հայտնի յե Շամպայնի շրջանը՝ Ռեյմս քաղաքով, վոր 100 հազար ազգաբնակություն ունի: Բացի գինեղործությունից, վոչխարաբուծության շնորհիվ զարգացել ե նաև մահուղի արգիունաբերությունը: Մերձովյա մասը՝ Նորմանդյան՝ Ֆրանսիայի ամենաարուստ շրջաններից մեկն ե միաժամանակ նաև առետրա-արդյունաբերական և գյուղատնտեսական (պտղաբուծություն, անասնապահություն): Ունի շատ գործարաններ.՝ յերկաթեղեն (իր յերկաթի հանքերն ունի), մահուղեղեն, քաթանեղեն շինելու: Նորմանդիան յերկու մեծ նավահանգիստ ունի՝ Հավր (160 հազար) և Ռուան (123), վորը միաժամանակ գետային և ծովային նավահանգիստ ե:

Գ. Արեվմուտքը բաղկացած ե յերկու թերակղիներից՝ Բրետանից և Կոտանտենից՝ հարավից սրանց կիսառղակաձև շրջապատող հողերի հետ միասին: Թերակղիները ձկնորսության և անասնապահության վայրեր են (խոնավ արոտներ): Լավ պաշտպանված տեղերում պարտիզանությամբ են պարապում (վաղահաս կարտոֆիլ, ծաղկեկաղամբ, կա նկար և այլն): Ծովը մտած մասում ընկած են Ֆրանսիայի զինվորական նավահանգիստները՝ Բրեստ և Շերբուրգը: Շատ հա-

բուստ ևն նաև Լուարայի գետաբերանի հողերը Նանտ նավահանգիստը սննդանյութերի հարուստ արդյունաբերություն ունի (շաքար, բխակլիտ, անուշեղեններ), վորի հումքն ստանում է Արեմտան Հնդկաստանից:

5. Կենտրոնական զանգվածն աղքատ լերկրագործական ու անասնապահական շրջան եւ Նոսր աղքաբնակություն ունի և շարունակ դատարկվում և աղքաբնակության հետանալու պատճառով։ Սկսում են ողտագործել իր սպիտակ ածուխը։

Զանգվածի հուսախա-արենեցան լանջին (Կրեպոլում) վերջերս կառուցվեց ֆրանսիայի խոշորագույն մետաղագործական գործարաններից մեկը (գլխավորապես մեքենաշինություն և սաղմանյութիր):

6. Ռուսայի յեվ Սոնայի նովիտ։—Հուսիսում հացահատիկային անտեսության և գինեգործության շրջան (Բուրգունդիա), իսկ միջինում և հուսիսում՝ շիրամապահության։ Այս հովիտը Միջերկրական ծովի և Պարիզյան ավաղանի մեջ կարևոր տրանզիտային ճանապարհ և հանդիսանում։ Մրան լրիվ ողտագործելու համար գեռ պիտի բարելավել նավարկությունը ստորին Ռուսայով (հունը ավագով լցոված լինելու պատճառով Ավինյոնից դեպի Մարսել ջրանցք և փորվում)։ Այս հովիտը գլխավոր քաղաքը Լիոնն ե (570 հազ. բնակչություն), վոր աշխարհի ամենամեծ մետաղաբարդյունաբերությունն ունի։ Արտադրություն և նաև բավական մեծ քանակության պատրաստի հագուստեղեններ, ավտոմոբիլներ, լուսանկարչական ապակարատներ Զարգացած է կինոարդյունաբերությունը։ Միջազգային աշքի ընկնող տոնավաճառ ե,

7. Հարավ-արեվմասի։—Հարուստ լերկրագործական և գինեգործական շրջան եւ Լեռնային գետերը, վորոնք բղխում են Պիրինյան լեռներից, իրենց սպիտակ ածխոսի սպասարկում են նոր-նոր զարգացող մետաղագործական և տեքստիլ արդյունաբերությունը։ Ցերկուանձին կենտրոններ կան—Շոռոպան նավահանգիստը, վոր գինուխողը առևտուր ունի և արդյունաբերական քաղաք ել ե դարձել (256 հազար բնակիչ ունի), և Շուլուզա, վոր ներքին առևտուրի և արդյունաբերական քաղաք հ (180 հազ. բնակիչ ունի):

8. Միջերկրածովային հարավ։—Այսգործական, բանջարանոցային, խաղողաբուծական և ծաղկաբուծական շրջան ե (ծաղկաբուծության հետ միասին զարգացել է պարֆյումերային արտադրությունը)։ Սա ձմեռալին կուրորտներ ունի և ծովային աշխուժ հարաբերություններ ե զարգացրել։ Մարսել քաղաքը ֆրանսիայի առաջին նավահանգիստն ե (652 հազար բնակիչ ունի)։ Նա բերովի հումքով սապնի խոշոր արտադրություն ե զարգացրել Տուլոն քաղաքը կարևոր պատե-

բազմական նավահանգիստ և (115 հազ. բնակ.), Նիցցա քաղաքը միջազգային հոչակավոր կուրորտ և (185 հազ. բնակ.),

9-րդ, 10-րդ և 11-րդ ռայոնները լեռնալին են—Յուրա, Ալպեր և Պիրինյանները, Բավական աղքատ շրջաններ են: Տնտեսության հիմնական պարապմունքներն են անառնապահությունը, կաթի վերամշակումն (առանձնապես պանիր), տնայնագործությունը: Միաժամանակ լեռնալին գետերն ոգտագործված են խոշոր ելեկտրոկայաններ կառուցելու համար: Յուրայում և Ալպերում ելեկտրաէկան ուժի շնորհիվ շատ լայն կերպով դրված և թղթի և ելեկտրոմետազագործական արդյունաբերությունը:

Թարտեզի վրա նշանակեցեք տնտեսական շրջանների սահմանները:

Յուրայց տվեք ալգ շրջաններն իրար հետ միացնող յերկաթուղինները:

Վեր շրջաններն են տրտասահմանյան յերկաթուղինները մտնում, և հատկապես վերտեղից:

Ամենալավ ներքին ջրային ճանապարհներ ունեցող շրջանները վերոնք են, և այդ նավահանգիստներից գուրս յեկող ծովալին ճանապարհներն եւ ըստ են տանում:

Նշանակեցեք արդյունաբերական շրջանները. Ի՞նչ արդյունաբերությունն եւ զարգացած նրանցից յուրաքանչյուրում և ինչնեւ:

Գինեգործությունն ամենից շատ վերտեղ և զարգացած:

Բացատրեցեք՝ ինչնւ Ֆրանսիայի հարավում առաջ և յեկել վոչ թե մեկ կենտրոն, ինչպես հյուսիսումն ե, այլ յերկու իրարից անջատ շրջաններ են գոյացել:

Վորովհետև Ֆրանսիայում միքանի խիստ զարգացած արդյունաբերական շրջաններ կան, այդ պատճառով ամբողջ յերկերը խառը տիպի տնտեսության յերկիր և հանդիսանում, սակայն գոյության վեխավոր աղբյուրն եւ գյուղատնտեսությունը, վոր ծաղկած վիճակ ունի, բայց վոչ ամբողջ Ֆրանսիայում:

ԳՅՈՒՀԱՑԻՆԵՐՆ ՈՒ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ:—Հյուսիսում գյուղացիությունը շատ է հարուստ: Նրանցից շատերը լավ ավտոմոբիլներ (բեռնատար ու մարդատար), տրակտորներ ունեն, վոր ձեռք են բերում վոչ թե շոալլության համար, այլ՝ վորովհետև մեքենան ավելի շահավետ Ֆրանսիացի գյուղացուն շոայության մեջ ամենից քիչ կարելի լի:

մեղագրել: «Նա ավելի շուտ գծուծ ե, վոր լարված աշխատանքով գոյություն և քարշ տալիս: Նրա ամբողջ ընտանիքն արթնանում և առավուը շատ վաղ, լուսաբացին և աշխատում և մինչև գիշեր: Ամենահամեստ բավականությունը՝ շրջիկ ցիրկն ու կինոն, նրան մեծ շոայրություն են թվում», ասում ե Լ. Նիկուլինն իր ճանապարհորդական նկարագրության մեջ:

«Մրա կատարյալ հակապատկերն ե Փրանսիացի բանվորը. — Կենսուրախ, կայտառ, տաղանդավոր, բնականից հեղափոխական: Միքանի սերունդ հեղափոխականների կուլտուրան զգացվում ե նրանում... Նրա «Ճախությունը», ատելությունը դեպի կղերականությունն ու բուրժուազիան մեզ համար հասկանալի կլինի, յեթե հիշենք, վոր նա միս ու արյունն և այն բլուզավորների, վորոնք քարերը շուռ տվին և տակառներից ու շուռ տված ոմնիբուսներից քարրիկադներ շինեցին: Միջազգային պրոլետարիատի շարքերում միշտ հարյուր-հազարավորներով ֆրանսիական պրոլետարներ կգտնվին վորոնց հայրերն ու պապերը հեղափոխություն առաջացրին այնպիսի վոգեորությամբ ու արիությամբ: Մեքենայի նկատմամբ ունեցած ֆրանսիացի բանվորի վերաբերմունքում զործարանական պրոլետարիատի մի շարք սերունդների կուլտուրա լև զգացվում: Համարյա յուրաքանչյուր ֆրանսիացի բանվոր տաղանդավոր մեխանիկ ե, վորի խելքն ամենաբարդ մեքենաներից բան և հասկանում», ասում ե նույն Նիկուլինը.

Հասարակագիտությունից ի՞նչ գիտեք ֆրանսիական հեղափոխությունների մասին:

ԳԵՐԱԿՆԵՐՈՒԹՅՈՒՆ **ԳԵՐԱԿՆԵՐՈՒԹՅՈՒՆ** — Ֆրանսիայի 90 դեպարտամենտներից միայն մեկն ե բացառապիս արդյունաբերական (Սենայի դեպարտամենտը), 40 ազգարային-արդյորնաբերական են, իսկ 49-ը՝ զուտ ազգարային: Ցերկը ընդհանուր յեկամուտի լերկու լերորդ մասը զյուղատնտեսությանն ե բաժին ընկնում:

Հոգերի 55 տոկոսը ցանքերին ե հատկացրած, բացի դրանից 4 տոկոս ել խաղողի արգիներ են: Ուրեմն բոլոր հոգերի ^{3/5}-ը և Զմոռանանք ասել, վոր դրա 36 տոկոսն ե միայն հացահատիկների հատկացրած, իսկ 50 տոկոսից ավելին՝ այնպիսի բույսերի, վորոնք թե հացի տեղ կարող են ծառալին, թե կեր են անասունների համար:

Առևտրա-էերկրագործական գլխավոր շրջաններ համարվում են Պարիզյան ավաղանը (ցորեն) և հարավ-արևմուտքը (ցորեն և սիմինդը): Լավ բերք լեղած ժամանակ հացի կարեքը համարյա սեփական արտադրանքով ե հոգացվում: Հացապակաս ժամանակ բերվում ե Ալժիրից, Մարոկկոյից, Ամերիկայից: Մեծ քանակությամբ զանագարիան ագրություն-8

դան արմտիք ու բանջարեղեն են արտադրում: Հարավի միքանի դեպարտամենտներ բանջարարութությունն իրենց զլիսավոր զբաղմունքն են գարձրել (քաղցր սխեն, բաղմատեսակ լորիներ, ծաղկակաղամբ, սալաթ և այլն): Ֆրանսիայի հյուսիսային մասում մեծ քանակությամբ կարտոֆիլ են մշակում: Բացի արևմտյան, Հյուսիսային և Պարիզյան ավազանի հյուսիսից ու արևելյան շրջաններից, մնացած ամբողջ շրջանում տարածված են խողողի այզիները:

Համարյա մեկ միջիարդ սուրլու գինի յե շինվում (1924 թ.—71 միլ. հեկտար գինի, մոտ 29 միլ. սիդր): Ամենատղնիվ տեսակները (Բորդոյի, Բուրգոնիայի և Շամպայնի զինիները) արտասահման են ուղարկվում: Ավելի շատ գինի արտահանվում, քան ներմուծվում են Ներմուծվում են ավելի հժան տեսակները: Ցերկրի ներսում մեծ քանակությամբ գինի յե գործածվում: Գինին համարյա յուրաքանչյուր ֆրանսիացու ճաշի անբաժան մասն եւ:

Անասնապահության բնագավառում ֆրանսիան աչքի յե ընկնում իր բնունատար-պերշերոններով (Պարիզյան ավազան) և կաթնատու մսացու անասունների ընտիր տեսակներով (առանձնապիս նորմանդիայում, հյուսիսային շրջանում: Այստեղ շատ ե տավարը: Նորմանդիան հայտնի յե իր մսացու վոչխարներով ու խոզերով), ֆրանսիայում մեծ կատարելության ե հասել զանազան տեսակի պանիրներ պատրաստելու արևեստը:

Գլուղատնտեսությունն ինտենսիվ բնուլթ ունի (բազմադաշտյան), սակայն տնտեսության մեքենայացումն այնքան ել մեծ չե: Դա հետեւանք ե մանր հողատիրության գերակշունչության և գլուղացիական տնտեսության մեջ կոռպիկացիայի աննշան դարձացման: Հանքային պարարտացումն այստեղ ավելի թուլ ե, քան Բելգիայում ու Կերմանիայում, ալդ պատճառով ել բերքը պակաս ե լինում:

Դիագրամմա կազմեցեք ֆրանսիայի 1924 թ. ցանքերի և բերքի.

Կուլտուրաներ.	Միլ. հա-ով	Բերքը միլ. կվ.-ով
Հացահատիկներ . . .	11,4	151,7
Արմտիք	0,6	4,2
Արմատապտուղներ . .	1,6	173,4
Անասուններ կեր . .	16,2	888,8
Տեխնիկական բույսեր .	0,3	65,5
Այզիներ	0,1	56,2

Հանքալին պարարտացման կիրառութիւն և բերքատվություն.

	Ֆրանս.	Գերմ.	Բելգ.	Անգլ.	Իտալիա
Հանքարտացութիւն կիրարամմենք բով 1 հեկտարին	25,4	32,8	33,0	21,3	11,0
Ցորենի միջին բերքը 1 հեկտարից կվիճակներով (1921—1924 թ.)	14,1	17,7	26,0	22,4	11,0

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ. — Մանուֆակտուրան (մանավանդ գորգագործությունը, բարակ մանուգը, մետաքսեղենները, հայելիներ շինելը, հաշիաներ գործելը) դեռ 18-րդ դ. վերջին փայլուն զարգացման եր հասել, սակայն գործարանային արդյունաբերությունը 19-րդ դարում ավելի թույլ զարգացավ, քան Անգլիայում ու Գերմանիայում, Խանգարողն եր ազգաբնակության պակասը, ժողովրդի թափը դեպի հողը, վոր լիառատ կերպով կերակում եր իրեն, և քարածխի ու հումքի մեծ պակասը (բացի յերկաթից), Խանգարող հանգամանք և նաև փող պահելու կամ, ինչպես ֆրանսիացիք են ասում, «բրդի գուլպայում» թագցնելու հատկությունը:

Կապիտալի խոշոր մասը գտնվում է մանր բուրժուազիայի և ունեոք գյուղացիության ձեռքում, վորոնք ավելի լավ են համարում դրամը պետական տոկոսաբեր թղթերի վերածել, քան արգլունաբերության վրա գործադրել: Արդյունաբերությունը լայն ծավալելու համար հարկավոր գումար չկար:

Այն թեքումը, վոր տվել եր 17-րդ դարի մանուֆակտուրան, պահպանվել ե մինչեւ այժմ: Ֆրանսիան աչքի իւ ընկնում արդյունաբերության այն տեսակներով, ուր ճարտար աշխատանք և պահանջվում: Արդյունաբերությունը, մանավանդ արտահանելու համար, նկատի յե առնված վոչ թե մասսայական, այլ ունեոք գնորդների (անգլիացու, ամերիկացու) համար, վոր վոչ թե ամերիկական ստանդարտացած տպանք և ուղղում, այլ այնպիսի արտադրանք, վոր իր անձնական, անհատական ճաշակին և հարմարեցրած: Այդպես են՝ թանգագին գործվածքները, զարգերը, անուշահոտ ջրերը, ընտիր զինիները, պահիրները, պահածոները և այլն):

Ֆրանսիան աչքի յե ընկնում նաև մեծ խնամքով ու ճշտությամբ պատրաստած գործիքներով, մեքենաներով ու ավտոմոբիլներով: Պատերազմը, վոր հարստացրեց առանց այն ել հարուստ յերկաթի քանակը, մեծ զարկ տվավ ծանը արդյունաբերության զարգացմանը

(այս անգամ մասսայական թեքումով): Արդյունաբերության այս ճյուղը զիմավորող կապիտալիստներն այժմ մեծ դեր են խաղում ֆրանսիակի քաղաքական կանքում: Իրենց մշտական յեկամուտներն առանձիւ գովելու համար սրանք 1926 թվին միջազգային համաձայնություն կնքեցին ֆրանսիակի, Բելգիայի, Լուսական գովակայի հետ՝ կարգավորելու պողպատի արտադրանքը (այս յերկրներից ամեն մեկը համաշխարհային շուկա կարող է գցել միայն այնքան պողպատ, վորքան նախատեսված և պայմանով):

Ֆրանսիայում մնացած մետաղներից ամենից շատ պատրաստվում է ալյումինից: Այս մետաղը պատրաստելում դեռ մոտիկ անցյալում առաջին տեղը ֆրանսիան եր բռնում, սակայն ներկայումս այդ առաջնությունն անցել է Միացյալ Նահանգներին:

Վերջերս սկսել ե մասսայական արտադրանքի անցնել ավտոմոբիլային և քիմիական արդյունաբերությունը: Ամենից շատ մարդ (մոտ 2 միլ.) զբաղված է տեքստիլ արդյունաբերությամբ (մեջ առաջ նաև հագուստեղենը և սպիտակեղենը): Այնուհետև դալիս է մետաղի արդյունաբերությունը՝ մեքենայաշինության հետ միասին (600 հազար):

Գրեցեք ձեր տետրակներում, թե վեր շրջանում արդյունաբերության բնչ աեսակն և զարգացած:

ՏՐԱՆՍՊՈՐՏԸ:—Առանձին ռարուններ իրար հետ շատ լավ են կապակցված թե ջրային ճանապարհներով, թե յերկաթուղիներով ու խճուղիներով: Ջրային ճանապարհների յերկարությունը 17,5 հազար կիլոմետր է, փորից միայն 6 հազար կիլոմետրն ե ոգտագործվում շոգենավային հաղորդակցության համար: Նավարկելի ջրանցքների յերկարությունը 5,5 հազար կիլոմետր է:

Հրաշալի յեն ֆրանսիայի խճուղիները, մանավանդ այսպիս կոչված աղջալին ճանապարհները (մոտ 40 հազ. կիլոմետր): Սայլատար ճանապարհների ընդհանուր յերկարությունը 600 հազար կիլոմետրից ավելի յետ ձիշտ ե, նրանք ներկայումս ավելի վատթար վիճակում են, քան պատերազմից առաջ եին:

Յերկաթուղիները 41,5 հազ. կիլոմետր են, չհաջված տեղական նշանակություն ունեցող 11 հազար կիլոմետր ոժանդակ ճամուաները բոլոր զիմավոր գծերը միանում են ընդհանուր կենտրոն Պարիզում: Պարիզին մոտեցող խոչոր գծերն ենեկտրական ուժի յեն անցնում: Ճանապարհների մեծ մասը մասնավոր ընկերությունների յեւ պատկանում:

ՆԵՐՔԻՆ ԱՌԵՎՏՏՈՒՄԸ:—Առանձին շրջանների անտեսության մեջ եղած մեծ տարբերություններն ել պիտի մեծ աշխատացում առա-

ջացնելին ներքին առևարի մեջ: Առևտրական գործարքների տարեկան շրջանառությունը հասնում է 55 միլիարդ ռուբլու (մոտ 700 միլիարդ ֆրանկի): Սական առևտուրը բացառապես քաղաքային է: Գլուղացիք դուրս քիչ բան են գնում, վորովհետև աշխատում են ամեն հարկավոր բան տանը պատրաստել: Իսկ քաղաքներում, մանավանդ խոշոր հանգույցալին նշանակություն ունեցողներում, առևտուրը շատ ե աշխուժ:

Ինչո՞վ պիտի բացատրել, վոր Ֆրանսիայի տնտեսական կյանքում առաջնակարգ դեր խաղացողը գյուղատնտեսությունն է: Ինչո՞վ և արտահայտվում Ֆրանսիայի գյուղատնտեսության ինտենսիվ լինելը. Ինչն է զրա պատճառը:

Իր գյուղատնտեսական մթերքներից ինչ և արտահանում Ֆրանսիան, ինքն ինչ չունի:

Ֆրանսիայում արդյունաբերությունն ավելի վազ ե սկսել զարդանալ, քան Գերմանիայում. հետազայում նա ինչո՞ւ լեռ մնաց Գերմանիայից:

Ի՞նչն է Փրանսիական և գերմանական արդյունաբերության հիմնական տարրերությունը:

Պատերազմից հետո Փրանսիական արդյունաբերության մեջ ինչ նոր գծեր լերսացին:

ՅԵԶՐԱՓԼԿՈՒՄՆԵՐ: — Ֆրանսիան լորված, ճարտար, բաժան-բաժան լեղած, ըստ մեծի մասին վոչ խոշոր ձեռնարկային աշխատանքի լերկիր ե: Այս հանգամանքն աչքի յե ընկնում գյուղատնտեսության, արդյունաբերության և առևտուրի մեջ: Աշխատանքի այս մանրացումը, ածխի և մարդկանց պակասի հետ միասին, ստիպել ե նրան իր ուղարկությունը կենտրոնացնել վոչ թե մասսաներին անհրաժեշտ, ալլ բարձրորակ ապրանքների վրա, մանավանդ այն տեսակների, վորոնք արտահանման նյութ են ծառալել (գյուղական տնտեսության և գյուղատնտեսական արդյունաբերության մեջ—վոչ թե հացահատիկներ, ալլ վաղահաս արմտիք, մրգեր, գինի, պանիր, արդյունաբերության մեջ—շուայլության և նորութիւնի առարկաներ, ճշտված գործիքներ և այլն):

ՏԱՄՆՄԵԿԵՐՈՐԴ ԹԵՍՏ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

Համբ քարտեզի վրա ներկեցեք ֆրանսիական գաղութները. այդ գաղութներն ի մի խմբեցեք՝ ըստ աշխարհամասերի. կազմեցեք ֆրանսիական գաղութների բաշխման դիագրամը՝ այս աղյուսակի համաձայն.

ԳԱՂՈՒԹՆԵՐԻ ԽՈՒՄԲ	Տարած. Հաղաբ կլմ-ով	Աղջարնակութ. 1921 թ. հա- զարներով
Հյուսիսային Աֆրիկա	4910	12311
Արևադարձային Աֆրիկա	8226	22425
Հնդկամեր Աֆրիկայում .	13136	34736
Ասիական գաղութներ	851	21945
Ամերիկական գաղութներ	91	322
Ովկիանիական գաղութներ	36	139
Բոլորը . . .	14114	57342

Վժը աշխարհամասերում են կենտրոնացած ֆրանսիական ամենազլիավոր գաղութները:

Այդ գաղութների մեծ մասը վժը կլիմայական գոտումն են:

Այդ գաղութներից վժըն ե պիտանի ֆրանսիացիներ բնակեցնելու համար:

Ֆրանսիան այնքան աղդաբնակություն ունի, վոր գաղութներն ուղարկի:

Ներկայումս ֆրանսիայի գաղութային կալվածները կենտրոնացած են Աֆրիկայում և Ասիայում (Հնդկաչին և նորերս ձեռք բերած Սիրիա): Շատ աննշան են նրա ամերիկական, մանավանդ ովկիանիական կամ ավստրալիական գաղութները:

Միայն Աֆրիկայի հյուսիսում բավական մեծ թվով ֆրանսիացիներ կան (մոտ 700 հազ.): Մնացած բոլոր գաղութներում ֆրանսիացիք աննշան փոքրամասնություն են կազմում: Այդ հողերը վոչ թե գաղթականներով բնակեցնելու, այլ շահագործման համար են:




Ֆրանսիան, իր գաղութները և ազդեցության շրջանները:

ՀՅՈՒԽԻՍԱՑԻՆ ԱՖՐԻԿԱ.—Ֆրանսիական հյուսիսային Աֆրիկան բաղկացած է լիոնային Ալժիրից, Թունիսից, Մարոկովից և Սահարա անապատից: Այս յերկրներից Ալժիրում, Թունիսում և Մարոկոյում կյանքի պայմանները տարրեր են—ծովափնյա տափարակում և նրա վրա բարձրացող բարձրավագնդակում: Մոլափնյա տափարակում շատ մեղմ ձմեռներ են լինում, վորի շնորհիվ վաղահաս արժմտիք են բուսնում: Դեռ գեկտեմբերին Ալժիրը Յեվրոպա յե ուղարկում ծաղկակաղամբ, տոմատ, լոբիներ, կարտոֆիլ: Այնուհետև սարահարթի վրա խիստ տաք ամառ և ցուրտ ձմեռ ելինում: Մոլափում բավական անձրևներ են տեղում, այնինչ սարահարթում պակաս են, այնպես վոր ալստեղ արհեստական վոռոգումն անհրաժեշտ ե գառնում: Յերկրի ներսները հարուստ են հանքերով, մանավանդ յերկաթով, պղնձով, ցինկով, կապարով ու ֆոսֆորիտներով: Ազգաբնակությունը բաղկացած է գլխավորապես արաբներից ու բերբերներից, վորոնց մի մասն ապ-

ըռւմ և տներում (ծովափնյա մասի լերկրագործները), մլուս մասը վրաններում (քոչվորները, անասնապահները):

ՏԵՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԻՊԵՐԸ:—Իր տնտեսության տիպով Ալֆիրն տղրաբալին, յերկրագործական ու այգեգործական լերկիր ե. նա լեռնալին արդյունաբերություն զարգացնելու հնարավորություն ևս ունի, բայց այդ հնարավորությունները գեռ չեն ողագործվում:

ԹՈՒՆԻՄԸԼ նույնպես լերկրագործական ու այգեգործական լերկիր ե. սրա ողակար հանքերը — Փոստորիտն ու լերկաթն ավելի յին շահագործված, քան Ալֆիրում: Զենորսությունից ու սպունգ հանելուց բավական մեծ յեկամուտ են ստանում: Յերկու լերկրների լել ծովափնյա շրջանում մոտ 400 հազար լեվրոպացի դադթականներ կան, վորոնք արդեն կապվել են հողի հետ:



Մ ա ր ո կ կ ո :

ՄԱՐՈԿԿՈՆ տեղական լերկրագործության, կիսաթափառական անասնապահության և արհեստի լերկիր ե: Հյուսիս-արևմտյան Աֆ-

րիկալի ամենաարդավանդ հողերը Մարոկկոյումն են: Թրանսիացիք յերազում են Մարոկկոն դարձնել Յելլոպալի շահմարաններից մեկը, յերկրի հարավային մասերում բամբակի մշակությունը զարգացնել հյուսիսարևելությունը խոչոր յեղջրավոր անասուններ տարածել հանքային հարստությունները շահագործելը Մարոկկոյի մոտ ովկիանուը հարուստ և ձկներով (սարդիններ, կամբալա):

ԳՅՈՒՂԱԾՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ.—Ինչպես և Միջերկրականի բոլոր ափերում, բուսաբուծությունը յերկու ուղղությամբ և առաջ զնում մի կողմից՝ հացահատիկների մշակությների (ցորեն, վարսակ, գարի), արմտիքի և տեխնիկական բույսերի մշակություն, մյուս կողմից՝ պըտղատու ծառերի ու թփերի զարգացումն: Մասերից առաջին տեղը բըռնում է ձիթենին, վոր ազգաբնակությանն ահագին յուղ և տալիս, վորպես սնունդ: Ելական տեղ է գրավում նաև նարնջի, մանգարինի, լիմոնի, թղենու և նուշի մշակությունը: Յելլոպալացի կոլոնիաների համար շատ կարեոր տեղ են զրավում ալվեգործությունն ու զինեղործությունը: Այս բոլոր կուլտուրաներն, ինչպես նաև տավարարուծությունը, հարմարեցրած են ծովափնյա շերտին (Ալժիրում կոչվում է Տելլ, իսկ Թունիսում՝ Սախեյլ):

Մարահարթը վոչխարաբուծության յերկիր և: Մեծ քանակությամբ բուրդ և ստացվում, վորն արտահանվում և Թրանսիա:

Մարահարթի և Սահարայի սահմանում սկսվում են արմավենիներով հարուստ ուաղինները: Արտեզյան ջրհորեր շինելով, Փրանսիացիք բազմացրել են ուաղինների թիվը: Ակցիոններական ընկերություններ են կազմվել, վորոնք միլիոնավոր արմավենիների տեր են:

ՄՇԱԿՎՈՂ. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ.—Այս ձեի արդյունաբերություն գոյություն ունի համարյա բացառապես արհեստի ձեռվ. սակայն հետաքանակ աճելու, նվազում և, վորովհետեւ չի կարողանում մրցել Յելլոպալից ներմուծվող գործարանայինն ապրանքների հետ: Ամենից հաջոր պահպանվում է կուշեգործությունն, ինչպես նաև գեղեցիկ գործվածքների արտադրությունը (գորգեր, ձեռագործ): Գործարանայինն արդյունաբերությունը չզարգացավ՝ քարածուիչիներու պատճառով: Միքանի գործարաններ միայն գոյություն ունեն, վորոնք գյուղատնտեսական հումք են մշակում:

ՔԱՂԱՔՆԵՐԸ:—Մարոկկոյում յերեք խոշոր քաղաքներ կան: — Մարակեշ (145 հազ. բնակչով), Յեց (125 հազ. բնակչով), Կաղաքլանկա (110 հազ. բնակչով). Ալժիրում—յերկու—Ալժիր (207 հազար), և Որան (146 հազ.), իսկ Թունիսում—մեկ—Թունիս (172 հազ.).

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ:—Ալժիրը կառավարում և գեներալ-նահանգապետը: Վարչականորեն նա բաժանվում է յերեք դեպարտամենտաների: Դեպարտամենտներն, ինչպես և ֆրանսիակում, բաժանվում են կանոնների: Միայն լեվոպական ազգաբնակություն ունեցող կանոններն ընտրովի համարնական խորհուրդ ունեն: Տեղացիների կանոնները կառավարում են ֆրանսիացի պաշտոնյաները:

Ալժիրի բնիկների նկատմամբ, ինչպես նաև Թունիսում ու Մարոկոյում, ֆրանսիացիք ամենախիստ խնամակալական սիստեմ են անցկացնում: Թունիսում պահպանվել են տեղական կառավարիչը—քեյը և ցեղերի գլխավորները—կայիշները: Նույն և Մարոկոյում (սուլթան, կայիջներ, փաշաներ): Սակայն քեյի ու սուլթանի դործողություններին հսկում ե ֆրանսիական ուղղղենտն, իսկ կայիշների ու փաշաների դործողություններին հսկում են ֆրանսիական քաղաքացիական վերահսկիչները:

ՏՐԱՆՍՊՈՐՏԸ:—Ալժիրում ու Թունիսում ափին գուղահեռ ծովափնյա յերկաթթուղի յև անցնում, վոր ներկայումս շարունակվում և Մարոկոյում: Մովավինյա գծից՝ մի կողմից կարճ ճյուղեր են դնում գեղակի նավահանգիստները, մյուս կողմից նույնպիսի գծեր՝ «Մահարաթափանցելու» նպատակով: Այս ճյուղերը ծովափնյա գիծը միացնում են ուղիսների հետ: Ռան—Կոլոմբ—Բեշար հանդիպակաց գծից պիտի ճյուղավորվի Տրանսսահարյան յերկաթթուղագիծը:

Յերկաթթուղիների յերկարությունը 1925 թվին.—Մարոկոյում 2175 կլմ., Ալժիրում—4122 կլմ., Թունիսում 2516 կլմ.:

Ֆրանսիայի հետ կապ և պահպանվում շողենավայրին և Տուլուզա-Կազբըլանկա ողային գծով:

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎԵՇՈՒՐԾ.—Աֆրիկայի հյուսիս-արևմտյան գաղութները նրան կենսամթերքներ և հումք են հալթայթում (ցորեն և վարսակ, պանիր, մրգեր ու արմափք, ձիթենու յուղ, պինի, կաշի, բուրդ, փուփատներ, յերկաթ, արճիճ): Փոխարենը նրանից գնում են դործվածքներ, հագուստեղեն, մեքենաներ, ավտոմոբիլներ, շաքար: Այս առեստրից վաստակում ե ֆրանսիան:

Դիագրամ կազմեցիք հետևյալ տվյալներով:

Աֆրիկայի հյուսիս-արևմտ. գաղութների առևտրական շրջանառությունը 1925 թ. միլիոն ֆրանկներով (ֆրանկը մոտ 8 կոպ.):

Հյուսիս-արևմտ. Փրանսիական գաղութ-ների առելորական շրջանառությունը	Աժքողջ արտաքին առելորը	Ներտուած ֆրանսիայի հետունեցածը
Ա.Փրիկայի հյուս.-աշխմտ. գաղութներից արտահանած	3811	2326
Գաղութները ներմուծած	5550	4242

ՍԱՀԱՐԱՆ.—Զի կարելի տակը թե Սահարան ամբողջովին տմայի անապատ ե. նրա $20^{\circ}/_0$ ուղղիսներ են, $16^{\circ}/_0$ անապատային արտօներու Ալստեղ մոտ 450 հազար մարդ և ապրում (արարներ, բերբերներ, կիսաբերբերներ—տուարերգներ և նեղբեր—տիբրուներ)։ Ուղիսներում ապրողները նստակլաց են, անապատներում՝ թափառական։

Սահարան մի դժվարանցանելի պատճեց և արևադարձային և հյուսիսային մերձարևադարձային Աֆրիկայի մեջ, Մինչ այժմ այդ անապատով առելորը քարավաններով եր կատարվում։ 1922 թվից ավտոմոբիլային հաղորդակցություն և սահմանված։ Հետազոտություն են կատարված։ Սահարան կարող (Տրանսսահարյան) յերկութուղաղիծ անցկացնելու մինչև Նիգեր գետի ախն կետը, վորտեղից նա նավարկելի լի դառնում։ Տնտեսապես այս գիծը դաս և տալու, սակայն նա արժեքավորվում և վորպես Աֆրիկայի Փրանսիական ըաժման-ըաժման ընկած գաղութներն իրար հետ կապող և վորպես նեղբեր արտահանող, վորոնցից Փրանսիացիք և սեամորթ լիգեռններ» են կազմում։

ԱԼԵՎԱԴԱՐՁԱՅՑԻՆ ԱՅԲԻՒԿԱ.՝ Սա արևադարձային կլիմայի, առմենապատ տեղությունների, հետեաբար և սրեադարձային բազմազան կուլտուրաների լերկիր ե։ Հենց այդ կուլտուրաներն ել նրա գլխավոր հարստությունն են կազմում։ Ֆրանսիական կարվածները կենտրոնացած են արևադարձային Աֆրիկայի հուսիսային մասում, վոր կաթսայի ձեռվ ընկած մի յերկիր և անառողջ կլիմայով և ամենափարթամբուսականությամբ։

Արտածման նյութ կազմում են դլխավորապես վայրի կերպով աճող բուսերը ($3/4$ մասը), $1\frac{1}{2}$ -ը կուլտուրական բույսերը և միայն աննշան տոկոսը—կաշին, բուրդը, փղոսկը։ Առանձնապես շտահ արտահանվում են լուղատուններ—գետնընկուլզ, արմավի յուղ և լուղատու տրմավի սերմեր։ Սրանից հետո գալիս են կառուչուկը, գունավոր փայտը, սուրճը, վանիլը։ Ակավում և նաև կակաոյի արտահանությունը։

ՄԱԴՐԱՍԿԱՐ ՅԵՎ ԲԵՑՈՒՆՅՈՒՆ կղզիներն ըստ մեծի մասին
պլանտացիաների նյութ են տալիս (շաքար, սուրճ, ծխախոտ, ըրինձ).
բայց վայրի բույսեր ևս տալիս են (գունավոր փայտ և կառոչուկ).
Բացի դրանցից Մազագասկարը հանքային հարստություն ևս ունի,
վոր, սակայն, քիչ և մշակված Այդտեղ կան—վոսկի, ածուխ, նազի,
գրաֆիտ:

Ցամաքի յերկաթուղիների յերկարությունը մոտ 3900 կիլոմետր
եւ Ամենամեծ գիծն և Դահար-Նիգերը: Կղզիների յերկաթուղիների յեր-
կարությունը՝ 750 կմ: Գլխավոր նավահանգիստը Դակար քաղաքն է
(32 հազ. բն.): Գործում և նաև Դակար-Կաղաքաբանկա ողակին
գիծը:

ԱՄԻԱՅԻ ԳԱՂՋԻԹՆԵՐԸ:—Համաշխարհային պատերազմից հետո
Հնդկաչինի գաղութներին ավելացավ նաև Սիրիան, վոր Տաճկաստա-
նից անցավ Ֆրանսիային: Իր կլիմայով ու բուսականությամբ նա պատ-
կանում և Միջերկրականի շերտին: Ազգաբնակությունն արաբներ,
տաճիկներ ու դրուզներ են: Սա հին կուլտուրայի յերկիր և Տնտե-
սության հիմք կազմում են հացահատիկներն ու այգեգործությունը:
Վաղ ժամանակներից այստեղ արհեստական վուոզումն գոյություն
ունի: Հացահատիկներից ամենից զլիսավորներն են—ցորեն, դարի,
սորգո, կանաչեղենից՝ լորիների բազմաթիվ տեսակները: Մեխնիկա-
կաններից—քննիթ, բամբակ և այլն. պտղատու ծառերից ու թփերից—
ձիթենի, թղենի, խաղողի վորթը: Բամբակագործությունն արագ ա-
ճում եւ:

Սիրիան շատ առևտրական քաղաքներ ունի, վորոնց գոյությունը
հազարավոր տարիներով են հաշվում: Ամենամեծերն են—Դամասկոս՝
170 հազ. բն., Հալեպ կամ Հալեպպ' 140 հազ. բն., Բելըութ' 95 հազ.
բնակ.: Բելըութի, Բաղդադի և Թեհրանի միջև ավտոմոբիլային հաղորդա-
կցություն կա: Ամենից կարևոր նավահանգիստը Բելըութն է: Արտա-
հանման գլխավոր նյութիրն են բամբակը և մրգերը:

Իրենց կարճ տիրապետության ընթացքում Փրանսիայիք իրենց
դեմ են հանել տեղական ազգաբնակությունը: Այդ անբավականու-
թյունը դրուզների ապստամբություն դարձավ:

Դիագրամ կազմեցեք հետևյալ աղյուսակով (տվյալները
1925 թվի լեն, միլ. ֆրանկներով):

Արեակարգային Աֆրիկայի ապրանքաշրջանառությունը	Աճբողջ ար- տաքին առհ- առությունը	Ֆրանսիա- կան մասը
Արտահանված արհատ. Աֆրիկայից		
Յամագից	1445	642
Կղղիներից	556	452
Հնդամենը .	2001	1094
Ներմուծած առ ձն		
Յամագը	1763	646
Կղղիները	640	507
Հնդամենը .	2403	1153

ՀՆԴԿԱՋԻՆ. — Բնկած և մուսսոնալին կլիմայի շրջանում: Սա բրնձի յերկիր եւ Բրինձը կազմում է արտահանվող նյութերի $\frac{3}{4}$ -ը. (ուղարկվում եւ Զինաստան): Հացահատիկների մեջ յերկրորդ տեղը բռնում է սփերինորը կամ յեգիպտացորենը: Բանջարեղեններից ամենից շատ մշակում են լորաբուլսեր: Պլանտացիաներում մշակում են շաքարեղիզն, սուրճ, թեյ, կառչուկի ծառ, բամբակ. անտառները հարուստ են գունավոր փայտի տեսակներով (մանավանդ կարմիր): Յերկրի ներսում կան ածուխ, ցինկ, անագ, ֆոսֆատներ, թանգարին քարեր: Ափերում բավական զարգացած ե ձկնորսությունը: Հնդկաշխնը բաղմադարյան կուլտուրալի յերկիր եւ Դրա գեղեցիկ վկաներն են հին շենքերի փառահեղ ավելակներն ու հին խոշոր քաղաքները: Ամենամեծ քաղաքներ յերկու մեծ նավահանգիստներն են՝ Սայգոն (181 հազար բնակչություն) և Հայպոնգ (100 հազ. բն.): Յերկտթուղիների յերկարությունը 2000 կիլոմետրից ավելի է: Մի գիծ կա, վոր Հնդկաշխնի ճանապարհները միացնում ե Զինաստանի Յուն-Նան գավառի հետ: Հնդկաշխնը միակ ֆրանսիական գաղութն է, վոր առետրական

ակտիվ բարանս ունի (գլխավորապես արտահանվում են բրինձ, կառւ-
չուկ, սիմինդր, յուղատու սերմեր, գունավոր փայտ, պղպեղ),

ԱՆՑԻՑԱՆ ԿՂԶԻՆԵՐԻ ՑԵՎ ՈՎԿԻԱՆԻԱՅԻ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ, —
Ամերիկայում ունեցած գաղութները (Մարտինիկ, Գվադելուպա, Գվիա-
նա, Ս.-Պիեր և Միկելոն) տալիս են շաքար, սոմ, կակաո (Անտիլան
ընկերություն), գունավոր փայտ (Գվիանա), ձուկ (Ս.-Պիեր). Ովկիա-
նիայի կղզիները (Նոր-Կալիդոնիա, Ն.-Հերբիդյան)՝ կոկոսան արմավ,
սուրճ, վանիլ, պիրլամուտր:

Կազմացեք ֆրանսիական գաղութների տոնարի դիագրամը
1925 թ. հետեւալ տվյալներով (միւ ֆրանկներով).

ԳԱՂՈՒԹՆԵՐԻ ԽՈՒՄԲ	ՆԵՐՄՈՒՋՈՒՄ		ԱՐՏԱՀԱՅՈՒՄ	
	ԲՈԼՈՐԸ	ՖՐԱՆ- ՍԻԱԺԻՑ	ԲՈԼՈՐԸ	ՖՐԱՆՍԻԱ
Սիրիա	976	133	459	60
Հնդկաչին (գաղութներով)	2688	918	3083	602
Բոլոր ասիական կալված.	3664	1051	3524	680
Ամերիկյան գաղութները	472	415	415	375
Ովկիանյան գաղութները	144	54	129	59
Ֆրանսիայի բոլոր գա- ղութները	12233	6915	9883	4531

Այս արդյունքների հիման վրա ֆրանսիացիք կարող են
լավ կոլոնիալատորներ համարվել.

Ի՞նչն ե պատճառն այն հակայական ծախսերի, վորոնք կա-
տարվում են գաղութները կառավարելու վրա:

Գաղութները ֆրանսիացոց նյութական մեծ շահ տալիս են,
թե՛ վոչ:

Այս կամ այն գաղութն ինչ տեսակետից ե շահավետ ֆրան-
սիայի համար:



Միջերկրական ծովեւ

ՑԵԶՐԱՓԱԿՈՒՄՆԵՐ. — Ֆրանսիան ահազին տարածության գաղութներ ունի, վորոնցից շատերն աչքի են ընկնում իրենց բնական արտադրողական ուժերի հարստությամբ, բայց Ֆրանսիան վոչ միջոցներ ունի, վոչ ել կարողանում է այդ ուժերն ոգտագործել: Ֆրանսիայի կազն իր գաղութների հետ լոկ արտաքին և Դրանք վոչ թե գաղթականություն ընակեցնելու, այլ շահագործման տեղեր են Ռեժի վրա հիմնված ալսպիսի կազը լեռբեք կայուն լինել չի կարող: Նա յերկարատե ել չի լինիլ, մանավանդ՝ յերբ Ֆրանսիայի ուժն այնքան ել մեծ չի:

ՏԱՄՆԵՐԿՈՒՏԵՐՈՐԴ ԹԵՍԱ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԿԱՊԵՐԸ ՍՅՈՒՄ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՐՑԱՍԱՀՄԱՆՈՒՄ. — Ֆրանսիայի համաշխարհային գերը, վորպես խոշոր կապիտալիստական պետության, անհամեմատ ավելի համեստ է Անգլիայի զերից: Ֆրանսիական կապիտալն արտասահմանում աշխատել ե բացառապես վորպես վաշխառուական, թեպետ մասնակցել ե զանազան արդյունաբերական, տրանսպորտային և ֆինանս ու կան ձեռնարկությունների: Այսպես, ցարական Ռուսաստանում ֆրանսիական կապիտալն աշխատում եր հարավի լեռնային ու լեռնագործարանային ձեռնարկություններում, սակայն գլխավորապես ներդրվում եր փոխառություններում:

Պատերազմը Ֆրանսիային մեծ փող նստեց: Պատերազմից հետո

նա հսկայական գումարներ ծախսեց թե իրենց ազատության համար մարտնչող Մարոկիոյի ու Սիրիայի ցեղերի ազատամբությունները ճնշելու, թե Ռումինիային և Լեհաստանին պաշտպանելու Նրա նպատակն եր այդ լեռնու պետություններից պատվար ստեղծել Առոհըրդակին Միության դեմ: Այս ամենը քայլայում եր Ֆրանսիային:

Նրա թզթի ֆրանկն իր արժեքը կորցրեց. 1913 թ. նա արժեքը 37,5 կոպ., 1923 թ.՝ 11,5 կոպ., 1924 թ.՝ 10 կոպ. 1925 թ.՝ 9,4 կոպ., 1926 թ.՝ 6,2 կոպ., միայն 1927 թ. ֆրանկի կայուն արժեքը գառնում է 7,6 կոպեկ, 1928 թ. ամառը կատարվեց ֆրանկի պաշտոնական ստարիլիքացիա՝ յեներով 25 ֆր. մի գույնարի արժեքից (պատերազմից առաջ 5 ֆրանկն արժեքը մի գոլ.):

Այս ֆինանսական գվարությունների պատճառով ել ֆրանսիական վոսկու արտահանումը գեպի արտասահման նվազեց:

ԱՐՏԵՐԱԳԻՒՅՈՒՆ ԱՐԵՎԱԿՑՈՒՅԹ: — Պատերազմից առաջ Ֆրանսիան, ինչպես և Անգլիան, պաստիվ առենորական բարձրաց ունեին, ստկան ֆրանսիական կառլիտավի արտասահմանում կատարած աշխատանքի շնորհիվ — նրա հաշվային բարձրաց ակտիվացավ: Ֆրանսիայի հետ գլխավոր ապրանքաշրջանառությունը չորս պետություններ ունին — ՄեծԲրիտանիան, Բելգիան, Միացյալ Նահանգները և Գերմանիան. (առողջ ապրանքաշրջանառության $45^{\circ}/_0$ -ը նրանց և ընկնում): Ֆրանսիական գաղութները ներմուծմանը՝ $15^{\circ}/_0$ -ով, իսկ արտահանմանը՝ $15^{\circ}/_0$ -ով:

ՆԵՐՄՈՒԹՈՒՄՆ. — Ներմուծված ապրանքների արժեքը յերկու բրորդն ընկնում է արդյունաբերական հումքին: Մանավանդ մեծ չափով բրդին (Ավտոմալիայից և Արգենտինայից), բամբակին (Միացյալ Նահանգներից), Յեղիպտոսից ու Հնդկաստանից) և մետաքսի (Յապոնիայից, Չինաստանից և Խտալիայից). Այնուհետեւ գալիս են ածուխը, նապահմթերքները, յուղասերմերը, վուշը, մորթիներն ու կաշին ու կառոչուկը:

ԱՐՏԵՐԱԳԻՒՅՈՒՆ — Արտահանման մեջ մոտ $64^{\circ}/_0$ -ն ընկնում է գործվածքներին, $28^{\circ}/_0$ -ը հումքին և $8^{\circ}/_0$ -ը սննդանյութերին: Արտահանման վածներից առաջին տեղը բռնում են տեքստիլ գործվածքները և հագուստեղենը. նրանց վրա և ընկնում ամբողջ արտահանվածի $28^{\circ}/_0$ -ը: Մրա վրա պետք եր ավելացնել այն զգալի գումարը, վոր ծախում են Ֆրանսիա յեկող տուրիստները հագուստի վրա (տարեկան մոտ 4 միլիարդ ֆրանկ): Այնուհետև գալիս են մեխանիկական արդյունագործության նյութերը (ավտոմոբիլներ, ճշտած գործիքներ), մետաղագործական առարկաները և քիմիական նյութերը: Հումքից առանձնապես աչքի է ընկնում բորդը: Ներմուծված բրդի մեծ մասը մրանսիան վաճառում է Բելգիային: Ֆրանսիան մեծ գումարներ և աշխատում մարգարտի և թանգարքին քարերի վաճառքից ($ներմուծվում է 3,2$ միլիարդի, արտահանվում է 4,6 միլիարդի):

Ֆրանսիայի արտաքին առեսրի համար դիագրամ կազմեցք՝ հետեւ աղյուսակի տվյալներով.

Ֆրանսիայի արտ. առևտութ ապրանքաշրջանառությունը մի-
լիարդ ֆրանկներով.

Թվականներ	Թղթե ֆրանկով	Ներմուծում		Արտահանում	
		Վասկե ֆրանկով	Վասկե ֆրանկով	Թղթե ֆրանկով	Վասկե ֆրանկով
1901	—	4,4	—	4,0	
1905	—	4,8	—	4,9	
1910	—	7,2	—	6,2	
1913	—	8,4	—	6,9	
1924	39,9	10,8	41,5	11,2	
1926	59,5	9,9	59,5	9,9	

Հ. Տ.	Ֆրանսիայի 1926 թ. գլուխվոր հայթայթողները	Ֆրանսիայի 1926 թ. գլուխվոր գնորդները			
		Ցերկրի անունը	Միջնարդ ֆրանկ.	Ցերկրի անունը	Միջնարդ ֆրանկ.
1	Միացյալ Նահանգները	7,9	1	Մեծ-Բրիտանիա	10,7
2	Մեծ-Բրիտանիա	6,5	2	Բելգիա	9,4
3	Գերմանիա	4,9	3	Գերմանիա	4,4
4	Բելգիա	4,5	4	Միացյալ Նահանգներ	3,9
5	Իտալիա	2,3	5	Շվեյցարիա	3,6
6	Արգենտինա	2,1	6	Իտալիա	2,6
7	Հուանդիա	1,8	7	Սամանիա	1,8
8	Բրազիլիա	1,5	8	Հուանդիա	1,8

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԽՍՀՄ ՀԵՏ.՝ Ապրանքների փոխանակությունը ԽՍՀՄ հետ արագ և զարդանում, սակայն Անդլիայից ու Գերմանիայից գեռ շատ և պակաս:

Ֆրանսիայի ԽՍՀՄ հետ ունեցած առևտրի մեջ զգալի կերպով տէքի յե ընկնում ապրանքների արտահանումը ԽՍՀՄ-ից, Արտահանման վեց ապրանքների կազմը դեռ վերջականապես կայունացած ու վորոշիչ է: Շատ վորոշ են յերկու կարգի ապրանքներ.՝ հաց (ցորեն և սիմինդր) և նավթամթերքներ: Հացին բաժին և ընկնում (1925-26 և 1926-27 թ. թ.) 30—33%₀, նավթամթերքներին (նույն ժամանակամիջոցում) 34 և 30%₀, Ավելի համեստ, բայց հաստատուն տեղ են զլրավում փայտն (8 և 6%₀) ու մարդանեցը (3 և 5%₀): Մարդանեցի կարիքը պիտի բացատրել ֆրանսիայի մետաղաղործական արդյունաբերության դարձացմամբ: 1925-26 թ. արտահանվել ե բավական շատ վորչ ու ածուխ, իսկ 1926-27 թ. այդ ապրանքների պահանջը բավական նվազել ե: Վուշի պահանջի պակասելն, ինարկե, միայն ժամանակավոր ե: 1926-27 թ. շատ շաքար և դուրս տարվել: Իսկ յերբ ֆրանսիայի հյուսիսում կատարելապես կվերականգնի շաքարի արդյունաբերությունը, այլևս շաքար ներմուծելու կարիք չի զգացվի: Ինչ վերաբերում ե ներմուծմանը, պիտի ասել, վոր այդ յերկու տարիներում (1925-26 և 1926-27 թ. թ.) յերկու տեսակ ապրանքների՝ ավտոմոբիլների (10,5 և 12%₀) և ներկերի (7 և 8%₀) պահանջը շատ և կայուն: Միայն առաջին տարում մեծ գումարի բամբակե գործադքներ և յերկորդ տարում մեծ գումարի բուրդ և արտահանվել:

Նկարեցեք ԽՍՀՄ հետ Անգլիայի, Գերմանիայի և Ֆրանսիայի ապրանքների փոխանական գիազրամ:

(Միլիոն ուռելիներով)

Ներմուծում ԽՍՀՄ	1925-26 թ.	1926-27 թ.	1927-28 թ.	Արտահանում ԽՍՀՄ-ից	1925-26 թ.	1926-27 թ.	1927-28 թ.
Անգլիայից	125,4	97,0	45,0	Անգլիա	187,0	197,5	148,0
Գերմանիայից	172,2	157,7	185,0	Գերմանիա	111,0	167,3	242,0
Ֆրանսիայից	19,0	21,7	35,0	Ֆրանսիա	40,0	54,0	40,0

ԻՄՄԴՐԱՑԻՑԻԱ:— Ֆրանսիայի ազգաբնակությունը պատերազմից առաջ ել պակաս ել: Պատերազմում ունեցած հակալական կորուս-

ներից հետո արդ պակասն ավելի զգալի դարձավ: Թե զյուղատնտեսական, թե գործարանալին աշխատանքների համար պետք ե ոտարչերկրացիներ ներմուծեր: Ներկալում իմմիջրացիալի յերկրների շարքերում (յերբ ոտարերկրացիների ներգաղթն իր յերկիրն ավելի շատ է, քան իր հպատակների արտագաղթն արտասահման) Ֆրանսիան յերկրորդ տեղն ե բռնում: Նա իր տեղը զիջում ե միայն Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներին, սակայն ավելի լև Կանադայից: Արգենտինայից և Բրազիլիայից:

1911 թ. մարդահամարով կային 1133 հազար ոտարերկրացիներ, 1921 թ.՝ 1,550 հազար, 1926 թ.՝ 2,498 հազար (ամբողջ ազգաբնակության 6% ից ավելի):

Խտալացիներ	808 հազ.	Լեհեր	310 հազ.
Սպանացիներ	467 »	Շվեյցարացիներ	146 »
Բելգիացիներ	460 »	Ռուսներ	91 »

ՑԵԶՐԱՓԱԿՈՒՄՆԵՐ:— Չնայած Ֆրանսիայում գերակշռում են արդյունաբերական գործվածքների արտահանությունն ու ծանր արդյունաբերության աճումն, այնուամենայնիվ հազիվ թե նա կարողանաւ մասսայական արտահանման արդյունագործական գործվածքների յերկիր դառնաւի, ինչպես են Միացյալ Նահանգները, Անգլիան և Գերմանիան: Ածխի ու հումքի, մանավանդ մարդկանց պակասն ստիպում են նրան հետազյում ևս դեռ կապիտալիստական կարգը պահպանել—գնալ այն ճանապարհներով, վարով գնում եր վերջերս, այսինքն՝ պատրաստել ու արտահանել այնպիսի ապրանքներ, վորոնք վոչ թե մասսայական գործածության համար են, այլ այնպիսի գընորդների, վորոնք առատ միջոցներ ունեն և բարձրորակ ապրանք են փնտում:

Ի Տ Ա Լ Ի Ա

Ենքրոպական տիրապետությունները — 310 հազ. բառ. կիլոմետր, ազգաբնակությունը — 391/2 միլ.: Ենքրոպայից գուրս յեղած կալվածները 2 միլ. բառ. կիլոմետր, ազգաբնակությունը մոտ 2 միլիոն:

ԲՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ:— Խտալիան տիպիկ միջերկրածովյան յերկիր ե: Միաժամանակ յերկրագործության և այգեգործության, այլ և առետրական ծովային հարաբերություններ զարգացնելու համար ամենահարուստ հսարավորություններ ունի: Արդյունագործություն զարգացնելու համար ավելի պակաս տվյալներ ունի (ածխի պակաս): Ներկայումս դա յերկրագործության և այգեգործության յերկիր ե, վորոնի հրատակած ավագանության և այգեգործության յերկիր ե, վորոնի իր հյուսիսում արդյունաբերական բարձրական զգալի թեքում ունի: Մնացած Խտալիան բացառապես յերկրագործական ե:

ՏԱՄՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԹԵՄԱ

ԻՏԱԼԻԱՅԻ ԲՆԱԿԱՆ ԱՐՏԱՌՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ ՅԵՎ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Իտալիայի ցանցի վրա գրեցեք նրան շրջապատող ծովերի ու ծոցերի անունները: Դրեցեք նաև կալաբրիա, Ապուլիա, Խոտրիա թերակղզիների անունները: Դրեցեք այն նավահանգիստների անունները, վորտեղից սկիզբ են առնում շողենավային ույսերը: Ցույց տվեք այն ծովային ճանապարհները, վորոնք Իտալիայից դնում են դեպի Ատլանտյան և Հնդկական ովկիանոսները:

Նույն ցանցի վրա գտեք, թե վոր աստիճանի տակ են ընկած Իտալիայի հյուսիսային և հարավային կետերը:

Զափեցեք Ապեննինյան թերակղզու լերկարությունն ու լաւագությունը և յերկարության առ լայնությունն ունեցած հարաբերությամբ վորոշեցեք նրա դուրս ընկած լինելու աստիճանը:

Նշանակեցեք գետերի, լճերի և քաղաքների անունները:

ԱՃԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅՈՒՆ:—Իտալիան մնացած Յեվրոպայից մեկուսացած և ալպյան սարերով, վորոնք աղեղաձև փակում են նրան հյուսիսից: Մնացած լերեք կողմից ծովով և շրջապատված: Այսպիսով աշխարհագրական մի ամբողջություն և ստացվում: Այս ամբողջությանը նպաստում ենաւ այն հանգամանքը, վոր նրա ազգաբնակությունը համարյա մի ազգության և պատկանում:

ԴԻԲՐԸ:—Իտալիայի ըստ լայնության տարածվելը շատ նպաստավոր և գյուղատնտեսական մշակույթների համար: Հյուսիսը գտընվում է բարեխառն-տաք, իսկ հարավը մերձարեաղարձային կլիմայի շրջաններում: Հյուսիսային մասը ցուրտ քամիներից պաշտպանված և ալպյան լեռների աղեղով:

Յեվրոպայում ունեցած իր դիրքով Իտալիան կիսաթերակղզային պետություն ե, վորովհետև միայն նրա հյուսիսային մասն և մտնում Յեվրոպայի «բնի» մեջ, մնացած մասն ընկած և յերկարությամբ ձըդված Ապեննինյան թերակղզու վրա: Այս պատճառով ել նրա ծովային սահմաններն անհամեմատ ավելի յեն ցամաքայինից:

Իտալիան Միջերկրական ծովում կենտրոնական տեղ և դրավում:

Այս հանգամանքը շատ և նպաստել նրա առեստրի զարգացմանն այն ժամանակներում, յերբ այս ծովը դեռ առեստրական ճանապարհ եր: Դա չունի տիրապետության որով եր: Այդ գրությունը մեկ ել

կրկնվեց միջին դարերի վերջում, յերբ Հյուսիսային Խտալիայում մի շարք քաղաքներ են առաջանում, զորոնք հարստանում են մերձավոր արևելքի հետ վարած տունարի շնորհիվ: Բայց յերբ առևտուրն անցավ Ատլանտյան ովկիանոսը, և Հնդկաստանի ճանապարհն ընկավ Աֆրիկայի հարավային ծայրերով, իտալական քաղաքներն իրենց նշանակությունը կորցրին: Սուեզի ջրանցքի բացումից հետո նրանք նորից կհնարունացան, զորովհետեւ Միջերկրական ծովը նորից ամենաշխուժ հաղորդակցությունների ճանապարհ դարձավ:

Այս դրության ըուրոր առավելություններն իտալիան ոգտագործել անկարող ե, քանի զոր շարունակում ե ազգարային յերկիր մնալ:

ԲնԱկԱՆ ՌԱՅՈՒՆՆԵՐԸ:—Իր բնությամբ իտալիան բաժանվում է մայր յամագալին և թերակղզային մասերի: Վերջինիս հետ են նաև կղզիները, Թիրակղզային մասը համարյա ամբողջովին Ապեննիններն են բռնում: Մի փոքր մասը միայն ծովափնյա հարթություններ են: Կղզիները լեռնոտ են (Ետնա հրաբուզին՝ Սիցիլիայում):

Ալպերը շատ բարձր սարեր են: Ֆրանսիակի և իտալիայի սահմանը կտրում է Ալպերի ամենաբարձր կետը—Մոնբլանը (4808 մ.). իտալական մասում միքանի բարձրություններ ևս կան, զորոնցից վոմանք մինչեւ 4000 մետրի յեն հասնում: Բայց և այնպես Ալպերը հետանցանելի յեն: Լեռնանցքները մոտավորապես 2000 մ. բարձրության վրա յեն: Բրեններ լեռնանցքը 1600 մ. բարձրություն ունի: Ալպերը դով յերկաթուղի յե անցնում, զորն այդ բարձրությունը կտրում ե առանց տոններների: Ցերկաթուղին մյուս լեռնանցքները տոննելներով և անցնում:

ՄԵՐՋԱԼՊՅԱՆ ԳՈՏԻ:—Ալպյան աղեղում մի շարք գեղեցիկ լճեր կան, զորոնք իրենց հյուսիսային մասերով մտնում են լեռների սահմանն, իսկ հարավային մասերով մնում են հարթություններում: Լճերը ցուրտ քամիներից պաշտպանված են լեռներով: Հենց ալստեղ եւ իտալական հյուսիսում, միջերկրական կլիմա ու բուսականություն և (ձիթապտղի և լիմոնի ծառեր, խաղող, շագանակ, թթենի և ալն):

Լեռներից աղմկահույզ գետեր են իշխում, զորոնք իրենց հետ մեծ քանակությամբ տիղմ ու ավազ են բերում, զորոնց մի մասը թողնում են լճերում: Տեղաբեղ գետերի շարժիչ ուժն ելիկտրական եներգիայի լե վերածված (սպիտակ ածուխ): Այդ ուժի շնորհիվ հենց լեռներում գործարաններ ու ֆաբրիկաներ են կանգնել: Դրանց թիվը ավելի շատ ե տափարակում, ուր ելեկտրականությունը հաղորդվում ե ելեկտրական գծերով:

ԼՈՄԲԱՐԴՅԱՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆ.—Այս հարթությունը գոյացել ե

Պո գետի բերած նյութերով։ Ալդ նյութերը շատ են պարարտացնում հողը։ Հարթավալրի «կլիման տարբերվում է մասնաւ Խտալիայի կլիմալից։ Նա ցամաքալին-Եփրոպական է (ձմեռային ջերմությունը 0-ից մինչև + 2°)։ Ամառը շատ չող է (հուլիսի կեսին 25°) և հընարավորություն է տալիս բրնձի մշակությամբ զբաղվելու։ Մնացած բուսերը միջին-Եփրոպական են—ցորեն, սիմինդր, կանեփ, թթենի, լեռնալանջերին—խաղող։ Միկենույն հողամասն ուղագործվում է թե դաշտավարության, թե ալգեգործության համար։ Դաշտերի ու բանջարանոցների մեջ թթենի և ուրիշ պտղատու ծառեր են բուսնում, վորոնց լեռբեմն խաղողի վորթն և փաթաթվում ու ծառից ծառ ձբդվում։



Խտալիա։ Ալտեները ցույց են տալիս, թե ինչ ուղղությամբ և ընդարձակվել Խտալիան։

Լեռնային վտակների շարժիչ ուժի ուղագործման շնորհիվ Լոմբարդական հարթության վրա զարգացել և արդյունաբործությունը, մանավանդ տեքստիլ արդյունաբերությունը։ Խսկ հաղորդակցության համար արտակարգ նպաստավոր դիրքն առաջ է բերել լիրկաթուղի-

ների, խճուղիների, ջրանցքների մի խիտ ցանց, վորի շնորհիվ տևետում և զարգացել:

Այս բռլորի հետևանքով Խոտալիալի տաս մասի աղբարնակությունը շատ և խտացել: Միջին խտությունը 140, տեղակեղ նույնիսկ 200-ից ավելի յէ: Այս աղբարնակությունը, վոր կիսով չափ աղբարալին, կիսով չափ արդյունաբերող և, ապրում և թե բազմաթիվ գուղերում, թե արագ զարգացող քաղաքներում:

Առանձնապես արագ են զարգանում համեմատաբար ավելի հարմար գիրք ունեցող Միլան (850 հազ. բնակ.) և Թօուքին (500 հազ. բն.) քաղաքները: Աղբարատիկ ծովի ափին են գտնվում Վենետիկ (170 հազ. բն.) և Ալսոտրիալից գրաված Տրիեստ (300 հազար. բն.) նավահանգիստները:

ԹԵՐԱԿՂՋԱՑԻՆ ՄԱՍ.—Այս մասն արեմուտքում թվով բավական շտար լավ նավահանգիստներ ունի, վորոնց թիվն արևելքում միայն յերկու յէ: Ներքին մասերում կրալին ժայռեր են բարձրանում (Ապեննինյան լեռները), երանք ջուրը հեշտ են անցկացնում, վորից ել ներքին շրջանը ջրի մեծ պակաս և զգում: Դրա հակառակ ծովափերում վորքան տասն կանգնած ջուր և գոյանում: Պրանից ել իրենց տեխնով (մալարիա) վտանգավոր ճահիճներ են գոյացել:

Գետերը ջրասակավ են, ուստի հյուսիսի գետերից ավելի պակաս սպիտակ ածուխ ունեն:

ԼԻԳՈՒՄԻՒԱ: — Սա թերակղու լավագույն մասն եւ ընկած ճենովալի ծոցի (Լիգուրիա) ափին: Հյուսիսից պաշտպանված և լեռներով: Սա ծաղիկների, հարավալին պատուղների և ձմեռալին կուրորտների լիրկիր եւ: Առևտությամբ ամեար վերին աստիճանի նպաստավոր դիրք ունի ձեռնվա քաղաքը (325 հազ. բն.), վոր Միջին Յեկուպային ամենամոտիկ խտալական նավահանգիստն եւ:

Աղբարնակության միջին խտությունը 200 հոգուց ավելի յէ մի քառ. կիլոմետրի վրա:

ՄԻՋԻՆ, ԻՇԱԼԻԱ: — Մակարդակը բաղկացած է Ապեննինյան լեռներից ու Տուկանան և Հռոմեական կաթոլիզմական վոսություններից: Կիման միջիրկրականի յէ՝ խիստ չոր ու շոգ տմառով: Անտառներ չկան, թփուտներ ու արոտներ միայն լեռներում են յերեւմ, ուր տեղումներն ավելի յեն: Այստեղ վոչխար ու այծ են պահում: Հարթավայրերում մշակում են հացարուսեր, տերըասներով իրարից բաժանված լանջերում՝ ձիթենի և խաղող:

Ածուխ չինելու պատճառով արդյունագործությունը յետ եր մնացել, բայց հետո սկսեց Տոսկանայում զարգանալ Անդլիայից բերած

ածխով։ Հետզհետեւ սկսում եւ ողագործվել նաև սպիտակ ածուխը։ Տոսկանան յերկու խոշոր քաղաք ունի՝ Ֆլորենցիա (260 հազար բն.) և Լիվորնո նավահանգիստը (105 հազար բն.)։

Կենտրոնական Իտալիան ագրարալին յերկիր եւ, այնինչ աղպարնակության կեսից ավելին ապրում եւ քաղաքներում և բարձրադիր տառողջ կլիմա ունեցող քաղաքներում։ Դրույտացիք զիշերելու բարձրանում են այստեղ գաշտերից, վորոնք հաճախ բավական հեռու յեն ընկած լինում բնակավայրերից։

Աղգարնակությունը շատ անհամաչափ կերպով եւ դասավորված։ Տոսկանայի հարթության վրա մի քառ. կիլոմետրի վրա ապրում են 100-ից ավելի մարդ, այնինչ Հռոմեականի վրա 50—75, իսկ լեռնալին մասում՝ միայն 50. ծովափնյա շերտը համարչա անմարդարնակ եւ։

Հարթության կենտրոնում եւ ընկած Իտալիայի մայրաքաղաք Հռոմը (720 հազ. բն.): Սա իր մայրաքաղաքային նշանակությունը պահպանել և շնորհիվ իր կենտրոնական դիրքի և գլխավորապես ավելի քան յերեք հազարամյա հնության Հռոմի Իտալիացի միայն քաղաքական կենտրոնն եւ, բայց վոչ յերբեք առևտրական, նույնիսկ կրթական։

ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՐԱՎՈՐԾ. — Հարավում Ապեննինները թողնում են ծովափը և թեքվում ուղիղ գեպի հարավ։ Այստեղ հանքերի ընույթն ելի փոխվում. — Կրայինների փոխարեն բյուրեղացած տեսակներ են։ Արևմուտքում լեռները բոլորովին մոտենած են ծովին։ Լեռնալանջերը մշակված են տերրասներով։ Շատ անգամ դրանց համար մարդիկ հողը զամբյուղներով են կրել։ Տերրասներում տներ ու խաղողի այգիներ են, վորոնց մեջ տներ յերեմն հարթ կտուրներով։

Արևմուտքում միակ հարթությունը Նեապոլիտանիան է։ Այստեղ հողը հրարդարակին եւ Ամեն տեղ հանգած հրաբուղխներ են (վերջին ժամանակում ՔՎ գարում, իսկ հարթության ամենահրավայրային մասում բարձրանում եւ գեռ գործող վեղուվ հրաբողիսը (մոտ 1300 մ.։)։ Նեապոլիտանյան ծոցի կղզիները (Կապրի և այլն) նույնապես հրաբուղխային ծագում ունեն։

Ամառը շոգ եւ յերկարատեւ։ Բուսականությունը միջերկրածովային եւ Ցերկիրը բացառապես յերկրադործական ու ալգեգործական եւ Հարթություններում մշակում են ցորեն, տերրասներում՝ լիմոն, ձիթապտուղ, խաղող նարինջ, Լեռներում թափառական բնույթի անասնապահություն եւ Մոլերում վորսում են զանազան տեսակի ձկներ ու սպունդ։

Աղքարնակությունը գլխավորապես ապրում և քաղաքներում, վորոնք հաճախ ամրոցների տեսք ունեն:

Խորշի բնականից աննման ու հարմար դիրքը պատճառ և զարձել Նեապոլի առևտրական ծաղկման:

Սա իր աղքարնակությամբ Խտալիայի առաջին բազմամարդքագաքն և (մոտ մեկ միլիոն) սակայն համբրա թե զուրկ և արգլունագործությունից:

Աղքիատիկական ծովափի հարավ-արևելքում (Ապուլիա) հողն արգավանդ եւ Այստեղ բավական շատ ցորեն, զինի, ձիթապաղի յուղ և լինում: Մի շաբք բավական աշխուժ նավահանգիստներ ունի, վորոնցից առաջինը Բրինդիզին եւ:

Աղքարնակության խտությունն Ապուլիայում քառ կմ. վրա 100 մարդու յեւ հասնում, նեապոլիտանիայում 200-ից ավելի յեւ, իսկ լեռնալին շրջաններում՝ 50—75 եւ:

Կ.Չ.Զ.Ի.Ն.Ե.Ր.Լ.՝ ՍիցիլիԱ.՝ Սիցիլրկրական ծովի ամենից մեծ կղզին Սիցիլիան եւ նրա բնությունը շատ և հիշեցնում Խտալիայի հարավը: Համարյա ամբողջ Սիցիլիան լեռներով և ծածկված: Կենտրոնում բարձրանում եւ հսկայական Եօնա հրաբուղիսը (բարձրությունը 3¹/₄ կմ): Կլիման ավելի տաք եւ, քան Խտալիայի հարավում (հունվարին 110, հուլիսին 25⁰-ից ավելի տաքություն): Ջմեռը բուսական կյանքը չի ընդհատվում: Աճում են արմավճիր, կակտուս, բանան, շաքարեղեգն, բամբակ: Սիցիլիան այգեգործական և խաղողաբուծական յերկիր եւ:

Ս.Ա.Ր.Դ.Ի.Ն.Ի.Ա.՝ Աղքատիկ լեռնոտ կղզի յեւ—լերկրագործական ու անասնապահական: Աղքարնակության խտությունը՝ 35 մարդ 1 քառ. կիլոմետրի վրա:

Ա.Զ.Գ.Ա.Բ.Ն.Ա.Կ.Ո.Ւ.Թ.Ց.Ո.Ւ.Ն.Լ.՝ Խտալիայի աղքարնակությունը բացառապես խտալացիներից եւ բաղկացած: Միայն համաշխարհային պատերազմից հետևանքով Տիրոլի և Խստրիայի ու Դալմացիայի Խտալիային միացնելու շնորհիվ աղքարնակության մեջ միքանի հարյուր հաղար գերմանացիներ ու հարավ-սլավոններ մտան:

ԽIV և ԽV դարերում արվեստն ու գիտությունները փայլուն ծաղկման հասան, վորից հետո նա ընկավ սոտարելրկրացիների և հոգևորականության աղղեցության տակ: Այս հանգամանքն աղքարնակությունը կուլտուրական աղքատության հասցըց: Ներկայումս աղքարնակության կեսն անգրագետ ե (տղամարդկանց 40%՝ լ, կանանց՝ 50%՝ լ):

Ա.Զ.Գ.Ա.Բ.Ն.Ա.Կ.Ո.Ւ.Թ.Ց.Ա.Ն. ԽՏՈՒԹՅՈՒՆՆ. ՑԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:— Աղքարնակության խտությունը շատ մեծ եւ:

Նախելով տեղական պայմաններին, նա տատանվում է 30—200-ի միջև:

Աղբարնակության աճելությունը գերազանցում է ֆրանսիականին, սակայն պակաս և անգլիականից ու գերմանականից: Ծնունդը պատերազմից առաջ մեծ եր, ներկալում դգալի կերպով պակասի և: Ազգայինակությունը շատ աղքատ և մանավանդ Միջին և Հարավային Խոալիայում: Փոքրիկ քաղաքներում ապրում ե կեղաստ ու կուտակված—խոնավ ու վատառողջ բնակարաններում: Ալսովիսի պայմանների շնորհիվ մեռնողների թիվը մեծ է:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ:—Խոալիան սահմանադիր միապետություն և Սահմանադրության համաձայն գործադիր իշխանությունը թագավորին և պատկանում: Այդ իշխանության կիրառումը դրված և ուստասիանատու նախարարության վրա: Որենսդրական իշխանությունը պատկանում և թագավորին ու պարլամենտին: Ընտրական իրավունքունեն 21 տարին լրացրած տղամարդիկ: Ներկա պարլամենտի մեծամաս նությունը փաշիստներն են: Նրանց առաջնորդ Մուսուլինին Խոալիի իսկական դիմատարն և հանդիսանում:

ՏԱՄՆՉՈՐՐՈՐԴ ԹԵՍԱ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ ԿԱՄԵՐԸ ՄՅՈՒՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԲՆՈՒԹԹԻՆ ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ՅԵՎ ՀՍՏ ՌԱՅՈՆՆԵՐԻ:—Եր տնտեսության ընդհանուր կառուցվածքով Խոալիան խառը տիպի յերկիր և: Այդպիսի գրություն ստացվում է Հյուսիսային Խոալիայի արգունագործության շնորհիվ: Կենտրոնական Խոալիան գյուղատնտեսական յերկիր և արդյունագործական թեքումով:

Հարավային Խոալիան բացառապես գյուղատնտեսական, գլխավորակես արգելործական յերկիր և:

Վորքան ավելի լինք իշխում գեպի հարավ, այնքան անտեսությունն ափելի յե կորցնում իր բազմազանությունը, և ազգաբնակությունն ել ավելի աղքատ և:

Հյուսիսում լիովին ոգտագործված են նրա քոլոր հարուստ ալպիաները—հողը, հացահատիկների և տեխնիկական մշակույթների համար, արտաների խոտերը՝ կաթնատնտեսության համար, սպիտակ ածուխը՝ արգյունագործության համար: Մրանք այնպիսի պայմաններ են, վորոնք նպաստավոր են արտաքին ու ներքին հարաբերությունները զարգացնելու համար:

Միջին իտալիան բնությունից ալնքան բազմազան կերպով չի ոժաված, համեմատարար պակաս ել ոգտագրօծված են բնական հնարավորությունները: Բացի դյուղատնտեսական հնարավորություններից ոգտագործված են նաև ծովալին հարաբերություններին և արգունագործության զարգացմանը նպաստող տվյալները:

Արդյունագործությունը սնվում և անզիփական ածխով:

Հարավային իտալիան ոգտագործել և միայն իրեն գլուղատընտեսական հնարավորությունները.—Նարթությունները հացահատիկների համար, լեռնալանջերը՝ պտղաբուծության և խաղողաբուծության համար, Ապեննինյան լեռների վահա առոտները՝ թափառող վոչխարաբուծության համար:

Իտալիայի գլխավոր դաշտավին հողերը գտնվում են Հյուսիսալին իտալիայում, Կենտրոնական իտալիայի Տոսկանյան հարթություններում, Սիցիլիայում և Հարավային իտալիայում:

Միայն Հյուսիսալին իտալիայումն ե, վոր՝ շնորհիվ լեռներից հոսող գետերի ջրառատության, արհեստական վոռոգումն և կիրառվում, Սիցիլիայում և Հարավային իտալիայում:

Տարեկան մոտ 45.000.000 կվինտալ ցորեն և ստացվում: Այս քանակությունն իտալիային չի բավարարում: Նա ստիպված է լինում տարեկան մոտ 25.000.000 ել դրսից (նաև ԽՍՀՄ-ից) ներմուծել: Սիմբնդր ստացվում և մոտ 25.000.000 կվինտալ վորի մեծ մասը գնում և կերակրի մեջ, իսկ մնացածն արտահանվում ե:

Հյուսիս-արևելքում մշակում են ընալիք տեսակի բըինձ (մոտ 5 միլիոն կվինտալ), կինում և նաև մեծ քանակությամբ կարտոֆիլ:

Կարենոր տեղ և բռնում նաև բանջարաբուծությունը: Ստացվում են պոմիդոր, ձմեռուկ, սեխ, լոբատեսակներ, սոխ, սխտոր, բազմատեսակ կաղամբ, և այլն:

Տեհինիկական մշակույթներից նշանավոր են շաքարի ճակնդեղը և կանեփը: Սրանք մշակվում են հյուսիսում: Գլխավոր լիկամուտն ստացվում և վոչ թե դաշտավին մշակույթներից ու կանաչեղենից, այլ խաղողից, ձիթապատղից, լիմոնից, նարինջից և թթենուց:

Իտալիայի մշակված հողերի մոտ 6% հատկացրած և խաղողին, վորի բերքը Փրանսիականին և հավասար: Զիթենին հասնում և Արպերի լանջերում և թերակղզու վրա: Այս յուղի մշակությամբ իտալիան լիբրորդ տեղն և բռնում (Սպանիայից հետո):

Նարինջ ու լիմոն ստացվում են Լիգուրիայում, Հարավային իտալիայում և Սիցիլիայում: Սպանական լիմոնն ու նարինջն իրենց հատկությամբ ավելի բարձր են:

Գինու, ձիթապատղի, նարինջի ու լիմոնի առևտրից իտալիան

միայն վեաս և անում, սակայն նա հարկադրված է մըցել Սպանիալի, Ալֆիրի, Թունիսի, նաև Կալիֆորնիալի հետ:

Թթենի մշակվում է Հյուսիսային Խտալիայում: Այստեղ ել զարգացել է շերամապահությունը: Այս ճյուղում Խտալիան յերբորդ տեղն է բռնում Յապոնիալից և Չինաստանից հետո:

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ: — Խոշոր անասնապահությունը կենտրոնացած է Խտալիալի հյուսիսում: Ապեննիններում զարգացած է թափառող կամ քոչվոր անասնապահությունը — վոչխարաբուծությունը և աշծարուծությունը: Անասունների քսնակը հարավում արագ նվազում է: Ցերեսի վրա յին մնում նաև դաշտերը: Ազգաբնակությունը փախչում է իր տերկրից, վոր հրաշալի կլիմա ունի, բայց չի կշացնում: Այստեղ գլուզացին հարկադրված է ուրիշի հողը մշակել և, վորպես վարձատրություն, միայն կոպեկներ ստանալ:

ԶԿՆՈՐԾՈՒԹՅՈՒՆ: ԱՐԴՅՅՈՒՆԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ: — Ծովափնյա բնակչության վորոշ նեցուկ և նաև ձկնորսությունը: Ստացվում է նաև ըսպունդ և մարջան, Արդյունահանությունը թուլ և զարգացած: Ստացվում են յերկաթ (Եանա կղզում), պղինձ (Տուկանալում), կապար, ցինկ (Սարդինիայում) և սնդիկ: Ստացվում ենաև մարմար, ծծումբ, բրուակ:

ՄՇԱԿՈՒԴ, ԱՐԴՅՅՈՒՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ: — Եներգիայի միակ տեղական աղբյուրն սպիտակ ածուխն է, վորով Խտալիան այնքան հարուստ է: Նա այդ ածխի ավելի շատ պաշար ունի, քան Անգլիան՝ իր ածխահանքերում: Բնդհանուր պաշարն 8 միլ. ծիու ուժի յե հավասար: Խտալիան քարածուխ չունի. նա Անգլիալից տարեկան մոտ 100 միլ. ոուրլու քարածուխ և ներմուծում:

Խտալիան արդյունագործության զվաճակոր տեսակը տեքստիլն է, վորին սպասարկում ե ինչպես տեղական հումքը (մետաքս, վուշ, մասամբ բուրդ, հարդ և այլն), այնպես ել ներմուծածը (բամբակ, բուրդ և այլն):

Եերամի արմայունագործությունը Խտալիայի մշակող արդյունաբերության ամենապալիսավոր ճյուղերից մեկն է: Նրանով մոտ 800 հազար մարդ և զբաղվում: Մետաքսի մայրաքաղաքը Միլանն է: Հյուսիսային Խտալիայի միքանի մեծ ու փոքր քաղաքներ նույնպես ըզբաղվում են շերամապահությամբ: Մեծ հաջողություն.ունի նաև բամբակագործական արդյունաբերությունը, վոր նույնպես արտահանման նյութ և տալիս: Տեքստիլ արդյունաբերությանը զուգահեռ զարգացած է նաև քիմիականը, վորը մեծ հաջողություն ունի: Մետաղագործական արդյունաբերությունը յերկրորդական տեղ է բռնում, սակայն մեծ հաջողությամբ առաջ և գնում մեքենայականը — մանավանդ հե-

ծանիվների ու ավտոմոբիլների արտադրությունը՝ Ներկայումս Իտալիան ինքն և արտադրում ունեն, շոգեկառքեր, վագոններ:

Իտալացիների համար հին զբաղմունք և նաև ժամապործությունը և յերաժշտական գործիքների արտադրանքը (Միլան):

Դարձալ Հյուսիսային Իտալիայում և զարգացել սննդանյութերի արտադրությունը (մակարոն և ալլ խմորեղիններ, շաքար, պանիր, լիկյորներ), Իտալիան իր արդյունաբերությունը պահպանում է ներմուծվող ապրանքների վրա մեծ մաքս դնելով, սակայն դրան վորապես պատասխան մրուս արդյունաբերական յերկրներն ել մեծ մաքս են դնում իտալական ապրանքների—գինու, նարնջի, լիմոնի, մետաքսի վրա, փորից ամենից շատ հարավային Իտալիան և տուժում:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ.—Միայն Հյուսիսային Իտալիան ե, զոր յերկաթուղինների խիտ ցանց ունի Ալդ յերկաթուղիններից շատերը միջազգային նշանակություն ունեն: Յերկաթուղինների ընդհանուր յերկարությունը 18.000 կիլոմետր ե: Իտալիական գետերից նավարկելի լին միայն Պոն և Ազիֆեն: Հյուսիսային Իտալիան բազմաթիվ ջրանցքներ ունի, սակայն դրանք ավելի շուտ վոռոզման, քան նավարկության համար են:

Գլխավոր նավահանգիստ-քաղաքներն են՝ Ճենովան և Նեապոլը: Ալպյան յերկաթուղինների շնորհիվ Ճենովան վոչ միայն Իտալիայի համար ե գլխավոր նավահանգիստ, այլև Շվեյցարիայի, Արևմտյան Գերմանիայի, նույնիսկ Բելգիայի ու Հոլլանդիայի համար՝ Միջերկրականի ափին:

ԱՐՏՎԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒԹՅԸ.—Արտաքին առևտուրն այնքան ել մեծ չե: Գլխավոր ներմուծող յերկրներն են՝ Միացյալ Նահանգները, Մեծ-Բրիտանիան, Գերմանիան, Ֆրանսիան և Արգենտինան: Գլխավոր արտահանողներն են՝ Ֆրանսիա, Շվեյցարիա, Գերմանիա, Մեծ-Բրիտանիա, Միացյալ Նահանգներ և Արգենտինա: Ներմուծման գլխավոր առարկաներն են՝ ցորեն, քարածուխ ու կոկս, բամբակ, բուրդ, յերկաթ ու պողպատ, մեքենաներ, փայտ, ձուկ: Արտահանման գլխավոր առարկաներն են՝ մետաքս, բամբակեղեն, ավտոմոբիլներ, նարինջ ու լիմոն, գինի, պանիր: ԽՍՀՄ-ի հետ առևտուրն սկսել ե արագ զարգանալ միայն 1924 թվականից 1924 թվականից սկսած: Վերջին հնդամակառական առևտուրն ե արտադրանքի ցործվածքներ, նարինջ ու լիմոն: Ներմուծումն արտահանումից 1½ անգամ ավելի յերկել: Հնդամայակի ընթացքում (1920—1924 թ.թ.) ներմուծումը միջին թվով տարեկան 1400 միլիոն ռուբլու յերկել:

ՏՈՒՐԻՍՏՆԵՐՆ ԻՏԱԼԻԱՅՑՈՒՄ: — Ոտարերկրյա ապրանքների համար Խոտալիան ավելի էն վճարում, սակայն այդ ավելցուկ ծախսը նածածկում և տուրիստներից ստացածովք Խոտալիա այցելող տուրիստների թիվը ահազին ե, վորոնք ալդաեղ հարյուրավոր միլիոն լիրա (իտալական դրամ, վոր պատերազմից առաջ 37 կոպ. արժեքը, իսկ ալժմ՝ 10 կ.) յեն թողնում:

Ոտարականներին գրավողն Խոտալական բնության գեղեցկությունը, նրա մեծ գեղարվեստագետների նկարներով ու արձաններով հարուստ թանգարանները, աննման ճարտարապետական հիշատակարաններն ու քաղաքների գեղարվեստական դիրքն են, ինչպես նաև նրանետ կապված պատմական հիշողությունները: Առանձնապես գրավիչ են վենետիկը, Ֆլորենցիան, Հռոմը և նեապոլը: Վենետիկի, Ֆլորենցիային ու Հռոմի ներկան անհամեմատ ավելի աղքատ ե, քան անցյալը:

Վենետիկը մի ժամանակ «Աղրիատիկի թագուհին» և Միջներկրականի ափին առաջին առևտրական քաղաքն ե համարվել: Նա ընկած է կղզիների վրա, վորոնք իրարից ջրանցքներով են բաժանված: Թաղաքում հազորդակցությունն ըստ մեծի մասին զոնդոլներով եր կատարվում, ներկայումս գոնորևներին փոխարինում են փոքրիկ շոգենավերն ու մոտորավոր նավակները: Տրիհստի և Շենովայի շնորհիվ Վենետիկի առևտուրը սաստիկ ընկել ե, սակայն մնացել են մարմարեպալատներն ու հրաշալի պատկերասրահները: Ֆլորենցիան ԽV և ԽVI դարերում հարուստ առևտրական ու արդյունաբերական քաղաք եր: Հենց այդ ժամանակից ել հրաշալի ճարտարապետական արձաններ ու նկարների ու հիշատակարանների աննման ժողովածուներ են մնացել: Հռոմն Խոտալիաի թե կրօնական, թե աշխարհիկ մալրաքաղաքն ե (թագավորի և պապի աթոռանիստը): Սակայն վոչ իր արդյունաբերությամբ, վոչ իր առևտրով, վոչ աղքարնակության թվով, վոչ իր կուլտուրական նշանակությամբ սա Խոտալիայի առաջին քաղաքը չե: Նա ընկած է անապատ տեղ ու շրջապատված է կանգնած ջրերով: Սակայն նա գրավում ե հռոմեական թատրոնների ու այլ շենքերի գիտահեղ ավերակներով, իր այգիների գեղեցկությամբ, բանվորական թաղերի գեղարվեստականությամբ: Խոտալիայի ամենաբազմամարդ քաղաքը նեապոլն ե: Սա Խոտալիայի իրկրորդ նավահանգիստն ե: Վերջիրս նա իր արդյունագործությունը մի փոքր ավելի յե զարգացրել, սակայն ազգաբնակությունը շատ աղքատ ե:

ԱՐՏԱԴԱՂԹ: — Միջին և Հարավային Խոտալիան բացառապես ագրարային լերկիր ե, մինչդեռ գյուղացին ուրիշի հող ե մշակում, վորովհետեւ ալստեղ գերակռող են խոշոր կալվածատերերն, իսկ գլուղա-

ցին միայն կտպալառու լի հանդիսանում: Հյուսիսում տիրապետողը մանր-զյուղացիական սեփականությունն է, բայց այդ սեփականում յուշներն այնքան մանր են, վոր գյուղացին սահպված է լինում կողմանկի աշխատանքի դիմել: Հյուսիսում նրան ոգնում և նոր ծնունդ առնող տրդյունագործությունն, իսկ Հարավային Խտալիայում վոչ մի կողմանակի աշխատանքը չկա: ուստի ազգաբնակությունը իմքերով ուտար յերկիր և գաղթում: Պատերազմից առաջ Խտալիայից տարեկան 500 հազար մարդ եր հեռանքում, պատերազմի ընթացքում զաղթը կրծավից, սակայն նորից սկսեց աճել և հասնել տարեկան 300.000-ի: Ամենից շատ Միացյալ Նահանգները, Բրազիլիա և Արգենտինա յեն զնում: Վերջերս ուժեղ հոսանք և նկատվում նաև դեպի հարեւան Ֆրանսիա: Յերկշուր կրելով ազգաբնակության կրծատումից, Խտալիայի դիկտատոր Մուսաուինին սկսել է գաղթն արգելել:

ԳԱՂՈՒԹՆԵՐ:—Խտալիայի ամենից կարեռը գաղութը վերջիրս Տաճկաստանից խած Տրիպոլիտանիան կամ Լիբիան և (մեկ մել քառ կիլոմետր, մեկ մել ազգաբնակությամբ): Սրա մեծ մասն անապատ է, սակայն ծովափնյա մասը յերբեմն շատ արդավանդ և լիղել: Այդ արգավանդությունը կարելի է վերականգնել վոռովման միջոցով: Բացի զրանից Խտալիան Աֆրիկայում յերկու սակավարժեք կալվածներ ևս ունի—Կարմիր ծովի ափին մի փոքրիկ շերտ, վոր հարեւան և Հարեշտանին, և Սոմալի թերակղու արեւելյան ծալրը: Լողանի գաշնագով Խտալիան ստացավ նաև Հոռոոս կղզին՝ Փոքր Ասիայում:

ՄԵԾԱՊԵՏԱԿԱՆ ԶԳՑՈՒՄՆԵՐ:—Թե իր, թե ոտար կառավարիչներն ու հոգեորականությունը դարեր շարունակ ավերել են Խտալիան: Մեծ ջանք և պահանջվել, վորպեսողի կարելի լինի վիրականգնել ավերված տնտեսությունը: Այդ աշխատանքին Խտալիան անցավ միայն միացյալ Խտալիայի անկախությունը գլուխ բերելուց հետո (1870 թ.): Բայց դեռ վոչինչ չարած, նոր կառավարությունը մեծ պետության իրավունքներով դաշնակցեց Գերմանիայի և Ավստրո-Հունագարիայի հետ: Հսկալական գումարներ ելին պետք՝ զորք և զինվորական նավատօրմ պահելու համար: Խտալիան մեծ պարտքերի մեջ խըրվեց: Ազգաբնակության վրա մեծ հարկեր զրին, վորոնք փոխանակ տնտեսական շինարարության ու կուտուրական խնդիրների վրա ծախսելու, ծախսում ելին բանակի պահպանության և պարտքերի տուկուները տալու վրա:

Պատերազմի ժամանակ Խտալիան լքեց իր նախկին դաշնակիցներին ու միացավ Ֆրանսիային ու Անգլիային:

Պատերազմից հետո նա, վորպես վարձատրություն, հողամաս

ստացավ, բայց պարտքերով ավելի ծանրաբեռնվեց և ավելի յենթակա դարձավ ոտար, մասնավորապես անգլիական կապիտալին: Հետզհետեւ աճող բանվորական դժոնությունների դեմ պայքարելու նպատակով ֆաշիստական խմբեր են կազմակերպվել: Նրանք բությունուազիայի և կավածատերերի մարտական խմբեր են, վորոնց նպատակն է կռվել կոմմունիզմի և ընդհանրապես բանվորական շարժման դեմ:

Ամերիկայի գլուխն ինչպես անդրադարձավ Իտալիայի առետրի վրա:

Ինչու Սուեզի ջրանցքի բացումը լավացրեց Իտալիայի գլությունը:

Իտալիայի համար ի՞նչ կարեւրություն ունի Ալպյան յերկաթուղին:

Իտալիայի վեր մասերը զուտ ազրարային բնույթ ունեն:

Ինչու արդյունաբերությունն ու հաղորդակցության գլխավոր ճանապարհներն ըստ մեծի մասին Հյուսիսային Իտալիայում կենտրոնացան:

Ինչու Իտալիան առանձնապես մետաքսագործությամբ աչքի ընկավ:

Ինչու Իտալիայում թուշ ձուլելու փոխարեն մեքենայաշինությունը զարգացավ:

Ի՞նչպես ե ազգում հսկարական արտագաղթն Իտալիայի ժողովրդական տնտեսության վրա:

Ի՞նչ գիտեք հսկարակագիտությունից՝ 1) Իտալիայի պայքարի մասին իր աղատության համար. 2) Փաշիզմի և նրա դերի մասին՝ Իտալիայի կանքում:

ՅԵԶՐԱԳԱԿՈՒՄՆԵՐԻ:—Իտալիան բոլոր տվյալներն ունի զարգացած գյուղատնտեսական, ալյուգործական և տեղական ու դրսիքարածխով տարվող արդյունագործական յերկիր գառնալու համար: Սուեզի ջրանցքի և Ալպյան տոննելների բացումն Իտալիային հաղորդակցության կարեւոր տեղ տվավ և դգալի կերպով ուժեղացրեց նրա տրանզիտային առևտուրը: Սակայն իտալական ֆեռալաների և բուրժուազիայի իմպերիալիստական ձգտումները, վորոնք պատերազմից հետո Փաշիզմի վերածվեցին, յերկիրը դեպի քայլայում են տանում:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՑԱԼ ՆԱՀԱՆԴՆԵՐԸ

Մակարդակը—Տ միլ բառ. կլմ., ազգաբժակուրյունը 115 միլ., զաղութքները 1,9 միլ. բառ. կլմ., ազգաբնակուրյունը—14 միլ.:

ԲՆՈՐՈՇՈՒՄՆ:—Միացլալ-Նահանգները բացառիկ նպատակով դիրք ունեն, նրանք բնական արտադրական ուժերի հսկայական հա-

ըստություն ունեն և կարողացել են հսկայական նվաճումներ ձեռք
բերել գլուղատնտեսության, հանքային արդյունագործության, ին-
դուստրիալի, առևտրի, կապիտալի կուտակման և նրա շահագործման
ասպարիդում։ Այս յերկիրը կապիտալիստական յերկրների շարքում
ամենից ուժեղը և ամենից հարուստն եւ

ՏԱՄՆՀԻՆԳԵՐՈՐԴ ԹԵՄԱ

ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԵՐԻ ԲՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ ՅԵՎ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դիրքը ՅԵՎ ՄԱԿԵՐԵՎՈՒԹՅՈՒՆ—Համբ քարտեզի վրա նշա-
նակեցեք. 1) սահմանակից պետությունները. 2) Ֆլորիդա, Կա-
լիֆորնիա, Ալֆասկա թերակղզիները. 3) Կուրա, Հայիթի, Պորտո-
Ռիկո, Յամայիկա կղզիները. 4) Ատլանտյան և Մեծ ովկիանոս-
ները. 5) Հյուսիսային բևեռալին, Բերինգի, Կալիֆորնիալի, Մեք-
սիկալի, Կարայիրյան ծովերն ու ծոցերը. 6) Բերինգի, Ֆլորիդա-
լի նեղուցները։

Քարտեզի վրա նշանակեցեք—Ապալաչի, Սիերրա-Նեադա-
լի, Կասկադյան, Ժալոստ, Կորդիլլերի լեռները, Միսսիսիպիի
հարթությունը. Յուտալի սարահարթը. Միսսիսիպի, Միսսուրի,
Ոհայո, Իլինոյս, Արկանզաս, Կոլումբիա, Կոլորադո, Նիագարա,
Խեղոն գետերը. Վերին, Միչիգան, Հուրոն, Երի և Ռինարիո
լճերը։

Ի՞նչ զուգահեռականներով են անցնում հյուսիսային և հա-
րավային սահմանները։

Մասշտաբով հաշվեցեք հյուսիսից հարավ և արևելքից ա-
րևմուտք ընկած տարածությունը։

Միացյալ Նահանգները միակ մեծ պետությունն են, վոր միա-
ժամանակ յերկու ովկիանոսով ե պատաճ—Մեծ և Ատլանտյան։ Հա-
րավորմ ու հյուսիսում բնական սահմաններ չունեն։ Այս հանդամանքը
հնարավորություն ե տալիս նրանց (մանավանդ հարավում) ընդարձակ-
ելու թույլ հարևանների հաշվին։



Միացյալ Նահանգները յերկու ովկիանոսների միջև:

Հանրապետության հյուսիսն ընկած և պարիզյան լայնության 49 աստիճանի տակ, իսկ հարավը մոտենում և Խեցգետնի արևադարձին: Լայնությամբ ընկած տարածությունը (Աշլանտյան ովկիանոսից մինչև Մեծ ովկիանոսը) հսկայական և: Այդ տարածությունն անցնելու համար արագ գնացքով 5 որ և հարկավոր:

ՈԵԼՅԵՖԸ: — Տարածության մեծությանը համապատասխանում են Միացյալ Նահանգների կառուցվածքի խոշոր բնութագծերը: Արևմուտքում շատ բարձր լեռներ են, վորոնք իրենց մեջ ընդարձակ սարահարթներ ունեն՝ 1200—2000 մ. բարձրությամբ: Արևմուտքի լեռները կտրում են Ատլանտյան ովկիանոսից փչող քամիների բերած խոնավության առաջը, այնպես վոր նրանցից գեղի արևմուտքը ընկած սարահարթներն աչքի յեն ընկնում իրենց ծալքահեղ չորությամբ:

Միայն Մեծ ովկիանոսի ափն և, վոր վորոշ չափով ատմոսֆերային խոնավություն և ստանում:

Դեպի Մեծ ովկիանոսը հոսող գետերից շատ քչերն են նավարկելի: Վերջիններիս ամբողջ լերկարությունը 2600 կիլոմետր և, այնինչ գեղի Ատլանտյան ովկիանոսը և Մեքսիկայի ծոցը հոսող նավարկելի գետերի յերկարությունը 39,400 կմ: Ե: Ժայռոտ լեռներից գեղպի արևելք յերկիրն սկսում է հետզհետե իջնել և վերածվել Մեծ հովվիթ, վոր կազմում և Միսսիսիպի գետի ավաղանը: Այս հովիտն իր բնությամբ (ավելի խոնավ մասերում) անտառալին և, իսկ ավելի չոր մասերում՝ անապատալին: Մեծ հովտի հլուսիւը կանադալից բա-



Արևոտնական գոտիների քաղաքացիության մասին լուրեր

ժամանակում ե կատարված ներքին ծովով—հինգ մեծ լճերով, վորոնք
գտնվում են լեռների պետությունների տիրապետության տակ՝ լճերը

միւնում մակարդակի վրա չեն. տուանձնապես մեծ և Երի և Անտարիու լճերի միջն ընկած թերգվածքը: Հենց ալստեղ ել Նիազարա փառահեղ ջրվեժն և գտնվում: Նավարկության համար անխորտակելի արգելքը ներկայում վերացված և մի ջրանցքով: Լճի բնական յելքը — Ս.-Լավրենտիսիոսի գետն սքանչելի նավարկելի ճանապարհի յե վերածված: Դժբախտաբար սա լել յերկար ժամանակ սառուցով ծածկված և մնում:

Հարթության արևելքում բարձրանում են Ապալաշի կամ Ալեգրոնյան լեռները, վորոնք ըոլորովին հյուսիսում մոտենում են ափին: Այստեղ ափը բարձր և և խիստ կտրտված: Այստեղ մի շարք ընդարձակ և խոր խորշեր կան, վորոնց մոտ գոյացել են հոչակավոր Բոստոն և Նյու-Յորկ նավահանգստային քաղաքները: Զիղապիկ ծոցից հարավ ծովափն ընդարձակվում և և լեռների ու ծովի մեջ 4—500 կմ². Լայնության հարթ տարածություն և մնում: Ափերն ալստեղ ցածր են: Շատ տեղ ծովի ու ցամաքի մակարդակի տարբերությունը համարյա աննկատելի յե:

ՄԻԱՑԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՌԱՅՈՆՆԵՐԸ: — Աշխարհագրական դրության, մակերեսութի պայմանների, կլիմայի և վոստովման տարբերությունները թույլ են տալիս Միացյալ Նահանգները հինգ բնական շրջանների բաժանել վորոնցից լուրաքանչյուրը մեծ և Արևմտյան Յելլուպալի ուղածդ պետությունից: Դրանք են: 1) Հյուսիս-արևելյան կամ Ատլանտիան ովկիանոսի ու լճերի շրջան, 2) Կենտրոնի հարթություն, 3) Հարավ, 4) Արևմուտքի հարթություն և 5) Մեծ-ովկիանոսյան ափ:

ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՔԻ: — Ենքրոպային ամենից մոտ ընկածը հյուսիս-արևելքն ե: Թե իր մակերեսութով, թե մեղմ կլիմայով, թե հաղորդակցության սքանչելի ճանապարհներով նա անգիտացի զաղթականներին ամենից շատ և հիշեցրել իրենց հալրենիքը: Ամենից առաջ այդտեղ անգիտացի գաղթողները հաստատվեցին, վորոնք ամերիկյան հողի վրա «Նոր Անգլիա» ստեղծեցին: Սա գործարանային արդյունաբերության և ֆերմերական յերկրագործական տնտեսության յերկիր ե: Հյուսիս-արևելքը զարմանալի հարուստ և յերկաթով, քարածնով, նավթով, պղնձով: Գործարանալին արդյունաբերության համար առանձնապես գնահատելին այն ե, վոր այստեղ են գտնվում Պենսիլվանիայի և Ապալաչյան լեռների քարածխի ավազանները, վորոնց տարածությունը (750 հազ. քառ. կմ²) մեկուկես անգամ մեծ և Ֆրանսիայից:

Հյուսիս-արևելքում և գործի դրվել ամերիկյան կապիտալն ու ամերիկյան նախաձեռնող վողին: Այստեղ մի շարք խոշոր քաղաքները

կան, ալստեղ են կենտրոնացած հսկայական տրեստներն ու կարեռագույն ձեռնարկություններ. այստեղ են գալիս գաղթականների գլխավոր հոսանքն, այստեղ են կատարվում ամենախոշոր առևտրական շըբջանառությունները: Այս շրջանը կենսամթերքների մեծ կարիք ունի. առատորին արտահանում ե իր ֆարբիկատները:

ԿԵՆՏՐՈՆ:—Կենտրոնի հարթությունն այն մեծ հովիտն ե, վորի ջրերը հոսում են Միսսիսիպի գետի սիստեմով: Առաջներում նա իր անտառներում ու անապատներում միայն խղճուկ սնունդ եր տալիս հսկիկ-վորսորդներին: Ցելքոպացիք այստեղ սկզբում միայն անասնապահությամբ ելին պարապում, հետագայում մուտք գործեց նաև յերկրագործությունը, վորը հետզհետե լայն չափեր ընդունեց: Այստեղ, ուր առաջ միայն անապատի խոտարույսեր ելին խշխցում, այժմ այդ արդավանդ սեահողերում ցորենի և սիմինդրի անսահման դաշտեր են ձգվում: Այս շրջանն աշխարհի խոշորագույն հաց և միս հայթաթողն ե դարձել: Զրային ճանապարհների հարմարությունները, զարգացած յերկաթուղային սիստեմը, նավթային մեծ հարստությունը, ինչպես նաև մեծագանակ յերկաթն ու քարածուխը, զարգացած առևտուր և արդյունաբերություն առաջ բերին, վորն սկզբում դեռ գյուղատնտեսական նյութեր եր մշակում, իսկ հետո՝ տեքստիլ և մետաղագործական: Հետզհետե ամեն ինչ սահմանագծվեց:—Հանքերով հարուստ արևելքում, Ռիայո գետի ավազանում արդյունագործությունն ավելի զարգացավ, իսկ արևմուտքն ավելի ու ավելի մասնագիտացավ և զարգավ Միացյալ Նահանգների գյուղատնտեսական կենտրոնը:

ՀԱՐԱՎ:—Տաք և չոր կլիմա ունի. դարձավ ծիախոտ, բամբակ, արևադարձներին մոտիկ նաև շաքարեղեգնի, բընձի և այլ տրոպիկական և յենթատրոպիկական բուսերի մշակման շրջան: Վերջերս, շնորհիվ Ապավալաշյան ավազանի ածխահանքերի մոտիկության, արդյունագործությունն այստեղ ել ե մուտք գործում:

Մինչև 1861-64 թ. թ. քաղաքացիական պատերազմը Հարավստորկական աշխատանքի և պլանտատորական տնտեսության շրջան եր: Նա միակողմանի բնույթ ուներ, վոր արտահայտվում եր բամբակի մշակությամբ: Բամբակաբուծությունն այսոր ել տնտեսության գլխավոր ճյուղ և մնում, բայց նրան միացել են նաև փայտի տնտեսություն, բամբակի և յերկաթի մշակություն: Խտալացիների իմմիգրացիան շնորհիվ ներքերից բացի սպիտակ բանվորներ ևս յերևացին: Ալլեգանյան լեռների հարավային ծայրը հարուստ և յերկաթի հանքով և ածխով: Բամբակագործական արդյունաբերության համար սեփական բամբակը միանգաման բավական ե: Բարենպաստ պայմաններն իրենց

վրա դարձրին հյուսիսի կապիտալիստների ուշադրությունը: Արդյունաբերությունն սկսեց արագ կերպով զարգանալ: Բիրմինհեմ քաղաքը (Ալաբամա շտատ), վոր հիմնվել է միայն 1871 թվին, 1920 թվին արդեն 180 հազ. բնակիչ ուներ: Նա դարձավ բամբակագործական, յերկաթագործական և պողպատաձուլական արդյունագործության կենտրոն: Սակայն շրջանի ամենակարենոր բերքեր առաջվա պես շարունակում են մնալ բրինձը, բամբակը, ծխախոտը և շաքարեղեգնը: Անասնապահությունը կարեոր գեր ե խաղում միայն Տեխասում:

ԱՄԵՐԻԿԱՆԻ ՏԲԻՒԹՅՈՒՆ:—Արևմուտքը տառապում և անտանելի չորությունից և գես մոտիկ անցյալում բոլորովին անապատի յեր նման: Բայց յերկրի հանքալին հարստությունները—վոսկին, արծաթը, կապարը, պղինձը, իսկ հետագայում նաև նավթն զգալի թվով ազգաբնակություն գրավեցին, վորոնք հետզհետե հաստատվեցին: այս անհյուրընկալ հոգերի վրա:

Ցերկարգործության համար արհեստական վոռոգման միջոցով բավական հողեր նվաճվեցին: Այսուամենանիք բնակելի ու մշակված տեղերն ուղիսներ մնացին այս կիսանապատ յերկրում:

ԽԱՂԱՂՈՎԿԻԱՆՈՍՑԱՆ ՇՐՋԱՆ:—Խաղաղովկիանոսյան շրջանն աշքի յե ընկնում տաք կլիմայով և առատ վոռոգումով: Նա իր հարավում Միացյալ Նահանգների պարտեզն ու խաղողի այգին և հանդիսանում: Ներկայումս Կալիֆորնիան վոչ միայն Ամերիկային հարավի մրգեր և մատակարարում, այլ և սկսել ե դեպի Ցերկրոպա չորացրած ու պահածո մրգեր ու բանջարեղենն արտահանել: Խաղաղովկիանոսյան շրջանի հյուսիսային մասն առատ հաց և փայտանյութեր և տալիս: Առանձնտպես փառանեղ են Միերրա-Նեադպայի լանջերին ընկած անտառները: Այստեղ են աճում հոչակավոր մամոնտյան ծառերը, հսկայական փշատերե բույսերը, վորոնց բունը հաճուխ 100—120 մ. բարձրություն և 6—15 մ. տրամագիծ և ունենում: Մի ծառի բնից մոտ 90 հազար մետր տախտակ և սղոցվում:

Ժողովրդական տնտեսության մեջ զգալի, բայց վոչ առաջվա, նըման գլխավոր գեր հն խաղում վոսկին, արծաթը, սնդիկը, նավթը: Հյուսիս արևմուտքի սառնորակ ջրերն անասելի հարուստ են ձկներով: Ծովային հաղորդակցության համար կան թեպիտ սակավաթիվ, սակայն հրաշալի նավահանգիստներ:

ԱԶԳԱԲՐԱԿԱՐԻԹՅՈՒՆՆԵՐ:—Միացլալ Նահանգների աղջաբնակությունն ըստ մեծի մասին 2 ցեղից ե բաղկացած—սպիտակ՝ 0,9 (89,7 տոկ.) և սև՝ 0,1 (9,9 տոկ.): Մնացածները—հնդիկները—Ամերիկայի ըլքները և յեկվոր չինացիք ու յաղոնացիք աննշան փոքրամասնություն են կազմում (բոլորը միասին 0,4 տոկ.):

Ամերիկացիք հավատացնում են, թե իրենցում բոլորը հավասար են, սակայն մինչև այսոր ելնեգրերը հալածված են Հարավի շատ քաղաքներում նեղրերին թույլ չի տրվում զիշերելու մնալ. Նրանց նըստելու վագոններն այլ են, հաճախում են միայն իրենց դպրոցները, իրենց թատրոններն, իրենց յեկեղեցիները, արգելվում ե միենույն շնորհում սպիտակների հետ լինելը: Այս հալածանքը հարկադրել ե նեղրերին՝ իրար ավելի մոտենալ, միջոցներ ձեռք առնել իրենց կը թափան մակարդակը բարձրացնելու: Արդեն նեղրերից բավական թըվով բժիշկներ, տեխնիկներ, նկարիչներ, հասարակական գործիչներ կան: Հնդիկներն արագ վոչնչանում են: Զինացիք ու յապոնացիք Միացյալ Նահանգներում իրավունքներ չեն վայելում. Նրանց մուտքն ըստ ամենայնի դժվարացրած են ներկայումս արգելքներ են դնում վոչ միայն բնիկների, այլ և սպիտակների, մանավանդ պակաս ուներների առաջ. նաև նրանց կարծիքով վտանգավոր իդեոլոգիա ունեցողների, հատկապես կոմմունիստների առաջ:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. — Միացյալ Նահանգների աղքարնակությունը կազմվել ե նեղրոպալից յեկած գաղթականներից. Սկսած 1821 թվուց մինչև այժմ Ամերիկա յէ գաղթել մոտ 37 միլ մարդ, վորից 9 միլ. Անգլիայից, շոտլանդիայից և Իրլանդիայից, 6 միլ. Գերմանիայից, 4 միլ. Իտալիայից, 3 միլիոնից ավելի նախկին Ռուսաստանից: Յեղրոպական իմմիգրացիան գեպի Ամերիկա մի մեծագույն պարզեց ե Յեղրոպալից Ամերիկային: Առաջինը յերկրորդին տվել ե իր աղքարը նակության աշխատունակ ու յեռանդուն մասը, այն ել վոչ թե տասնյակներով ու հարյուրներով, այլ միլիոններով: Առանց այս ահոելի ներհոսման Միացյալ Նահանգներն այն չելին լինիլ, ինչ վոր են ներկայումս: Յեթե նրանք հենցիկին միայն բնական աճման վրա, նրանց յերկիրը նույնքան սակավարնակ կլիներ, վորքան և Ավստրալիան: Իսկ այդքան աղքարնակությամբ անկարելի կլիներ ոգտագործել յերկրի բնական հարստությունները: Մեծ ծննդաբերությամբ աչքի լի ընկնում միայն ամերիկյան պրոլետարիատը:

ՔԱՂԱՔՆԵՐԻ: — Առևերի ու արդյունաբերության աճումն անդրադարձել ե նաև աղքարնակության արտաքինի վրա: Ներկայումս գերակշռողը քաղաքային աղքարնակությունն ե: Միայն խոշոր քաղաքներում ապրում ե ամբողջ աղքարնակության մի քառորդից ավելին: Արդպիսի քաղաքների թիվը 70 ե, վորոնցից 25 ունեն մոտ 250 հազարական բնակիչ՝ յուրաքանչյուրը: Դրանից Նյուու-Յորկ ունի 5 $\frac{1}{4}$ միլ. (արվարձանների հետ 8 միլիոնից ավելի), Ֆիկազոն՝ 3 միլիոն, Ֆիլադելֆիան՝ 1.800 հազար: Արվարձաններով միատեղ միլիոնից ա-

վելի ազգաբնակություն ունեն Թոստոնը (1.800 հազար), Պիտիուր-քը յեվ Դեսրոյթը: Մոտ մեկ միլիոն բնակիչ ունեն Լոս-Անձելոս յեվ Կլիվելենգ քաղաքները: Ամենից շատ խոշոր քաղաքներ կան Միացյալ Նահանգների հյուսիս-արևելքում, վոր Միության ամենից արդյունաբերական ու առետրական մասն եւ: Այդպիսի քաղաքներ կան նաև Մեծ լճերի հարավային ափերում: Լճերի մոտերքում լեռկաթի և պղնձի հսկայուկան պաշարներ կա: Նրանց մշակման համար ոգտագործվում եւ Նիսագարայի ջրվեժի ուժը: Տեղափոխության գործն ապահոված է ջրանցքների ու լեռկաթուղիների ցանցով:

Հողի պահապության հետևանքով քաղաքների կենտրոնական մասերում տները դեպի վեր են ցցվում: Տներ կան՝ միքանի տասնյակ հարկանի:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ:—Իր կառուցվածքով այս Միությունն ինքնուրույն պետությունների գաշնակցություն եւ: Այդ պետություններն օտարեներ են կոչվում, վորոնց թիվը 48 եւ Մի հատ ել մայրաքաղաքյան շրջան կա: Դա Կոլումբիան եւ Վաշինգտոն քաղաքով: Շտատներից յուրաքանչյուրն իր գործերում կատարելապես ինքնավար եւ, ունի իր տուանձին պարլամենտն ու առանձին վարչությունը:

Բոլոր շտատներին վերաբերող գործերը վարում եւ միութենական պարլամենտը կամ կոնգրեսը: Միացյալ Նահանգները դիմավորում են ախագահը, վոր ընտրվում եւ 4 տարով: Առերեւոյթ կարծես ժողովը դապետություն եւ, բայց իրոք կառավարողը կապիտալիստների մի խմբակ եւ, վորոնք կաշառում են թե պարլամենտում, թե քաղաքացին վարչություններում՝ ում կամենում են:

ՑԵԶԱՐԱՓԱԿՈՒՄՆԵՐ:—Միացյալ Նահանգների բնական պայմաններն աչքի յեն ընկնում անորինակ հարստությամբ, միաժամանակ նաև բազմազանությամբ: Այսպիսով տնտեսության զարգացման համար ստեղծվում են անչափ շահավետ պայմաններ՝ թե թափի խոշորության, թե նրա զանազանակերպության տեսակետից: Այդ հնարավորությունները կարելի յեղավ ոգտագործել, վորովհնտես Յելլը պայից մեծ գաղթականություն յեկավ այս լեռկիրը:

ՏԱՄՆՎԵՑԵՐՈՐԴ ԹԵՍԱ

ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Դիմուլակամար կազմեցեք՝

ա) Միացյալ Նահանգների ազգաբնակության արհեստականական կազմի: 1920 թվին—գյուղատնտեսությամբ պարագում ելին 26,3 տոկ., հանքագործությամբ՝ 2,6 տոկ., արդյունագործությամբ՝ 30,8 տոկ., տրանսպորտով՝ 7,4 տոկ., հասարակական ու մասնավոր ծառայությամբ՝ 7,5 տոկ., տնային ծառայությամբ և որավարձով՝ 8,2 տոկ.:

բ) Գյուղատնտեսական արտադրությի (1925 թ. 29 միլիարդ դոլար) և ինդուստրիալի (63 միլիարդ դոլար) համեմատական չափի:

Դիմուլակամարի վրա հիմնվելով՝ պարզեցեք Միացյալ Նահանգների տնտեսության ուղղությունը: Գյուղատնտեսական քարտեզի վրա գծեցեք հողերի սահմանները և պարզեցեք—վարսակի, ցորենի, սիմինդրի, բամբակի, արեսդարձային մշակութների և անասնապահական գոտիները: Ի՞նչ միջոցներով կարելի յեր չոր գոտում ցորենի ուազիս ստեղծել: Միացյալ Նահանգների վրա շրջանում ամենից շատ կարող եր արդյունաբերություն զարգանալ (ըստ բնական պայմանների):

Կարեոր հումքով ապահովված են արդյոք Միացյալ Նահանգները:

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:—Միացյալ Նահանգների տնտեսության բնորոշ կողմը նրա գյուղատնտեսական և արդյունաբերական պրոդուկցիայի մեծությունն ե, ինչպես նաև վոչ միայն մշակող արդյունաբերության ու արդյունահանության մեքենալացումն ու կապիտալիզացիան:

Միացյալ Նահանգները խառը տիպի տնտեսության յերկիր են: Վորոշ ույոններում տիրապետում ե մեկ կամ մյուս տեսակը:

Միացյալ Նահանգները, բացի չոր արեմուտքից, վերին աստիճանի հացառատ են: Հողը հրաշալի լի—սևահող և շիկահող, ամառը տաք ե և խոնավ: Հյուսիսային շրջանը (49° և 45° տակ) հսկայական ցորեն ե տալիս: Գրա համար ել ցորենի շերտ ե կոչվում: Հարավում սիմինդրի շրջանն ե: Ցերորդ կարեոր մշակութը վարսակն ե, վոր աճում ե բացառապես հյուսիս-արևելքում: Այս լերեք կուլտուրաներն այնքան տարածություն են գրավում, վորքան հացահատիկները ԽՍՀՄ-ում—մոտ 90 միլ., հեկտար:



Միացյալ Նահանգների յերկրագործական-անասնապահական
ֆերմաներից մեկը:

Հացի սպասման հետ զուգահեռ դարձացել է նաև նրա արդյունաբերությունը, մանավանդ հացի և մսի. Այդ արդյունաբերության զլիսավոր կենտրոններ հանդիսանում են Չիկագոն, Միննեապոլիսը և



Բամբակի բերրի հավաքելը Միացյալ Նահանգներում:

Կանգասը: Ամբողջ աշխարհի համար հացի ու մսի սակագին սահմանողն այդ քաղաքների շուկաներն են:

Հսկայական չափերի յե հասնում նաև բանջարաբուծությունն ու ազգեղործությունը: Տարեկան մեկ միլիարդ ռուբլուց ավելի մրգերի ու բանջարեղենի պահածոներ են պատրաստվում:

Միացյալ Նահանգների գլխավոր տեխնիկական բույսերը ծխախոսն ու բամբակն են: Ամբողջ աշխարհի ծխախոսի մեկ յերրորդը Միացյալ Նահանգներն են արտադրում: Նրանք ավելի յեն տալիս, քան ամբողջ Ցեղուղան միասին առած: «Բամբակի գոտին» հարավն ե, վոր Գերմանիայի մակերեսութից ավելի տարածություն և բռնում: Ինչպես բամբակով, այնպես ել ծխախոտով Միացյալ Նահանգներն ամբողջ աշխարհում առաջին տեղն են գրավում: Ամբողջ աշխարհի առևտրին տալիս են նրան հարկավոր բամբակի $\frac{2}{3}$ մասը, սակայն վաճառում են ամբողջ բերքի միայն $\frac{3}{5}$ -ը. մնացած $\frac{2}{5}$ -ը վերամշակում են իրենք՝ գլխավորապես հյուսիս-արևելքի արդյունաբերական նահանգներում:

ՄեթենԱՅԱՑՈՒՄՆ ՑԵՎ ԿԱՊԻՑԱԼԻԶԱՑԻԱ.—Ամերիկան գաշտավարության և պլանտատորական տնտեսության առանձնահատկություններից մինն ել այն ե, վոր նրանք վոչ միայն մեծ քանակությամբ են արտադրում, այլև գիտեն ծայր աստիճան մեքենայացման հասցնել: Ամեն ինչ կատարվում ե մեքենաներով, շոգեգութաններով, հնձող կապող ու ծեծող մեքենաներով: Ցորենը ծեծվում ու մաքրվում է հենց արտում, վոր հետո արկղներով փոխադրվում և մոտակա քաղաքը կամ յերկաթուղու կայարանը: Բանվոր ձեռքը շատ և քիչ՝ համեմատած հսկայական դաշտերի, անտառների, ձեռք բերած հանքերի ու նրանց վերամշակման հետո: Այս պատճառով ամեն տեղ, ուր միայն հնարավոր ե, նույնիսկ առորյալ կյանքի աննշան դեպքերում, մարդու աշխատանքը փոխարինված ե մեքենաներով:

Ցեղուղական պետությունների մեծ մասում տիրապետողը մանր հողատիրական սիստեմն ե: Միացյալ Նահանգներում, ընդհակառակին՝ տիրապետողը խոշոր և միջակ տնտեսություններն են: Միայն հյուսիսարևելքում գոյություն ունեն մանր ֆերմաներ (այստեղ յուրաքանչյուր տնտեսություն ֆերմա յե կոչվում): Սակայն այստեղ ել հողն և վատ, տմառն ել բաղական ցուրտ և լինում, իերկարագործությունը ձեռնտու չե, ուստի ֆերմաները լիքվում են:

Գյուղատնտեսությունը մեքենայացնելու համար մեծ դրամագըլլում, կապիտալ ե պահանջվում: Կապիտալ ե հարկավոր նաև հողեր ձեռք բերելու համար, վորոնք այժմ մեծ գին ունեն: Ֆերմերներն ըս-

տիպված են լինում պարագեր անել (1920 թվին նրանք բանկեցին պարտք եյին 8,5 միլիարդ դոլար): Սրա հետևանքը թույլ ֆերմերների տնտեսական քայլքալումն է: Հողերն անցնում են բանկերի ու խոշոր կապիտալիսաների ձեռքը, վորոնք իրենց կալվածներն իսկական հատիկալին ֆարմիկա լին գարձնում:

Անասնաբուժական մթերքների մշակումը նույնպես մեքենայացված է: Զիկագոյի, Կանզասի և յերկրագործական շերտի միքանի ալ քաղաքներում տարեկան 60 միլիոնից ավելի անսառւն (տավար, վոչխար, հորթ, խող) և վերամշակվում: Այսաեղ միլիոնսավոր ուռելիների միս և պատրաստվում, վոր վաճառվում և թե յերկրի ներսում, թե արտասահմանում (մասամբ սասցրած, մասամբ պահածո, վորպես վետչինա, ապխտած ճարպ, յերշիկ և ալին): Միացյալ Նահանգներն առանձնապես հարուստ են խողով (աշխարհում առաջինը) և տափարով (Հնդկաստանից հետո յերկրորդը): Ամերիկական անտառները ևս հսկայական հարստություն են կազմում, վորոնք, սակայն, անխնա վոչնչացվում են: Ասենք Միացյալ Նահանգներում ուրիշ շատ բնական հարստություններ ևս այդպես անխնա վոչնչացվում են՝ առանց ի նկատի առնելու յեկող սերունդը: Ասպես են՝ հողը, վոր տեղ-տեղ նույնիսկ պարարտացման չի լինքարկվում, հանքերը, նույնիսկ մարգիկի, վորոնցից անխնա կերպով վերջին ուժերն են՝ քամում:

ՀԱՆՔԵՐԸ:—Միացյալ Նահանգների հանքերը զարմանք են պատճառում թե իրենց բաղմատեսակությամբ, թե հսկայական պաշարներով: Պղնձի հանքով Միացյալ Նահանգներն առաջին տեղն են ըռում: Պղինձը գլխավորապես ամերիկական հանք և համարվում:



Միացյալ Նահանգների բնական հարստությունները
և նավթատար խողովակները,

Քիչ չեն նաև յերկաթը, պողպատը, կապարը, ալլցումինը, քարածու-
խը և նավթը: Վոսկու հանքերով Միացյալ Նահանգները միայն հա-
րավային Աֆրիկայից և Ավստրալիայից են լեռ մնում, իսկ արծաթով՝
միայն Մեքսիկայից:

ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼԻԱ:—Ամերիկայում արդյունաբերությունն սկսեց ա-
րագ զարգանալ XIX դարի յերկրորդ կեսից: Դրան նպաստեց հումքի
ահռելի հարստությունը (Ամերիկան բացառապես իր հումքն և վերա-
մշակում) և եներգիայի հարստությունը (ածուխ, նավթ, ջրվեժներ):
Պակաս դեր չեն խաղում նաև մեծաքանակ յերկոպացի բանվորների-
դալը, ամերիկական զարմանալի նախաձեռնությունն ու: Հնարագի-
տությունը, խոշոր կապիտալը, ջրային ճանապարհների ու յերկաթու-
ղիների խիտ ցանցը: Համաշխարհային պատերազմից առաջ իրենց ար-
տադրած ապրանքների արտահանությամբ յետ եյին մնում Անգլիա-
յից ու Գերմանիայից: Ներկայումս յերկուսին ել գերազանցում են,
սակայն դեռ յետ են մնում ամբողջ Յերկոպացից՝ միասին առած: Զպի-
տի մոռանալ վոր Միացյալ Նահանգ-
ներն իրենց տարածությամբ հավա-
սար են Յերկոպային, այնպես վոր
ավելի ճիշտ կլիներ համեմատել վոչ
թե առանձին պետությունների, այլ
ամբողջ մայր ցամաքի հետ:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ՏԵԽԱԿՆԵՐԸ ՅԵԿ. ՆՐԱՆՑ ԱՇԽԱՐՀԱ-
ԳԻԱԿԱՆ ԲԱՇԽՈՒՄՆ:—Միացյալ Նա-
հանգներում արդյունաբերությամբ
զբաղված են ավելի քան 12 միլիոն
մարդ: Արդյունաբերության ամենից
խոշոր ճյուղերը նրանք են, վորոնք
հանքերն ու գյուղատնտեսական հում-
քըն են վերամշակում—մետաղարդու-
նաբերություն, տեքստիլ արդյունա-
բերություն, կոշկեղենի և հագուստի,
սննդեղենի և փայտեղենի մշակումն:

Մետաղի արդյունաբերությունը
գլխավորապես կենտրոնացած է հյու-
սիս-արևմելքում, ուր մեծ քանակու-
թյամբ հանքային վառելանության կա, և ուր հժան ջրային ճանա-
պարհներով հումք է բերվում Վերին լճի ափերից: Սննդալին ար-




Միացյալ Նահանգների արդյունագոր-
ծական շրջանները և Հար. Ամերիկայի
արևմտյան յեղեքը միացնող հին և

նոր ճանապարհը

թյամբ հանքային վառելանության կա, և ուր հժան ջրային ճանա-
պարհներով հումք է բերվում Վերին լճի ափերից: Սննդալին ար-

զգունաբերությունը զարգացած և զլիսավորապես կենտրոնական լեռկագործական և հարավայիշն այլեղործական շրջաններում։ Մետաղամշտկման արդյունաբերության մեջ առանձնապես աչքի յեն ընկնում շողեկառքերի և մեքենաների արտադրանքը, զգուշանական մեքենաները, ենեկարական արդյունաբերությունը, ավտոմոբիլների գործը (Միացյալ Նահանգներն ունեն 25 միլ. ավտոմոբիլ - 5 մարդուն մի ավտոմոբիլ), տեխսալի արդյունաբերության մեջ Միացյալ Նահանգներն առաջին տեղն անցան բամբակի վերամշակությամբ։ Նրանք Անգլիայից յերկու անգամ ավելի յեն վերամշակում։ Արագ կերպով տուաշին տեղն անցան նաև շերտմաղահությամբ (աշխարհի շերտմի գերկու իրրողը)։



Կանադայի և Միացյալ Նահանգների
պիտույք սբուռուկաները:

Համ ու սննդային արդյունաբերության մեջ հսկալական չափերի յին հասել ալյուրն ու զանազան թխվածքները: Նույնը պիտի ասել ծխախոտի մասին: Աչքի ընկնող քանակով են պատրաստվում նաև շաքարն ու զանազան պահածոները (*մըգերից, բանջարեղեններից, մսից, ձկներից*) և մսեղենը: Շատ ե խոչըր նաև ձեռնոցների ու կոշկեղենի արտադրանքը (գործարաններից մեկն որական 2200 զուգ կոշիկ ե պատրաստվում): Միայնալ նահանգներն առաջին տեղն են բռնում նաև կենդանական ու բուսական լուսերի վերաժշակությամբ:

ըրողների, տրեստների ձեռքում: Տրեստների մայր գումարները միլի-արդավոր դոլլարների յին հասնում: Միացյալ Նահանգների ազգաբը-նակության 90%-ի ձեռքում և գտնվում ժողովրդական հարստության 70%-ից ավելին, վոր 1923 թվին զնահատվել և 230 միլիարդ դոլ-լար: Ամեն ինչ տրեստացման և լինթարկվում, վոչ միայն արդյունա-րերությունն, այլ և բանկերը, յերկաթուղիները, նավատորմը, հեռա-դիրը, հեռախոսը, քաղաքային լուսավորությունը, թատրոնները, զա-սագրերի, թերթերի ու ժուրնալների հրատարակությունը, նույնիսկ կաթնավաճառքը: Ամենից ուժեղ տրեստները, վորոնք միացնում են համապատասխան ճյուղի ու վաճառքի 70—80 տոկոսը, հետեւալներն են. պողպատի, նավթի, պղնձի, մոխ, շաքարի, ծխախոտի, մրգի, կաշ-վի, ալյուր աղալու, հնձող մեքենաների:

Տրեստները վոչ միայն իրենց են լինթարկել Միացյալ Նահանգ-ների կյանքն ու այդ ժողովրդի խսկական կառավարությունը դարձել, այլ և նրա արտաքին քաղաքականությունն են վարում: Նրանց մր-ջամտության շնորհիվ եր, վոր Կուրքան ապստամբեց Սպանիայից, վո-րից հետո շաքարով ու ծխախոտով հարուստ այս կղզին փաստորեն միացավ Միուցյալ Նահանգներին: Նույն ձեռվ ապստամբեցին ու Մի-ացյալ Նահանգներին միացան Ֆիլիպպինյան կղզիները: 1915 թ. Մեք-սիկայում սկսված յերկարատև հուզումներն առանց նավթային տրեստի միջամտության չելին:

Բանվորների մեջ գերակշռող դեռ համաձայնողական հոսանքն ե, վորը բոլորովին ուժասպառ և անում չորսմիլիոնանոց «Աշխատան-քի Ամերիկան ֆեդերացիան»: Կոմմոնիստական կուսակցությունն այնտեղ դեռ փոքրամասնություն և կազմում:

ՏՐԱՆՆՍՊՈՐՏԸ ՈՒ ԱԽԵՎՏԾՈՒԻՑԸ: — Միացյալ Նահանգներն արե վելքից արևմուտք և հուսիսից հարավ հսկայական տարածություն են գրավում: Նրանց առանձին մասերն աչքի լին ընկնում ընական պար-մանների զանազանակերպությամբ: Այդ պատճառով ել տարբեր նա-հանգներում արդյունաբերությունը շատ և զանազանակերպ: Այդ նա-հանգներն իրար հետ հրաշալի կերպով կապված են ջրային ճանա-պարհներով ու յերկաթուղիներով և հեշտությամբ կարողանում են լի-րենց արտադրանքը հեռուները գցել: Այս հանգամանքի շնորհիվ ա-ռանձին շրջանները կարողացան մասնագիտանալ արտադրանքի վո-րոշ ճյուղում: սա լի պատճառ դարձավ հսկայական ներքին առևտուրի, վորը տասն անգամ գերազանցում և արտաքինին:

Ի՞նչ բնական առանձնահատկություններ են մասնագի-տացըել այս կամ այն շրջանը:

Խոնչ ներքին կապեր ունի շրջաններից յուրաքանչյուրը:
Վմբ շրջանն ե ամենից մեծ գերը խաղում եքսպրոտում և
հատկապես ի՞նչ ե արտահանում:

Խոչո՞վ պիտի բացատրել Միացյալ Նահանգների մեքենա-
յացումը և կապիտալիզացիան:

Վորոնք են գյուղանտեսության զլիսավոր առանձնահատ-
կությունները:

Խոչո՞վ և բացատրվում Միացյալ Նահանգների արդյունա-
րերության ներկայիս աշխարհապրական բաշխումը:

Խոչո՞վ և բացատրվում Միացյալ Նահանգների հակարական
ներքին առևտուրը:

Համբ քարտեզի վրա նշանակեցնք Պանամայի ջրանցքը,
Կուրսն, Համբախին, Պորտո-Ռիկոն, Պանաման, Կոլումբիան:

ՅԵԶՐԱՓԱԿՈՒՄՆԵՐ.—Ճատ են հարուստ ու լավ բաշխված ըլ-
նական հարստությունները Բնական շրջաններից յուրաքանչյուրում
այդ հարստություններից մեծ քանակությամբ կա: Այդ շրջաններն
իրար հետ շատ լավ են կապված: Այս հանգամանքները հնարավորու-
թյուն են ազել շրջաններից յուրաքանչյուրին մասնագիտանալ վրաշ
ուղղությամբ, ալինքն տնտեսական ույյոն դառնալ և իր տնտեսու-
թյունը խոշոր չափերի հասցնել Ցնաեսության ամենազլիսավոր ա-
ռանձնահատկությունը նրա մեքենայացումը և կապիտալիզացիան ե:
Միացյալ Նահանգներում կապիտալի իշխանությունն իր գարդացման
ամենաբարձր կետին ե հասել:

ՏԱՄԱՅՈՐԹԵՐՈՐԴ ԹԵՍԱ

ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ

**ՄԱՅՅԱԼ ՑԱՄԱՔՈՒՄ ԾԱՎԱԼՎԵԼԸ:—Միացյալ Նահանգների ըս-
կըզրնավորումը շատ համեստ է յեղել:**

Հազար յոթհարյուր յոթանասուն վեց թվին 13 անգլիական դա-
ղութներ, վորոնք մանում ելին հյուսիս-արևելյան շրջանի մեջ, ա-
պրատամբեցին Անգլիայից և անկախություն ձեռք բերին: Յոթ տարի
անց—1783 թվին, Վերսալյան դաշնագրով հաստատվեց նոր հանրա-
պետությունը—Միացյալ Նահանգները, վոր ըռնում եր Ապալաչյան
լեռների և Ատլանտյան ովկիանոսի մեջ ընկած փոքրիկ տարածու-
թյունը: Այդ ժամանակ Միացյալ Նահանգները միայն 2 միլ. քառ-

կլմ. տարածություն ունելին, սակայն այնուհետև այդ հողամասն ըսկըսեց առանց կանգ առնելու մեծանալ, նա ծավալվում էր զեպի արևմուտք ու հարավ, գրավլում եյին հնդիկների հողերը, ուրիշ յեվոպական պետությունների պատկանող հողամասեր եյին գնում (Լուիդիանան՝ ֆրանսիացիներից, Ֆլորիդան՝ սպանացիներից): 40-ական, թվականներին Միացյալ Նահանգներն իրենց միացրին Տեխասը՝ Միքսիկայից, իսկ միքանի տարուց հետո նույն Մեքսիկայից Տեխասից արևմուտք ընկած հողերը ևս գրավեցին: 1876 թվին Ռուսաստանից գնեցին Ալբասկա կոչված ահազին հողամասը—7,2 միլ. դոլլարով, իսկ 1913 թվին ձեռք բերին Պանամայի ջրանցքի շերտը:

Հյուսիսացին Ամերիկայի համարյա կեսը գրավելով, Միացյալ Նահանգներն սկսեցին իսկական Ամերիկա իրենցը համարել: Ասենք ուրիշ յերկրներում ևս «Ամերիկա» ասելով հասկանում ելին միայն Միացյալ Նահանգները, թեաւետ Ամերիկայում ուրիշ պետություններ ևս կան: Հորպակաղի Ամերիկայում ուրիշ հակառակորդ ու մրցակից չունենան, Միացյալ Նահանգներն սկսեցին «Ամերիկան ամերիկացիների համար» լոգունքը կիրառել: Չեր հանդուրժվում վոչ միայն վորուել յիշվողական պետության միջամտության վորեն փորձ ամերիկական այս կամ այն հանրապետության ներքին գործերին, այլև թույլ չեր արվում, վոր յեվրոպական պետություններն իրենց գաղութները կապակով տան կամ վաճառեն վորեն վոչ ամերիկական պետության:

ՄՈՎԱՅԻՆ ԳՐԱՎՈՒՄՆԵՐԸ:—Մինչև 1898 թիվը Միացյալ Նահանգները բավականանում ելին միայն Հյուսիսային Ամերիկայի ցամաքում ծավալվելով: 1898 թվին նրանք գրավեցին Հավայան կղղիները, վորոնք ավելի մոտ են Յավոնիային, քան Միացյալ Նահանգներին: Սրա նպատակն եր թույլ չտալ վոր Յավոնիան ձեռք գցելով այդ կղղիները, տիրապետող դիրք ունենա Խաղաղ ովկիանոսում:

Նույն 1898 թվին նույն նահանգները բոլորովին դատարկ պատճառով պատերազմ հայտարարեցին Սպանիային:

Սա մի կատարւալ հափշտակողական տիրապետողական պատերազմ եր՝ նման այն պատերազմներին, վոր անցյալում ունեցել ելին Մեքսիկայի հետ՝ իրենց հարավային սահմանները «Ալորացնելու» նըպատակով: Նրանց նպատակն եր վորով գնել Կուբա և Պորտո-Ռիկո կղղիները, վորոնք կարևոր եյին վոչ միայն իրենց հարստությամբ, այլև ստրատեգիական դիրքով (Մեքսիկայի ծոցի ու Կարայի բարձրվեց: Առաջարկեցին 200 միլիոն դոլլար: Սպանիան հրաժարվեց: Նրանք վճռեցին ուժով խլել և խլեցին: Դրանից բացի խլեցին

նաև Մեծ ովկիանոսում Սպանիային պատկանող Ֆիլիպպինյան կըդգիները (հարաւաս շաքարով ու ծխախոսով) և Մարիանյան կղզիների գլխավոր կղզին Հաջորդ տարին Միացյալ Նահանգներին միացավ նաև Մեծ ովկիանոսում գտնվող Պամու կղզիների մի մասը:

ՊԱՆԱՄԱՅԻ ԶԲԱՆՑՔԻ.—Մեծ ովկիանոսին տիրապետելու նպատակով ապագայի հնարավոր պատերազմի համար խաղաղութիւնուան կալվածները խոչըր հենակետ են հանդիսանում (զլսալոր հակառակորդը Յապոնիան ե): Մեծ և Աալանտյան ովկիանոսների հաղորդակցությունը հեշտացնելով, պետք և ապահովել և վերջնականապես սեփականացնել այդ կարլածները: Պետք և կարողանալ ուզած ժամանակ ունեցած ծովալին ուժերը շարժել ուր հարկն և, իսկ զրա համար անհրաժեշտ եր յերկու ովկիանոսները ջրանցքով միացնել Սեփական յերկրում այլպիսի ջրանցք փորելի չեր. զա հնարավոր եր միայն Հյուսիսային և Հարավային Ամերիկաները միացնող պարանոցներում: Միացյալ Նահանգները վորոշեցին Պանամայի պարանոցում համանուն ջրանցք փորել Կոլումբիան, վորին պատկանում եր այդ պարանոցը, չեր ուզում Միացյալ Նահանգներին կապալով տալ այդ հողաշերտը Հեղափոխություն պալմեց, Պանամայի շրջանն իրեն անկախ համար անհրաժեշտ հոգամասը: Ջրանցքը փորվեց, սակայն վըտանգ կա, վոր կարող և նիկարագուայի ջրանցքը փորվել, վորը Պանամայից պակաս ստրատեգիկական նշանակություն չի ունենալ:

Այդ հնարավորությունը կասեցնելու նպատակով Միացյալ Նահանգները Յ միլ. դոլլարով Նիկարագուայի հանրապետությունից մենաշնորհ են ձեռք բերում այդ յերկրում ջրանցքը շինելու:

ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ԾՈՎԵՐԻ ՎՐԱ. ՏԻՐԱԳԵՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏԵԼԸ:
Իրենց գիրքը Մեծ ովկիանոսում հաստատելուց հետո Միացյալ Նահանգները շարունակում են ամրանալ ամերիկյան Միջերկրական ծովում (Մեքսիկայի ծոց և Կարայիրկան ծով):

Համաշխարհապետական պատերազմի ընթացքում Միացյալ Նահանգները 25 միլ. դոլլարով դանիացիներից գնեցին նրանց արևմտահնդկական կալվածները, վորոնք դանիացիների համար առանձին տնտեսական նշանակություն չունելին, սակայն Միացյալ Նահանգների համար շատ եյին կարեռ, զորովճառ նախ՝ Կարալիբան ծովի մուտքին մոտ եյին ընկած, յերկըորդ՝ Ս. Թովմայի կղզում զինվորական նավերի համար շատ լավ նավահանգիստ կա:

ՄԵՐՄԻԿԱՅԻ, ՄԻԶԻՆ ՅԵՎ ՀԱՄԱՎԱՐԵՎՄԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ:

ԳՈՐԾԵՐԻՆ ՄԻԶԱՄՏԵԼԸ:— Միացյալ նահանգների վտանգավոր ախտ-
յան յապոնացիք հաջողեցրին գաղտնի դաշնադրով Մեքսիկայից Կա-
լիֆորնիա կղզու հարավ-արևմտյան ծալրում գտնվող Մագդալինի ծո-
ցամ իրենց զինվորական նավատորմի համար ոգտվելու իրավունք
ստանալ: Մեքսիկայում անմիջապես հեղաշրջում տեղի ունեցավ, Յեր-
կարամիա նախագահ Պորֆիրի Դիացն իշխանությունից զրկվեց, յեր-
կերը քաղաքացիական կովով բռնվեց: Այս գեղքը Միացյալ նահանգ-
ներին հնարավորություն տվալ միջամտել և այնպիսի որենք անց-
կացնել, վորով ամերիկական վոչ մի հանրապետություն իրավունք
չի ունենալու վորեն պայմանագիր կնքել առանց Միացյալ նահանգ-
ների համաձայնության:

Միջին-ամերիկական հանրապետություններում, վորոնք ահա-
զին գումարներ են պարտ Միացյալ նահանգներին, վերջիններս ի-
րենց աշնպես են զգում, ինչպես իրենց կալվածներում:

Միայն Կանադան ե, վոր իր անկախությամբ խանգարում և
Միացյալ նահանգների կատարյալ տիրապետությունը Հյուսիսային
Ամերիկայում: Կանադայի տնտեսական կապը Միացյալ նահանգների
հետ շատ և սեղմած, ու չնայած վոր մաքսային սահման գորություն
ունի, Կանադայի արտաքին առևտության կեսը Միացյալ
նահանգներին ե ընկնում, իսկ մյուս կեսը՝ Անգլիային: Միացյալ նա-
հանգների կապիտալն անընդհատ հոսում է գեղի Կանադա: Սակայն
քաղաքականապես Կանադան ավելի լավ և համարում Անգլիայի հետ
կապված մնալ:

Ոգտվով հարավ-ամերիկական հանրապետությունների դրամա-
կան նեղ կացությունից, Միացյալ նահանգները ձգտում են այդ յեր-
կըրները ևս նախ իրենց տնտեսական, ապա նաև քաղաքական ազ-
գեցությանը լինթարկել: Յեռանդով առաջ և աարվում համամերի-
կական հանրապետությունների դաշնակցության գաղտափարը: Դրա
ապահովության յերաշխիք պիտի հանդիսանա նյոււթորկից Բուենոս-
Այրես կառուցվելիք յերկաթուղագիծը: Այս հարցի շուրջը միքանի
կոնֆերանսներ են հարավիրշել, իսկ Վաշինգտոնում մշտական բուրո
գոյություն ունի: Սակայն Միացյալ նահանգների անզուսպ տիրակա-
լությունն ուրիշ հանրապետություններում հարավ-ամերիկական հան-
րապետություններին հարկադրում ե խուսափել Միացյալ նահանգնե-
րի հետ միանալու մտքից: Այդպես են վերաբերվում Արգենտի-
նան, Բրազիլիան և Չիլին: Սակայն Միացյալ նահանգները վոչ մի
միջոցի առաջ չեն կանգ առնում ամբողջ Ամերիկայի Միացյալ նա-
հանգները գառնալու:

ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ՎՈՐՊԵՍ ՅԵՎՐՈՊԱՅԻ ՊԱՐՏԱՏԵՐ:
 Արտաքին տունառւըն անընկճելի կերպով առաջ եր զնում, սակայն մինչև համաշխարհային պատերազմն այդ զարգացումն աստիճանաբար եր կտառարգում, 1870 թ. արտաքին տունառի շրջանառությունն տառաջին անգամ մեկ միլիարդ դոլարի է հասնում, իսկ 20 տարուց հետո՝ 2 միլիարդի, 6 տարուց հետո՝ 3 միլիարդի, 5 տարուց հետո՝ 4 միլիարդի, Համաշխարհային պատերազմը Միացյալ Նահանգների այդ տունառությը մեկեն անտառի բարձրության հասցրեց, Պատերազմից առաջ նաև Անդիմայից ու Կիրմանիայից շատ եր յետ Ներկայումս Գերմանիան այլևան չեւ Միացյալ Նահանգների տունառի քառակը մոտենում և Անդիմայի տունառի քանակին, հասնելով—1925 թ. 8997 միլ. դոլարի, 1926-ին՝ 9125 միլ. դոլարի, իսկ 1927-ին՝ 8944 միլիոնի, վորից 4759 միլիոնը արտահանում, իսկ 4185 միլ. ներմուծում:

Միացյալ Նահանգների ամենամեն տունառությը Յեվրոպայի հետ և այնուհետև մնացած Ամերիկայի, դլավորապես Կանադայի հետ, մոտ 15%՝ եւ՝ Ասիայի, Աֆրիկայի և Ավստրալիայի հետ:

Յեվրոպայի տունարական բարանս Ամերիկայի նկատմամբ պասսիվ եւ Ավելի շատ Յեվրոպան և Ամերիկայի կարիքն զգում, քան Ամերիկան՝ Յեվրոպայի: Յեվրոպան չի կարող առանց Ամերիկայի կենսամթերքների և գործարանական հումքի մնալ: Ամերիկան, վոր Յեվրոպայից միայն գործարանային արտադրությ և ստանում, կարիքը գեպքում կարող եւ և սեփական ապրանքով մնալ:

Ներմուծանելով Յեվ. ԱՐՏԱՀԱՆԱԾ Ա.Պ.ՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ:—
 Վորքան Միացյալ Նահանգների ինդուստրիան ավելի զարգացավ, այնուքան արտահանվող ապրանքների տեսակն ավելի սուր կերպով փոխվեց: 1860 թվին նրա սննդային ու գործարանային հումքն ամբողջ արտահանության 87%՝ եր կազմում, իսկ 1920 թվին—միայն 34%՝ Մնացած 66% ֆարբիկաներին ու կիսաֆարբիկաներին եր բաժինը ընկնում: Ներկա արտահանության գլխավոր հոդվածները գլուղատընտեսական հումքը և նրա վերամշակած առարկաներն են՝ հացահատիկներ, հացամթերքներ, մսեղեն, բամբակ, ծխախոտ, փալտեղեն, նավթ, մետաղներ, մանավանդ յերկաթ և պղինձ: Հետզհետեւ սկսում են արտահանվել՝ բրդեղեն, բամբակեղեն, կաշվեղեն, լերկաթե և պողպատե իրեր, մեքենաներ և դրույտանուեսական գործիքներ:

Ներմուծման գլխավոր առարկաներն են՝ շաքար, սուրճ, թիյ, տրոպիկական պտուղներ, մանավանդ բանան, ինչպես նաև գործարանային հումք—կառչուկ, հում մետաքս (բոժոժ), բուրդ, կաշի, վո-

ըռնց պահանջին տեղական արտադրանքը չի կարողանում բավարարել, Յեվրոպական ապրանքներից ավելի պահանջ և զգացվում շուայլության իրերի — նորությալին գործվածքներ, մետաքսեղեն, թանգադին քարեր, մանավանդ աղամանդ:

ԽՍՀՄ ապրանք արտադրող լերկրների թվում Միացյալ Նահանգները 1925/26 թ. Գերմանիայից և Անգլիայից հետո լերրորդ տեղն ելին բռնում, 1926/27 թ. Անգլիայից անցան, իսկ 1927/28 թվին Գերմանիայից հետո յերկրորդ տեղը զբավեցին: Միացյալ Նահանգներից դեպի ԽՍՀՄ արտահանվել եւ առաջին տարին 120 միլ., լերկրորդում՝ 143, իսկ յերրորդում՝ 181,5 միլ. զուբրլու: Առանձնապես աչքի լի ընկնում բամբակի արտահանությունը (ամբողջ ներմուծման մոտ $\frac{2}{3}$) Միացյալ Նահանգներից), կարևոր տեղ են բռնում նաև մեքենաները, այնուհետև՝ գունավոր մետաղները, միտապե շինվածքները, կերպարական գործիքները, ավտոմոբիլները և գարպիուսը կամ կանիֆուլը: ԽՍՀՄ-ից դեպի Միացյալ Նահանգներն արտահանած ապրանքների քանակն աննշան եւ 1925/26 թ. 25 միլ. ոուբրլու, իսկ 1926/27 թվին՝ 17 միլ. ոուբրլու: Գլխավորապես արտահանվել են մարգանց (40%), մազեղեն (25% 16%), աղիքներ ու ստամոքսներ (13% 18%), խոզի մազ (5% 4%):

ԾՐՎԱՑԻՆ ՀԱՅՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ:— Արտաքին ապրանքաշրջանառության 94% ծովային հարաբերությունների հետ և կապված, և միայն 6% ցամաքայինի (Կանադա և Մեքսիկա):

Մեծ մասն ($\frac{3}{5}$ ներմուծման և $\frac{2}{5}$ արտածման) Նյու-Յորկ գըլխավոր նավահանգստով եւ անցնում: Իր բեռնաշրջանառությամբ այս քաղաքն անցել եւ Լոնդոնից: Պատերազմի ընթացքում առևտրի աճման հետ միաժամանակ զարգացավ նաև Միացյալ Նահանգների նավատորմը: Պատերազմից առաջ նա համաշխարհային նավատորմի $\frac{1}{10}$ -ից ել պակաս եր, այժմ՝ $\frac{1}{4}$ -ից ավելի լի (27%):

Միացյալ Նահանգներն ինչ հաջորդականությամբ են գրավել Ամերիկան:

Ինչու վերջերս Միացյալ Նահանգներն աշխատում են իրենց տիրապետությունն ամրացնել ծովերի վրա:

Համաշխարհային պատերազմին ինչպես նպաստեց Միացյալ Նահանգների համաշխարհային նշանակության աճմանը:

Մեծ ովկիանոսի վրա տիրապետող դիրք ձեռք բերելու համար Միացյալ Նահանգներն ինչ հենակետեր ունեն:

ՏԵԶՐԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ:— Միացյալ Նահանգներն, անշուշտ, շատ են

հղոր: Իրենք Միացյալ Նահանգները համարում են իրենց ուժերն անսպառ, իրենց համաշխարհային տիրապետության իրավունքն անվիճելի: Նրանց իմակարգության համար ավելի ու ավելի յե ուուր ձեւը ընդունում: Խճարկե, չպետք ե թերագնահատել Միացյալ Նահանգների ուժերը, բայց չպիտի յել գերազնահատել Անշուշա Միացյալ Նահանգներն ավելի ուժեղ են, քան Արևմայան Յեվրոպայի խոշորագույն պետություններից շատերը: Միացյալ Նահանգներն իրենց տարածությամբ համարյա հավասար են Յեվրոպային, դրա համար ել նրանց վոչ թե տառնձին-տառնձին պետությունների հետ պիտի համեմտաել, այլ ամբողջ Յեվրոպայի: Այդ գեղքում նա ավելի թուզ ե թե իր որտաղրական ուժերով, թե քնակչության թվով, թե արդյունաբերության ու առևտության ու առաջարի զարգացմամբ: Սակայն Արևմայան Յեվրոպան բաժան-բաժան է, իսկ Միացյալ Նահանգները մի ամբողջություն են կազմում: Հենց սրանում ել կայանում է նրանց ուժն ու առավելությունը: Յեվրոպայի բաժան-բաժան մասերի հետ կուվելիս Միացյալ Նահանգները կարող են հաղթել: Ամերիկական միությանը կարելի յե մի այլ միություն հակադրել չին աշխարհն ազդափասի մի միություն ունի: զա Ասորեստական Հանրապետությունների Միությունն եւ Յերբ հանգես զա Յեվրոպա-ասիական աշդ միությունը, վորն իր մեջ կառնի ամբողջ Յեվրոպան ու Ասիան, նա այնպիսի ուժ կկազմի, վորը շատ ավելի հզոր կլինի, քան նույնիսկ ամբողջ ամերիկյան Միացյալ Նահանգները, ինթե ալդ նահանգները շարունակեն կապիտալիստական պետություն մնալ:

ՏԱՄՆՈՒԹԵՐՈՐԴ ԹԵՍԱ

ՀԱՐԱՎ-ԱՄԵՐԻԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ,
ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Համարակալեցեք ու նշանակեցեք.—Անդյան լեռների և Ալոնդակուա գագաթի (7 կլմ.), Կվիտո, Պերուի, Բոլիվիան, Ֆլուինյան, Բրազիլյան և Պատագոնյան սարահարթների անունները:

Համարակալեցեք ու նշանակեցեք նաև Որինոկուի (Անոնսներ), Ամազոնյան (սելվասներ) և Լապլադալի (պամպասներ) հարթությունները:

Վերտեղով ե անցնում արևադարձային տնձրկների շերտը:

Հարավային Ամերիկայում վճրտեղ են փշում պասսատները:
Վճրտեղ և հյուսիս-արևմտյան քամբների շրջանը:

Պարզեցեք տեղումների բաշխումը, վորից հետո նաև բու-
սականության բաշխումը: Ի՞նչ կապ և նկատվում տեղումների
բաշխման և քամբների ուղղության մեջ:

Գրեցեք զլիավոր գետերը: Սան-Ֆրանցիսկո և Մադրիդ
գետերի վրա նշան արեք սահանքատեղերը:

Համարակալեցեք ու նշանակեցեք պետությունների անուն-
ները:

Նշանակեցեք՝ 1) Արգենտինայի Բոււենոս-Այրես, Ռողարիո,
Բախիա, Բլանկա, Տուկուման քաղաքների անունները. 2) Բրա-
զիլիայի Բիու-դե-Ժանեյրո, Սան-Պաուլո, Բայա, Պերնամբուկո,
Գարա, Պորտո-Ալեգրե, Սանտոս քաղաքների անունները:



Հարավային Ամերիկայի քաղաքական քարտեղը:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՀԱՆՔԵՐԸ.—
Մակերեւութի կազմությամբ Հարավային Ամերիկան նման է Հյուսի-
սալին Ամերիկային: Արևմտյան ափով անցնում և Անդան բարձր լեռ-

ների աշխարհիս ամենայերկար շարքը, արևելքում սարավանդներ են՝ վոչ այնքան բարձր սարերով, մայր ցամաքի կենտրոնը հսկայական հարթություն եւ Ամբողջ մայր ցամաքի հարթությունները նրա մակերեսովի 55% են կազմում: Արևմտյան լեռները նորակազմ լեռների թվին են պատկանում:

Ինչպես ամեն տեղ, այստեղ ես նորակազմ լեռները հանքերով հարուստ չեն: Միայն նավթի (Վենեցիանելա և Պերու), արծոթի և պըղնձի բաշխական պաշար կա: Առախամա անապատը հարուստ և բորբակով: Արևելյան լեռները Բրազիլիայում յերկաթի հանքերով շատ են հարուստ: Հենց այդպիսի ել վոսկի և ալմաստ կա: Սակայն քարտածուք տեղ-տեղ և միայն հանդիպում, այն ել սակավ քանակի: Բրազիլիայի սահանքափոր գետերն սովորակ ածխի ահազին պաշար ունեն:

Կլիման Յեզ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ,—Հասարակածային մասում և հարավ-արևմուտքում տասատ տեղումներ են լինում: Այստեղ խիստ անտառներ են—հասարակածի տակ՝ արոպիկական և հարավ-արևմուտքում բարեխառն գոտու—սաղարթավոր: Ցած տափարակներում (բացի Ամաղոնյան անտառալիին մասից), գերազառողն անապատներն են—արոպիկական անապատներ՝ ծառաթմբերով (սալաններ) և բարեխառն գոտու խոտոս ու չոր անապատներ: Տրոպիկական գոտու ծառերը, վորոնց թվում նաև արճավինիները, աճում են մինչև $2\frac{1}{2}$ —3 կիլոմետր բարձրության վրա: Դրանից վերև անցնում են բարեխառն գոտու անտառներն, այսուհետև մարզպատինները:

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԲՈՒՅՑԵՐՆ ՈՒ ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԵՐԸ:—Արևադարձալին գոտու լեռնավայրն ալնպիսի մշակույթների շրջան և, վորոնք մշակելիս են լեղել տեղական հնդկական ցեղերը յեվրոպացիների գալուց ել առաջ: Այստեղ ալնպիսի մշակույթներ են լեղել վորոնք յեվրոպացիք տարել են Յեվրոպա (սիմինով, կարտոֆիլ) կամ Աֆրիկայի ու Ասիայի տրոպիկական դաղութները (կտկառ, քինաքինա):

Ընդհանուր առմամբ՝ Հարավային Ամերիկան, ինչպես և հյուսայինը, ոգտակար բույսեր ու ընտանի կենդանիներ քիչ և ունեցել: Սրանց բերել են լեվրոպացիք: Հարավալիին Ամերիկայում հրաշալի կերպով աճեց՝ ցորեն, լենթատրոպիկական շրջաններում—սուրճ և շաքարեղեգն, խոկ վերջերս՝ նաև քամբակ: Յերեւան լեկան մեծ քանակության ձիաներ, տափար, վոչխար, խողեր:

ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:— ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԸ:— Հարավային Ամերիկայի բոլոր պետություններում, բացի Ար-

դեստինայից, Ուրագվայից, Բրազիլիայից ու Չիլից, աղքաբնակության ճնշող մեծամասնությունը հնդիկներ են: Հարավային Ամերիկայի մեծ մասը գրավել ելին սպանացիք, Բրազիլիան—պորտուգալացիք: XIX դարում սպանական ու պորտուգալական գաղութներն ազատություն ձեռք բերին ու հանրապետություններ դարձան: Բայց իրոք՝ ազգաբնակությունն ազատ չգարձավ: Հարավային Ամերիկայի առաջին նվաճողները մեծ կալվածներ ստացան: Մինչև այսօր ել խոշոր կալվածատիրությունը մեծ տեղ է բռնում: Քիչ չեն 10—20 հազ. հեկտար տարածություն ունեցող կալվածները: Հարավի-ամերիկան բոլոր հանրապետություններում իշխանությունը գտնվում և մի խումբ կալվածատիրերի ձեռքում: Շատ հանրապետություններում ահազին աղջեցություն ունեն կղերականները, վորոնք ժողովրդին տպիտության մեջ են պահում: Հաճախակի յեն «գեներալների» առաջացրած հեղաշրջումները, վորոնք իրարից իշխանություն են խլխում: Պակաս չեն նաև պատերազմները հարևանների հետ: Այս բոլորը շատ են յետ զցում հարավ-ամերիկան հանրապետությունների զարգացումը: Դրանց մեծ մասը պլանտատորական տնտեսության յերկրներ են: Նրանք իրենց հումքը չեն վերամշակում, այլ ինչպես վոր կա, հանձնում են Յելփոպային ու Միացյալ Նահանգներին, փոխարենը նրանցից պատրաստ իրեր են ստանում: Միայն բարեխառն զոտու պետությունները—Արգենտինան (Ուրուգվայի հետ միասին) և Բրազիլիայի հարավային նահանգներն են, վորոնք կյուղատնտեսական յերկրներ են՝ նոր ծնունդ առնող ինդուստրիալով:

Ա Ր Գ Ե Ն Տ Ի Ն Ա

Ցարածությունը մոտ 3 միլ. քառ. կիլոմետր, ազգաբնակությունը—9,6 միլ. մարզ: Ցարենտինան Հարավային Ամերիկայի միակ պետությունն ե, վորք համարյա ամբողջապես ընկած և բարեխառն գոտում (հարավային լայնության 22°—55°):

Յերկրի հյուսիսում, հասարակածին մոտ, կլիման յենթարոպիկական ե, իսկ հարավում՝ բարեխառն՝ ցուրտ ձմեռներով: Ամբողջ յերկրն իր կլիմայով շատ և հարմար յելփոպացիների կյանքի ու աշխատանքի համար: Նրանք ել բնակչությունն են կազմում: Միայն բոլորովին հարավում մնացել են դեռ նախնական կենցաղով ապրող հրուերկրացիք՝ Հրու յերկրում և պատագոնացիք՝ Պատագոնիայում:

Մնացոծ աղքարժնակությունն սպիտակ ցեղին և պատկանում է խռովում և սպաներին:

ԲՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ:—Բնական պայմաններին և նրանց ոդապործմանը նայելով, Արգեհնատինան չորս շրջանների յեւ բաժանվում՝ 1) Մերձանդյան շրջան, 2) Չակո, 3) Պամպա և 4) Պատագոնիա:

1) Մերձանդյան շրջանը կպչում է Անդերի բարձր ու սառցաբաններով ծածկված պատերին: Այս շրջանը հարուստ և բարձր խություններով՝ աղի լճերի մեծ քանակությամբ բայց անպատճեաբածություններում քիչ չեն ծաղկած սաղիսները, իսկ հյուսիս-արևմուտքի ամենատխոշոր Տուկուման (90 հազ. բն.) քաղաքի մոտ բացական բնդարձակ կուլտուրական հարթություն կա, վոր անտառից և խրված: Այստեղ մշակում են շաքարեղեգն, խաղող, նարինջ, ծխտիոտ, պատրաստում են շաքար ու պինի:

2) Մերձանդյան բարձրաթիւններից զեպի արեկիք, մինչև Պարանա ընկած և գոտածե Շակո-ն, վորը ծածկված և թփուտներով, բարձր խոտերով և տեղ-անդ ել ծառաթփերով: Դրանցից արժեքավոր են մատե և կվերցախո ծառերը: Մատեկի տերեններից մի տեսակ խըմիչը են պատրաստում, վոր շատ են սիրում արգենտինյան անապատների բնակիչ հասուչունները, կվերբախոն մի տեսակ հյութ և տալիս, վորը շատ պիտանի յի կաշի գարաղելու համար:

3) Պամպա — խոռոչածածկ անապատ և, վոր շատ տեղ սեղանի պիս հարթ և Պամպան լերկրի յերեք քառորդ մասն և կազմում: Դեռ մոտիկ անցրալում նա կուտական անապատ եր, վոր միայն անասնապահության եր ծառալում, և 1872 թ. արտահանվող ապրանքների լերեք քառորդը կազմում ելին բուրդը, չորացրած միսը և մսի եքստրակտը, ներկարումս դա անասնապահության և յերկրագործության շրջան է:

Թի հողի մշակությունը, թի հունձը, թի կալսիլը, կատարվում են սեքենաններով: Հացահատիկներն ելիվատոր են տարվում: Ինչ խոսք, վոր ամենատխոշոր ելիվատորները գտնվում են՝ Բուենոս-Այրես, Բոզարիո և Բախիա-Բլանկա տրտահանման նավահանգիստներում: Շատ ել կատարելագործվել նաև անասնապահությունը, մանավանդ տափարաբությունը: Տեսակներն ազնվացնելու համար բացառապես անզիփական անասուններ են պահվում: Թի մսացու, թի կաթնատու անասունների տեսակներն ազնվացնելու գործն առանձնապես հաջողություն ունեցավ, յերբ սկսեցին ապօւյտի (լուզերնա) մշակությամբ զբաղվել: Խոշոր հողագրությունը տիրապետող եւ հարյուրից

ավելի անտեսություններ կան՝ 50 հազ. հեկտար յուրաքանչյուրում և հազարավոր կալվածներ՝ յուրաքանչյուրը հաղարից ավելի հեկտար տարածությամբ։ Այդ կալվածների տերերը, վորոնց մեծ մասն արգելատինացիներ են, նաև անզլիացիներ, հուսիսային ամերիկացիներ ու գերմանացիներ են։ Կալվածատերն իր հողի կեսը հատկացնում և անասնապահության, իսկ մնացած կեսը ցանում է Բայց իր միջոցներով փոքր մասն և մշակում։ մեծ մասը կապալառուների կետալիս վերջինների մեծ մասն խտալացիներ են։ Կապալառուն պարտավոր և հողի տիրոջ բաժինը բերքով վճարել։ Հարյուր խուրձից 10—25-ը հողատիրոջն ե տալիս։

4) Պատագոնիան սկսել և ընակելի դտունալ անցյալ դարի՝ 80-ական թվականներից, իերը սկսել են մուտք գործել լիրկաթուղիները։ Բնակիցրած տեղերը դարձել են անասնաբուծական շրջաններ։ Հյուսիսում սկսել են յերևակ նաև յերկրագործական տնտեսություններ։ Յերկրագործության համար հարմարագույն տեղեր գտնվում են մերձանդյան հովիտներում, հարավային լայնության 36° և 44° մեջ

(ցորեն, կարտոֆիլ, հաճար), Միայն այստեղ և բավական խոնավություն իշնում։ Խեպի արևելք ընկած հարթությունների վրա շատ քիչ խոնավություն և իշնում։ Առանձնապես չոր և չլուսիսային Պատագոնիայում։ Այստեղ գերակռում են մերինոսան տեսակի վոչխարները, վորոնք ձմեռային արոտներից—ամառը ջուր չինվոր պատճառով, քշվում են լայլազները (վորոնք ձմեռը ծածկված են լինում ձյունով)։ Հարավում վոչխարներին չաղացնում են վորպես մսացու։ Մոտակա քաղաքներում սառցարաններ են շինված։

ԳՅՈՒՂԱՑՆՑԵՍՈՒԹՅՈՒՆ:

Հարավային Ամերիկայի պրոդուկտաները Ներկայում Արգենտինան յերրորդն ե աշխարհին ցորեն հայթալիթող յերկրներից և առաջինը՝ սիմինդր հալթարթողներից։ Ցորենի արտահանությամբ առաջին տեղը բռնում ե Կանադան, յերկրորդը՝ Միացյալ Նահանգներն, իսկ յերրորդը՝ Արգենտինան։ Միացյալ Նահանգներն անհամեմատ ավելի շատ սիմինդր



Ան ունենում, քան Արգենտինան, սակայն այնտեղ մեծ մասն իրենք էն դորձ ածում—մանավանդ փորպես անասունների կեր, իսկ Արգենտինան իր ստացածի մեծ մասն արտահանում եւ Հողերի մեծ մասը հատկացրած ե ցորենի, սիմինզրի, վարսակի, վուշի ու առվուրսի ցանքերին: Հյուսիս-արևմայան նահանգներում, ուր կլիման չենթառորպիկական ե, աճում են շաքարեղեգն, խաղող և ծխախոտ: Չնայելով վորտեղ-տեղ գերակշռողը յերկրագործությունն ե, այնուամենալիք Արգենտինան ներկայումս ել ամենախօշոր անասնաբուժական պետություններից մեկն եւ Դեռ XIX դ. գերջում Արգենտինան ու Ավստրալիան վաշխարաբուժական պետությունների մեջ առաջին տեղն եյին գրավում: Ներկայումս թե վաշխարաբուժությունը, թե նրանից ստացված բրդի արտահանումն արգանդ գդալի կերպով նվազել ե: Անվարդի փոխարեն այժմ լվացածն ե արտահանվում: Համաշխարհային շուկայի պահանջած բրդի մեկ վեցերորդ մասը տալիս է Արգենտինան, իսկ մեկ յերրորդը՝ Ավստրալիան:

Վաշխարեների թվի նվազելու հետ միաժամանակ արագ կերպով աճում ե տավարի քանակը, զարգանում ե կաթնատնեսությունը, ավելանում ե արտասահման արտահանվող մսի (վաշխարի և տավարի), պահանջած բրդի մեկ վեցերորդ մասը տալիս է Արգենտինան, իսկ մեկ յերրորդը՝ Ավստրալիան:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ:—Արդյունաբերության զարգացումը դեռ թույլ ե: Արա դիմավոր պատճառը քարածխի կատարյալ բացակայությունն ե: Այնուամենալիք բանվորների թիվը մոտ 400 հազարի է հասնում: Ամենից շատ զարգացած ե սննդացին արդյունաբերությունը (մսեղենի, ալյուրի, շաքարի, զինեգործության արտադրանքը), ծխախոտագործությունը և կվերբախո փայտից մեծ քանակությամբ դարձելու եքստրակտ պատրաստելու գործը:

ՔԱՂԱՔԻ ԱՐՏԱԲԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ:—Այն ժամանակ, յերբ Միացյալ Նահանգների գյուղանաեսությունը բացառապիս ներքին շուկայի համար ե աշխատում, Արգենտինան գլխավորապես արտահանելու համար ե աշխատում: Հենց սրա համար ել Արգենտինայի համարյա բոլոր աչքի ընկնող քաղաքներն արտահանող նավահանգիստներ են: Դրանցից ամենից մեծը Բուենոս-Այրես մայրաքաղաքն ե, վորի իր արվարձաններով միատեղ 2 միլիոնից ավելի ազգաբնակություն ունի—համարյա ամբողջ յերկրի ազգաբնակության մեկ քառորդը (Բուենոս-Այրեսի և միքանի ուրիշ մեծ քաղաքների շնորհիվ Արգենտինայի ամբողջ աղքաբնակության մոտ 54%, քաղաքացիներ են): Բուենոս-Այրեսի ընակչության համարյա կեսն իտալացիներ են, մեկ

յերուբղն՝ սպանացիներ, Փրանսիացիներ, Ռուսաստանից գնացածներ (պատերազմից առաջ) և այլն:

Հաց արտահաննելու առաջին նավահանգիստը Թուզարիոն ե, վոր ընկած և Լա-Պլատա գետի վրա, յերկրագործական շրջանների կենտրոնում: Բուենոս-Այրեսն առաջինն ե սառեցրած մսի (ընդարձակ սառցարաններ), կաշվի և բրդի արտահանությամբ: Բուենոս-Այրեսը թե գլխավոր արտահանման նավահանգիստ ե, թե գլխավոր ներքին շուկա:

ՏՐԱՆՍՊՈՐՏԸ: — Արգենտինալում բնակելի դարձան նախ ծայրամասերն — Անդերից դեպի հյուսիս-արևելութեան և Ատլանտյան ովկիանոսից գետի հարավ-արևելք ընկած տեղերը, բայց հետո բնակվել սկսեցին նաև մեջլնկած հարթություններում: Այս խնդրում մեծ դեր կատարեցին յերկաթուղիները: Հարավ-ամերիկյան հանրապետություններից ամենից խիտ յերկաթուղական ցանց ունեցողն Արգենտինան ե (մոտ 40 հազ. կլմ.):

ԳԵՏԸ: — Արգենտինայի սահմանադրություն կազմված և Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների սահմանադրության ձևով: Արգենտինան դաշնակից հանրապետություն ե՝ բաղկացած 10 ինքնավար պետություններից, մեկ մալրաքաղաքյան շրջանից և 10 յերկրամասից: Ամբողջ իշխանությունը մի խումբ խոշոր հողատերերի ձևութում ե:

Բ Բ Ա Զ Ի Լ Ի Ա

Մակարդակն $\Theta^{1/2}$ միլ. քառ. կլմ. (համարյա և արտավային ամերիկայի կեսը) մոտ 40 միլ. ազգաբնակուրամբ (համարյա և արտավային ամերիկայի ազգաբնակուրամբ կեսը):

Բրազիլիան յերեք անգամ մեծ և Արգենտինայից, սակայն պակաս պիտանի է իւրոպացոց համար. թեսպիտ ավելի պիտանի յի, քան կարելի յեր սպասել՝ ի նկատի առնելով նրա աշխարհագրական դիրքը: Նա համարյա ամբողջովին արևոտքարձային գոտումն ե (հյուս. լայն, 4° մինչև 34°): Սակայն Բրազիլիայի կեսը (հարավ-արևելքում) բավական բարձր սարհարթ ե: Զերմությունն այստեղ 8—10 աստիճան ցածր ե այն տաքությունից, վոր կլներ, յեթե այստեղ ցածր հարթություն լիներ: Ամենահարավային մասում, հարավային կիսագնդում ձմեռ յեղած ժամանակ (հունիսից մինչև սեպտեմբեր) նույնիսկ ցրտեր են լինում: Այս մասը միանգամայն պիտա-

Նի յեւ յեվրոպացիներ բնակեցնելու համար իր շոգու զաղջ կը իմաստվ յեվրոպացիների համար անպետք և այն տափարակը, վոր ընկած և հասարակածի տակը Բրադիլիալի հյուսիսում, Ամազոնկա գետի հովտում: Զնայելով վոր գետն ալսակ աննման ջրալին հաղորդակցության ճանապարհ և, և չնայելով Ամազոնկալի հոսանքով ընկածթանդեմք անառաներին, ախուամենայնիվ գյուղերն ալսակ սակավաթիվ են և սակավամարդ:

ԲՆԱԿԱՆՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ.—Բրադիլիան կարելի էն յերեք բնական մեծ շրջանների բաժանել՝ 1) Ամազոնկան հարթություն, 2) լեռնաշալլը և 3) Հարավային շրջան:

1. Ամազոնյան եարբուրյուն:—Սա կուսական հավերժականաչանական տեսառների (սելվաներ) լերկիր և, ուր թանգարժեք ծառեր շատ կան—զանազան տեսակի արմավենիներ, զունավոր բուն ունեցող ծառեր, կառուչուկի ծառեր, լիանաներ: Ամազոնկան ինքը հրաշալի ջրալին ճանապարհ է: Իր վատկներով միասին Ամազոնկան նավարեկելի յեւ մոտ 50,000 կիլոմետր: Սակայն ալսակեղերի կլիման վատառողջ և (ամբողջ ամառը շոգ և և գաղջ): Նույնիսկ բնիկներ սակավ են: Փայտային հարստություններ, մանավանդ կառուչուկ արտահանելու համար գլխավոր նավահանգիստ Տոկանստինաս գետաբերանում ընկած Պարա քաղաքն և, վորը 23 հազ. բնակիչ ունի:

2. Լեռնավայրի կլիման և պակաս շոգ և, և տարվա իրար հաջորդող յեղանակներ ունի (չոր ձմեռային ժամանակ): Ալստեղ բուսականությունն այնպիս ճոխ ու փարթամ չե, ինչպես Ամազոնկալի ընթացքով եր: Անտառածածկ են միայն լեռները, վորոնք կարտում են լեռնաստանը: Հարթավայրերը ծածկված են սավաններով, վորոնք մերթ չորանում, մերթ կանաչում են: Լանդշաֆտն այստեղ ավելի հեշտ կարելի յեւ կուլտուրականացնել, քան սելվաներում: Ալստեղ շատ լավ են զարգանում սուրճի պլանտացիաները: Բրադիլիալի միակ պլանտացիական կուլտուրան մնում է սուրճը, թե տեղական, թե արտաքին կապիտալը գեռ գրանով և շահագրգոված: Բայց շաքարեղեղնի, կակաուի, բամբակի, ծիախոտի պլանտացիաներ ևս կան: Մննդաբույսերից մշակում են մանիոկ (գործ և ածվում սրանից պատրաստած ալյուրը), բրինձ և լրբատեսակներ: Միաժամանակ լեռները հարուստ են հանքերով—վոսկով, ածխով, լիրկաթով, ալմաստով: Լեռնային ափաշերտի վրա յեն ընկած Բրադիլիալի ամենամեծ քաղաքները—Ռիօ-գե-ֆանեյր (1,200 հազ. բն.), Ս.-Պաուլո (հունական ամենամեծ քաղաքները—Ռիօ-գե-ֆանեյր (1,200 հազ. բն.), վոր սուրճի շրջանի կենտրոնն ե, Սանտոս, Բայրա (300,000 բն.) և Պերնամբուկո (240,000 բն.) նավահանգիստները:

3. Թրագիլիալի հարավը բարեխտան կլիմա ունի: Սա խոտածածկ պաշտերի շրջան և տեղատեղ ծառածածկ: Մասերից նշանավորներն են՝ արառուկարիա, վոր ծառալում և վորպես շինանյութ, և մատե, վորի տերեների հութը գործ և ածվում վորպես թեր: Սա Բրազիլիայի էերկրագործական շրջանն և (ցորեն, սիմինդր): Երջանի ներսում մեծ քաղաքներ չկան, ամենամեծը ծովափում ընկած Պորտո-Ալեգրո նավահանգիստան և — 180,000 բնակչութ:

ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: ՏՆՏԵՑՈՒԹՅՈՒՆԸ: — Համարյա ամբողջ տղաբնակությունն ապրում և Բրազիլիալի արևելյան ծայրում: Ցերկի ներսում մեկ միլիոնից ավելի ժողովություն չկա: Մեծ մասն իրեն սպիտակ և համարում: Խոսում են պորտուգալերեն (սկզբներում Բրազիլիան պորտուգալական գաղութ եր), Բայց իրոք ազգաբնակությունը խիստ խառնվել և նեգրերի հետ: Ազգաբնակություն մեկ տասներորդը՝ դատարյուն նեգրեր հն (ատրկությունը Բրազիլիայում միայն 1889 թ. և վերջացել): Չարայուն հնդիկներ, վորոնք Բրազիլիալի բնիկ ազգաբնակությունն ելին կազմում, մնացել են միայն մեկ միլիոն: մետիսների թիվը ավելի շատ և: Սպիտակ ազգաբնակությունը դադթականության արդյունք և: 1820—1920 թիվը 3,600,000 մարդ և գողթել Բրազիլիա: Ամենից շատ զաղթել են Սպանիայից, Պորտուգալիայից և Իտալիայից: Պատերազմից առաջ բավական թվով գերմանացիք ու ռուսներ ևս զաղթել են:

Գաղթականներին ըստ մեծի մասին ուղարկում են հարավային լեռնային Բրազիլիա: Այդտեղ ամենից շատ և տարածված սուրճի մըշակումը, վորով Բրազիլիան տշխարհի առաջին պետությունն և հանգիստանում: (Տալիս և ամբողջ աշխարհում գործածվող սուրճի ^{2/3-ը}), Հարավային անապատներում շատ և գորդացած նաև դաշտավարությունը (ցորեն, սիմինդր), մանավանդ անասնապահությունը: Սկսում և զարգանալ նաև գործարանալին արդյունաբերությունը (բամբակեղին, սննդալին, ծխախոտագործական): Արդյունաբերության զարգացման համար տիստեղ ավելի շատ ընական պայմաններ կան, քան Արգենտինայում: — Քարածուխ, էերկաթ, առատ սպիտակ ածուլս: Սակայն մարդիկ չկան: Բրազիլիական արդյունաբերության մեջ մոտ 100,000 մարդ և աշխատում: Արագ աճում և նաև արտաքին առևտուրը: Վորովնետեւ նա ըստ մեծի մասին ծովով և կտտարվում, այս պատճառով և արագ կերպով զարգանում և զլխավոր նավահանգիստ և մայրաքաղաք Միուղեանելը ունի: Քաղաքը մեկ միլիոնից ավելի ազգաբնակություն ունի:

ԱՌԵՎՏՇՈՒՐԸ: — Բրազիլիայի արտաքին առևտուրն իր քանակով

ավելի պակաս ե, քան Արգենտինայինը: Սրա առևտուրը 1925 թ. 3036 միլ. սուբրու էր, իսկ 1926 թվին՝ 2835 միլ. սուբրու: Բրազիլայում նույն թվերին յեղել ե 1720 միլ. և 1600 միլ. սուբրու: Արտահանված ապրանքներն ավելի միատեսակ են: Այդ ապրանքների $\frac{2}{3}$ -ը սուբր է, այնուհետեւ գալիս են՝ կառւչուկ, բամբակ, կակաս, միս, կաշի: Ներմուծվում են գլխավորապես մեքենաներ, յերկաթ, պողպատե առարկաներ: Պարզ է, վոր ոկտում և յերկրի ինդուստրիալիզացիան:

ԳԵՏԱԿԱՆ ԿՈԶՄԸՐ:—Բրազիլիան ել Արգենտինայի նման միացյալ հանրապետություն է: Նա բաղկացած է 20 նահանգից և մեկ մայրաքաղաքացիան շրջանից: Իրոք՝ իշխանությունը գտնվում է գրամատեր արիստոկրատիայի, խոշոր հողատերերի և պլանտատորների ձեռքում:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՄԻԱՅԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յ Ա. Պ Ո Ն Ի Ա.

Առանց զաղութեների—385 հազ. բառ. կլմ. յեկ 60 միլ. ազգաբնակչություն: Գաղութեներ (*Հարավային Սախալին*, Կուրեա, Կվանչունիգ, Չորմոզա, փաստական սիրապետություն Հարավային Վաճառության) յեկ մի օարէ մանե, կղզիներ)՝ 300 հազ. բառ. կլմ.-ից ավելի, 23 միլ. բնակչով, Ընդամենը 700 հազ. բառ. կլմ. 83 միլ. ազգաբնակությամբ:

Քարտեղի վրա գտնեք և նշանակեցնեք Յապոնիան ու նրա կազմի մեջ մտնող՝ 1) Կուրիլյան կղզիները, Սախալինի հարավային մասը (Կարաֆուտո), Իեղո, Նիվազոն կամ Գոնդո, Սիկուլու, Կիու-Սիու, Ռիու-Կիու և Ֆորմոզա կղզիները:

2) Կորեան ու Մանջուրիան:

3) Լյաոնցուն և Կիաոչաո (առաջինը դեղին ծովի հյուսիսից, յերկրորդը հարավից) թիրակղզիները:

4) Ախոսի, Յապոնական և Դիղին ծովերը:

5) Թաթարի և Լապերուզի նեղուցները:

6) Տոկիո, Ռուակա, Յոկահամա, Կորե քաղաքները:

7) Վարչ զուգահեռների մեջ ե ընկած Յապոնիան: Պարզեցնեք Յապոնիայի մակերեսույթի բնոււթը. վարչ քամբիների սահմաններում ե ընկած Յապոնիան. շատ տեղութիւններ են լինում. վերջան և ձմեռային և ամառային ջերմությունը. բուսականության բնույթը:

Անվանեցնեք Յապոնիայի գլխավոր հանքերը և նրանց տեղը:

Պարզեցեք ազգաբնակության խտությունը, ազգաբնակության բաշխումն՝ ըստ նրա խտության և այդպիս բաշխելու պատճառները:

ԲՆՈՐՈՇՈՒՄՆ.—Յապոնիան կղղիների պետություն ե, վոր մինչև վերջիրս փակված ու բացառապես յերկրագործոկան յերկրի եր ներկայումս նա մի համաշխարհային պետություն ե՝ աշխուժ առևտըրով, խոշոր ծովային նավատորմով և արագ կերպով աճող արզունաբերությամբ, սակայն գերակշռողն, այնուամենայնիվ, դեռ յերկրագործությունն և մնում:

ՏԱՄԻՒՆԵՐՈՐԴ ԹԵՍԱ

ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԴԻԲԻԾԼ.—Ասիայի նկատմամբ Յապոնիան Մեծ ովկիանոսում նույն դիրքն ունի, ինչ վոր Աստղանայան ովկիանոսում Անգլիան ունի՝ Յելլուպայի նկատմամբ: Նրա ափերը նույնքան են կտրտված, վորքան և Անգլիայինը: Յապոնիայում ամեն տեղ ծովը մոտիկ ե, և այս հանգամանքն ահազին դեր է խաղացել նրա ազգաբնակության կյանքում (ձկնորսություն, տրանսպորտ): Սակայն Անգլիայի ափերի դիմաց ընկած են առևտով ու արդյունաբերությամբ ավելի զարգացած պետություններ, քան Յապոնիայի ափերի դիմաց և: Յապոնիայից Ամերիկա ճանապարհը յերկու անգամ ավելի յէ, քան Անգլիայից Ամերիկա:

ԿԼԻՄԱՆ.—Յապոնական կղղիներն ընկած են Անգլիայից հարավ 50°—22° հյուսիսի. լայնության: Սակայն 50° և 40°-ի մեջ ընկած հուսահային կղղիները (Կուրիլյան, Սախալին, Իեղո) թեպետ Անգլիայից 10° հարավ են գտնվում, այնուամենայնիվ անհամեմատ ավելի ցուրտ ձմեռներ են գտնենում, ձմեռն ել զգալի սառնամանիքներ են անում: Անգլիայի ափերը տաքանում են գոլֆշտրոմ կոչված տաք հոսանքով, իսկ հյուսիսային լապոնական կղղիները ցրտում են Ոլա-Շիվո ցուրտ հոսանքով, վոր գալիս ե հյուսիսային բևեռալին ծովից: Հարավային ափերին մոտենում ե Կուրիլ-Շիվո տաք հոսանքը, սակայն քըշում ե նրան դեպի Ամերիկայի ափերը: Ավելի հարավային քաղաքներում—Տոկիոյում ու Նագասակիում ձմեռները մեղմ են լինում. հունվարին մինչև հինգ աստիճան տաք ե:

ԲՈՒԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—Միայն Ֆորմոզան ե. վոր բոլորովին արևադարձային բուսականություն ունի: Այստեղ բուսնում ենքանան, Աշխարհագրություն—12

տրմավենի, քափուրի ծառ, մինչդեռ Սախալինում, ինդուստրի շամի, կեչի, փիճի, նիդպոնի հարավում և հարավային կղզիներում բուննում և թթենի:

Ամառը Յապոնիայում ամեն տեղ տաք է, լերեք անդամ ավելի յեւ անձրեսում, քան Մոսկվայի նահանգում. այս պատճառով ել բուսականությունը բուսականությունը կղզիներում փառահեղ է: Բուսականության ծայրահեղ զանազանակերպությունները յապոնական կղզիների տառնձնահատկություններից մեկն է Թրանց մոտ այնպիսի բուսականություն և բարձրանում, վոր տարբեր կլիմայական դուժների ցեւ հատուելու թրնձի դաշտերը բոլորող բլուրների վրա շամի յեւ լեռնում: Մըրգերը ջրու են, այդ պատճառով ել այգեզգործությունը զարգացած չեւայց զրա փոխարեն ծաղկիները հազվագյուտ գեղեցիկության հն հասնում: Յապոնացիք ծաղկաբուծության մեջ կատարյալ վարպետներ են, նա Յելբուզայի առաջին ծաղկաբուծական լերկրից Հոլանդիայից պակաս չեւ:

ԱԵԼՅԵՖԻ:—Կղզիները լեռնուա են, միայն նրանց մի ութերորդ մասն և տափարակ, հարթություն: Լեռները մասամբ լերկ, մասամբ անտառապատ են: Յապոնիայի անտառներն ու անմշակ վայրերը կազմում են նրա մակերեսույթի 60° /₀-ը: Հրաբուխալին ժայթքումները բավական հաճախ են կրկնվում: Ցերկարաշարժներն ավելի հաճախ ու վտանգավոր են: Սրանք հաճախ ծովվ շարժում են զեպի ցամաքը: Այսպիսի զեպքերում հարյուր հազարներով ժողովուրդ և վոչչանում: Ամենասարսափելի լերկարաշարժներից մեկը, վոր տեղի ունեցավ 1923 թվին, մի շաբթ քաղաքներ կործանեց, վորոնց թվում նաև Ցոկոհաման: Վըշնամները 2 մելիարդ սուրլու ելին հասնում, ճիշտ այնքան, վորքան ժախսվել եր ուսւ-յապոնական պատերազմի ժամանակ:

ԳԵԾԵՐԸ:—Գետերը լեռնալին են և սրբնթաց, այլ և բազմաթիվ ջրվեժներով ու սահանքներով: Նավարկության համար անպետք են: սակայն լայն կերպով ուղտագործվում են թրնձի դաշտերը ջրելու և ելեկտրիֆիկացիալի նպատակով:

ՀԱՆՔԵՐԸ:—Հրաբուխիների կրատերներում (հանգած կամ ուղղակի չգործող) ծծումը և ժողովակում: լեռներ կազմվելու ժամանակ առաջացած ճեղքերից նավթ և դուրս գալիս: Բայց նրա քանակը Յապոնիայում պակաս է, այնքան ել մեծ չեւ, և յապոնական կապիտալը կիրառվում է տրաստահմանում կապալով վերցրած ճնոնարկություններում (Սախալին, Մանջուրիա, Չինաստան): Ավելի շատ քարածուի և հանգում: սակայն սննդական արդյունաբերության համար սա յեւ չեւ բավականում: Պակասը լրացնում են Միացյալ նահանգներից բերելով:

Բավական շատ պղինձ կա. յերկաթը պակաս է, դա յել են Միացյաւ Նահանգներից և ներմուծում Յերկաթի հարուստ հանքեր կան սահմալ նամերձ Զինաստանում, դեպի արդ կողմերն ել ձգտում և Յազոնիան Առանց սեփական յերկաթի ծանր արդյունաբերություն զարգացնելը դժվար է:

Ա.Զ.Գ.Ա.Բ.Ն.Ա.Կ.ՈՒ.Ի.Թ.Յ.Ո.Խ.Ն.Ը.:— Զնալելով վոր լեռները Յազոնիայի մակերևույթի բավական զգալի մասն են բանում, այնուամենայնիվ յազոնական կղզիների վրա, առանց գաղութների (388 հազ. քառ. կլմ. վրա) ապրում ե մոտ 60 միլ. մարդ: Միջին խոռոչյունն ե 152 մարդ մեկ քառ. կիլոմետրի վրա: Ազգաբնակությունը հավասարաշափ չի բաժանված: Յազոնիայի չորս գլխավոր կղզիներից ամենից սակագ աղբարնակությունը հրուսիսային ինքո կամ Խոկայկիդո կղզու վրա յեւ Ալդ կղզին լնունու ու անտառապատ ե և վախեցնում ե իր ցուրտ ու ձյունառատ ձմեռներով: Այստեղ կուլտուրական հող համարյա չկա: Ազգաբնակության հիմնական մասսան ապրում ե Գոնդո կղզու վրա: Կղզու հարավի կիման շատ մեղմ ե: Այստեղ բոլոր պիտանի հողը մըշշակված ե: Այստեղ են ընկած բոլոր խոշոր քաղաքներն ու արդյունագործական կենտրոնները: Կտրտված ափերի շնորհիվ շատ աչքի ընկնող նավահանգիստներ ևս կան: Հարավի յերկու կղզիները ևս խիտ ազգաբնակություն ունեն: Այստեղ կիման ավելի մեղմ ե: Սրանցից մեկում (Կիու-Սիու) և գտնվում Յազոնիայի ամենից հարուստ քարածխալին ավագանը:

Ք.Ա.Ջ.Ա.Ք.Ն.Ե.Բ.Ը.:— Այստեղ, ինչպես և Զինաստանում, ազգաբնակությունն ըստ մեծի մասին գյուղացիական է, սակայն քաղաքային կյանքն ավելի է զարգացած, քան Զինաստանում: Յոկիոն 2 միլիոնից ավելի քնակիչ ունի. ամենախոշոր արդյունաբերական կենտրոն՝ Ռականան նույնագես: Յոկոհամա նավահանգիստը XIX դարի կեսերին մի հասարակ բանվորական գյուղ եր: Մեր գարու սկզբում նրան սարքավորեցին տեխնիկայի վերջին խոսքով: Ներկայումս նա 450 հազ. բնակիչ ունի և Ամերիկայի հետ ամենաաշխուժ կապ պահող քաղաքն է: Կոբե նավահանգիստն ավելի բազմամարդ ե (600 հազ. բնակ.): Նավասակիթ ունի 200 հազ. բնակիչ, իսկ նախկին մայրաքաղաք Նիտոն՝ մոտ 680 հազ.: Յազոնական քաղաքներից շատ քչերն են պահպանել իրենց նախկին տեսքը. նրանց մեծ մասը յելքրոպական ձեի յեն: Բոլոր մեծ քաղաքները ելեկտրական տրամվայ, ելեկտրական լուսավորություն, հեռախոս ու հեռագիր ունեն:

Ց.Ա.Պ.Ն.Ա.Ց.Ի.Բ.:— Ներկայումս յազոնացիք, անկասկած, Ասիայի առաջադեմ ժողովուրդն են հանդիսանում: Նրանք մոնղոլական ցեղին

են պատկանում, սակայն ալս վերջիններիս հատուկ գիմադերը նը-
րանցում բավական կոկված են, կարծում են, վոր լոպոնացիք առա-
ջացել են մալաբացոց, մոնղոլների, այսոների, ֆիլիպպյան նեղրիտու-
ների և ինդուսների խառնուրդից: Յերկար ժամանակ այս ժողովրդի
կյանքի վրա մեծապես ազդում եր Զինաստանը, վոր զարերով մշակ-
ված կյանքի ու կուլտուրայի ձևեր ուներ: Նրանցից ել լապոնացիք III
դարում զրության արվեստը փոխ առան, իսկ մի դար հետո յել՝ շե-
րամապահությունը:

ՖԵՇԴԱԼԻ ԶՄԸ:—Յերկիրը կառավարելում ամբողեատում և յին չի-
նական կարգերն՝ ավելի զարգացած ֆեոդալական վորով: Թագավորի
(միկազո) իրավունքները նսեմացնում եյին ռողութեարք—զլխտվոր-
դինվորականները, Ֆեոդալական ազնվականությունը բաժանվում եր-
գայմիների (ֆեոդալական իշխաններ) և սամուռայների (զինվորա-
կան դաս): Մինչև XIX դ. կեսը Յապոնացիք ունեին իրենց առանձ-
նահատուկ կյանքը, փակված լեվոպացիններից, նույնիսկ կորեացի-
ներից և իրենց ուսուցիչ չինացիններից: Սակայն 1854 թվին Ամերի-
կացոց հաջողվեց միքանի յապոնական նավահաննգիստներ բանալ լով-
րոպացինների համար: Յապոնիայի թագավոր Մուտցուսիմաոն իր սե-
փական իշխանությունը զորացնելու նպատակով լուսանգուն պալքար
սկսեց ֆեոդալականության գեմ: Պայքարը վերջացնելով շողունների
նշանակության և գալմինների ու սամուրայնների արտօնությունների
վոչչացումով՝ 1889 թվին լերկիրը պարլամենտ ստացավ:

ԳԵՑԱԿԱՆ ԿԱԶՄԸ:—Յապոնական սահմանադրության մեջ դեռ
շատ ուժեղ և ֆեոդալական գիծը: Բառի հսկական իմաստով՝ այդտեղ
պարլամենտարիզմ չկա: Միկազոն ցմահ կառավարող և, առանց պատաս-
խանատու լինելու ժողովրդի առաջ. նա անսահման իրավունք ունի
զորքի և նավատորմի վրա: Նրան և պատկանում պատերազմի և հաշ-
տության իրավունքը: Կարեռագույն խնդիրները քննվում են ծերերի
խորհրդում և միկազոյին կից «գաղտնի խորհրդում»: Գետական գերա-
կույն որդանը մինհստրների խորհուրդն ե: Յապոնական պարլամենտը
բաղկացած ե Վերին և Ներքին պալատներից: Վերին պալատի ան-
դամներն են խոշոր բուրժուազիան և տոհմալին ազնվականները: Բատ-
սահմանադրության նա չի կարող արձակվել ներքին պալատը նույն-
պես ունենոր դասի—արզունաբերողների և խոշոր հաղատերերի շահերն
և ներկայացնում: Քաղաքական իրավունքը կապված է մեծ հարկեր
տալու հետ (ընդամենը 3 միլ. ընտրողներ), Պարլամենտում միայն
լերկու կուսակցություններ կան՝ խոշոր հողատերերի և կապիտալի-
ներկայացուցիչների: Բանվորական շարժումը նոր և սկսում ազդել

լերկի կլանքի վրա և մոտիկ ապագայում խոշոր քաղաքական ուժ ե դառնալու:

ՅԵԶՐԱՓԱԿՈՒՄՆԵՐ:—Յապոնիան շատ ել մեծ լերկիր չե: Անչափ լեռնոս լինելու պատճառով յերկրագործության համար քիչ հող ունի: Նպաստավոր դիրքը և աղբարնակության խտությունը նրան արդյունաբերական զարգացման ճանապարհի վրա յեն դնելու:

ՖՍԱՆԵՐՈՐԴ ԹԵՄԱ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՅԱՊՈՆԻԱՅԻ ԿԱՊԵՐԸ ՄՅՈՒՄ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ

Խճչն և պատճառը, վոր Յապոնիան Մեծ ովկիանոսի Անգլիա յե կոչվում:

Արգյուք Յապոնիայի դիրքը ևս նույնքան նպաստավոր ե, վորքան և Անգլիայինը:

Վորո՞նք են Յապոնիայի գլխավոր նավահանգիստները և ո՞ւր են տանում:

Խճչու Յապոնիայի ծովալին ճանապարհները նաև ներքին հաղորդակցության ճանապարհներ են:

Արգյունաբերության զարգացման համար Բնչ հնարավորություններ ունի Յապոնիան:

Այդ հնարավորությունները նույնքան մեծ են, վորքան և Անգլիայում:


Յապոնիայի վո՞ր մասերում ավելի պիտի զարգանա արդիունաբերությունը:

Վո՞րտեղ ավելի լավ են զարգացրել տրոպիկական մշակությները. վո՞րտեղ են գտնվում շերամապահության և թերիկուլտուրայի գլխավոր շրջանները:

Յապոնիայի գլխավոր զբաղմունքը յերկրագործությունն ե, վորով զբաղվում ե աղջարնակության $60^0/\sigma$ ը, թեպետ վերջերս սկսել ե արագ կերպով զարգանալ նաև ինդուստրիալիզացիան:

ԳՅՈՒՂԱԾՆՑԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ:—Յապոնիան ինքնին մեծ չե, բայց այդ փոքր տարածության $\frac{3}{4}$ -ն ել լեռներ են: Հողի $19^0/\sigma$ ից պակաս ե մշակված: Յուրաքանչյուր շնչին ընկնում ե $0,12$ հեկտ. մշակված հող:

ՀՅԴԻ ՄԾԱԿՄԱՆ ԲՆՈՒԹՅՈՒՆ.—Մեր տհասակետեց յապոնացու մը շտկած գաշաք մի բանջարանց և Հողամասի միջին չոփը մեկ հեկտարից տվելի չե, յերբեմն նույնիսկ պակաս և Դաշտավիճն հողերի մոտ $\frac{1}{5}$ -ը պատկանում է պյուղացիներին, վորոնք իրենց համար են:



Թեյի և բրնձի բլանտացիաներ Յապոնիայում:

մշակում, $\frac{2}{5}$ -ը խոշոր սեփականատերերի ձեռքում և, վորոնք այդ հողերը կապալով են տալիս յերկրագործներին Ալստեղ, ինչպես և Զինասահնում, հողի մշակությունը մեծ խնամքով է կատարվում: պարարտացումը կատարվում է շատ լավ (հանքային և որդանական պարարտացում, վերջինս՝ փոտած ձկներից),

Բայց, չնայելով յապոնացու ծայրահեղ և հմուտ աշխատանքին, այսօան քիչ հողը նրան չի կարող կերպել: Ժողովրդական մասսան չափազանց ազքատ և Յերկը հարստությունը պատերազմի ժամանակ սկսեց աճել, սակայն անքան ել մեծ չե: Հողը չափազանց թանգ և: Մեկ հեկտարը $2\frac{1}{2}$ հազ. ոռոքլուց ել ավելի յե գնահատվում: Ազգաբնակությանը հիմնական սնունդ տվող հացահատիկը բրինձն և: Դաշտերի $\frac{3}{5}$ -ը նրան և հատկացված: Լեռնալանջերում աճում են՝ դարի (Յապոնիայի յերկրորդ հացը) և ցորեն, փոքր քանակությամբ կորեկ, վարսակ հալլն:

ԲԱՆՁԱՐԱԲՈՒԹՅՈՒՆ.—Յապոնիակում բանջարեղենը սնընդի ելական մասն և, խիստ բազմատեսակ և մշակվում է մեծ քա-

նակությամբ.—քաղցր կարտոֆիլ (գետնախնձոր), բողի, կարտոֆիլ, բակլաներ, տարօ, դղում, բարբիչան, սոխ, սխառը, կաղամբ, վարունդ, ուտելու լոսոս, բամբուկ, պղպեղ, զանազան տեսակի սալաթներ և ալին:

Տեսնեկներն ԲՈՒՑԱՆՔՆԵՐԸ:—Մանվող տեխնիկականներից ամենից շատ լիկամուտ տալիս ե վուշը, գետնընկուլը և ալին: Մեծ քառակությամբ ծխախոտ ել և մշակվում:

Նկազոնի հարավային մասի լեռնալանջերում և հարավային կղզիների վրա մեծ քանակությամբ տարածված և թերի և թթենու կուլտուրան:

Թթենի ՅԵՎ. ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ:—Յապոնական յուրաքանչյուր վեց ընտանիքից մեկը պարապում և բոժոժի մշակությամբ: Դրանով զլաղվում են բացառապես կանայք: Մետաքսը մանում են վոչ թետներում, այլ հատուկ մանարաններում, ուր աշխատողները դարձյալ կանաչք ու աղջկերը են: Բոժոժը կազմում և պյուղատնտեսական լեկամուտի 1/5%-ը: Մետաքսի մի մասը վերամշակվում և յապոնական գործարաններում, իսկ 70%՝ արտահանվում և զինավորապես զեղի Հյուս. Ամերիկայի Միացյալ Նահանգները: Մետաքսը միակ հումքն է, վորից Յապոնիան արտահանում և մեծ քանակությամբ: Յապոնական մետաքսը ծածկում և համաշխարհային պահանջի 40%: Բացի թթենուց, վորի տերեններով կերակրվում և շերամբ, Յապոնիակում մշակվում և նաև «Եղիթի թթենի», վորի հումքից թուղթ են պատրաստում:

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ:—Համարյա մշակման պիտանի ամբողջ հողը հատկացրած և դաշտային, բանջարանոցային և ալգիներում մըշակվող կուլտուրաներին Արտահաների համար շատ քիչ տարածություն և մնում: Դաշտերը մշակվում են բացառապես մարդկային ձեռքերով: Պարաբուցումը գլխավորապես հանքային և կամ ձկան միացորդներից: Միս և կաթ քիչ են գործածում (այստեղ չկան չոր անապատներ, վորոնք հարմար են վոչխարաբուծության համար): Պարզ ե, վոր այսպիսի պայմաններում անասնաբուծությունը մեծ չափերի հասնել չի կարող: Վոչխար համարյա չկա: Կենդանաբուծության աշքի ընկնող ճյուղ և կազմում հավաբուծությունը:

ԶԿՆՈՒՌՈՒԹՅՈՒՆ:—Բացի բրնձից ու հացահատիկների մյուս տեսակներից, բազմաթիվ բանջարեղեններից և թերից, աղղարնակության սննդի մեջ մեծ տեղ և բունում նաև ձուկը: Վոչ մի ժողովուրդ այնքան ծովային ձուկ չի գործածում և իր սննդով այնքան պարտական չի ծովին, վորքան լապօնացիք: Կղզիների նեղ ու ձգված ձեռ ամեն տեղ թարմ ձուկ ունենալու հնարավորություն և տալիս: Յա-

պանիալում մոտ $3\frac{1}{2}$ միլ. սարդ ուղղակի թև անուղղակի կերպով ձկնորսությամբ և ապրում:

ԱՆՏԱՌԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆԸ:—Նա մեծ նշանակություն ունի շինարարական, թղթի և լուցկու արգյունարերության համար: Սեփական փայտ պակասում և, ուսաբ ներմուծում են Միացյալ Նահանգներից, Կանադայից և ԽՍՀՄ-ի հեռավոր արևելքից (առանձնապես գնահատվում և սիրիական մայրին):

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԳԼԽԱՎՈՐ ՏԵՍԱԿՆԵՐԸ:—Ամենամեծ զարգացման հասել և բամբակագործական արյունարերությունը Յաղոնիան լերկու անդամ տվելի բամբակ և վերամշակում, քան Ֆրանսիան համարյա նույնքան զարգացած և նաև մետաքսի արգյունարերությունը, գորով Յաղոնիան ամբողջ աշխարհում առաջին տեղն է բռնում: Թղթի շատ գործարաններ կան: Ակտում և զարգանալ նաև մետաղագործությունը: Արդեն յաղոնացիք իրենք են պատրաստում իրենց համար անհրաժեշտ առևտուրական ու վիճական նավերը, շուգեկառքերը, վագոնները, հեռագրական և հեռախոսային թիւերն ու ապարատաները: Յերկաթի պակասը դանդաղեցնում և ծանր արգյունարերության ընթացքը:

Իմպերիալիստական պատերազմն արագացրեց յաղոնական արգյունարերության ընթացքը: Առանձնապես զարգացավ տեքստիլը և նավաշինարարությունը, ինչպես նաև ներկեր պատրաստելունը:

ՏՐԱՆՍՊՈՐՏԸ: Եթե ՆԱՎԱՏՈՐՄԸ:—Իրեն կղզիների և առևտուրական պետություն Յաղոնիան առանձին ուշադրություն դարձրեց իր նավատորմի զարգայման վրա: Տարողությամբ ներկայումս նա յերրորդ տեղն է բռնում ամբողջ աշխարհում (Անգլիայից և Մ. Նահանգներից հետո): 1914 թվից մինչև 1925 թիվը յաղոնական նավատորմի առարկությունը $2\frac{1}{2}$ անդամ մեծացել է: Յաղոնիալիստ հաղորդակցության զլամավոր ճանապարհ հանդիսանում է ծովը: Յերկրի վոչ մի կետ ափից 100 կիլոմետրից ավելի հեռու չե. և չնայելով սրան, նա ծածկված է լերկաթուղիների խիստ ցանցով (մորմողայի հետ միասին 14000 կմ., վորից $\frac{3}{4}$ պետական):

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒԺՈՒՄԸ:—Իմպերիալիստական պատերազմի ժամանակ Յաղոնիայի առևտուրը խիստ զարգացավ: Նրա առևտուրական բալանսն ակտիվ գարձավ: Բայց լերը լերուղական մրցակիցները նորից ասիսկան շուկա վերադարձան, այդ բալանսը նորից պասսիվացավ (1925 թ. ներմուծում 2,6 միլիարդ իրս—իրսը 2 ուրեմ., —արտահանումը՝ 2,2 միլիարդ. 1926 թ. ներմ. 2,4 միլիարդ, արտահանումը՝ 2 միլիարդ. 1927 թ: ներմ. 2,2 միլիարդ, արտ. 1,99 միլիարդ):

Ներմուծման գլխավոր նյութերն են՝ բամբակ, յերկաթ, մեքենա-
ներ, բուրդ, բրդի գործվածքներ, քուսպ, շաքար, ըրինձ և այլն:

Արտահանման գլխավոր նյութերն են՝ բոժոք և մետաքսի գործ-
վածքներ, բամբակեղեն:

Ապրանքաշրջանառության պատկերը ճիշտ զաղափար և տալիս
յերկրի ինդուստրիալիզացման մասին. ներմուծվում են գլխավորա-
պես հում նյութեր և մեքենաներ, արտահանվում են ֆաբրիկատներ
և կիսաֆաբրիկատներ:


Յապոնիան առևտուր ունի գլխավորապես Միաց. Նահանգների,
Բրիտանական կայսրության և Չինաստանի հետ:

ԱՌԵՎՏՈՒԻՐ ԽՍՀՄ ՀԵՏ:—Պատերազմից առաջ Ռուսաստանի առև-
տուրը Յապոնիայի հետ շատ աննշան եր: 1913 թվին Յապոնիալից
Ռուսաստան և արտահանվել 9 միլիոն ինչի ապրանք: Պատերազմից
ընթացքում այդ թիվը անսովոր կերպով աճեց և 1916 թվին դարձավ
151 միլ. ին: Քաղաքացիական պատերազմի և ռուսակարկրիա ինտեր-
վենցիայի ժամանակ Յապոնիան Միացիր ու մեր հեռավոր արեւելյան
շրջաններն այնպիսի ապրանք եր գցում, վրը տեղ չուներ նույնիսկ
ասիական շուկաներում: Իսկ յերբ Հեռու Արեւելքում խորհրդակին իշ-
խանություն հաստատվեց, առևտուրն ել նորմալ բնույթ ստացավ:
1925/26 թ. Յապոնիայի ներմուծումը ԽՍՀՄ 2,6 միլ. ոռուրլու եր:
Գլխավոր նյութերն եյին, թուղթ, վուշի գործվածքներ և ալյն: Այլ և
բամբակի ու բրդի գործվածքներ, շաքար: Հետադաշտում ավելանալու
յեն՝ բժշկական ու ֆիզիկական գործիքներ, բոժոք, բրինձ, մրգեր,
բուսական լուղ, քիմիական ու դարավելու նյութեր և այլն: ԽՍՀՄ-ից
արտահանվել են Յապոնիա—անտառանյութեր, թարմ աղած և ապըլի-
տած ձուկ, յերկաթ, ցինկ և վուշի սերմ—ընդամենը 12,7 միլ. ոռուր-
լու: Յապոնիալից 1927 թվին ԽՍՀՄ և արտահանվել 7,3 միլ. ոռուրլու
ապրանք, իսկ ԽՍՀՄ-ից Յապոնիա ուղարկվել 22,3 միլ. ոռուրլու ապ-
րանք:

ԽՍՀՄ ԲԵՐԻԱԼԻ ԶՄԸ:—Մինչև ՏԼԽ դարի 80-կան թվականները Յա-
պոնիան մի փակ պետություն եր, զոր ապրում եր բացառապես յեր-
կագործությամբ ու արհեստներով: Իսկ այժմ մի խոշոր համաշխար-
հային պետություն ե՝ նույնքան խոշոր իմպերիալիստական ախոր-
ժակով: Յեվրոպական պետություններն աճել են դանդաղ ու աստի-
ճանաբար, իսկ Յապոնիան իր նախկին դրությունից ալսորվա վիճա-
կին հասավ հանկարծ, մի ուժեղ թոփչքով:

Արդյունաբերության արագ աճելը պահանջում եր շուկաներ,
աղգաբանակության արագ ավելանալը՝ նոր յերկրներ գաղթեցնելու և

սննդանյութեր ստանալու համար։ Յաղոնիան սկսեց կղզիներ (Սախալինի հարավը, Ֆորմոնդան և այլն) և ասիական ցամաքում հողեր գրավել (Կորեա, հարավային Մանջուրիա, Կվանչունունդ թերակղզին՝ Պորտ-Արտուրով և Դալնիավ, Շանհանունդ թերակղզին, վորից Յաղոնիան միայն խռովով և հրաժարվել)։ Յաղոնացիք Սախալինը դնա-



Յաղոնիան և Զինաստանը: Ալտբները ցույց են տալիս այն ուղղությունը,
վորով Յաղոնիան ներխռութամ և Զինաստան:

Հատում են նրա ձկան համար։ Կորեան հաց և տալիս Յաղոնիային։
Ենորհիվ այն հանգամանքի, վոր Կորեալի դաշտերն սկսեցին լավ
մշակվել նա սկսեց առատ ցորեն ու բբինձ տալ։ Զարգանում են նաև
րամբակաբուծությունն ու շերտամապահությունը։ Այսոր Կորեան արան-
գիտալին ճանապարհ և գեղագի Յաղոնիա։ Մանջուրիան Զինաստանի
սեփականությունն է համարվում, սակայն նրա փաստական տերերը
յաղոնացիք են։ Այս յերկիրը նրանց համար շատ արժեքավոր է, վո-
րովինեան առատ լորարույսեր, ցորեն, սիմինդը ու բբինձ և արտա-
դրում։

Յաղոնացիների նորատակն և տիրապետող դիրք ձեռք ըերեւ Մեծ

ովկիանոսում: Իրենց նախկին կղզիներին ավելացրին Գերմանիայից խլած մեծ-ովկիանոսուան Մարփանյան, Կարոլինյան, Մարշալյան կըդ-պիները և այլն: Դրանցից ամենից կարեորը Յատ կղզին և, գորտեղ միքանի մեծ ովկիանոսուան ընդջրա կարելներ են միանում: Յապո-նացիք մեծ յեանդով բնակեցնում են Միացյալ Նահանգներին պատ-կանող Հավայան կղզիները: Այսակ նրանք ազգարնակության կեսից ավելին են կազմում: Մեծ ովկիանոսուին տիրապետելու համար Յապո-նիան պատրաստվում ե ընդհարվիլ Միացյալ Նահանգների հետ. այս նպատակին հասնելու համար նա ստեղծել է խոշոր զինվորական ուժ, մանավանդ՝ ծովային: Առայժմ նա Միացյալ Նահանգների հետ համե-մտած գնու մի գաջած և, բայց նա մեծանում և զարմանալի արա-գությամբ: Ապագալում նրա ընդհարումը Միացյալ Նահանգների հետ անխուսափելի լի:

Չ Ի Ն Ա Ս Ա Ն

Զինասանն (ինչուս ինքն և իրեն հաւաքում) 12 միլ. քառ. կիլոմետր տարածություն ունի, 415 միլ. ազգաբնակությամբ, վա-րից բուն Զինասանում՝ 4,5 միլ. քառ. կիլոմետր, 337 միլ. ազ-գաբնակությամբ, Սիբ-Կիանգ—Է, 5 միլ. քառ. կիլոմետր, 1 միլիոն ազգաբնակությամբ, Մոնզոլիա—Յ միլիոն քառ. կիլոմետր, 2 միլ. ազգա-բնակությամբ, Ցիբեր—Զ միլիոն քառ. կիլոմետր, 2 միլ. ազգա-բնակությամբ, Մանզուրիա 1 միլիոն քառ. կիլոմետր չեզ 22 միլ. ազգաբնակությամբ, Մոնզոլիան իրեն անկախ պետություն և հայ-աւարտել լիվ Զինասանի գերիշտանությունը չի ճանաչում:

Համբ քարտեզի վրա նշանակեցեք Սին-Կիանգը, Տիբեթը, Մոնզոլիան, Մանզուրիան և բուն Զինասանում Հյուսիսային և Հարավային Ջինաստանը:

Նշանակեցեք հետեւյալ դետերն ու քաղաքները՝ Իլի՛ Կուլ-ջա քաղաքով, Թարիմ՝ Յարկենդ քաղաքով, Խուան-Խեն, Յան-ծղի-ծղյան՝ Խանկոու, Ուչան, Նանկին, Շանհայ քաղաքներով-Սի-ծղյան՝ Կանտոն և Հոնկոնգ քաղաքներով:

Նշանակեցեք սահմանակից պետությունների և զաղութների անունները:

Վոր զուգահեռների մեջ և ընկած բուն Զինասանը:

Քարտեղի վրա նշանակեցեք Խին-Դան շղթայի, Զինական հարթության անունները և բացատրեցեք Հյուսիսային ու Հար-վային Զինասանի մակերեսութիւ աարբերությունը:

Պարզեցիք քամիների ուղղությունը՝ ամառն ու ձմեռը.
Հուսիսային ու Հարավային Զինաստանի ամառային ու ձմեռային ջերմությունը:

Ցուց տվիք բուն Զինաստանի, Մանջուրիայի և Ներքին ծայրամասերի տեղումների քանակը, այլև բուսականության տարբերությունը:

ԲՆՈՐՈՇՈՒՄՆԵՐՆԵՐԻ ԸՆԿԱՆ — Զինաստանի ծայրամասի հոգին ընկած են կենարոնական-ասիստական լիոնաստանում: Գերակշռում են ավազով ու քարերով ծածկված չոր հարթությունները և սառցարաններով ծածկված բարձր լեռները: Նրանց մեջներքում նստակյաց յերկրագործական կյանքի համար պիտանի փորբիկ հողամասեր քիչ կան: Այդ հոգամասերն անունով են միայն Զինաստանի մասը կազմում, իրոք՝ նրանք միանգումայն անկախ են: Մոնղոլիան իրեն անկախ և հայտարարել: Մանջուրիան, վրբ մի յերկրագործական յերկիր և, Յավոնիայի կիսագտղութեա: Բուն Զինաստանը ևս առավելապես յերկրագործական է: Վոչ զյուղատնտեսական, այլ բուն յերկրագործական:

Խոսենք այժմ բուն Զինաստանի մասին:

ՖՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ ԹԵՄԱ

ԲՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ

ԴԻՐՔԸ ՅԵՎ ԿԼԻՄԱՆ: — Զինաստանն ընկած է հյուս. լայն. 43° և 20° մեջ, այսինքն՝ հյուսիսից բարեխառն և հարավից մերձարկադաշին գոտիներում: Զմեռը ջերմության աստիճանն ավելի ցածր է, քան Յեկանապալի ու Ասիայի նույն լայնության տակ գտնվող իբրևներում:

Յեկինում, վոր Նետպոլից հարավ և ընկած, հունվարին 5° ցուրտ, իսկ հուլիսին 26° տաք և (Նետպոլում ձմեռը 8°, ամառը 24° տաք): Շանհայում, վոր Մարոկկոյին զուգահեռ և, միջին ջերմությունը հունվարին 3°, հուլիսին 27° է: Մեծ տատանումներ են նկատվում խոնավությունն ըստ տարվա յեղանակների բաշխելիս: — ցուրտ ձմեռին հաջորդում է խոնավ ամառը: Տեղումների քանակն ավելանում է՝ հյուս-արևմուտքից դեպի հարավ-արևելք:

Աֆերն ՈՒ ՆԱԴԱՀԱՆԳԻՍՏՆԵՐԸ: — Զինաստանը ըրջապատող միջորեականներն են արևելյան յերկարության 100° և 120°: Արևմուտքում բնական սահմաններ են լեռնաշղթաները, արեւելքում Մեծ ոլորտիանուը, Դեղին, Արևելյան Զինական և Հարավային-Զինական ծո-

վերը։ Այս ծովերը բաց են, նավարկութիւն համար վտանգավոր, վո-
րովինեաւ փոթորիկներ (տալֆուն) հաճախ են բարձրանում։ Հյուսի-
սալին Զինաստանի ափերը քիչ են կտրտված։ Սրանք ֆիզիկական
պատճառներ են, վորոնք ձախողել են չինացիների ծովագնացարին
ընդունակությունները։ Բայց Զինաստանը նավահանգիստ քաղաքներ
շատ ունի, վոր իրենց մեջ բաժանել են իմադերիխալիստական պետու-
թյուններն՝ ըստ իրենց ազգեցության շրջանների։

Ամենախոշոր շրջանառություն կատարում են Տյանցղին, Շան-
հայ, Կանսոն և Հոնկոնգ նավահանգիստները։

ԶԻՆԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԱՆ ԾՐՁԱՆՆԵՐԸ։—Ամրող յերկիրը կենտրո-
նական լեռնավալրերից սանդղատաձև իջնում ե գեպի Մեծ ովկիանոսը։
Հանդիպակաց լեռնաշղթաներով նա բաժանվում է իր բնությամբ և
կազմվածքով տարբեր յերկու մասերի—հյուսիսային և հարավային։
Հյուսիսային Զինաստանի հողը շեկ ե, վոր գոյացել ե կենտրոնական
Ասիայի անապատներից քամիների բերած ավաղից ու հողից—լիսսից։
Դա խոնավությունը լավ է ծծում և շատ արգավանդ ե։

Այդ շիկահողում շատ բնորոշ ուղղահայաց ճեղքվածքներ են ա-
ռաջ գալիս, վորոնց շնորհիվ գոյանում են կիրճերի, ալբերի ու անց-
քերի ամբողջ սիստեմներ։ Զինացիների համար լրանք յերբեմն ճանա-
պարհներ են հանդիսանում։ Հյուսիսային Զինաստանի համար այդ
շիկահողն ամեն ինչ ե. նա արգավանդ է և առասպելաչափ պտղատու-
նա ջուր ու ծաղիկ գեղին և ներկում և ամբողջ գաշտավայրին դեղին
գույն և տալիս Յերբեմն չինացին ուրիշ շինանյութ չունենալով, նրա
մեջ և փորում իր բնակարանը։ Այդ բնակարաններից յերբեմն ամբողջ
դյուզեր են գոյանում։

Քոլորովին այլ պատկեր ե ներկայացնում Հարավային Զինաս-
տանը։ Յեթե մենք կատարյալ իրավունքով կարող ենք Հյուսիսային
Զինաստանը զեղին յերկիր անվանել, նույն իրավունքով կարող ենք
Հարավայինին կարմիր անունը տալ։ Այստեղ ամբողջ տարածություն-
ներ ծածկված են կարմրահողով։

Դեղինը հացահատիկների, մանավանդ ցորենի, սիմինդրի, կորե-
կի, այլև պտուղների և բանջարեղենի յերկիր ե։ Կարմիրը՝ բընձի,
թեյի, թթի, հետևարար նաև շերամապահության յերկիր ե։ Հյուսի-
սային և Հարավային Զինաստանների սահման կազմում են բարձրուկի
անտառները։

ՀՅՈՒՍԻՍԱՑԻՒՆ ԶԻՆԱՍՏԱՆ—Հյուսիսային Զինաստանն ընկած
է Խուան-Խե գետի ավագանում։ Նրա արևմտյան մասը, մանավանդ
լեռնոտ տեղերում, ծածկված է լիսսի բարակ շերտով և մթնոլորտային

առեղութիւններ ավելի քիչ ունի, քան արևելյանը: Վերջինս ավելի արդար վանդ է՝ շնորհիվ շիկանողի շերտի հաստաթյան և ուժի (տեղական 600 մ.): Արևմուտաքը բացառապես անսասնապահական յերկիր է, արևելքը՝ յերկրագործական: Արևմուտաքում հարուստ ածխահանքեր կան, վորոնց շահագործողն ստարերկրլա կտավիտալն է:

Դեղին Գետի ԱվազԱն:—Զինական արգավանդ հարթությունն, ուր ընկած են արևելյան նահանգները, դոլացել և Խուան-Խե կամ Դեղին գետի բերութիւններից (հանօց): Բայց այն գետը, վոր ասեղծողն և այս յերկրի, իր հեղեղութիւններով և հաճախակի հունը փոխելով մեծ աղետներ և պատճառում նրան (այս պատճառով ևլ «Զինաստանի հոգա» և կոչվում): Հեղեղութիւնները վոչնչացնում են հակայական ցանքեր, սրբում տանում են գլուզեր ու քաղաքներ, խեղդուառմ հաղարավոր մարդիկ: Նա իր հունը փոփոխում ե՝ բերութիւններով աղբուժվելու հետեանքով: Այս աղբուժութիւնները խանգարում են նաև նավազնացությանը: Եժան Ջրային արանսպորտի բացակայությունն արգելք և դառնում գլուզատեանառության ապրանքայնության զարգացմանը: Ճի զարգանում նաև հուսիսի արգունաբերությունը: Առայժմ հյուսին ամենից քիչ և կտրել իր կապերն անցյալից: Նա մնում է յերկրագործական անխոնջ աշխատանքի և արհեստի յերկիր:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԶԻՆԱՎԱՑԱՆ:—Հարավային Զինաստանի հյուսիսը (Միջին Զինաստան) բռնում Յան-Ցղի-Ցղիան գետի ավազանը, իսկ հարավը՝ Սի-Ցղանի հովիտը:

Խուան-Խեյին հակառակ Յան-Ցղի-Ցղիանը յերկրի նավարկելի գլխավոր յերակն է (ծովալին նավերը համառում են մինչեւ Հանկոռ):

ՅԱՆ-ՑՂԻ-ՑՂՑԱՆԻ ԱՎԱՉԱՆ:—Յան-Ցղի-Ցղիանի հովիտը Զինաստանի ամենահարուստ մասն է: Դա բրնձի շրջան է, վորը զիսավոր հացահատիկն է և ներքին առեարի համար մեծ նշանակություն ունի (ավելցուկն արտահանվում է Հյուսիսային Զինաստան): Բացի զրանից այստեղ մեծ քանակությամբ այնպիսի մթերքներ են լինում, վորոնք եքսպորտի գլխավոր նյութ են ծառայում (թեր, բամբակ, յեղեղնի շքար, ծխախոտ, մետաքս): Արևմտյան և միջին մասերը հարուստ են հանքերով (ածուխ, նավթ, յերկաթ, պղինձ, արծաթ, վուկի և ալլն): Զարգացած են նաև մշակող արդյունաբերությունը (բամբակագործական և մետաքսի, նավաշինություն, յուղի և ալյուրի արտադրանք և մետաղագործություն): Այստեղ Զինաստանի ամենախոչը զործարանական կենարուն ե Յանեալը:

ՍԻ-ՑՂՑԱՆԻ ԱՎԱՉԱՆ:—Սի-Ցղիանը համարյա ամբողջովին նավարկելի յի: Նավերի ամենաաշխուժ շարժումը գետի գելտայումն է:

Ալստեղ նրա վատակներն այնքան քիչ հող են թողնում, վոր աղդամնակության զգալի մասն ապրում և մեծ նավակներից կազմված լուղացող քաղաքներում: Կանտոնում 100,000-ից ավելի ժողովուրդ և ապրում ջրի լեռներին: Այստեղ կազմում են թատրոններ, բեստորաններ և այլն: Սի-Ցղանի ավազանը ինտենսիվ լուսարության շրջան է, բրինձը տարեկան միքանի հունձ և տալիս: Ահագին տարածություններ են ըստում գետնընկույզը («չինական ընկույզ»), շաքարեղեգն, ծխախոտը, կանչեփը, լեղակը, թեյը: Մեծ քանակությամբ պտուղներ են արտահանվում: Հարավալին Չինաստանի այլիները տալիս են նարինչ, լիմոն, սալոր, բանան: Զգալի զարգացման և հասել շերտամապահությունը: Թիչ չե նաև հանքալին հարստությունը—ածուխը, յերկաթը, պղինձը:

Սի-Ցղանի ավազանի ամենամեծ քաղաքը—Կանտոնը չինական մյուս ըոլոր քաղաքներից ամենից առաջ և համաշխարհային ապրանքաշնորհանտության մեջ մտել: Մյուսներից առաջ և պարբարի մտել համաշխարհալին կապիտալի գեմ, վորի ամրոցը գտնվում է Կանտոնի կողքին, անզիլական Հոնկոնգ նավահանգստում, Սի-Ցղան գետի բերանում: Ալստեղից ծայր առան ժողովրդական ապատամբություններն ու Չինաստանի հեղափոխական շարժումները և ոտարների լծից ազատվելու համար մղվող պայքարը:

ԲնԱկԱՆ ՀԱՐՍՈՒԻԹՅՈՒՆՆԵՐԸ:—Համարյա ամենուրեք Չինաստանի հողն արդավանդ ե: Յերկիրն իր ծոցում ևս մեծ հարստություններ և թագցնում: Համարյա ըոլոր նահանգներում հարուստ ածխահանքեր են պատահում, հաճախ նույնիսկ լերկաթի հետ: Ածխի պաշարով Չինաստանն աշխարհի հարուստ լերկրներից մեկն ե: Յերկաթի պաշարով Ասիացի ամենահարուստ յերկիրն ե, Չինաստանը բացառապես հարուստ և անտիմոնով, վոր անհրաժեշտ և լուցկու և զինվորական արդյունաբերության համար, և վոլֆրամով, վորը պողպատին պնդություն և տալիս: Շատ են մեծ պղնձի հարստությունները: Աննշան չեն նաև անագի հանքերը (թե պղինձը, թե անագն ամենից շատ հարավ-արևեմուտքում են),

ԱԶԳԱԲՆԱԿՈՒԻԹՅԱՆ ԽՃՈՒԹՅՈՒՆԸ:—Աղքարնակության խտությունը շատ և տարբեր: Մի ծայրում ընկած և հյուսիս-արևելքի անասնապահական շրջանն, ուր մեկ քառ. կիլոմետրի վրա 11 մարդ և ապրում, իսկ մյուս ծայրում—ծովափնյա նահանգներն, ուր մեկ քառակուսի կիլոմետրի վրա 150 մարդ և ապրում:

Քաղաքները:—Շնորհիվ քաղմաղարյա ծաղկած արհեստների և աշխատավահանգների Չինաստանն իր մեջ ապրող սակավաթիվ յերկրոպա-

յիներին գեռ միջին դարերում և զարժացրել իր քաղաքների բաղմամարդությամբ։ Զինաստանում 40-ից ավելի քաղաքներ կան, վորոնցից յուրաքանչյուրը 100 հազարից ավելի բնակիչ ունի։ Մեկ միլիոնից ավելի ունեն հրուսալիխնայրաքաղաք Պեկինը կամ Պելախնը (1921 թ. մարզահամարով, արվարձանների հետ միասին, 1,300 հազ. բնակիչ), Հանկոու — 1,600 հազ., Շանհայ — 1,500 հազ., Կանտոն — 1,400 հազար։

ԱԲՏԱԳԴԱԴԹ. — Տեղական ազգաբնակության խտությունը չի համապատասխանում ազգուսափ աղբյուրներին. և ժողովուրդն ստիպված է լինում զաղթել։ Ուսար յերկրներում գտնվող շինացիների թիվը 8 միլիոնից ավելի յեւ Ամենից շատ Հոլլանդական Հնդկաստանումն են — մոտ 2 միլիոն, Սիամում — $1\frac{1}{2}$ միլիոն, Հնդկաչինի մյուս մասերում՝ մոտ $1\frac{1}{2}$ միլիոն, Բրիտանական Հնդկաստանում 1 միլիոնից ավելի, Մալակա թերակզու վրա՝ շուրջ 1 միլիոն։

ԶԻՆԱՑԱՆՆԵՐԸ ՅԵՏԱՄՆԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. — Զինաստանը հասպույն քաղաքակրթության լերկիր եւ Զինաստանում շատ վաղուց են յերեացել տպագրությունը, ֆարֆորը, վառողը, ավելի վաղ, քան Յելվոպայում։ Առաջին լրագիրը Զինաստանում յերեացել եւ այն ժամանակ, երբ Յելվոպայի մեծ մասը գեռ բոլորովին վայրենի վիճակում եր։ Գիտությունը գեռ շատ վաղուց եր հարգված Զինաստանում։ Պատասխանատու պաշտոնները տրվում եյին ըստ գիտական աստիճանների, վոր վորոշվում եր խիստ քննությամբ։ Սակայն գիտնականությունը կայանում եր հին դրաբերը լավ իմանալում, իր մտքերն անցյալում գրածի մասին արտահայտել կարողանալում։ Հենցմիայն կարդալ գրել իմանալը Զինաստանում մեծ արվեստ եւ, վորովհետեւ յուրաքանչյուր բառ մի նշան, մի տառ ունի Այդ տառերը գրելն ահազին ժամանակ և ուշադրություն և պահանջում։ Գիտությունը կայանում եր իմաստության և հին գրքերը խորապես հասկանալում։ Սա յեր ամբողջ կյանքը։ Նա Զինաստանում չեր փոխվել հազարավոր տարիներ շարունակ։ Դրա հիմքը կազմում եր գյուղի անփոխնելի կրանքը։ Յուրաքանչյուր գլուղ բնակեցրած եր ազգակցից ընտանիքներով և կառավարվում եր այդ ընտանիքների ծերերի խորհրդով։ Եերերի իրավունքն ու խոսքը սրբազն եյին։ Կրանքի այս լեզանակը սերնդից սերունդ եր ավանդվում։ Հազար տարի առաջ ամբողջ հողը մանրիկ մասերի բաժանվեց, վորոնք իրար եյին անցնում ժառանգաբար։ Այդ մանր հողերն, ինչպես յերեսում ե հին գրավյուրներից, հարյուրավոր տարիներ շարունակ նույնպես են մշակվել, ինչպես և այժմ։ Բարբարոսների ներխուժումից պաշտպանվելու համար Զինաստանը շրջապատված եր բարձր պատերով։ Յեվ այդ պատերից

իերկար ժամանակ վորևե ոտար ազդեցություն ներս չեմ թափանցում: Մինչև XIX դարը Զինաստանը համարվում եր քարացած, հավետ անշարժ կուլտուրայի որինակ:

Ենվ ի՞նչպես ամեն ինչ միքանի տարում փոխվեց: Ոտար կապիտալի ներխուժումը հեղաշրջեց յերկրի եկոնոմիկան: Այս հեղաշրջումը քաղաքական հեղափոխություն առաջ բերեց: Նրա գրոհն ավելի արագացավ պատերազմական անհաջողությունների հետևանքով: 1894—95 թ. թ. չին-լապոնական անհաջող պատերազմից հետո, յերբ լեզրոպացիք սկսեցին խլել չինական հողերը, Զինաստանն սկսեց ուսանողներ ուղարկել արտասահմանյան, մանավանդ յապոնական համալսարանները: Զինացիք իրենց դպրոցներում սկսում են ծանոթանալ լեզրոպական գիտության ու տեխնիկայի հետ: Բացվում են ստորին, տարրական, միջնակարգ և բարձրագույն դպրոցներ, ընդհանուր և տեխնիկական՝ յելզրոպացիններից ու լապոնացիններից փոխ առնված դպրոցական պլանով: 1912 թ. կառավարական սահմանադրական ձև և հաստատվում: Զինացիք կարում են իրենց հյուսերը: Կյանքի ամրող ձևում շատ նորություն ե լերևում: Սակայն հինը դեռ ամեն տեղ հաղթված չեր: Նա մնում եր կառավարական ձևում: Զինաստանը բաժանվում եր 18 նահանգների, վորոնցից լուրաքանչյուրի վլուխը (գուճյուն) մի կատարյալ ֆեռագալական արքա յեր: Ներկայումս առանձին-առանձին նահանգների կառավարիչները կովում են թե իրար, թե կենտրոնական իշխանության դեմ:

ԳՍԱՆԵՐԿՈՒՑԵՐՈՐԴ ԹԵՄԱ

ԶԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԿԱՊԵՐԸ ՄՅՈՒՍ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ

Ինչու չինական ծովագնացությունը չի զարգացել:

Ինչու յերկրագործությունը Զինաստանում բացառիկ կարուր նշանակություն և ստացել:

Զինաստանի միծ մասում ինչն ե խանդարել անասնապահության զարգանալուն:

Առօր արդյունաբերության զարգացման համար հնարավորություններ կմն, թե վոչ: Յեթե կան, վորմնք են և արդյունաբերության վեր ճյուղերի համար:

Ինչու Հյուսիսային Զինաստանն իր Փիզիկական պայմաններով ավելի կարիք ու պահանջ ունի յերկաթուղիների զարգացման, քան հարավայինը:

ՅԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ: — Զինաստանը բացառապես յերկրագործական յերկիր եւ նրա ազգարնակության $\frac{3}{4}$ յերկրագործներ են: Բոլոր մշակելի հողերը բաժանված են մոտ 58 միլ. մանր գյուղական տնաեսությունների: Ազգարնակության յերկրագործ մասը մոտ 300 միլիոն եւ Մի շնչին 0,4 հեկտար հող և գալիս: Ալսքան անհշան հողով կերակրվելու համար տառանձնապես խնամքով մշակել պիտի զիտել Մարդու Մանր հողարամինները մշակվում են ձեռքով՝ բանջարանցային մարդու պես: Դեռ բույսերի մի խումբը չհասած, ավելցրած մարդկերում նորն են շթլում: Վերջին շթլի ժամանակ տուաջին ցանածն արգեն հնաձվում եւ Այս ձեռք հնարավորություն և տալիս տարեկան յերկու անդամ հունձ ունենալու:

Հողի արգավանդությունը պահպանվում և պարարտացման միջոցով (զիտավոր պարարտանյութերն են մարդկային աղբը, մոխիրը, կիրը, ձկների մնացորդները և այլն): Մոլախոտերը միշտ քաղհանգում են: Բույսերի բուկը խնամքով լցնում են. ջուրն անպակաս և շնորհիվ վոստովման ընդարձակ ցանցի:

Ամենակարենոր հացարույսը բրինձն ե, վոր Հարավային ու Միջին Չինաստանում տարեկան յերկու անդամ և հնաձվում: Հյուսիսային Չինաստանում բոււնում են ցորեն, սիմինդր, գառլյան, կորիկ, գարի, բազմատեսակ լորաբույսեր:

Տարեկան 30 միլ. տոննից ավելի մաքրած բրինձն և ստացվում: Ցեղ սակայն այս ահազին քանակությունը չի բավականացնում. կարիք և զգացվում գրախց ել մոտ 50 միլ. սուբլու (վոստով) ներմուծելու Բրնձից բացի ստացվում են նաև ցորեն՝ 25 միլ. տ., գառլյան՝ 5 միլ. տ., ուրիշ հացահատիկներ՝ 70 միլ. տ., զանազան լորաբույսեր՝ 80 միլ. տոնն:

ՅԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ: — Բնական պայմանների տարբեր լինելու հետեանքով հյուսիսում ու հարավում վազուց հետեւ մշակությունների աշխարհագրական բաշխման ձև և մշակվել ներկայում ալդ զանազանակերպությամբ և հիմնավորվում ներքին ու արտաքին ապրանքաշրջանառությունը:

Հարավային Չինաստանն իր բրինձը վոչ միայն հարավային նաև հանգների շուկաներն են նետում, այլև Չինաստանի ներքին շուկաներն են հասցնում: Մանջուրական հացահատիկը վորպես հումք վոչ միայն մանջուրական ջրազացներն են գնում, այլև Տյանցզինի: Հարավային նահանգների բամբակը Շանհայի ու Տյանցզինի տեքստիլ գործարաններն են հասնում:

ՄԱՆՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ:—

Դյուզատանտեսական մթերքների ապրանքանության հետ միասին դյուզացիության շերտավորումն եւ տեղի ունենում: Զինական դյուզացին առևտրով հարստանալով, հրապարակ եւ գալիս վորպես առևտրական ու վաշխառուական կապիտալի ներկայացուցիչ: Զին դյուզացին դյուզական վաշխառուի ճորտն եւ դառնում:

Դյուզացու ճորտացման հետ միասին զարգանում եւ հողի առուծախն ու կտպալով տալը, Այսպիսով քայլքայլում եւ դյուզացիական տնտեսությունը: Նախկին սեփականատերերը կապալառուներ են դառնում, իսկ կապալավարձը խիստ բարձր եւ կապալառուի համար ավերիչ:

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻՆԵՐԸ. ԲԱՄԲԱԿԻ:—Ապրանքային մշակույթներից ամենից մեծ հաջողություն ունեցողը բամբակն եւ Բամբակագործությունը լայն ծավալ ունի Յան-Ցզի-Ցզյանի և Խուան-Խեյի ավագաններում:

Վերջին տարիներս բամբակի ցանքերը շատ են ընդարձակվել: Բամբակագործությամբ Զինաստանն այժմ ամբողջ աշխարհում լեռորդ տեղն եւ բռնում (Միացյալ Նահանգներից և Հնդկաստանից հետո): Բամբակը Զինաստանի համար արտահանման նյութ եւ Ամենից շատ նաև Յապոնիա լեւ արտահանվում, փոքր քանակությամբ ել Յեկարուպա: Բամբակի վորակը բարձրացնելու համար ամերիկական սերմ են գործ ածում: մուտք են գործել նաև բամբակաղտիչ մեքենաներ:

ՄԵՏԱՐԾՈՒ:—Զինաստանում բամբակը լերկար ժամանակ պայքարում եր մետաքսի հետ՝ առաջնության համար: Մետաքսն այժմ յերկրորդ տեղն եւ բռնում, սակայն նա իր նշանակությունը չի կորցրել վոչ ներքին շուկաներում, վոչ վորպես արտահանման նյութ: Եերամապահությունը բավական համաշափ եւ ընթանում ըոլոր լերեք գետավազաններում: Գյուղացիք թթենիներ են տնկում թե իրենց տների, թե բրնձի դաշտերի շուրջը:

ԹԵՑՑ:—Վերջերս սկսել եւ պակասել թեյի առևտրական արժեքը. նա առաջ առևտրի դիմավոր մշակույթն եր:

Զինական թեյի տեղն այժմ բռնում եւ Հնդկաստանի ու Յայլոնի թեյը: Թեյի մշակությունը Զինաստանում մինչև որս ել ձեռքով եւ կտարվում, այնինչ անգլիական կապիտալը Հնդկաստանում ու Ճեյլոնում մեքենայացրել եւ Թեյին ըստ մեծի մասին արտահանվում եւ Անգլիա, Միացյալ Նահանգներն ու ԽՍՀՄ: Նրա մեծ մասը ներքին շուրկաներն եւ գնում: Զինացին տարեկան 5 անգլիական ֆունտ (2,3 կգ) թեյ եւ գործ ածում, ուրեմն 400,000,000 ազգաբնակությունը՝

Զ միւ. կվինստալից տվելի։ Այս քանակությունը 20 անգամ շատ է՝ ներկայիս արտահանածից։

ԼՐԲԱՌՈՒՅՍԵՐ ՑԵՎ ՅՈՒՂԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.—Զինական ժողովրդի համար վորպես սնունդ բրնձի հետ միասին մեծ դեր են խաղում լորաբուլսերն ու նրանցից պատրաստած բուսական յուղերն ու ճարպերը։ Բայց լորիներն ու լուղերը նաև կարենը եքսորտացին նյութեր են։ Այս պատճառով լորապղիների մշակությունն ապրանքացին բնույթ և սուացել։ մանավանդ, վոր լուղեր պատրաստելու գործում դեր և սկսել խաղալ նաև արտասահմանյան կապիտալը։ Մանր տնյանագործական ձեզ հրաժարակում տեղի լի տալիս մեծ լուղահան գործարաններին, վոր Մանջուրիայում կառուցում են լուղոնացիք։

Ցուղի արտադրությունը խոշոր արդյունաբերություն և գառնուում մանավանդ Հյուսիսային Զինաստանում։ Իսկ Հարավում դյուլական տնտեսության մեջ տարածված է յուղ պատրաստելու նախնական տնայնագործական ձեզ։

ՇԱՔԱՐԱՑԻՆ ԲՈՒՅՈՍԵՐ ՑԵՎ ՇԱՔԱՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.—Զինաստանում մշակում են թե շաքարեղեգն, թե շաքարալին ճակընդեղ, սակայն այս շաքարային բույսերի մշակությունը դեռ առանձին հաջողություն չունի, վորովհետեւ շաքարի արտադրությունն ել Զինաստանում զուտ տնայնագործական բնուկթ ունի։

ԿԵՆԴՐԱՆԱԲՈՒՅՈՍԻԹՅՈՒՆՆԵՐ.—Բուսաբուծության հետ համեմատած, կենդանաբուծությունը Զինաստանում յերկրորդական տեղ է բռնում, սակայն նա յել վորոշ չափով զարգանում եւ վորպես առևտրային անասնաբուծություն։ Նրա սպառողական նշանակությունն անհան է։ Բանուկ անտառները շատ ել տարածված չեն. պահում են միայն շատ ու քիչ տապահով գյուղայիք, այն ել միայն հարավում (պահում են գլխավորապես գոմեց)։ Ժողովրդական սննդում տալիս անհանդած կերպով մեծ քանակությամբ վիստում են ճահճուտներում, ինողերը։ Տավարի ու վոչխարի միսը, ինչպես նաև կաթնեղենը, գործածական չի, Զինաստանում կաթնատու անասուններ պահելը զարդացած չի։ Ներքին շուկայում շատ փոքր են նաև ուղարի ու վոչխարի պահանջը։ Զինաստանում բրդեղեն չեն հագնում, Անասուններից ամենից տարածվածը խոզն եւ Միայն հուսիս-արենելյան շրջաններում ու Զինաստանի ներքին մասերում են պարապում տավար

վոչխար պահելով։ Պահում են բավական շատ։ Կենդանիներ պահելն արտահանման համար տալիս ե գլխավորապես վոչխարի, այծի, ուղարքի բուրգ և խողի մազ։

Զգալի քանակի ձռւ յի արտահանվում՝ մասնավանդ դեպի Անդրբաւան Արտահանվում են ուժիքի հիրատորդութենավիրով, այդ պատճառով ել լոնդոնի շուկան են հասնում բավական թարմ վիճակում ու ռուսական ձվերից ավելի արժեք ունեն։

ԱՐԴՅՈՒՆԱԾԱՆՈՒԹՅՈՒՆ. — Այս արդյունաբերությունը գլխավորապես գտնվում է ոտար կապիտալի ձեռքում։ Հանված քարածխի քանակը զեր մեծ չե (ընդամենը 20 միլ. տոնն)։

Չինաստանի յերկաթահանքերի մեծության վերաբերյալ տերը յապոնական կապիտալն եւ Հանքի մեծ մասը Չինաստանում չի մշակվում, տյլ արտահանվում ե հում վիճակում։ Թուջի գործածությունը Չինաստանում դեռ շատ աննշան եւ։

ՌԻՄԻՇ ՀԱՆՔԵՐԻ. — Անտիմոնը և վոլֆրամը ծածկում են համաշխարհային պահանջի 60 %։


Չինական նավթ վորոնելում յապոնական ու ամերիկական կապիտալները մրցում են իրար հետ։ Գլխավոր շահագործում կատարվում է Հյուսիսային Չինաստանում և Հարավային Մանջուրիայում։

ՏՆԱՑՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԸ ՅԵՎ ՆԵՐԲԻՆ ԱՌԵՎՏՍՈՒՄԸ. — Դեռ վաղ ժամանակներից Չինաստանում վորպիս ժողովրդական տնտեսության գլխավոր հենակետ, գյուղատնտեսության հետ միասին ծառայել են նաև արենստաներն ու տնայնագործությունը։

Զանազան շրջաններ մասնագիտացել են այս կամ այն արտադրության մեջ։ Շինում են բամբակե ու մետաքսի առարկաներ, ժամապվեններ, գորգեր, հարդի հյուսվածքներ, կաշվեղեն, թղթից գործվածքներ, ֆարֆորե, մետաղե իրեր, փղոսկրից ու հասարակ վոսկրից և կրիայի պատյանից առարկաներ, կահույք և ուրիշ շատ բաներ։ Բոլոր քաղաքների փողոցներում անվերջ խանութներ են, ուր գնորդի աշքի առաջ զանազան առարկաներ են շինում։ Մանր արտադրանքի գերակշռության հետևանքով ել մեծաքանակ առևտրական միջնորդներ կան։ Թվում ե, թի առևտուր ե անում ամբողջ յերկիրը։

ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ. — Տասնյակ տարիների ընթացքում յերկիրը մնում եր լոկ վորպիս յերկրագործության, տնայնագործության ու արհեստների տեղում Բայց XIX դարում, մասնավանդ 80-ական թվականներին, սկսեցին իրենց ճեռնարկումներով մուտ գործել նախ անզլիական, ապա նաև ֆրանսիական, յապոնական, գիրմանական, ամերիկական, ռուսական կապիտալները։ Սկզբում Չինաստանը պայքարում եր յեվ-

բողական ու ամերիկական նորամուծությունների դեմ, հետո չինական բուրժուազիան հասկացավ, վոր ինքը կարող ե ողավել լիվրոպական ու ամերիկան տեխնիկայից: Ցերկիրն անասելի հարուստ և քարածխով ու լիրկաթով, սննդի և տեքստիլ հումքով, մանավանդ մեծ քանակությամբ եժան ձեռքերով: Այս բոլորն ոգնեց և վրոպական, ամերիկական ու չինական գործարանալին ձեռնարկումների արագ հաջողությանը: Ներկայում Զինաստանը մոտ 1000 ֆարբիկաներ ու գործարաններ ունի, ուր մոտ մեկ միլիոն բանվորներ են աշխատում: Առանձնապես աչքի յեն ընկնում մետաքսեղենի ու բամբակեղենի ֆաբրիկաները, ալյուրի ու յուղի գործարանները, ծխախոտի-



ենիք Զինաստանի արդյունագործական շրջանները տանող դլխավոր ճանապարհները:

Ֆաբրիկաները: Արդեն տասնյակներով լիրկաթի ու պողպատի գործարաններ ու ֆաբրիկաներ կան, վորոնք հելեկտրականությանը վերաբերող իրեր են պատրաստում: Գլխավորապես ինդուստրիալիզացիայի յենթարկված և հյուսիսային Զինաստանը: Մըա մասին վկայում ե

նաև ներկալիս ներմուծումը։ Գլխավորապես մեքենաներ են ներմուծվում։

Եկոնոմիկալի փոփոխությունը 1911 թ. Զինաստանում բուրժուական դեմոկրատական հեղափոխություն առաջ բերեց։ Կայսրը գահընկեց յեղավ, և յերկիրը հանրապետություն դարձավ։ Հյուսիսի և հարավի հակազդությունը պատճառ դարձավ յերկու կառավարություն կազմվելուն՝ հյուսիսային—պեկինյան և հարավային—կանտոնյան (հյուսում Պեկին և հարավում Կանտոն գլխավոր քաղաքներով)։ Հարավի կառավարության հաղթանակը 1928 թվին միացրեց Զինաստանը։ Սակայն այս միությունը, վոր առաջացրին գեներալներն, իրենից կայուն վոչինչ չի ներկայացնում։



Յաղոնիան և Զինաստանը։ Յաղոնիան համարյա ամբողջ հյուսիսային Զինաստանն իր ազգեցության տակ է տուի։

ՊԱՅՔԱՐ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ.—Պայքարի պրոցեսում չին ժողովուրդն իր համար ավելի ու ավելի պարզեց յելլոպական, ամերիկական ու յապոնական կապիտալի դեմքը, վոր ամեն կերպ պաշտպանում եր հեղափոխության թշնամիներին, վորպեսզի կարողանա Զի-

նաստանը իր գաղութ դարձնել: Իմպերիալիստների այս ձգտութիւնը խիստ զիմադրության և հանդիպում: Ազգային ինքնազիտակցությունը հետզհետեւ ուժեղանում ու ամրանում եւ: Դեռ չին պրոլետարիատը չի կարողացել ամբողջ շարժումն իր ձեռքն առնել բայց նա կառնի և միայն այն ժամանակ, յերբ բանվորա-գլուղացիական իշխանություն կհաստափի, Զինաստանի վերջնական ամբողջացումը տեղի կունենա:

Զինաստանի ներսում վճր առանձին մասերն են տարբեր գում իրարից:

Ի՞նչո՞վ են տարբերվում Հարավային և Հյուսիսային Զինաստանները:

Ի՞նչ բան է մարդարին կուլտուրան, և վճրն է նրա առանձնահատկությունը:

Վորմնք են Զինաստանի զլիսավոր հացահատիկները: Նրանք բավարարում են յերկրի պահանջը:

Գլխավոր տեխնիկական բույսերը:

Զինաստանի տեղական արդյունաբերությունն ի՞նչ բնույթ և կրում:

Ի՞նչո՞ւ ոտար կապիտալն սկսեց հետաքրքրվել Զինաստանով:

Ի՞նչպես և արտահայտվում նրա հափշտակողական աշխատանքը:

Ի՞նչպես և ընթանում չինական ազատության պայքարը (ի՞նչ զիտեք հասարակադիտությունից):

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ: — Զինաստանում հաղորդակցությունն աչքի է ընկնում իր մեծ աշխաժությամբ: Հյուսիսային տափարակ Զինաստանը զուրկ է նավարկելի գետերից, բայց դրա փոխարեն լավ ճանապարհներ ունի: Հարավային Զինաստանը լիռնոտ է, ճանապարհները դժվարին, բայց հրաշալի գետային ճանապարհներ ունի: Հյուսիսի ճանապարհները կտրում են ինչպես ըեռնատար, այնպես ել յերկանիվ սայլերում լծված ջորիների քարավանները: Շատ շատ են նաև ձեռնասալլակավորները: Ձեռնասալլակները վերցնում են 300 կիլոդրամից ավելի, իսկ լավ ճանապարհներով՝ զրանից ել ավելի, նույնիսկ կրկնապատիկը: Հյուսիսային Զինաստանի ըեռների տեղափոխվում է արդ սայլակներով: Հարավային Զինաստանը լիռնային շավիղների և ջրային ճանապարհները յերկիր եւ: Միլիոնագոր մարդիկ այստեղ բեռնատարությամբ են զբաղված: Առանձնապես

շատ ապրանք և փոխադրվում գետերով, սակայն այստեղ ել նավերը բարչողը մարդիկ են:



Խմբերի հայտական պետությունները և Զինաստանը:

ԳԵՏԵՐԸ ՅԵՎ. ԶԻՄՆՅԻՑԻ:—Գլխավոր նավարկելի գետը Յան-Յզի-Ցղյանն եւ Շոգենավերը հասնում են գետնիվեր մինչև Հանկոու—մոտ 1000 կիլոմետր: Հարթ հատակ ունեցող շոգենավերը մինչև 1500 կիլոմետր ել կարող են կարել: Սի-Ցղյան գետն իր հարուստ ճյուղավորման շնորհիվ Հարավային Զինաստանի համար նույն դերն ե խաղում, ինչ վոր Յան-Ցղի-Ցղյանը՝ Հյուսիսայինի համար: Դեռ միջին դարերում չինացիք փորեցին աշխարհի ամենից յերկար ջրանցքը, վորը «Կայսերական», այժմ «Մեծ» ջրանցք ե կոչվում: Նա 1200 կմ. յերկարություն ունի և հարավային նահանգները (բրնձի հայրենիքը) միացնում ե Զինաստանի մայրաքաղաք Պեկինի հետ, վորն ընկած է յերկը հյուսիսում: Զինական ջրանցքները վոչ միայն նավարկության են ծառալում, այլ և արհեստական վոռոգմանը, իսկ նրանց հատակին հոտած աղբը հրաշալի պարարտանլութ ե:

Զինաստանի յերկաթուղիների յերկարությունը 12000 կիլոմետ-

րից ավելի յէ։ Սակայն ապրանքների մեծ մասը փոխադրվում և ջրացին ճանապարհներով, վորովհետեւ զա անհամեմատ ավելի եժան և նստում։

Մուկենում և Նյուչուանում չինական ճանապարհները միանում են արեւլյան-չինական, հետեւարար լեկրովաւստիական ճանապարհներ։ Մուկենից ել ճանապարհը գնում և Պեկին և Կալչան։ Պեկինից Կանոնն, Հանկոսույի վրայով անցնում և Կենտրոնական չինական ճանապարհը։ Հնդկաչինյան ֆրանսիական ցանցին միանալուց հետո այս ճանապարհն առանձնապես մեծ նշանակություն կունենա։ Աս Ցելքուպալից գեղի Ավտորալիս և Մալայան արխիպելագը առնող ամենից կարճ ճանապարհը կդառնա։

Կենտրոնական ճանապարհներ զուգահեռ անցնում և յերկրորդ յերկար զիմքը՝ Տանցզինից գեղի Նանկին և Շանհայ։

Ոտարերկրյա մասնավոր ճանապարհներից նշանավորներն են։ — Արեւլյան-չինական (Բուս-չինական), Հարավ-մանջուրական և Շանդունյան (յազոնական) և Յուննանյան (Հարավային Չինաստանում — ֆրանսիական) գծերը։

ԱՐՏԱՔՏԻՆ ԱՌԵՎՏՏՈՒԹՅԸ, — Չինաստանի արտաքին առետուրը համեմատած նրա ներքին առեւտրի հետ, աննշան եւ Բայց զա պատերազմից հետո շատ մեծացավ։ Նրա բարանուը միշտ պասսիվ եւ Համաշխարհային կապիտալը Չինաստանին ավելի ու ավելի յէ ներգրավում արտաքին առեւտրի մեջ, ավելի ու ավելի յէ քայքայում յերկիրը։

Արտահանման գլխավոր նյութերն են՝ մետաքս, լոբարույսեր, բույսերի յուղ, բամբակ, թեյ, կաշիներ, անագ և ածուխ։ Ներմուծվում են՝ տեքստիլ գործվածքներ, սննդանիութեր, մետաղներ, մեքենաներ, նավիթ։

Չինաստանի հետ ապրանքների փոխանակություն կատարող պետություններից առաջին տեղը բռնում և Անգլիան՝ Հոնկոնգի հետ միասին, յերկրորդը՝ Յապոնիան։ Անուհետեւ գալիս են Հ. Ամերիկայի Միացյալ Նահանգները, Հնդկաստանը, Գերմանիան, Ֆրանսիան, ԽՍՀՄ։

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԽՍՀՄ-Ի ՀԵՏ. — Խնչպես և պատերազմից առաջ, ԽՍՀՄ ներմուծվող գլխավոր ապրանքը թեյն են համեմատաբար քիչ հումք և ներմուծվում (կաշի և բուլսերի յուղ), գրանից ել ավելի պակաս՝ գործվածքներ։

Չինաստանում սկսված ինդուստրիալիզացիայի հետ միասին փոխվել ե նաև ԽՍՀՄ-ից ներմուծվող ապրանքների տեսակը։ Պատերազմից առաջ գլխավորապես արդյունաբերական ապրանքներ, այն եւ

կոշիկ, շաքար, լուցկի, ապակի, ճոթ, զարդեր ելին ներմուծվում Զինստատան, այժմ բացառապես ներմուծվում են հում նյութեր—փայտ, տծուխ, նավթամթերք, լերկաթ, յեղջերուի յեղջյուրներ։ Ապագալում ներմուծման գլխավոր նյութ պիտի ծառայեն ծովալին նյութերը, վորոնք առայժմ Յապոնիան և տանում ԽՍՀՄ այն ջրերից, վոր ինքը կապալով և վերցրել։

ՏԱՃԿԱՍՏԱՆ, ՊԱՐՍԿԱՍՏԱՆ, ԱՎՂԱՆՍՏԱՆ ՄՈՆԴՈՒԲԱ,
ՏԱՆՆՈՒ-ՏՈՒՎԱ.

Համբ քարտեղի վրա նշանակեցեք այս պետությունների սահմանները։

Ի՞նչ զուգահեռականների մեջ և գտնվում այդ պետություններից յուրաքանչյուրը և ի՞նչ պետությունների հետ են սահմանակից։

Նշանակեցեք.—Մարմարա, Միջերկրական, Կարմիր, Արարական ծովերն ու Պարսից ծոցը. Կոստանդնուպոլիսի, Դարդանելի, Բաբ-ել-Մանդերի և Հյուրմուզի նեղուցները. Աղենի և Ոմանի ծոցերը. Հիմենող գետը. Կոստանդնուպոլիս, Սկյուտարի, Անգորա, Ջմուլուխա, Բաղդադ, Թավրիզ, Թեհրան, Հերաթ, Քարուլ, Մեկլա, Աւլան-Բատոր քաղաքները. Անասոլիական (Փոքր Ասիայում), Բաղդադի (շարունակությունը մինչև Պարսից ծոցը), Հեջասի (մինչև Մեկլա) յերկաթուղիները. Փոքր-Ասիական և Իրանի բարձրավագանդակները. Ելբուրս, Հինդուկուչ, Սոլիմանյան լեռները. Հայքերի լեռնանցքը։


Վորոշեցեք այդ պետություններից յուրաքանչյուրի ջերմության աստիճանը հունվարին և հուլիսին. տեղումների քանակը, բուսական շրջանների բաշխումը, ազգաբնակության խտության աստիճանը։

ՖՍԱՆԵՐԵՔԵՐՐՈՐԴ ԹԵՄԱ

ՏԱՃԿԱՍՏԱՆ, ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ՅԵՎ ԱՎՂԱՆՍՏԱՆ

Յաճկաստանը համ. պատ. առաջ 3000 հազ. ք. կլմ. 24 մ. ազգաք.							
>	>	հետ	1250	>	>	18	>
Պարսկաստանը —	—		1645	>	>	9,5	>
Ավղանստանը —	—		624	>	>	6	>

ԲՆՈՐՈՇՈՒԽՄՆ. — Յերեք պետություններն ել լեռնահովիտաներում ու վոստգվազ մասերում պրիմիտիվ յերկրագործության ու ալղեգործության, իսկ ընդարձակ չոր տարածություններում քոչվոր անառնապահության յերկրներ են: Հանգային հարստությունները շատ են, սակայն համարյա անմշակ վիճակում: Արդյունաբերությունը համարյա տնայնագործական վիճակ ունի:



Իմպերիալիզմը Մերձավոր Արևելքում:

Ասիական Տաճկաստանը, Պարսկաստանը և Աղվանստանն ընկած են մերձարևագարձային գոտում, սակայն յերեքի յել մեծ մասը լեռնալին եւ բարձր լեռնաշղթաներով: Լեռնային մասերում բարեխառն գոտու կլիման շատ չոր եւ: Ալտան անապատներ ու կիսանապատներ են: Վերջիններիս ազգաբնակությունը քոչվոր խաշնարածությամբ և դրազվում: Իսկ լեռնալանջերում ու հովիտներում բուսականությունը հրաշալի յեւ: Ալտան բուսնում են պտղատու ծառեր, խաղող, հարթավայրերում՝ նաև բամբակ ու բրինձ: Մշակման գործիքներից տիրապետողը գետ արորն ու բահն են:

Հողի կեսը, նույնիսկ ավելին՝ խոշոր կալվածատերերի ձեռքին եւ ֆյուզացիությունը ճնշված ու բազմատեսակ հարկերով ծանրաբեռնը

ված եւ Ալդ հարկերի մեծ մասը կալվածատերի գրպանն ու մտնում։ Դյուզացին հարկ և տալիս—յուրաքանչյուր շնչի համար, հողի համար, վոռոգելու ջրից ոդտվելու համար, հացահատիկները ժողովելու համար, յուրաքանչյուր անասունի համար և ալյն, և ալյն Բացի սրանից՝ նա վորոշ ծառալություններ և կատարում կալվածատիրոջ համար. դանագան ընծաներ և տալիս նրան, Ալսպիսի պայմաններում գյուզացիք լքում են հողերը. Դատարկ տարածություններ—վորքան ուղեք։

Տ. Ա. Ճ. Ա. Ս. Ա. Ն. (Թյուրբիա)

Դեռ մոտիկ անցյալում Տաճկաստանն ահագին հողեր ուներ Յեղրոպայում, Ասիայում և Աֆրիկայում. Ներկայումս կենտրոնացած և համարյա միայն Փոքր Ասիայում Աֆրիկայում Տաճկաստանն այլև հող չունի. Յեղրոպայում փոքրիկ հողամաս և մնացել—Կոստանդնուպոլիս և Աղրիանուպոլիս քաղաքներով։

Թյուրքիայի գլխավոր հարստությունը նրա դաշտերի ու խաշնարածության տված բարիքներն են. Հողերի 70% ցորենի արտեր են, մոտ 15% ՝ բամբակի ցանքեր։

Հանքային հարստություններից հայտնի յեն քարածուխը և Մոսուլի շրջանի նավթը։

Գործարանական արդյունաբերություն համարլա չկա. յեղածներն ել ճոթեղենի, սննդային ու կաշվեղենի մանր ձեռնարկումներ են. Արտասահմանյան եժան ապրանքները ինդղել են տեղական անտինադործական արդյունաբերությունը. Վերջինիս գլխավոր տեսակներն են—դարբնություն, ատաղձագործություն, ջուլհակություն և գորգագործություն։

Տաճկաստանի վրայով ե անցնում համաշխարհային նշանակություն ունեցող Բերլին—Փոքր-Ասիա իերկաթուղին. Արևելյան Բուղապետշտ—Կոստանդնուպոլիս յերկաթուղու վերջին մասը Յեղրոպական Թյուրքիայից և անցնում. Ասիայում նրա շարունակությունը Սկուտարից մինչև Ղոնիս յե գնում (Անատոլիական յերկաթուղի), վորից հետո Բաղրադի յերկաթուղին ե (մինչև Պարսից ծոցը). Վերջինս անցնում է Միջազգետքով, վորն այժմ գրավել են Անդլիացիք. Ընդհանրապես Տաճկաստանը յերկաթուղիներ քիչ ունի. շատ հարդի յեն ուղտերի ու ջորիների քարավանները։

Թյուրքիայի գլխավոր նավահանգիստը կոստանդնուպոլիսն է (880 հազ. ազգաբնակությամբ), վոր խոշոր բնեուաշը ջանառություն ունի. Սակայն նավերի մեծ մասն արդտեղով միայն անցնում են (վոչ

բարձրվում են, վոչ բնունաթափվում): Սևիական առետրական նտվատորմը շատ աննշան է, արտաքին առետությունունպես Արտահանման դլխափոր նյութերն են—հարավի մրգեր (չամիչ, նարինջ, լիմոն, թուղ, խուրմա), ընկույզ, հացահատիկներ, բանջարեղեն, դինի, հաշիշ, ծըխախոռ, գորգեր, բամբակ, սպունգ և ալին:

Մինչև 1921 թիվը Թիուրքիան կայսրություն եր (Ոտտոմանյան կայսրություն). 1921 թվին «Մեծ ազգային ժողովը» հռչակեց, թե իշխանության իրավունքը միայն ժողովրդին և պատկանում: 1923 թ. Թիուրքիան հանրապետություն հայտարարվեց: Նախագահ ընտրվեց Մուստաֆա-Քեմալ-փաշան: Մայրաքաղաք հայտարարվեց Անդորան: Որենսդրական իշխանությունը պատկանում է Ազգային ժողովին, վոր և տարօվ և ընտրվում: Նույնքան ժամանակով և ընտրվում նաև նախագահը: Նա ժողովի պատգամավորներից պիտի լինի:

Մայրաքաղաքն, ինչպես ասվեց, Անդորան և—Փոքր Ասիայում—ունի 100 հազ. ազգաբնակություն:

Պ Ա Ր Ս Կ Ա Ս Ա Ն

Պարսկաստանը հանքալին մեծ հարստություն ունի: Հարուստ և նաև նավթով: Նավթ կա Պարսկաստանի թե հյուսիսում, թե հարավում: Առաջմն միայն մշակվում և այն շրջանը, վոր ընկած և Բախտիարյան սարերի նախալեռնալին մասում (Մայդան-նասֆթուն): Նավթալին շրջաններում գործողն ոտարերկրուա կապիտալն և (անդլիական ու ամերիկական): Մշակվում է մեծ լեռանդով: Մոտ 220 կիլոմետր յերկարության նավթատար խողովակ և անցրած՝ նավթահորերից մինչև նավթ զտող գործարանը (Արագան կղզու վրա, վոր գտնվում և Շատ-ել-Արաբի քիրանում): Դեռ 1910 թվին Պարսկաստանում նավթ չկար. ներկայումս նավթ ունեցող պետությունների շարքում նա հինգերորդ տեղն և բռնում (Միացյալ Նահանգներ, Վենեցիուելա, Մեքսիկա, ԽՍՀՄ, Պարսկաստան):

Մշակող արդյունաբերությունը սաստիկ տուժում և ներմուծվող յելլոպական ապրանքներից: Շոգիով կամ ելեկտրականությամբ աշխատող ֆաբրիկաներ ու գործարաններ համարլա չունի: Առաջները Թիհրանում, Թավրիզում և Սպահանում գոյություն ունեիին զինագործարան, շաքարի և ապակու գործարաններ, լուցկու ֆաբրիկա, վորոնք ներկայումս չեն գործում: Մնացել են միքանի բամբակագոտիչ, ջուլհակության ու մետաքսագործական ֆաբրիկաներ, ավելի ճիշտ՝ մեծ արհեստանոցներ—50—150 բանվորներով: Սաստիկ ընկած և նաև

անալինագործությունը, վորով մի ժամանակ պարծենում ելին պարսկական քաղաքները (պողպատե իրերի, մետաքսեղենի, բրդեղենի, գորգերի, ապակեղենի, փայտանի) արտադրություն, ակնագործություն):

Հաղորդակցության ճանապարհներ համարյա չկանու հաճախ նույնիսկ խոշոր առևտրական քաղաքները սայլի ճանապարհ չունեն (ապրանքների տեղափոխությունը կատարվում ե ուղտերով, ձիերով. ու ջորիներով): Գոյություն ունեցող լերկաթուղիներն ու խճուղիներն անց են կացրել ու շահագործում են ոտարերկրացիները, բացի նախկին սուսական ճանապարհներից, վորոնք Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ձրիքար վերադարձվեցին Պարսկաստանին: ԽՍՀՄ նույնիսկ նախկին շարական կառավարության դրամական պահանջներից հրաժարվեց:

Առևտուրն աննշան ե: Արտահանման գլխավոր առարկան նավթն ե: Այնուհետեւ մետաքս, գորգ, կաշի, գառան մորթի և ուրիշ մորթիներ, չոր մրգեր, հաշիշ, բամբակ, բրինձ: Ներմուծվում են ըստ մեծի մասին բամբակեղեն և շաքար:

Պարսկաստանում, ինչպես և Տաճկաստանում, սկսել և ուռնանալ առևտրական կապիտալը՝ նոր հրապարակ լեկող բուրժուազիան փորձեր և անում պայքարելու բռնակալության գեմ: 1905 թ. Պարսկաստանում պահանջ զրվեց, վոր ներկայացուցչական սիստեմ մտնի: 1906 թվին պարսից շահը (թագավորը) ազգային ժողով կամ մեջլիս հրավիրելու հավանություն տվավ. սակայն մեջլիսն ել պարբերաբար ու կանոնավոր չեր հրավիրվում: 1925 թվին մեջլիսը կառավարող արքայական տունը Շհանունը ազգային բարորության գահընկեց հայտարարեց: Սակայն այդ հեղաշրջումը վոչ թե տիրող կարգը, այլ թագավորող տունը միայն փոխեց:

Պարսկաստանի մայրաքաղաքը Թեհրանն է՝ 350 հազար ազգաբնակությամբ:

Ա. Վ. Ղ. Ա. Ն Ս Ա. Ն

Ավշանստանը մի լեռնոտ լերկիր ե, վոր բռնում ե Իրանի բարձրավանդակի հյուսիս-արևելյան մասը: Ավշանստանը հյուսիսում սահմանակից ե ԽՍՀՄ, արևմուտքում՝ Պարսկաստանին, հարավում՝ Բելջիստանին: Արևելքում նա մոտենում ե Հնդկաստանին և իշխում ե Քաբուլ գետի հովտում. գանվող Հայքերի անցքին, վոր տանում ե դեպի Հնդկաստան:

Եերկրի մեծ մասում անամսապահությամբ, գլխավորապես խաշ-

նարածությամբ են պարապում (գմակավոր վոչխար): Բուրդը, վոչխարի մորթին ու կաշին արտահանման զլիավոր առարկաներն են: Գլխավոր հացահատիկը ցորենն է. կա նաև հաճար ու դարի: Լեսնահովիտները հայտնի ինն խնձորով, Քիչ չե նաև ծիրանը, նուշը և ձիթապառողը: Ներկարույսեր ու գեղարույսեր ել են մշակվում (լիզակ, շաֆրան, ասսա-ֆետիգա): Տափաստանային թփերը հոտավետ ձլութ և գումմիքաբարիկ են տալիս: Յերկաթ, վուկի, թանգաղին քարեր եւ կան, սակայն քիչ են մշակվում:

Հինգուկուշ լիսնաշղթայով Ավղանստանը յերկու մասի յե բաժանվում: ԽՍՀՄ սահմանակից հյուսիսային մասն այնքան ել բարձր չե (Հերաթ, 950 մ. ծովի մակերեսութից) և ճանապարհներ անցկացնելու համար ավելի հարմար է (մեր Միության հարավային սահմանում գտնվող Կուշկա կայարանից մինչև Հերաթ ընդամենը 100 կիլոմետր է), Ալտաղ և կենտրոնը զլիավոր դաշտավայրերի—ջրովի, թե անջրդիր: Ավղանստանի 1,5% ցանվում եւ Մրա կեսը ջրովի է, կեսն անջրդիր: Ավղանստանի հյուսիսը տալիս ե ցորենի, բրնձի, բամբակի և յուղասերմերի (վուշ և այլն) մեծ մասը: Ալտաղ ել Ավղանստանի ամենալավ արտաներն են ընկած:

Հինգուկուշից հարավ ընկած մասը շատ բարձր է (Քարուլ—1760 մ. ծովի մակեր.): Սա չոր անապատների, քոչվոր խաշնարածության շրջան եւ Յերե հարավում խոտն արեից չորանում է, ազգաբնակությունն իր հոտերով զեղի հյուսիս և քաշվում: Վոչխարի գալրնանային խուզը, վոր ամրողջ բրդի $\frac{1}{5}$ և տալիս, ԽՍՀՄ սահմանում է կատարվում:

Յերկարագործության համար պիտանի հողերն ընկած են հարավում նեղ շերտերով, գետերի հովիտներում, վորպես առանձնակի ու աղիսների: Վոռողման ջուրը ձեռք և բերգում քյահրիդներից—մեծ գժվարությամբ: Հարավի ամայութլան մեջ զեղեցկությամբ աչքի յե ընկնում Զելալ-Աբադը (կառավարության ձմեռոց): Նա ընկած է ընդամենը 600 մ. բարձրության վրա և լինթատրոպիկական բուսականություն ունի (նարինչ, լիմոն, արմավենի, շաքարեղեգն, բամբակի):

Արդյունաբերությունը տնախնագործական արտադրանքի ընույթ է կրում: Գլխավորապես բուրդ և մետաքս և վերամշակվում (ուղտի և այծի բրդի գործվածքներ, թաշկինակներ, գորգեր, մետաքսե գործվածքներ և այլն): Քարուլումն է գտնվում լերկրի առաջին և առաջմմ միակ ֆաբրիկան, վոր մեքենաներով բուրդ և վերամշակում:

Յերկրի մայրաքաղաքը Քարուլն է, վոր 100 հազ. բնակիչ ունի:

Նա Տաշքենդի հետ միացած ե ողանավային գծով, Ամբողջ քաղաքը թաղված ե ալզիների մեջ, Փոքրիկ աների մեջ աչքի լեն ընկնում 1928 թվից շինվող բազմահարկ կառավարական շենքը և պալատը:

Քարուլի պատկերն ունի յուրաքանչյուր արևելյան քաղաք—Թեհրան, Թավրիզ, և այլն:

Ահա Քարուլի գլխավոր շուկան. «Ահա համաշափ որորվող ուղարքի, ջորիների ու եղերի քարավանը, Եշերից մեկի վրա նստած ե նահապետական մորուքով, սպիտակ չալմալով ու կոշտ բրդի վերնազգեստով մի ծերունի: Զիեր, անցորդներ, ջրկիրներ, այրված ու կընձիռներով պատած մի թափառական, վոր յետերից կապած քաշում, տանում ե մի լեզ: Փափախներ, յեկըռպական գլխարկներ, կարմիր ու սպիտակ ամամաներ (չալմա)… Այս բոլորը շարժվում, կանգնում, գնում ե... Փողոցի լերկու կողմում (չարսու) ապրանքներով լիքը փոքրիկ խանութներ են:

«Ահա քաղցրեղենների խանութներ. ինչեր ասես չկան—ամեն տեսակի, գույնի ու ձեր անուշեղեն, բոված սիմինդր, չոր մրգեր... Մի խոսքով՝ ավղանական «դաստարխանացի» (հյուրասիրության) բոլոր նըբությունները:

«Մի փոքր հեռու մանրավաճառներ, պղինձ ու վոսկի վաճառողներ, վլուկերիչներ, դարրիններ, սառաֆներ...

«Ահա գեղեցիկ գորգի վրա ծալապատիկ նստած ե ասիական «բանկիրը» (ըստ մեծի մասին ինդու): Առաջը դրած են զրամով լիքը բաց արկղներ, կողքին արծաթով լի պարկ:

«Մի փոքր հեռու տեղ են բռնել յերկաթափաճառները, կաշվեվաճառները, ճոթավաճառները, մետաքսավաճառները...

«Գնորդներն ապրանքը լերկար զննում, սոկարկում են:

«Գնորդ կանայք խմբերով են՝ լերկու, լերեք հոգի միասին:

«Շուկան իր ակումբ-թերարանն (չայխանա) ունի: Թել խմողները բոլորն ել ծալապատիկ են նստած:

«Այսքան չեն խմում, վորքան զրուցում են: Մուգ թել ե, մանր կտրտած (կծովի) շաքարով: Խոսում, աղմկում են: Մի անկյունում դրամմոփոնն ե ավղանական, ինդուսական ու անգլիական յեղանակներ հնչեցնում. վիճում, փափսում են. քաղաքական զրույցներ, կրոնական վեճեր...

«Շուկան փակվեց: Գրամմոփոնը նորից ե հնչում: Քաղաքը նորից ե կենդանանում. լապտերները վառվեցին: Քաղաքն ելեկտրականությամբ ե լուսավորվում: Ամբոխը ձգվում ե դեպի կինո-թատրոն:

«Ինչ-վոր մի նախկին խանի պալատ այժմ կինո լե: Ցարուսներ,

աթոռներ կան կանայք առանձին են նստած: Նրանց մի մասը բարտկ շղարշով և ծածկված: Շատերն ել չաղքառ ունեն: Յեվրոպական ձեռվ հաղնվածներ ել կան, սակայն յերեսի թանձր շշարշը պարտադիր են:

Յերկաթուղիներ չկան (բացի Քարուլից մինչև քաղաքից դուրս արքայական պալատը տանող ճյուղից, վոր և կիլոմետր յերկարություն ունի), նավարկելի գետեր՝ նույնապիս: Հաղորդակցության գլխավոր միջոցը քարավաններն են—հերթից Դանդահար, Դանդահարից Քարուլ և Քարուլից Փեշավար:

Արտաքին տուեաւուրը զլիսավորապես Հնդկաստանի, սրանից հետո յել ԽՍՀՄ հետ եւ:

Մինչև 1919 թ. Ավկանստանը մի փակ յերկիր եր—անգլիացիներից կախված: Այդ ժամանակի Հարիբուլլա թագավորը (խան) կաշոված եր անգլիացիներից: Ժողովուրդն ապստամբեց, խանին սպանեց, նրա պալատն այրեց: Նոր փագիշահ Ամանուլլա-խանը անգլիացիների հետ կավեց և իր յերկրին տնկախ գիրք տալով, նրա սահմանները բացեց ու հաղորդակցության մեջ մտալ ԽՍՀՄ և յեվրոպական մյուս յերկրների հետ: Առեւտրական պայմանագրեր կնքեց և Ավգանստանի պատմության մեջ տուաշին անդամ ճանապարհորդեց Յեվրոպայում (1927-28): Մյուս մերձարեկելյան յերկրների պես Ավգանըստանը և յերկրի տուեաւուրն ու անտեսական վիճակն արագ կերպով բարձրացնելու նշաններ և ցույց տալիս (նրան հարկավոր են յերկաթուղիներ, ընդարձակ բամբակացանքեր, տեղական բամբակի փոխարեն՝ ամերիկական սերմ, ֆարբիկաներ և այլն): Բնական կլինի սպասել, վոր նրա հարաբերությունները ԽՍՀՄ հետ կզարդանան, վորովհետեւ հենց Մյուսությանը սահմանակից մասն ե, վոր հարուստ և բամբակով, բրնձով:

ԽՍՀՄ նրան կտա նավթ, ճոխ և շաքար:

Մ Ո Ւ Գ Ո Ւ Ի Ա.

Մակերեվույրը Յ միլ. բառ. կիլոմետր, ազգաբնակուրունը Յ միլիոն:

Մոնղոլիան ընկած և Գորի սարահարթի տրեկելյան մասում:

Կլիման ամառը սաստիկ չոր, իսկ ձմեռը սարսափելի փոթորկութ ու ցուրտ: Սարահարթի մեծ մասը չոր զաշտեր են, վորոնք տեղադր կտարայալ անապատների լեն փոխվում:

Բնակիչները մոնղոլներ են—մեծ մասը թափառական խաշնացածներ:

Թափառականի ամբողջ հարստությունն իր ուղտերը, ձիերն ու վոչխարներն են: Նա դրանց հետ միասին թափառում ե իր տոհմական կալվածներում, հետը տանելով նաև իր շարժական բնակարանը—յուրաքանչյուր Միս, կաթ, կումիս, դալմուխի թեև՝ յերբեմն կաթով, ճարպով, կորեկով, յերբեմն մաքուր—ահա նրա սովորական ուտելիքը: Յուրաքանչյուր զարգարանքը նրա անսառւններն են:

Գլխավոր վառելիքն աթարն ե, վոր ժողովում հն կանաչը ու յերեխանները:

Թափառական-մոնգոլները չեն կարողացել մեծ քաղաքներ ստեղծել: Ալդակիսիների թիվը Մոնղոլիայում քիչ ե: Թեպետ ավերակ քաղաքներ շատ կան: Այդ քաղաքները կամ ավազն ե սրբել տարել կամ լքած են ջրի պակասության ու պատերազմների հետևանքով:

Գլխավոր քաղաքն Ռուսան-Բասովը կամ Ռուզան ե: Ներկայումս այստեղ ապրանքների բավական մեծ փոխանակություն ե կատարվում: Մոնղոլները վաստակում են ուղտերի ու ձիերի քարավաններով ապրանք տեղափոխելով: Զինաստանից գեպի Մալմաչին, Մոնղոլիայով, կարեռ առևտրական ճանապարհ ե անցնում: Մայմաչինն առևտուր ե անում Սիբիրի հետ:

ՄՈՆԳՈԼԻԱՅԻ ԿՑԱՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՅԱՅԱԾ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ:—Դեռ մոտեիկ անցյալում Մոնղոլիան իշխանների, տաճարների ու հովիժների աշխարհ եր: Նրա վերջին միապետ, նույնը և հոգեռոր գլուխ՝ Խուտուխտու-Բոգդո-Հեղենը մեռավ 1924 թվին: Ազգային ժողովը կամ Մեծ խուրուցանը նրան զեմոկրատական հանրապետություն հալտարարեց առանց նախագահի, Մեծ խուրուղյանի կողմից ընտրած կառավարությունով: Իշխանների ու հոգեռորականության արտօնությունները վոչընչանում են, կառավարության դրուխ անցնում են հովիժները:

ԱՌԵՎՏՈՒՄԻ ՅԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏ:—Մոնղոլիան չի կարող միայն անասնապահությամբ ապրել, նրան թեք, ծխախոտ (բոլորը, նույնիսկ յերեխանները ծխում են) և բամբակի ճոթեղենն ել ե հարկավոր (բըղեղեն չեն հագնում): Այս բոլորի փոխարեն տալիս են կենդանի անառուններ, բուրդ, կաշի, յուղ և վորսորդությամբ ձեռք բերած մորթիներ:

Առևտուրը տարվում ե չինական ու անգլո-ամերիկյան Փիլմանների, ինչպես նաև սեփական ազգային ապարատի ու խորհրդային առևտրական կազմակերպության միջոցով:

Մոնղոլիաի կենտրոնական կոռպերատիվը բացի գլխավոր գրասենյակից և վեց ռայոնական բաժանմունքներից, մոտ հարյուր բաժանմունք ել ունի զանազան գյուղերում: Կոռպերատիվը կարողացավ

չեզոքացնել ավելորդ միջնորդներին և ազգաբնակության հետ անմիշ-ջորին կապվից: 1924 թ. կոսպերատիվը 1 և կես միլ. դոլարի տպանք և պատրաստել: Խորհրդային գլխավոր կազմակերպությունը՝ վոր մասնակցում ու աշխատում և մոնղոլական առետրում, Սիբարտա-առան եւ:

ԽՍՀՄ-ից Մոնղոլիա յեն ներմուծվում հաց, թեյ, կաշի, մետաղե իրեր և ճոթ:

Մոնղոլիայից ԽՍՀՄ են արտահանվում բուրդ և կենդանի անա-սուններ:

Պատերազմից առաջ սուս-մոնղոլական առետուրը կատարվում եր Կյախտայով և Չուկով: Ներկայումս՝ միայն Չուկի գծով և: Ուզմե-ը Չույից Բիլսկ անցնում են 35—40 որում, Վերջերս ալդ-տուրանապորտ և սահմանված (մոտ 200 ավտոմոբիլ, վորոնք այդ ճա-նապահն անցնում են 3-4 որում):

ՅԵՐԿԻՐԻ ՎԵՐԵԼՔԸ:—Ինկատի ունենալով առետրի նշանակու-թյունը Մոնղոլիայի կյանքում, նրա ժողովրդական կառավարու-թյունն աշխատում և առետուրը պետականացնել, պետական մնաւ-շնորհ դարձներ: Միջոցներ են ձեռք առնվում՝ անասնապահությունը բարձրացնելու: Յերկրագործության անցնելը խրախուսվում եւ: Զար-գանում և սեփական թե արդյունահանությունը, թե մշակող արդյու-նաբերությունը: Զգում ես, վոր ժողովուրդն իր բախտի տնօրինումը իր ձեռքն և առնում:

ՏԱՆՆՈՒ-ՏՈՒՎԱ:—Նույն յերեւութն և նկատվում նաև Մոնղո-լիայից բաժանված ու առանձին հանրապետություն դարձած Տաննու-Տուվայում, ուր ապրում են մոնղոլություրքեր կամ տուվացիներ (ուրյանհայցիք): Նոր հանրապետություն հռչակողը յեղակ խուրու-դանը (ազգ. ժողովը) 1923 թվին:

Տաննու-Տուվան մի փակ լեռնա-անապատալին գոգավորում են հարավից Տաննու-Ռլա, հուսիսից Սալանի լեռներով, արեւելքից ու արեւմուտքից ել այդ լեռների ճյուղավորություններով պատաժ: Ազգաբնա-կության թիվը 60 հազար եւ: Նա զրադվում և անասնապահությամբ մասամբ ել յերկրագործությամբ:

Հանքային հարստությունը շատ է մեծ, բայց դեռ հետազոտ-ված չեւ:

Դիմավոր քաղաքն և կրասնի:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ: ԽՍՀՄ ՀԵՏ:—Մերձարևելյան յերկրներն ու Մոնղոլիան (հետն ել Տաննու-Տուվան) ԽՍՀՄ արտաքին առետրում վորոշ արտօնություններ են վայելում, —կարող են իրենց

յերկրի բերքերն առանց մաքսի ներմուծել Ներկայումս այդ լերկը բների հետ առևտրական պայմանագրեր են կապվել, վորոնք, անշուշտ, կուժեղացնեն ապրանքափոխանակությունը:

Կազմեցեք ԽՍՀՄ առևտրաշրջանառության դիագրամը հետևելալ ավյալներով—միլ. ուս բլիներով.

ՑԵՐԿՐԻ անունը	Արտահանում		Ներմուծում		Ընդհանուր աշ.	
	1913 թ.	1925 թ.	1913 թ.	1925 թ.	1913 թ.	1925 թ.
Պարսկաստան	57,7	43,9	43,6	53,1	101,3	79,0
Տաճկաստան	35,8	9,8	18,4	17,7	54,2	27,5
Ավգանստան	5,9	3,3	6,3	2,5	12,2	5,8
Մոնղոլիա	5,7	3,7	1,4	3,7	7,1	7,4

Քաղաքական ու տնտեսական թնչ նկատառութեաներով ե, վոր ԽՍՀՄ առանձին արտանություններ ե տալիս մերձարևելյան առևտրին: Նա թնչ ուղղությամբ կարող ե զարգանալ:

ՀԱՅՆՉՈՐՍԵՐՈՐԴ ԹԵՄԱ

ՄԵՐԶԲԱԼԹՅԱՆ ՅԵՐԿՐՆԵՐ

Ժինլանգիա—343 հազ. քառ. կիլոմետր. ազգաբնակ. 3,5 միլ.

Սասոնիա— 48 » » » » 1,1 »

Լասվիա— 66 » » » » 1,8 »

Լիթվա— 56 » » » » 2,2 »

Համբ քարտեզի վրա նշանակցեց մերձրալթյան չորս պետությունները: Նշանակցեց նաև.—

1. Բալթիկ ծովն ու նրա ծոցերը (Բուտնիկական, Ֆիննի, Բիգայի), Հյուսիսային բևեռալին ծովը և Վարանգեր-Ֆիորդը

2. Զունդի նեղուցը:

3. Ալանդան, Եզել և Դագո կղզիները:

4. Ելնարե, Ռւլեռ, Սալմա և Զուդի լճերը:

5. Վուոկսա, Արկամուան Դվինա, Նեման գետերը:

6. Սայմենի ջրանցքը:

7. Հելսինգֆորս, Վըբբորդ, Տամմերֆորս, Տալլին (Ռեկի) Բիգա, Լեպայա (Լիբալա), Վենտսպիլս (Վինդավա), Կոմսո քաղաքները:

Լայնության վեր աստիճանների մեջ ե ընկած մերձրալ-

թլան չորս պետություններից յուրաքանչյուրը և վճր պետությունների հետ և սահմանակից:

Վորոշեցեք մակերեսութիւնը բնուկթը:

Վորոշեցեք չորս պետություններից յուրաքանչյուրի կլիմայի տռանձնահատկությունները:

Նրանցից վորբ վրա ին ավելի տարածվում հոլֆշտրոմի աղղեցությունը:

Տնտեսության վճր տեսակն և գերակշռում չորսից յուրաքանչյուրում:

Ազգաբնակության խտությունը չորս պետություններից յուրաքանչյուրում:

Ցուց տվեք յուրաքանչյուր պետության ցեղային կազմը:

ՏԵՏԵՍԱԿԱՆ ՏԻՊ.—Բոլոր չորս պետություններն ել գլուղատընտեսական յերկրներ են: Առանձնապես Ֆինլանդիան անտառաբուծության, անտառապահական ու յերկրագործական յերկիր ե, կատվայում գերակշռում ե յերկրագործությունը, իսկ եստոնիան և Լատվիան բավական ինտենսիվ յերկրագործության, անտառապահության ու անտառային տնտեսության յերկրներ են: Այս բոլորի հետ միասին աչքի ընկնող զարգացման են հասել արդյունաբերությունն ու առևտուրը:

ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ

ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ.—Ֆինլանդիան ամրողջ 4800 կիլոմետր սահման ունի Բալթիկ ծովի հետ: Ծովափին զուգընթաց շարքերով ընկած են ժայռերով ու խութերով պատած կղզիներ (Հինգեներ), վորոնց ամենաառաջնակարգ շարքերը լեռի ապառաժներ են: ափին մոտ ընկած են բավական մեծ կղզիներ՝ խաղաղ խորշերով: Ֆինլանդիայի ափը, մանավանդ Բոտնիական ծոցում, մի յուրահատուկ բան ունի—նա շարունակ բարձրացնում եւ չարլուր տարվա ընթացքում նա բարձրացել է 1,5 մետր: Ֆինլանդիան հազար լճերի յերկիրն ե (նրա գլխավոր քարտեզի վրա լճերի թիվը 35500 և հասնում): Ֆինլանդիան մի ժամանակ լեռնալին յերկիր ե լեղել սակայդարերի ընթացքում նա յինթարկվել ե քամիների ու սաոցարանների աղղեցությանը: Այսոր նրա մեծ մասը համարյա հարթավալը եւ Ամենամեծ բարձրությունները հյուսիս-արևելքում 200-300, տեղատեղ միայն 500—700 մետրի յեն հասնում:

Ֆինլանդիայի գետերը հաճախ լճերի միացում են ներկայացնում: այնպիսի լճերի, վորոնք գոնե մի մակերեսութիւնը վրա չեն: Մըա-

նից ել բաղմաթիվ սահանքներ ու ջրվեժներ են առաջանում: Ամենամեծ ջրվեժը՝ իմաստան՝ մոտ վուրկալի Սայմա լճից գուրս գալու տեղին Զրի հսկալական զանգվածներ ներքև են գահավիժում մի վայրկանում 10—12 մ. արագությամբ:

Այս լեռկրի սահանքներով ու ջրվեժներով հարուստ գետերը կարող են մոտ 3 միլ. ձիու ուժի հներդիքա մատակարարել սակայն ֆինլանդիան սրա նույնիսկ 0,2 չի ոգտագործել արդյունաբերական նպատակներով:

ԳՅՈՒՂԱԾՆՑՈՒԹՅՈՒՆ: — Դաժան կլիման մեղմանում և ծովի և համարված արևմտյան քամու աղդեցության շնորհիվ: Գյուղատնտեսության համար ֆինլանդիան կլիմալի վտանգվավոր կողմը ամառային այգիներն են, վորոնք լեռքեմն հուլիսին են տեղի ունենում ու գլխովին փշացնում հացերն ու կարտոֆիլը: Ալազնիքի տարին ֆինլանդիայի համար սովի տարի յև Մինչև հյուս. լայնության 64° հասնում են հաճար ու վարսակ: Ավելի հրասիսում հաճարի հետ միասին բռւսնում են առև կարտոֆիլը, վոր աղդաբնակության համար հաճարից հետո յերկրորդ ուստելիքն եւ:

Ֆինլանդիայի մակերեսութի 0,6 անտառներ են: Նրանք յերկրի աղդային գլխավոր հարստությունն են: Համարյա ամեն տեղ փայտ են կտրում ու սղոցում, ձյութ են քաշում, փայտից կարտոն ու թուլթ են պատրաստում, լուցկի յեն շինում: Արտահանման գլխավոր նյութը փայտեղենն եւ:

Ցանքադաշերը բռնում են ֆինլանդիայի մակերեսութի 0,1 մասը: Դաշտերը մշակում են մեծ խնամքով: Հողը բերրիացնելու վրա մեծ ջանք և դրվում: Գլխավոր հացահատիկները վարսակն ու հաճարն են: Ֆինլանդիան իր հացով չի բավականանում: Առանձնապես շատ ցորեն և ներմուծվում, վորը ֆինլանդիայում համարյա չի բռւսնում:

Խոտհարքներն ավելի շատ են, քան ցանքսերը: Շատ լավ դրված և կաթնատնտեսությունը, մանավանդ յուղի գործը: Անասնապահությունն աչքի յեւ ընկնում վոչ այնքան իր կենդանիների քանակով, վորքան նրանց վորակով: Գյուղացիության 0,4 անող ե, 0,2 սակավահող եւ:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ: — Քարածուխ չկա, սակայն բավականաչափ սպիտակ ածուխ կա, վորն ընդարձակ կերպով ոգտագործվում եւ: Այսպես, Տամպերե ջրվեժի ոգտագործման շնորհիվ առաջ և յեկել լեռկրի արդյունաբերական գլխավոր կենորոն Տամմեր Փորս քաղաքը (բամբակի և բրդի փարբիկաներ, թղթեղենի, ապակու, փայնասի, լուցկու, գարեջրի գործարաններ, սղոցարաններ և ալլն): Ֆինլանդիայում առանձնապես զարգացած և թղթի և մահուղեղենի արտադրությունը:

Ֆինլանդիայի առևտրական նավատորմն աչքի ընկնող է, սակայն առևտրական նավահանգիստները յերկրորդականների շարքին են պատկանում.

Ֆինլանդիա ներմուծվող ապրանքներից առաջին տեղը բռնում է հացը (ամբողջ ներմուծման 0,25). արտահանման 70 տոկ. կազմում են փայտը, փայտից պատրաստած նյութերը, իսկ 20 տոկով՝ յուղը:

Ֆինլանդական ժողովրդական տնտեսության զարգացման գործում ահազին դեր և խաղացել կոռպերացիան (սպառողական ընկերություններ, կաթնատնտեսական միություններ, գյուղատնտեսական ինվենտար ձեռք բերելու նպատակով վարկային և գնող ընկերություններ):

Ֆինլանդիայի ամենամեծ քաղաքը և նրա մայրաքաղաքը Հելսինգֆորսն է (200 հազ. բն.):

Ֆինլանդիայի ազգարնակության 0,75 մասը ֆիններ են: Ֆիններնի հետ միասին շատ և տարածված նաև շվեդերենը:

Այսպես անգրագետ մարդ չկա:

ԱՊՐԱՆՔԱԳՈՒՅՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԽՍՀՄ-ի ՀԵՏ:—Ֆինլանդիան, վորպես հյուսիսային գյուղատնտեսական յերկիր, շտա ալճակի առարկաներ և արտադրում, ինչ վոր ԽՍՀՄ և տալիս, ուստի և համաշխարհային շուկային փայտ և յուղ մատակարարելում նրա մրցակիցն է հանդիսանում: Դրա հետ միասին նա շահագրգուված և մեր հացի ներմուծումով, Միությունը Ֆինլանդիայից թուղթ և ստանում (գրելու, լրագրական, փաթաթուն):

ԵՍՏՈՆԻԱ, ԼԱՏՎԻԱ, ԼԻՍԱԿԱՆ

Խուսական նախակին Մերձբալթյան և Լիտվայի նահանգներից (Եստլանդիա, Կուրլանդիա, Լիֆլանդիա և Էլունոլի նահանգ) կազմը՝ վել են այս յերեք մերձբալթյան անկախ հանրապետությունները: Եստոնիայի բնակիչները Փինն ցեղին պատկանող եստեր են, Լատվիայինը՝ լատիշներ, Լիտվայինը՝ լիտովցիներ (վերջին յերկուսը պատկանում են արիական ցեղին, վորին պատկանում են նաև սլավոնները, գերմանացիք, ֆրանսիացիք և մյուս յեվրոպական ժողովուրդները):

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԻՊԸ:—Եստոնիան, Լատվիան և Լիտվան գյուղատնտեսական յերկրներ են, սակայն զիրքն ու բնական պայմանները միատեսակ չեն նպաստում այս կամ այն հանրապետության մեջ տնտեսության այս կամ այն ճյուղը զարգացնելու գործին:

Միայն Եստոնիան ու Լատվիան են իրոք մերձծովալին: Լիտվան շատ աննշան կերպով և ծովին մոտենում (Մեմելում) և ավելի շուտ ցամաքալին պիտություն եւ: Միայն սա յե, վոր յերկը պազործության համար միանգամայն նպաստավոր պայմաններ ունի—արդավանդ հոդ և ամառը հարկավոր տաքություն:

Տնտեսությունը տարվում եւ եքստենսիվ կերպով. գերակշռող գեռագաշտան սիստեմն եւ բերքը շատ եւ, հացը նույնիսկ ավելանում եւ:

Եստոնիայում ու Լատվիայում, ափի յերկարության շնորհիվ, շատ և զարգացած ձկնորսությունն ու ծովագնացությունը: Սակայն հիմնական զրազմունքը յեղել եւ մնում է գյուղատնտեսությունը: Այստեղ կլիմայական ու հողային պայմանների շնորհիվ մարգագործությունն ավելի յե զարգացած, քան դաշտավարությունը: Վուշն ու կարտոֆիլն ավելի լավ են աճում, քան հացահատիկները:

Տնտեսությունը տարվում եւ ինտենսիվ կերպով: Հողերն որինակելի կերպով պարարտացվում են: Եստոնիայի և Լատվիայի հողերն առանձնապես արգավանդ չեն կարող համարվել, սակայն նրանց բերքատվությունն ավելի բարձր եւ, քան հարավ-ուռուսական դաշտերում: Որինակելի կերպով եւ տարվում անտառալին տնտեսությունը: Շատ լավ և դրված նաև կաթնատնտեսությունը: Այս յերեք պետությունները կազմող նահանգները խոշոր կալվածատիրական տնտեսության շրջան ելին: Հարևան Միության մեջ կատարված սոցիալական հեղափոխությունից հետո Եստոնիայում ու Լատվիայում 1919 թվին և Լիտվայում 1920 թվին ազրաբային որենքներ հրատարակվեցին, վորոնց շնորհիվ խոշոր տնտեսությունները մանր հողամասերէ վիրածվեցին:

Արդյունաբերությունը, մանավանդ Լատվիայում, համաշխարհային պատերազմից առաջ բավական աչքի ընկնող եր: Աշխուժ առևտուր կար: Խուսական նավահանգիստները, վորոնք միացած ելին ռուսական մեծ քաղաքների և հացառատ շրջանների հետ, միշտ լիքն ելին լինում մեկնող ու մոտեցող նավերով: Սակայն արդյունաբերությունն ու առևտուրն ապրում ելին գլխավորապես Խուսաստանի հետ ունեցած կապի շնորհիվ: Այդ կապը կարվեց—ամեն ինչ մեռավ: Ընկազ մանավանդ Լիտվայի արդյունաբերությունը (ըամբակի ու բրդեղենի ֆաբրիկաներ, մեքենաներ ու վագոններ պատրաստող գործարաններ, թղթեղենի ու ռետինի ֆաբրիկաներ, քիմիական գործարաններ): Գործարանային հումքը փոխանակ սեփական ֆաբրիկաներում վերամշակվելու, սկսեց քաշվել արտասահման: Փոքրիշատե կանոնավոր աշխատում եր միայն փայտաշինարարական և վուշի արդյունաբերությունը:

Ավելի լավ պահպանվել և նստոնիայի խոշոր արդյունաբերությունը (Շահովլիցի մահուգեղենի փարրիկան, Կրենգոլմի ճոթեղենը, թղթի և այլ գործարաններ և այլն): Եստոնական դործարանների մեծ մասն անցել և ստարերկրացիների ձեռքը:

Նախկին լիտվական նահանգների գործարանական քաղաքներն անցել են Լեհաստանին, այնպես վոր Լիտվան խոշոր արդյունաբերական քաղաք չունի: Սա զբուղացիական լերկիր և, ուր քաղաքի աղբաբնակությունը միայն 14 տոկոս է:

ՆԱՎԱՀԱՆԳԻՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՌԵՎՏՈՒՄՆ:—Լատվիան ունի յերեք լավ սարքավորված նավահանգիստներ՝ Ռիգա (Լատվիայի մայրաքաղաքը—340 հազ. աղդ.), Վինդավա (ներկայումս Վինստոն Չիլի) և Կիբագա (ներկայումս Լեպայա), 130 հազ. աղբաբնակությամբ, Լիտվային ավել են աննշան Պեմել նավահանգիստը:

Յերեք լերկրների յել առևտրական շրջանառությունը համեստ է: Արտահանման գլխավոր նյութերն են՝ հում կիսաֆարբիկատներ (փայտ և վուշ) և սննդանյութեր (յուղ, վարունգ, հաց, կարտոֆիլ, ձուկ և կաթնատնտեսական մթերքներ): Եստոնիայից արտահանվում են նաև—սպիրտ, թուղթ և ցեմենտ:

Ներմուծման գլխավոր նյութերն են՝ ֆարբիկալին գործվածքներ, հումքից—ածուխ, բամբակ, նավթ, հաց:

Ինչու Ֆինլանդիայում հատկապիս զարգացավ անտառալին տնտեսությունը, յուղի վերամշակումն ու արտահանումը:

Ինչու Եստոնիայում և Լատվիայում առևտուրն ու արդյունաբերությունն ավելի զարգացան և յերկրագործությունն, անտառապահությունն ու անտառալին տնտեսությունն ավելի հաջողություն ունեցան, քան Լիտվայում:

Ի՞նչ արտահանման ու ներմուծման նյութեր ունեն այս յերկրներից յուրաքանչյուր:

Համեմատեցնեք Բալթիկ ծովին մոտ ընկած (կորած) զանազան լերկրների նավահանգիստների բեռնաշրջանառությունը՝ այդ նավահանգիստները մտնող նավերի տարողության տվյալներով.

Նավահանգիստները	Յերկրները	Վոր թվականից յուղակաղողությամբ	Տարողությունը. հազ. տոններով
Լենինգրադ	ԽՍՀՄ	1925	800
Հելսինգֆորս	Ֆինլանդ.	1923	715
Վլագորգ	1923	992	
Ռեէլ	Եստոնիա	1923	1115
Ռիգա	1925	913	
Լիբագա	Լատվիա	1925	327
Վինդավա	1925	184	
Ստոկհոլմ	Շվեդիա	1924	3641
Մալմէ	1924	2162	
Կոպենհագեն	Դանիա	1923	9000
Կյոնիգսբերգ	Գերմանիա	1925	528

ԱԵԱՍՏԱՆ ՑԵՎ. ՌՈՒՄԻՆԻԱ

Թարտեղի վրա նշանակեցեք Լեհաստանի և Ռումինիայի սահմանները:

Գրեցեք.

1. Բալթիկ ծովը.
2. Վիսլա գետը.
3. Դանցիգ, Վարչավա, Պոդնան, Կրակով քաղաքները.
4. Սկ ծովը.
5. Դունայ, Պրուտ, Դնեստր գետերը.
6. Բուխարեստ, Կոնստանցա, Թիշինև քաղաքները.
7. Նշանակեցեք նաև Լոձ և Լվով քաղաքները.
8. Կարպատյան լիոնները.
9. Լեհական և Սեմիգրադի բարձրավանդակները.
10. Մերձվիզան, Հունգարական և Ստորին-դանուբյան հարթությունները.

Ի՞նչ զուգահեռականների մեջ են ընկած և վճր պետություններին են սահմանակից լեհաստանն ու Ռումինիան:


Ի՞նչ գյուղատնտեսական շրջաններում են ընկած լեհաստանն ու Ռումինիան:

ՔԱՐԵԴԻՆԳԵՐՈՐԴ ԹԵՍԱ

ԼԵՀԱՍԱՆ

Ցարածությունը 388 հազ. քառ. կլմ. ազգաբն. 29 միլ. մարդ:

Լեհաստանը վերածնվեց համաշխարհային պատերազմի ժամանակի նա անկախ հայտարարվեց Գերմանիայի և Ավստրիայի այդտեղից քաշվելուց հետո. իսկ այդ անկախությունը հաստատվեց Վերսալի դաշնագրով - 1919 թվին: Լեհաստանն ստացավ իր այն հողերը, վորոնք 18-րդ դարում գտնվում եյին Ռուսաստանի, Պրուսիայի և Ավստրիայի ձեռքում: Բացի այս բոլորից նա հավշատակեց նաև նախկին Գրոդնոյի և Վիլնյայի նահանգները, ուր ազգաբնակության ճնշող մասը լիտավիցիներ են: Լեհաստանի մի ուրիշ մասը ևս կա, ուր լեհերը փոքրամասնություն են կազմում. դա Արևելյան Գալիցիան է, ուր գլխավորագեն ուկրայինցիներ են:



Լեհաստանը դեպի ծով յելք և վորոնում:

ՇՐՋԱՆՆԵՐԻ: - Լեհաստանը հարթ լերկիք է. Կարպատյան լեռներն անցնում են հարավ-արևմտյան սահմանով: Իր հանքային հարստությունների ջնորհիվ այս լեռնային շրջանը մեծ նշանակություն ունի լեհաստանի համար (տրենուտքում, Կրակովի մոտ, հոչակավոր աղահանքերը, արևելքում - նավթը):

Լեռներից գեղի հյուսիս անցնում և հարավային պլատոն (սաքա-
հարթ)՝ քարածխի հանքերով (վերին Սիլեղիայում): Այդ շրջանում
հողը շատ և արգավանդ:

Հարավային պլատոնից գեղի հյուսիս անցնում և կենտրոնական
հարթավայրը, վոր հյուսիսից շրջափակված և հյուսիսալիքն բարձ-
րավանդակով: Այստեղ և Լեռական պետության միջուկը:

Սա ըստ մեծի մասին յերկրագործական շրջան ե, տեղատեղ ել,
հատկապես Պողնանում և Հարավային Մազովիայուս, զարգացել ենաև
արդյունաբերությունը: Գերմանիայից գրաված Պողնանում ինքուս-
տրիան զարգացել և զլուղատնտեսական մթերքների վերամշակման
գծով (ճակնդեղաշաքարային, գինեգործական, զարեջրի գործարան-
ներ): Մազովիան վիսլա գետի շրջանն ու Նրա հյուսիսային մասը
չափավոր պատառու, բայց ինտենսիվ կուլտուրալի յերկիր և (գլխա-
վորապես շաքարածակնեղ): Հարթության հարավային մասն սկըզ-
բում անտառուտ ու սակավամարդ և յեղել. սակայն 19-րդ դարից այս-
տեղ սկսեց զարգանալ խոշոր արդյունաբերությունը, վորի կենտրոն
դարձավ Լոնդօն (1927 թ. 600 հազ. բն.):

Այսպիսի հարթավայրում գետերը, վորպես հաղորդակցության
ճանապարհներ, առանձին նշանակություն ստացան: Բալթիկ ծովին
մոտեցնում ելին Ռոդեր (Վարտա վտակով) և Վիսլա (Սան և Բուգ վր-
տակներով) գետերը: Այնտեղ, ուր արևելյան և արևմտյան ճանապարհ-
ները կարուտ են Վիսլան, անեց Վարչովան (1927 թ. 1 միլ. բն.),
վոր գլխավոր քաղաքի նշանակություն ստացավ այն որից, ինը Լե-
ռաստանը մոտեցավ Բալթիկ ծովին:

Ա.ԶԳ.Ա.ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.—Ամբողջ Լեռաստանում աղգաբնակու-
թյունը հետևյալ պատկերն ե ներկալացնում:—Լեռներ՝ 69 տոկ.,
ուկրայինցիք—14 տոկ., բելոռուսներ—4 տոկ., զերսանացիք—4 տ.,
հրեաներ—8 տոկ., մնացած աղգություններ—1 տոկ.: Ռւկրայինցի-
ներն առանձնապես շատ են Լեռաստանի արևելյան և հարավային
մասերում:

ԱՐՏԱԳԱՂԹ:—Լեռաստանը ծաղկած եր 15—16-րդ դարերում:
18-րդ դարում նա բաժան-բաժան յեղավ Ռուսաստանի, Ավստրիայի և
Պրուսիայի միջև: Դա նրա կատարյալ անկման շրջանն ե, ժողովուրդը
ճորտատիրությունից աղքատացավ, բայց այդ շրջանում ել խոշոր կալ-
վածատերերը շարունակեցին շահագործել նրան՝ մինչև վերջերս: Շա-
տերը (թե քաղաքներում, թե գյուղերում) չկարողացան կցանքի ծան-
րությունը տանել ու գաղթեցին Ամերիկա: Քաղաքներից գաղթում եր
գլխավորապես չքավոր հրետությունը, իսկ գյուղերից—լեռներ ու լիտով-

ցիք։ Պատերազմից առաջ Ամերիկա գաղթողների թիվը տարեկան 20 հազարից անցնում էր, Ներկալում Միացյալ Նահանգները խիստ սահմանափակել են գաղթող լեների թիվը (տարեկան մոտ 31 հազար), այդ պատճառով եւ լեն գաղթականների զլիավոր հոսանքը դարձել է դեպի Ֆրանսիա, վորն իր արդյունաբերության, մանավանդ զլուզա-անտեսության համար բանվոր ձևաքերի կարիք ունի։

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ—Լեհաստանն աչքի ընկնող հանքացին հարստություն ունի Դոմբրովի ու Կրակովի ավազաններում, մանավանդ Վերին Սիլեզիայում։ Նրա զլիավոր հարստությունը քարածուխն և, վորով նա Արևմայան Յեղուսպայի պետությունների շարքում յերրորդ տեղն է բանում։ Գալիցիայում նավթ և ստացվում (Բուրիլավի, Գորոգորըշչչ)։ Արդյունաբերության մեջ զործ տեսնողն ուտար կապիտալն է (Փրանսիական և Հվելիցարական)։ Դոմբրովի ավազանում բավական ցինկ և ստացվում։ Արևմայան Գալիցիան հարուստ և քարածով։ Յերկաթը պահան է Անցյալում նա լերկաթ ստանում եր Կրիվոյ Ռուբից, ալժմ նորից սկսում և ԽՍՀՄ ու Գերմանիայից ձևաք բնիքիւ։

Գործարանային արդյունաբերությունը զարգացել է հատկապես նախկին սուսական Լեհաստանում։ Այստեղ առանձնապես աչքի յե ընկել լոձը իր անքատիլ արդյունաբերությամբ։ Այսուհետեւ զալիս է սննդանյութերի վերամշակումը և մհաազագործական արդյունաբերությունը։ Գատերազմը շատ ծանր ազդեց լեհական արդյունաբերության վրա։ Նա նոր-նոր և միայն ուշքի զալիս Բայց քանի վոր Լեհաստանը չի կանոնավորել իր ապրանքափոխանակությունը ԽՍՀՄ հետ, հույս չկա, թե նրա արդյունաբերությունը բարձրանա։ Լոձի ապրանքներն առաջ հեղեղում ելին Հարավ-արևեմտյան և Հարավյային Ռուսաստանը։ Պակաս չելին նաև մետաղագործական, մեքենայաշինման, ցեմենտի և այլ գործարանների արտադրանքները։ Այժմ լեհական ապրանքների համար ռուսական շուկա չկա։ Մերձբալթյան պետություններն իրենց սակավամարդության և չքավորության հետևանքով շուկա դառնալ չեն կարող։ Արևմայան Յեղուսպայի լեհական ապրանքների կարիքը չունի։

Լեհաստանի հետ ապրանքների փոխանակություն կատարողներից—թե ներմուծող, թե արտահանող—առաջին տեղը բւնում է Գերմանիան, այնուհետեւ Միացյալ Նահանգները (բամբակ, հացահատիկ), Մեծ-Բրիտանիան և Ավստրիան Ներմուծման մեծ գումարն ընկնում է բամբակին, բրդին, մեքենաներին, քիմիական շինվածքներին ու հացին։ Արտահանողում են զլիսավորապես փալտ, ածուխ, ցինկ, նավթ, բամբակի ու բրդի գործվածքներ, հաճար, շաքար, ձու, միս և խոզ։

Լեհաստանի ամենամեծ քաղաք Վարշավան, վոր նրա մայրաքաղաքն է, մեկ միլ. ժողովուրդ ունի. Լոձը՝ 600 հազար, Լվովը՝ 220 հազար, 100—200 հազար բնակիչ ունեն Պոդոնանը, Կրակովը և Վիլնոն. Լեհաստանը կարողացավ ձեռք զցել Դանցիդ նավահանգիստը՝ Վիսլայի բերանում, բայց նա դարձավ ինքնուրույն մի փոքրիկ պետություն, իսկ Լեհաստանին տրվեց Գդունիա փոքրիկ նավահանգիստը՝ Դանցիդի մոտ.

ՌՈՒՍԻՆԻԱՆ

Պատերազմից առաջ 138 հազար քառ. կմ. 8 միլ. բնակչով, պատերազմից հետո՝ 294 հազար քառ. կմ. 16,5 միլ. բնակչով. Միացվել են ավատրական Բուկովինան, Եռևանի վանիսիւնիան, Մարտուրով Կրիստոնան, Բանասը. առանց ԽՍՀՄ համաձայնության հափառակված ե Թեսարաբիան:

ԲՆՌՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ԱԶԴԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.—Նախաղատերազման Ռումինիան և Բնասարարիան իրենց բնությամբ հիշեցնում են Հարավային Ռումայինան: Ամբողջ յերկիրը, բացի Կարպատների յեղքերից, հարթություն ե, վորի հողը ու ե, կլիման ցամաքային (ամառը շատ չող, ձմեռը բավական ցուրտ), բուսականությունը դաշտային: Նոր միացված հողերը լիոնուան, անտառներով հարուստ. կան նաև յերկաթահանքեր:

ԱԶԴԱՅԻՆ ԿԱԶՄԸ.—Ռումինական տվյալների համաձայն, վորոնք այնքան ել ճիշտ չեն, Ռումինիայի ազգաբնակության 66 տոկ. սուսիններ են, 11,5 տոկ. հունգարներ, 6 տոկ. ռումայինցիները 5,5 տոկ., բուգարներ և սերբեր, 5 տոկ.՝ գերմանացիք, 3 տոկ.՝ հրեաներ, 3 տոկ.՝ ուրիշ ազգեր:

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԻՊԸ,—ՀիՊԸ,—Հին Ռումինիան համարյա բացառապես յերկարգործական յերկիր եր: Նոր միացված տեղերում բավական դարդացած ե արդյունաբերությունը, մանավանդ անտառայինը և մետաղագործականը:

ԳՅՈՒՂԱԾՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ:—Ռումինիան անցյալում յեղել ե խոշոր հողատիրական յերկիր (համարյա մշակված հողի 50 տոկոսը կալվածատերերին եր պատկանում): Զքալվորությունը անհող գյուղացիներին ջղալնացնում եր: Անվերջ ագրարային հուզողությունը ելին տեղի ունենում: Դժգոհ գյուղացիներին հանգստացնելու նպատակով հողային մասնակի բարեփոխումներ են կատարվել: Խոշոր հողատիրությունը 8 տոկոս կրճատված եւ:

Հացահատիկների, մանավանդ սիմինդրի և ցորենի բերքը, յերկրի պահանջից ավելի է:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ. ՏՐԱՆՍՊՈՐՏԸ, ԱՌԵՎՏՈՒԽԸ. — Արդյունաբերության գլխավոր տեսակներն են — սննդային (ալյուր, շաքար, խմիչքներ) և փալտիղեն։ Քարածուխ քիչ կա, ինը կաթ՝ բոլորովին։ Այս պատճառապվ ել մետաղագործությունը չի զարգացել (միայն Ռեշիցում շողեկաթսաներ շինելու մի գործարան կա), Յերկրի գլխավոր հանքային հարսառությունը նավթն է։

Հաղորդակցության գլխավոր ճանապարհներից մեկը Դունայ (Դանուր) գետն է, վորի ամբողջ ներքին հոսանքը մուտքներին և պատկանում։ Ծովային արտաքին հաղորդակցության համար միայն մի նավահանգիստ ունի՝ Սև ծովի ափին։ Դա Կոնստանցիան է։ Արտաքին ապրանքափոխանակումը մեծ չե։ Արտահանվող նյութերի կեսը հացն է, $\frac{1}{5}$ ՝ փայտեղին, $\frac{1}{8}$ ՝ նավթ, նույնքան ել կենդանիներ, ներմուծվում են՝ բուրդ, բրդի գործվածքներ, մետաղներ, մեքենաներ։

Մումինական արդյունաբերությունը և հաղորդակցության միջոցներն զգալի չափով շահագործում են ոտարները — նավթի արդյունաբերությունը՝ անդիմացիք, փալտակինը՝ իտալացիք, Դունայի նավագնացությունը՝ անգլիացիք, նավահանգստային շինքերը՝ ֆրանսիացիք։

Մումինական մայրաքաղաքը Բուխարեստ է (Բուկուրեշտի), վոր 900 հազար բնակիչ ունի։ Բեսսարաբիայի գլխավոր քաղաքը՝ Ֆեռնանդով, 170 հազար։

Մումինական և Լեհաստանը տնտեսապես կախված են ոտար կապիտալից, գլխավորապես անգլիականից և ֆրանսիականից։ Սրբնք «Անտանտայի ագենտներն» են, ԽՍՀՄ թշնամի։

ՅԵՐՐՈՐԴ ՄԱՍՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ
ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

Քարտեղի վրա ցույց տվեք Կալկաթայի (Բենգալան ծոցը),
Կոլմբոյի (Ցելյոն), Սինդապուրի (Մալական նեղուց), Կանտոնի,
Հոնկոնգի և Շանհայի (Չինաստան) տեղը:

Ցույց տվեք նաև համաշխարհային նշանակություն ունե-
ցող յերկաթուղիները: Նախորոք առանձնացրեք Գերմանիայի,
Ֆրանսիայի, Բելգիայի, Բալկանյան թերակղզու յերկաթու-
ղիները:

Ի՞նչ տարբերություն կար Գերմանիայի և Ֆրանսիայի յեր-
կաթուղացանցերի տեսքի մեջ (Ֆրանսիայի յերկաթուղիները
համեմատում են սարդոստանի հետ, վորի կենտրոնում վոր-
պես սարդ նստած և Պարիզը. գերմանական ցանցն ել այսպիսի
ձև ունի, թե վոչ):

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒԹՎԱԾՔՈՒՄ:—Քանե-
րորդ դարի ընթացքում համաշխարհային հարաբերությունների չափի
և բնույթի մեջ ավելի մեծ փոփոխություններ տեղի ունեցան, քան
նախորդ բոլոր հազարամյակներում: Դրա հետ միասին յերկրագնդի
տնտեսական կյանքում ևս արմատական փոփոխություններ կատար-
վեցին: Դարի սկզբում գոլություն ունելին առանձին պետություններ,
վորոնք արտադրում ելին այն ամենը, ինչ անհրաժեշտ եր իրենց:

Հեռու տեղերից արժեքավոր ապրանքներ քիչ ելին բերվում,
վորոնք բնական պատճառների կամ տեխնիկական լիտ մնացած լինելու
պատճառով իրենք չելին կարողանում արտադրել: Արևմտյան Յեվրո-
պայի պետությունները մյուս մայր ցամաքների միայն ափերն ելին
գրավել: Խորերը սակավաթիվ եքսպեդիցիաներ ելին միայն թափան-
ցում: Տնտեսական նվաճումների մասին խոսք անգամ չեր կարող լի-
նել՝ առանց արանսպորտային կապի: Այսորվա միքանի որ պահան-

յող հանապարհորդություններն այն ժամանակ, ահագին ժամանակ ու ծախս պահանջող ձեռնարկություններ ելին համարվում: Լիվերապուլից Նյու-Յորկ հասնելու համար մի ամսից ավելի պետք եր զնալ Ատլանտյան ովկիանոսով: Հնդկաստան ընկնելու համար միքանի ամսի եր հարկավոր: Նույնիսկ մի յեվրոպական պետությունից մրւան ընկնելու համար շաբաթներ ու ամսիներ ելին հարկավոր: Ավելի շատ ժամանակ եր պահանջվում Ատլանտյան ովկիանոսից Խաղաղականին հասնելու համար՝ Ամերիկայով: Յամաքում ճանապարհորդում եյլն ձիով, տեղափեղ ել ուղաբերով, ծովի վրա՝ առաջաստանավերով:

Տասնիններորդ դարում ամբողջ աշխարհը հայտնի դարձավ ամենքին: Սկսեցին այցելել ու տնտեսապես շահագործել:

Մայր ցամաքները ծայրից ծայր կտրտվում են յերկաթուղիներով: ծովերը միանում են ջրանցքներով: այլևս պետք չի գտացվում Հրնդկաստան հասնելու համար Աֆրիկայի շուրջը պտտելու Դանդաղաշրժ առագաստանավերին փոխարինում են շոգենավերը: Ատլանտյան ովկիանոսը արագաւաց շոգենավերը կտրում են 4—5 որում: Հյուսիսային Ամերիկան յերկաթուղին կարում ե նույնակես 4—5 որում: Ատլանտյան ովկիանոսից մինչև Մեծը Յեվրոպայի ու Ասիայի վրայով արագ զնացքն անցնում ե յերկու շաբաթում: Յերկրի շուրջը պտտելու համար պետք ե վոչ յերեք տարի (Մազելլան), վոչ ել ութուն որ, զոր յերազում եր Ժյուլ Վերնը, այլ յերկու ամսից ել պակաս: Տարեկան միլիոնավոր տոնն ապրանք, միլիոնավոր ել մարդիկ հն տեղափոխվում: Վորովիհետեւ հնարավոր դարձավ ամեն ինչ հեշտ ու եժան տեղափոխելու ուստի առանձին փոկ անտեսությունների փոխարեն ել աճում ու զարգանում ե համաշխարհային անտեսությունը, զորի հիմքը կազմում են աշխատանքի աշխարհագրական բաժանումը և անչափ աշխուժ ավրանքափոխանակումը: Այս բոլոր արմատական փոփոխությունը կատարվեց, յերեք կերապավել սկսեցին շոգեն ու տրանսպորտը՝ նախ ծովային շարժումներում (1819 թ.), հետո յել՝ յերկաթուղիական (1825 թ.):

Յերկաթուղիների նշանակությունը՝ Տնտեսության մեջ ամենամեծ հեղաշրջում առաջ բերեց յերկաթուղին, մանավանդ այնպիսի լայնածավալ յերկրներում, ինչպիսիքն են ԽՍՀՄ, Միացյալ Նահանգները, Աֆրիկան: Միայն յերկաթուղիներն ելին, զոր մարդաշատ դարձրին Միացյալ Նահանգների հեռավոր արևմուտքը, Միջին Ասիայի և Հեռավոր Արևելքի արգավանդ հողերը, Աֆրիկայի անմարդաբնակ տեղերը: Միայն յերկաթուղիներն ելին, զոր այդ նոր բնակեցրած յերկրներում ծաղկեցրին արդյունաբերությունը, յերկրագործությունը, քաղաքային կյանքը:

ՑԵՐԿԱԹՈՒՂԱՑԱՆՑԻ ԱՃՈՒՄԸ:—Առաջին 15 տարիներում յերկաթուղիները շատ դանդաղ ելին աճում, այնպես վոր 1840 թվին նրանց յերկաթությունը հազիվ 7680 կիլոմետր էր, 1859 թ. նա հասավ առաջին հարյուր հազար կիլոմետրին, իսկ 1870-ին՝ յերկրորդ հարյուր հազարին, 1886-ին՝ մինչև կես միլիոնի, 1909-ին՝ մոտ մեկ միլիոն կիլոմետրի։ Առաջին կես միլիոն կիլոմետրին հասան 57 տարում, յերկրորդին՝ 23։

ՀԱՄԱՇԱԽԱՌՀԱՅԻՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅԻՑՆԵՐԸ:—Յեկրտովական ճանապարհներից ամենից կարևորներն այն միջազգակին ճանապարհներն են, վորոնք կտրում են նրան հյուսիսից հարավ և արևմուտքից արևելք։ Հյուսիսից հարավ անցնող ճանապարհները կտրում անցնում են Ալպերը (Կալե—Բաղել—Ս. Գոտարդ—Բոլնիտ—Բրինդիզի։ Բերլին—Մյունիսեն—Բրեններ—Վերոնա—Հռոմ—Նեապոլ) կամ անցնում են՝ առանց նրանց հանդիպելու (Կալե—Պարիզ—Բորդո—Մադրիդ—Կադիգո—Պարիզ—Մյունիսեն—Վիեննա—Բուդապեշտ—Կ.-Պոլիս)։ Ալստեղից այդ ճանապարհը Փոքր-ասիական և Բաղդադի ճանապարհ անունով շարունակվում է մինչև Պարսից ծոցը։

Հանդիպակացներից (արևմուտքից արևելք) աշխարհի ամենայերկար գիծը նա յե, վոր անցնում ե՝ Լիսսաբոն—Պարիզ—Բերլին—Մունից—Զելյարինսկ (7800 կիլոմ.), այդտեղից ել Սիբիրի յերկաթուղի անունով շարունակվում է մինչև Վլադիվոտոկ։ Սա կտրում է ամբողջ Հին Աշխարհը։ Առաջանայան ովկիանոսից մինչև Մեծը, Յերկարությունը 13500 կլմ. եւ

Հյուսիսային Ամերիկայում առաջին ճանապարհը Առտանտիան ովկիանոսից մինչև Մեծը—շինեցին Միացյալ Նահանգները 1869 թվին (Զիկագուից մինչև Ս.-Ֆրանցիսկո), Ներկայում Միացյալ Նահանգներն ամբողջ մայր ցամաքը կտրող (տրանսկոնտինենտալ) 10 յերկաթուղարքի ունեն։ Կանադայում դրանց թիվը 5 եւ Մեքսիկան նույնպես ունի։ Ամենից կարճ (75 կլմ.), բայց խիստ կարևոր գիծը կտրում է Պանամայի պարանոցը։ Այդ գիծն ե, վոր Ասալանտանի ողենավերով յեկած բերներն ու ճամպորդներին հանձնում է մեծ-ովկիանոսայան շոգենավերին, և ընդհակառակն է Հարավալին Ամերիկայում առաջին արդպիսի ճանապարհի շինությունը վերջացավ 1910 թվին։ Ներկայում դրան ավելացել են յերկու մեծ-ովկիանոսայան գծեր եւս։

Ավտորալիական մայր-ցամաքալին գիծը, վոր միացնում է Արևմբարձուան և Արևելյան Ավտորալիաների յերկաթուղիները, կառուցվեց 1916 թվին։

Աֆրիկայում անգլիացիք ծրագրում են կալիբրեն միացնել կապ-
շտադտին։ Այս գծի հյուսիսային ու հարավային մասերն արդեն
կան, մնում ե միայն միջինը միացնողը։

ՆԱՎԱԳԻՆԱՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԴԱՑՈՒՄԸ:—Ծովալին հաղորդակցու-
թյունների զարգացումն ավելի թափ առավ յերբ յերեացին շոգենա-
վերը։

Առաջին ովկիանոսային ուելսը կատարեց «Սավաննա» շոգենավը
1819 թվին։ Ճանապարհը Միացլալ Նահանգների Սավաննա նավա-
հանգուտից մինչև Լիվերպուլ տեղ 26 որ, վորից 8 որը՝ միայն առա-
դաստանավերով։ Շողին առագաստին վերջնականապես հաղթեց 1838-
թվին, յերբ «Սիրիուս» և «Դրես Վեստերն» շոգենավերը վոչ միայն
մեկնեցին, այլ և նավահանգիստ վերադարձան ճիշտ ժամկետին, հա-
մաձայն չվացուցակի։

Մեր ժամանակի ամենախոշոր շոգենավերի տարողությունը
համարում ե մինչև 50,000 ուեզիստը տոննի, յերբեմն նույնիսկ ավելի։
Արագությունը՝ $25^{1/2}$ ծովալինի մղոնի կամ 47 կմ., Ծովալին հաղոր-
դակցությունների արագության, հարմարության և համեմատակա-
ապահովության շնորհիվ ովկիանոսի միքանի մասեր ուղղակի անցու-
դարձի ճանապարհ են զարձել։ Աղաքես և կամանշը (Պաղեկալեյբ
հետ միասին), վորով որական 300-ից ավելի նավեր են անցնում։

Ամենազարգացած հաղորդակցություն ունի Աստվածայան ովկիա-
նոսը, հետո՝ Հնդկականը. յերրորդ տեղը բռնում ե Մեծ ովկիանոսը։

**ԱՄԿԾԻԿ ԿԱՄ ԲԵՎԵՌԱԱՑԻՆ ԾՈՎ.՝ ԽԱՀՄ-Ի ՀԱՄԱՐ զգալի նշա-
նակություն և ստանում Սպիտակ ծովը Արխանգելսկի հետ միասին։**

Յեվրոպայից դեպի Որ և Յենիսեյ գետերի բերանները տանող
հյուսիսային ծովային ճանապարհի նշանակությունը հետզհետե-
ավելի յե ընդգծվում։ Այս ճանապարհն արդեն հաստատուն ե ու սար-
քավորած։ Կարայի ծովափի յերկարությամբ դրված են 4 ուղիղու-
սագրեր և միքանի ցուցանիշներ։ Նրանց միջոցով ազատ յերթենեկեց-
և սառուցների զրության հետազոտումը կատարվում է հիգրոպլան-
ների ողնությամբ։

**ԾՈՎԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ զարգացման համար հսկայա-
կան նշանակություն ունեցան նոր փորձած ջրանցքները, մանավանը
Սուեզի ջրանցքը։**

**ՍՈՒԵԶԻ ԶՐԱՆՑՔԸ.՝ Սուեզի ջրանցքը Միջերկրական ծովին ան-
միջորեն կապեց Հնդկական ովկիանոսի հետ։ Շուրջաֆրիկական ճանառ-**

պղարհը պղահանջում եր մեկ ամիս ժամանակ, իսկ Սուեզով (յերկարությունը 160 կլմ.)՝ միայն 15 ժամ, հետո յել լերկու որ կարմիր ծովովի:

Այս ջրանցքը հսկալական հեղաշրջում առաջ բերեց համաշխարհային առևտուրի մեջ՝ կիսով չափ կրճատելով Յեվրոպայից Ասիա տանող ճանապարհը: Ներկայում Յեվրոպայից գեղի հարավ-արևելյան Ասիա և Ավստրալիա ուղարկվող ապրանքների և ճամպորդների մեծագույն մասն անցնում է Սուեզով: Շուրջաֆրիկական ճանապարհով գնում են աննշան թվով առագաստանավեր, վորոնք այնպիսի ապրանք են տեղափոխում, վորոնց շուրջ հասցնելու մեծ կարիք չի զգացվում: Սուեզով տեղափոխելն ել թանգ է նստում:

ՊԱՆԱՄԱՅԻ ԶՐԱՆՑՔԸ:—Խոշոր նշանակություն ունի նաև Պանամյի ջրանցքը, վորը փորված և Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսներն իրարից բաժանող Պանամայի պարանոցի ամենանեղ տեղում: Շինված ել ցյուղային սիստեմով, յերկարությունն է 80 կլմ, անցնում են 10—14 ժամում: Այդ ջրանցքի ողուտները քաղում են վոչ թե Յեվրոպան, այլ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները, վորոնց համար ջրանցքի առևտուրական և քաղաքական նշանակությունը հսկայական է:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՆԱՎԱՏՈՐՄԸ:—Համաշխարհային նավատորմն առանձնատպես աճեց վերջին կես դարում: Նրա տարրողությունը 1871 թվին հավասար եր 2,8 միլիոն ռեզիստր տոննի, իսկ ներկայումս հասալ է 70 միլիոնի:

Շոգենավային հաղորդակցությունից պակաս նշանակություն չունեն նաև հեռագիրն ու ռադիոն:

ՀԵՌԱԳԻՒԹՅՈՒՆ:—Ելեկտրոմագնիտալին հեռագիրը գործածության մեջ մտավ 1837 թվից, իերբ ամերիկացի Մորգեն հնարեց իր գրամեքենան: Ներկայումս ամբողջ աշխարհը ծածկված է հեռագրացանցով: Իր զարգացմամբ նա շատ առաջ անցավ յերկաթուղիներից այնպիսի յերկրներում, ուր թշնամանքով եյին վերաբերվում յերկաթուղի անցկացնելու մտքին: Հեռագրի ընդհանուր յերկարությունը յերկու անգամ ավելի է յերկաթուղիների յերկարությունից: Նա հասնում է լուկու միլիոն կիլոմետրի:

Ամենայերկար հեռագրագիծ ունեն Միացյալ Նահանգները, ԽՀՄ և Ֆրանսիան: Նույնիսկ Զինաստանը բավական յերկար հեռագրաթել ունի:

ՀՆԴՉՐՑԱՅ ՀԵՌԱԳԻՒԹՅՈՒՆ:—XIX դարի կեսից մարդիկ հեռագրական կարելներ անցկացնել սկսեցին նաև ծովի հատակում: Յեվրոպան Ամե-

բիկայի հետ միացնելու առաջին ընդիրյա փորձը յեղել է 1858 թվին։ Առաջին կարելը մեկ ամսից ավելի չդիմացավ. ուժեղ ելեկտրական հոսանքը փչացրեց կարելի մեկուսացնող պատյանը։ Միայն 1866 թվի ոգոստոսին Ամերիկան հաստատուն կերպով միացվեց Յելրոպալի հետ վոչ թե մեկ, այլ յերկու կարելով։

Մեծ ովկիանոսով առաջին կարելը զցվեց 1902 թվին, Նրա յերկարությունն է $14\frac{1}{2}$ հազ. կլմ. և գտնվում է Անգլիայի, Կանադայի, Ավստրալիայի և Նոր-Զելանդիայի միացյալ տիրապետության տակ։ Համարյա միաժամանակ ամերիկացիք Ս.-Ֆրանցիսկոն Հռոն-Լուլուի վրայով միացրին Մանիլլային (Ֆիլիպիններում), Սա առաջինից 3000 կլմ.-ով էերկար և կարեների ընդհանուր լերկարությունը մոտ 600 հազ. կլմ. է։

ԹԱԴԻՈ-ՀԵՌԱԳԻՒՄ. — Հսկայական ծառալությունն է անում անթել հեռագիրը կամ ռադիո-հեռագիրը։ Նրա շնորհիվ նավերն անընդհատ հաղորդակցության մեջ են ափի հետ, ինչպես նաև ուրիշ նավերի հետ, վորոնց կարելի լի ողնության կանչել վտանգի դեպքում։ Նա շատ ոգտակար է նաև պատերազմի ժամանակի։ Սառուցներով պաշարված ճանապարհորդները կարող են կապվել մարդաբնակ տեղերի կամ ուրիշ ճանապարհորդների հետ։

Միությունն այդպիսի կայաններ ունի Սպիտակ ծովում՝ Յուզուր, Յամալա թերակղում, Նոր Յերկրում, Յենիսեյի բերանում, Անադիրում, Կամչչատկայում, Ախուախ ծովափում։

Անթել հեռագիրը հարմարեցվում է նաև անթել հեռախոսի հետ, այնպես վոր Սառուցյալ ովկիանոսում մնացած և ըստ յերեսությին աշխարհից կտրված ճանապարհորդները բևեռային յերկար գիշերները կարող են լինինգրադսմ և աշխարհի այլ քաղաքներում տրվող համերգները լսել։


ՈՒԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ. — Ներկայումս ցամաքային ու ծովալին հաղորդակցություններին զուգընթաց գոյություն ունի նաև ոդային հաղորդակցությունը — միանգամայն կանոնավորված, վորոշչվացակով ու սակագնուպ։

Գոյություն ունեն ազգային ու միջազգային ոդագծեր։ Ամենաշավար կազմակերպված ու սարքավորված է Պարիզ-Լոնդոն ոդագիծը։ Թուիչը կատարվում է $2\frac{1}{2}$ ժամում, 150 կլմ արագությամբ՝ մի ժամում։ Նույն ճանապարհը յերկրի վրա 8 ժամ է տևում։

ԽՍՀՄ ոդագծեր ունի վոչ միայն իր ներսում, այլև դեպի Գերմանիա և այլ յելլոպալիան սահմանակից պետություններ, ինչպես նաև

դեպի Տաճկաստան, Պարսկաստան, Ավղանստան։ Մշտական ոդալին գծեր են նախատեսվում նաև Հյուսիսային բների և Ասլանտյան ովկիանոսի վրայով։


Տրանսպորտի ասպարիզում, վորպես հետպատերազմյան փոփոխություն, համարվում է առևտրական նախատորմի և ավտոմոբիլային տրանսպորտի հսկալական աճումը։ Առանձնապես զարգացավ նավազնացությունը Մեծ ովկիանոսում՝ շնորհիվ Պահամայի ջրանցքի,



Զորս իմպերիալիստական խմբերն իրենց աղեցության շրջաններով և ԽՍՀՄ։

Միացյալ Նահանգների արևմտյան մասի և Կանադայի ինդուստրիալիզացիային ու Ցապոնիայի արդյունաբերության արագ զարգացման։ Ավտոմոբիլիզմի նշանակությունը յերևում է հետեւյալ թվերից։ 1914 թվին աշխարհն ուներ 2 միլ. ավտոմոբիլ իսկ 1926-ին՝ 30 միլիոն։

ՑԵԶՐ ԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ. — Կատարելագործված ճանապարհների ու հաղորդակցության միջոցների, տրանսպորտում նախ շոգին, հետո ելեկտրականություն կիրառելու, ոգանակերի ու ռադիոյի գլուխի ըընորհիվ մարդը տեր դարձավ ամբողջ աշխարհին։ Ազգային և քաղաքական արգելքները հասկանալի եին պետությունների առանձնակի դոյության ծամանակի։ Ներկայումս, յերբ մեկուսացած տնտեսության փոխարեն գլուխ է բարձրացնում համաշխարհալինը, ամեն տեսակ արգելք համարվում է հնացած և անվերադարձ կերպով վոչչացման դատապարտված։



Խաղաղ ովկիանոսի պըռըլեմը:

Նկարեցնք յերկաթուղիների աճումը՝ հետեւյալ աղյուսակի համաձայն։

Յերկարուղագծերի յերկարությունը—հազարավոր կիլոմետրերով

ԵԵՐԿՐՆԵՐԸ	1840 թ.	1850 թ.	1860 թ.	1870 թ.	1880 թ.	1890 թ.	1900 թ.	1910 թ.	1913 թ.
Հյուսիս. Ամերիկայի Միացյալ Նահանգ.	4,5	14,5	49,0	85,0	151	268	311	388	411,0
Գերմանիա	0,5	6,0	11,6	19,6	34	43	51	61	64,0
Ֆրանսիա	0,5	3,0	9,5	18,0	26	39	43	49	51,0
Անգլիա	1,3	10,6	16,6	25,0	29	32	35	37,5	37,7
Ռուսաստան . . .	0,026	0,5	1,6	11,0	23	32	56	70	73,0

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Թղյուսակ № 1

Աշխի ընկնօղ պետուրյունների մակարդակն ու ազգաբնակուրյունը

ԳԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Մակերեռութեան քառումիւնքներ.	Ազգաբնակությունը միլիոններով
1. Բըիտանական կայսրություն	36,0	470
2. ԽՍՀՄ	21,0	150
3. Ֆրանսիա (գաղութներով)	12,5	100
4. Զինաստան (գաղութներով)	12,0	415
5. Միացյալ Նահանգներ (գաղութներով)	10,0	128
6. Բրազիլիա	8,5	40
7. Արգենտինա	3,0	10
8. Իտալիա (գաղութներով)	2,4	41
9. Բելգիա (գաղութներով)	2,4	25
10. Հոլանդիա (գաղութներով)	2,0	56
11. Յապոնիա (գաղութներով)	1,0	85
12. Գերմանիա	0,5	63
ԸՆԴԱՄԵՆԸ	111,3	1583
Մարդաբնակ աշխարհ	136	1865

Թղթուսակ № 2


1913, 1925 յնվ 1926 թվերի առաքին առելտուրը միջին ռուբլիներով
Ազգերի կրթայի սպալներով (դոլարը — 1 ռ. 95 կ.)

	Ց Ե Բ Կ Բ Ն Ե Բ	Ներմուծումն			Արտահանումն		
		1913թ.	1925թ.	1926թ.	1913թ.	1925թ.	1926թ.
1	Միացյալ Նահանգներ	1775	4178	4413	2448	4819	4712
2	Մեծ-Բրիտանիա	3214	5638	5426	2557	3734	3166
3	Գերմանիա	2563	2939	2368	2403	2092	2336
4	Ֆրանսիա	1625	2125	1933	1328	2222	1934
5	Կանադա	619	927	1081	432	1374	1270
6	Հնդկաստան	587	815	858	772	1444	1164
7	Հայպանիա	363	1019	1086	315	910	929
8	Իտալիա	704	1043	1007	485	727	727
9	Հուանգիա	1569	986	977	1282	726	700
10	Չինաստան	416	796	854	294	652	657
11	Արգենտինա	479	803	759	501	795	732
12	Ավստրալիա	380	717	722	375	740	707
13	Բելգիա	895	846	748	702	689	638
14	Բրիտանական Արք. Հնդկաստան	206	550	575	193	724	715
15	Հոլլանդական	186	351	(351)	270	738	(738)
16	Չեխո-Մովակիա	—	519	451	—	554	525
17	Բրազիլիա	326	407	385	317	497	456
18	Շվեյցարիա	359	481	456	265	393	353
19	Շվեդիա	227	388	399	219	365	380
20	Դանիա	208	409	396	171	378	368
21	Հարավ-Աֆրիկական Միություն	200	316	339	317	419	400
22	Սպանիա	252	433	415	204	306	310
23	ԽՍՀՄ	700	424	348	775	326	364
24	Ավստրիա	—	396	385	—	266	239
25	Ավստր-Հունգարիա	712	—	—	607	—	—
26	Կուրա	140	296	259	164	354	302
27	Մեքսիկա	96	193	184	150	237	234
28	Իրանդիա	—	299	294	—	209	200
29	Յեղիպատու	133	276	249	158	290	203
30	Նոր-Զելանդիա	102	250	237	102	261	213
31	Լեհաստան	—	309	173	—	245	252
32	Նորվեգիա	145	243	241	102	184	178
33	Տաճկաստան	179	246	(246)	94	148	(148)
34	Չիլի	121	146	(146)	149	230	(230)
35	Ռումինիա	114	146	158	180	140	176
36	Հունգարիա	—	150	167	—	142	152
37	Ալժիր	129	168	168	97	120	149
38	Ֆինլանդիա	96	140	143	78	141	142
39	Հունաստան	84	159	(159)	28	71	(71)
40	Պարսկաստան	59	88	(88)	42	106	(106)
41	Պորտուգալիա	96	127	(127)	37	44	44
42	Լատվիա	—	54	50	—	38	36
43	Բուլղարիա	36	53	45	18	41	41
44	Սոտոնիա	—	26	26	—	26	26
45	Լիտվա	—	25	24	—	24	25
	Հնդկաստան	21078	33150	32140	19588	31434	29964

ՑՈՂՈՏԱԿ Հ Յ

ԽՍՀՄ-ի արտաքին առևկտուրը յիշրապական սահմաններով, ժամանակակից արժեթիվներով՝ նազար ուղղվիթներով.

ԱԳՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱ- ՀԱՆՈՒՄՆ	1925/26 թ.		1926/27 թ.		ԱԳՐԱՆՔՆԵՐԻ ՆԵՐ- ՄՈՒՇՈՒՄՆ	1925/26 թ.		1926/27 թ.	
	1925	1926	1926	1927		1925	1926	1926	1927
1 Ավտոմալիս		—	—	—	Ավտոմալիսայից			16779	15588
2 Ավտոբիս		3066	3597		Ավտոբիսայից			22755	19710
3 Անգլիա		187060	197458		Անգլիայից			125378	97085
4 Արգենտինա			1	255	Արգենտինայից			10166	25650
5 Բելգիա		18607	13178		Բելգիայից			1928	52
6 Բրազիլիա		—	—		Բրազիլիայից			640	1845
7 Գերմանիա		110992	167284		Գերմանիայից			172215	157716
8 Հոլանդիա		21139	23249		Հոլանդիայից			6759	4917
9 Հունաստան		5770	6796		Հունաստանից			183	402
10 Դանիա		2923	5866		Դանիայից			1724	916
11 Ֆեդիպուս		—	533		Ֆեդիպուսից			26561	20902
12 Հնդկաստան		584	—		Հնդկաստանից			12795	17723
13 Մալայա		02	3402		Մալայայից			1607	1009
14 Իտալիա		33481	37658		Իտալիայից			23196	3142
15 Կանադա		4	68		Կանադայից			592	2506
16 Լատվիա		63540	57412		Լատվիայից			4367	1593
17 Լիտվա		23	261		Լիտվայից			140	245
18 Մեքսիկա		—	30		Մեքսիկայից			547	791
19 Նոր-Զելանդիա		—	—		Նոր-Զելանդիայից			13	760
20 Նորվեգիա		6757	15721		Նորվեգիայից			6651	3006
21 Լեհաստան		3134	19476		Լեհաստանից			9214	13149
22 Ռումինիա		731	818		Ռումինիայից			9	—
23 Հ.Ա.Մ. Միացյալ Նահանգ.	25098	17278			Հ.Ա.Մ. Միացյալ Նահանգներից			119882	143428
24 Ֆինլանդիա		4548	10479		Ֆինլանդիայից			14697	17712
25 Ֆրանսիա		39752	54093		Ֆրանսիայից			19035	21661
26 Ցիլոն		—	—		Ցիլոնից			2558	1428
27 Չեխո-Մոլդավիա		512	2217		Չեխո-Մոլդավիայից			18127	10753
28 Շվեյցարիա		—	25		Շվեյցարիայից			11	68
29 Շվեդիա		3289	6209		Շվեդիայից			20425	11826
30 Խոտոնիա		17024	6947		Խոտոնիայից			6457	3608
31 Հարավ-Սլավիա		2	28		Հարավ-Սլավիայից			02	01



Ց Ա Ն Կ

Ա Ռ Ա Զ Ի Ն Մ Ա Ս Ն

Ցերեւ

Առաջին թեմա.	Բնական արտ. ուժերի համաշխ. դասավորումը	3
Ցերկուրգ	Համաշխ. արտադրանքի դասավորումը՝ արտադրության բոլոր ճյուղերում և համաշխարհային ապրանքափոխանակությունը	9
Ցերեւ	Աշխարհի քաղաքական քարտեզը	24


Ց Ե Ր Կ Ր Ո Ր Դ Մ Ա Ս Ն

Առաջին թեմա	Անգլիայի բնական արտադրական ուժերը և ազգաբնակությունը	34
Ցերկուրգ	Անգլիայի ժողովրդ. տնտեսությունը	44
Ցերեւ	Բրիտանական կայսրությունը. բարեխառն գոտում լեղած տիրապետությունները	54
Ցարեւ	Բրիտանական կայսրություն. արևադարձային և մերձարևադարձային գոտիների գաղութները	64
Հինգերուրգ	Անգլիայի կապերը մյուս լերկրների հետ	71
Գեցերուրգ	Գերմանիայի բնական արտադրական ուժերը և ազգաբնակությունը	80
Տարեւ	Գերմանիայի ժողովրդական տնտեսությունը	86
Ռուբերուրգ	Գերմանիայի կապերը մյուս լերկրների հետ	94
Խնճերուրգ	Ֆրանսիայի բնական արտադրական ուժերը և ազգաբնակությունը	101
Չամեներուրգ	Ֆրանսիայի ժողովրդական տնտեսությունը	109
Չամենեկերուրգ	Ֆրանսիայի գաղութները	118
Չամենեկուշեր.	Ֆրանսիայի կապերը մյուս լերկրների հետ	127
Չամենեեներ.	Իտալիայի բնական արտադրական ուժերը և ազգաբնակությունը	132
Չամենչուսեր.	Իտալիայի ժողովրդական տնտեսությունը և կապերը մյուս լերկրների հետ	138

Ցանկի նեղեր.	» Միացլալ նահանգների արտադրական ռւմերը և ազգաբնակությունը	145
Ցանվեցեր.	» Միացլալ նահանգների ժողովրդական տնտեսությունը	153
Ցանյորեր.	» Միացլալ նահանգների իմպերիալիզմը	160
Ցանութերություն	» Հարավ-Ամերիկան պետությունները, նրանց բնությունը, ազգաբնակությունը և տնտեսությունը	166
Ցանիներություն	» Յապոնիա. բնություն և ազգաբնակություն	170
Քաներություն	» Յապոնիայի ժողովրդական տնտեսությունը և կապերը մյուս յերկրների հետ	181
Քանինեկերություն	» Չինաստան. բնությունը և ազգաբնակությունը	188
Քաներկույցեր.	» Չինաստանի ժողովրդական տնտեսությունը և նրա կապերը մյուս յերկրների հետ	193
Քաներեիքեր.	» 1. Տաճկաստան, Պարսկաստան, Ավղանստան 2. Մոնղոլիա	203
Քանչարաներ.	» Մերձալիքական յերկրներ. 1. Ֆինլանդիա 2. Եստոնիա, Լատվիա, Լիտվա	213
Քանինի նեղեր.	» 1. Լեհաստան, 2. Ռումինիա	220

Յ Ե Ր Բ Ո Ւ Դ Մ Ա Ս Ն

1. Համաշխարհային հարտքերություններ և հաղորդակցության ճանապարհներ	225
2. Հավելվածներ	
Փոյտակակ № 1. Կարևոր պետությունների մակարդակն ու ազգաբնակությունը	233
» № 2. 1913, 1925 և 1926 թթ. արտաքին առևտուրը	234
» № 3. ԽՍՀՄ արտաքին առևտուրը լեվրոպական սահմաններով	235










(R)

A
III
АЧИОГ


Л. Д. Синицкий
ГЕОГРАФИЯ



916 | Р. 85 ч.



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220041502

A 11
41502